ԲԵՆԻԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՆՊԱՍՏ ՇԱՐԺՈՒՄԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ 1914 - 1923 թթ.

ДУБЛЕТ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԵՆԻԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՆՊԱՍՏ ՇԱՐԺՈՒՄԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ 1914-1923ԹԹ.

А II 90273

ԵՐԵՎԱՆ 2005

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Պ 797

Աշխատությունը հրատարակության է երաշխավորվել
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական
խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Պ 797 Պողոսյան Բենիամին – Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում (1914-1923թթ.) - Եր., ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005, 174 էջ:

Պ 0503020913 2005 ԳՄԴ 63.3 (2Հ)
0176 (01) - 2005

ISBN 99941-956-7-0
© ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 4

Գլուխ առաջին
Հայանպաստ շարժման նախադրյալները և նախապատմությունը Մեծ Բրիտանիայում (19-րդ դարի վերջին քառորդ-1914թ.) 7

Գլուխ երկրորդ
Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին 30

Մաս առաջին. Լորդ Ջեյմս Բրայսի հայանպաստ գործունեությունը 30

Մաս երկրորդ. Հայանպաստ կազմակերպությունների գործունեությունը 60

Գլուխ երրորդ
Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում 1918թ. վերջ-1923թ. 98

Մաս առաջին. Լորդ Ջեյմս Բրայսի հայանպաստ գործունեությունն Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո 98

Մաս երկրորդ. Հայանպաստ կազմակերպությունների գործունեությունը 1918թ. վերջ-1923թ. 115

Վերջաբան 154

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ 160

РЕЗЮМЕ 169

Summary 171

Նախաբան

XX դարի սկիզբը հայ ժողովրդի բազմադարյա պատմության ամենածանր պահերից մեկն էր: Օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից՝ երիտթուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի բնաջնջման իր դիվային ծրագրի իրականացմանը, որը հանդիսացավ դեռևս Աբդուլ Համիդի օրոք սկսված հայկական ջարդերի քաղաքականության օրգանական շարունակությունն ու գագաթնակետը: Մեծ եղեռնին զոհ գնացին 1,5 միլիոն հայեր, հարյուր հազարավորները հարկադրված լքեցին իրենց բնօրրանը և սփռվեցին աշխարհով մեկ:

Հայ ժողովրդի համար այդ ճակատագրական պահին, եթե քաղաքական թատերաբեմում գործող մեծ տերությունների պաշտոնական ղեկավար շրջանակները գրեթե ոչինչ չարեցին կանխելու կամ գոնե թեթևացնելու նրա տառապանքները, ապա նույնը չի կարելի ասել տարբեր պետությունների առաջադեմ հասարակական ուժերի ու գործիչների համար, որոնք իրենց ձայնը բարձրացրին ընդդեմ մարդկության պատմությանը հայտնի ամենաքստմնելի ոճրագործության: Ընդհանրապես, դեռ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, սկսած XIX դարի վերջին քառորդից, եվրոպական տարբեր երկրներում ձևավորվեց հայանպաստ շարժում՝ ինչպես անհատ գործիչների, այնպես էլ տարբեր կազմակերպությունների տեսքով: Նրանցից շատերն իրենց գործունեությունը շարունակեցին թե՛ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ դրված էր հայ ժողովրդի լինել չլինելու հարցը, և թե՛ պատերազմի ավարտից հետո ընկած ժամանակաշրջանում:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և նրանից հետո՝ մինչև Լոզանի կոնֆերանսը ներառյալ, ծավալված միջազգային հայանպաստ շարժման մեջ իր ուրույն տեղն ունի Մեծ Բրիտանիայում առկա հայանպաստ շարժումը, ինչպես առանձին անհատների, այնպես էլ տարբեր կազմակերպությունների տեսքով: Նրանց գործունեության ուսումնասիրմանն էլ նվիրել ենք մեր աշխատությունը:

Տարբեր երկրներում, և, մասնավորապես, Մեծ Բրիտանիայում Հայոց ցեղասպանության տարիներին ծավալված հայանպաստ շարժման ուսումնասիրությունն ունի ոչ միայն զուտ պատմագիտական արժեք: Այն հնարավորություն է տալիս պարզել օտար հասարակություններում ցեղասպանության փաստի ընկալման աստիճանը, այլազգի հասարակական գործիչների վերաբերմունքը դրա նկատմամբ, նրանց տեսակետները ցեղասպանության պատճառների մասին: Չափազանց հետաքրքիր են նաև այլազգի գործիչների պատկերացումները Հայկական հարցի լուծման հնարավոր տարբերակների շուրջ, սեփական պետության և մյուս խոշոր տերությունների վարած քաղաքականությանը նրանց կողմից տրված գնահատականները:

Քննարկվող ժամանակաշրջանում Մեծ Բրիտանիայում ծավալված հայանպաստ շարժման ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պարզել նրանում ընդգրկված կազմակերպությունների և նաև անհատ գործիչների՝ պետության կողմից վարվող անմիջական քաղաքականության վրա ունեցած ազդեցության աստիճանը, որը հաճախ շատ ավելի փոքր էր, քան կարելի էր ենթադրել: Այդ փաստի արժեվորումը հնարավորություն է տալիս չգերագնահատել այդ կազմակերպությունների և նաև անհատների գործունեության հնարավոր արդյունքները, ընդ որում, այս հանգամանքը, կարծում ենք, իր կարևորությունը չի կորցրել նաև այժմ:

Աշխատությունը շարադրելիս համադրել ենք խնդրին վերաբերող արխիվային փաստաթղթերը, հայանպաստ գործունեության մեջ ընդգրկված գործիչների՝ Հայկական հարցին առնչվող զանազան հրապարակումները, նրանց բազմաթիվ ելույթները, ժամանակաշրջանի մամուլում հայանպաստ շարժման մասին եղած տեղեկությունները, թեմային վերաբերող առկա գրականության տվյալները՝ ներկայացնելու համար հայանպաստ կազմակերպությունների և առանձին անհատների գործունեության հիմնական փուլերը, Հայկական հարցում նրանց տեսակետները և դրանց աստիճանական զարգացումը, աշխատել ենք ցույց տալ, որ հայանպաստ կազմակերպությունների, խոս-

քը, առաջին հերթին, վերաբերում է քաղաքական դաշտում գործունեություն ծավալածներին, հրապարակումներում, դրանց ծավալած զանազան քննարկումներում հայանպաստ քայլերի անհրաժեշտության համար մարդասիրական, և մասնավորապես, հայանպաստ մղումներից բացի, մշտապես իր դերն է կատարել երկրի պետական շահերի մասին առկա մտահոգությունը:

Գլուխ առաջին
Հայանպաստ շարժման նախադրյալները և նախապատմությունը Մեծ Բրիտանիայում (19-րդ դարի վերջին քառորդ - 1914թ.)

Մեծ Բրիտանիայում 1914-1923թթ. ծավալված հայանպաստ շարժումն ուներ լուրջ ակունքներ, որոնք մեզ տանում են XIX դարի վերջին քառորդը: Դեռ ավելին, կարող ենք ասել, որ նրանում ընդգրկված գործիչների մեծամասնության հայացքները Հայկական հարցի վերաբերյալ ձևավորվել էին հենց այդ շրջանում: Ուստի առանց այդ շրջանի հանգամանալի ուսումնասիրման դժվար կլինի հասկանալ բրիտանացի հայասերների հայացքներն ու նրանց ձեռնարկած քայլերի դրդապատճառները:

Հայանպաստ շարժման նախակարապետներից էր Ջեյմս Բրայսը: Նա ծնվել է 1838թ. մայիսի 10-ին Հյուսիսային Իռլանդիայի Բելֆաստ քաղաքում, որտեղից էլ նրա ընտանիքը 1846թ. տեղափոխվում է Գլազգո, ուր Բրայսն ընդունվում է տեղի համալսարանը: Համալսարանն ավարտելուց հետո, 1857թ. նա շարունակում է իր ուսումն Օքսֆորդի Թրինիտի քոլեջում, ուսանում իրավունքի և պատմության դասընթացը:[1]

Բրայսն ուներ հետաքրքրությունների լայն շրջանակ, որում իր ուրույն տեղն ուներ սպորտը՝ մասնավորապես ալպինիզմը: Հենց դա էլ պատճառ հանդիսացավ բիբլիական Արարատի գագաթը բարձրանալու նպատակով նրա ճանապարհորդությանը դեպի Հայաստան: Ճանապարհորդությունը Բրայսն սկսեց 1876թ. ուշ ամռանը, իր օքսֆորդյան ընկերոջ՝ Էնիս Մաքքեյի հետ: Նույն թվականի սեպտեմբերի 9-ին նրանք արդեն Երևանում էին և ամսի 11-ին սկսվեց վերելքը:

Վերելքի վերջին մասը Բրայսը հաղթահարեց միայնակ և սեպտեմբերի 12-ին նա Արարատի գագաթին էր:[2]

---

[1] Բրայսի մանրամասն կենսագրությունը տես՝ Fisher H. A. L., James Bryce, vol 2, New York, 1927, pp. 313-324 և «Համբավաբեր», Թիֆլիս, 1916թ. հոկտեմբերի 2, թիվ 40, էջ 1253-1255:

[2] Fisher H. A. L., ibid., vol. 1, New York, 1927, pp. 157-166.

Ճանապարհորդությունը կարևոր նշանակություն ունեցավ Բրայսի հետագա քաղաքական կողմնորոշումների համար, մասնավորապես՝ Փոթիից Կ. Պոլիս Սև Ծովի երկայնքով վերադարձին Բրայսն ուղղակիորեն շփվեց թուրքական ապաշնորհ կառավարման կաթվածահար անող հետևանքների հետ, որոնք նրան որոշակի եզրահանգումների առիթ էին տալիս: Հենց այդ շրջանից էլ նա սկսեց ակտիվորեն զբաղվել Հայկական հարցով: Բրայսն ընդգրկվեց «Արևելյան հարցերի ընկերակցության» հինգի ենթահանձնաժողովում, որի կազմում էին նաև Վիլիամ Մորիսը, Ջ. Ռ. Գրինը և Սթոփֆորդ Բրուկը: Ընկերակցությունը ստեղծվել էր վարչապետի՝ թուրքամետ ծրագրերի դեմ պայքարելու նպատակով: Բրայսն ենթահանձնաժողովի ամենաակտիվ անդամն էր, և նաև նրա ջանքերով 1876թ. դեկտեմբերի 8-ին St. James սրահում տեղի ունեցավ ընկերակցության կոնֆերանսը, որտեղ ելույթ ունեցավ նաև Գլադստոնը՝ հայտարարելով, որ ազգը չի հանդուրժի պատերազմի մեջ նետվելը Թուրքիայի օգտին: Փաստորեն, դրանք առաջին քայլերն էին այն քաղաքական արշավի, որն 1880թ. գարնանային ընտրություններում ավարտվեց լիբերալ կուսակցության փայլուն հաջողությամբ:[1]

Բրայսի՝ Հայկական հարցին առնչման առաջին քայլը Լոնդոնում 1877թ. «Անդրկովկաս և Արարատ» գրքի հրատարակումն էր: Գիրքը հիմնականում ճանապարհորդական նոթերի շարադրանք էր, սակայն Բրայսը որոշակի տեղ էր հատկացրել հայ ժողովրդի և հայ եկեղեցու պատմությանը՝ Հերոդոտոսի նկարագրություններից մինչև իր ժամանակները: Միաժամանակ նա ներկայացնում էր Օսմանյան կայսրությունում ապրող հայերի ծանր դրությունը և կատարում մի շարք հետաքրքիր եզրահանգումներ:

Բրայսը բացահայտորեն գրում է, որ ինքը նախատրամադրված է Ռուսաստանի դեմ, որին նա մանկուց սովոր է նայել որպես ազատության թշնամու: Նա անառարկելի է համարում հետևյալ փաստերը՝ ա) Ռուսաստանը շատ ավելի թույլ է հարձակման համար, քան կարծում են, բ) հետագա նվաճում-

[1] Fisher H. A. L., ibid., vol. 1, pp. 166-167.

ները միայն կվնասեն և կթուլացնեն նրան:[1]

Խոսելով Օսմանյան կայսրության մասին՝ Բրայսը գրում է, որ թուրքերը նույն տարածքում բնակվող տարբեր ազգերից միայն մեկն են, և երկիրը, որը նրանք տիրապետում են, իրենցը չէ: Ներկա պատերազմում նրանք նույնքան զավթիչներ են, որքան ռուսները և նրանց վտարումը կլինի «տարածքի ազատագրում»: Խոսելով հնարավոր ելքերի մասին՝ Բրայսը դրանցից մեկն է համարում Ռուսաստանի կողմից անեքսիան, որն, անշուշտ, բարիք կլիներ հայերի համար՝ իրենց ներկա վիճակի համեմատությամբ, բայց և ոչ մի լավ բան չի խոստանում ո՛չ անեքսիայի ենթարկված նահանգների, ո՛չ էլ Ռուսաստանի համար: Որպես հնարավոր ելք Բրայսն առաջարկում է կախյալ, բայց գործնականում անկախ հայկական պետության հիմնումը, նման նրան, ինչն իրականացվեց Լիբանանում: Սակայն նա այդ տարբերակը քիչ հավանական է համարում, քանի որ քրդերը և այլ մահմեդականներ դժվարություններ կստեղծեն: Բացի դրանից կասկածելի է, թե որքանո՞վ են դարեր շարունակ բռնապետության տակ եղած հայերը ունակ ինքնակառավարման և ինքնապաշտպանության: Ինքը՝ Ռուսաստանն էլ կդիմադրի այդպիսի իշխանության ստեղծմանը, քանզի դրա գոյությունը կզրկի նրան այն ազդեցությունից, որ Ռուսաստանն ունի Ասիայում՝ որպես Էջմիածնի պատրիարքի և, ընդհանրապես, հայ ազգի պաշտպանի:

Ըստ Բրայսի, հաշվի առնելով նման կարգի խոչընդոտները, հայրենասեր հայերը ձգտում են բարելավել թուրքական կառավարման համակարգը՝ քրիստոնյաներին ընձեռելով հավասար իրավունքներ:

Ներկայացնելով բրիտանական շահերն Արևելքի կարգավորման խնդրում՝ Բրայսը նշում է, որ Ռուսաստանի կողմից Կ. Պոլսի կամ որևէ այլ նշանակալի տարածքի ձեռքբերումը Ասիայում կամ Եվրոպայում լրջորեն կվնասի այն հեղինակությանը, ազդեցությանը և բարոյական կշռին, որ Անգլիան ունի Լևանտի երկրներում: Այս երկրներում դեռևս մեծ է Անգլիայի

[1] Bryce J., Transcaucasia and Ararat, London, 1877, pp. 390-399.

հեղինակությունը, վերջինիս վերաբերում են հիացմունքի և հուսախաբության խառնուրդով. հիացմունքի, որպես ազատության երաշխավորի, հուսախաբության և զարմանքի՝ որպես թուրքական ճնշման ներկայիս հովանավորողի և ընկերոջ: Ըստ Բրայսի, Անգլիայի միջամտությունը հպատակ ժողովուրդների օգտին կողջունվի ավելի մեծ գոհունակությամբ, քան Ռուսաստանի միջամտությունը:[1]

Այս գրքի հրատարակությունից հետո Բրայսը շարունակեց ակտիվորեն զբաղվել հայկական խնդրով: Նույն՝ 1877թ. Բրայսը Լոնդոնի "Royal Institution" դահլիճում հանդես եկավ Հայաստանի մասին հրապարակային դասախոսությամբ, որը նրա առաջին հայանպաստ ելույթն էր: Դա կարևոր դեր խաղաց հայ գաղութի ականավոր ներկայացուցիչների հետ մերձեցման գործում:

Նշենք, որ այդ շրջանում լոնդոնահայերը կազմել էին մի կոմիտե հետևյալ կազմով. Սեթ Աբգար՝ պատվակալ նախագահ, Գարեգին Փափազյան՝ ատենապետ, Հ. Ս. Պարոնյան՝ ատենադպիր, Պ. Սօրղուճ՝ գանձապետ:[2] Լոնդոնահայ համայնքի անդամներից պետք է հիշատակել նաև Յ. Յակոբյանին, որն անգլիական մամուլի մեջ ներկայացնում էր հային ու իր բնիկ երկրի ցավերը, և իր լրագրական հրապարակումներով նպաստավոր հասարակական կարծիք ստեղծում: Համայնքի այս ջանքերի ազդեցությամբ Լոնդոնում մի հատուկ ընկերություն կազմվեց՝ «Արևելյան հարցի ընկերություն», որի նպատակն էր հետազոտել «արևելյան քրիստոնյաների» ներկա դրությունը և ելք առաջարկել վիճակը բարելավելու համար: Այս ընկերությունը 1877թ. հրատարակեց Ջ. Փրոբինի "Armenia and Lebanon" («Հայաստան և Լիբանան») գրքույկը:[3]

Եվ ահա 1878թ. մարտի 7-ին անգլիացի հայասերների և Լոնդոնի ու Մանչեստրի Բրայսին ծանոթ հայ ազգայինների հանդիպում տեղի ունեցավ Բրայսի տանը, որի կազմակերպ-

---

[1] Bryce J., ibid., pp. 399-417.

[2] Մուշեղ Եպիսկոպոս, Մանչեստրի հայ գաղութը, Պոստոն, 1911, էջ 71-72:

[3] Սարուխան, Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը Թուրքիայում,·(1860-1910), հատոր Ա, Թիֆլիս, 1912, էջ 375-376:

մանն ակտիվ մասնակցություն ունեցավ Գ. Փափազյանը: Հանդիպման ընթացքում որոշվեց ստեղծել "Anglo-Armenian Association" («Անգլո-հայկական ընկերակցություն»), որի նախագահ դարձավ Լորդ Կարնարվոնը, իսկ քարտուղարի պաշտոնն ստանձնեց Բրայսը: Ընկերակցությունը դարձավ Անգլիայում ստեղծված առաջին հայանպաստ կազմակերպությունը:[1] Միաժամանակ պատվիրակություն ընտրվեց, որը պետք է ներկայանար արտգործնախարար Լորդ Դերբիին և Հայկական հարցի կապակցությամբ նրան մի հուշագիր ներկայացներ: Այս կապակցությամբ Գ. Փափազյանի նախաձեռնությամբ Կ. Պոլսից և Զմյուռնիայից Բրայսին շնորհակալական ուղերձներ և. միևնույն ժամանակ, փաստեր ու տեղեկություններ ուղարկվեցին հայկական խնդրի վերաբերյալ:[2] Ավելացնենք, որ այս կազմակերպությունը կարճ կյանք ունեցավ, և ինչպես կներկայացնենք քիչ ավելի ուշ, Բրայսը հիմնեց նույնանուն մեկ այլ կազմակերպություն:

Բրայսը հանդիպումներ ունեցավ նաև Լոնդոն ժամանած Խրիմյանի և Մինաս Չերազի հետ: Արդեն ապրիլի 13-ին Նա այցելեց Խրիմյանին և խոստացավ ջանք չխնայել հօգուտ հայության:[3] Մինաս Չերազը մայիսի 6-ին Բրայսին հանձնեց Ներսես պատրիարքի ինքնագիր նամակը, որով շնորհակալություն էր հայտնվում Բրայսին և խնդրվում էր աջակցություն հայկական խնդրի համար: Մայիսի 11-ին Բրայսն ևս մեկ անգամ այցելեց հայ պատվիրակներին և գոհունակությամբ հայտնեց, որ ստացել է Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայերի շնորհակալական ուղերձները: Նա նաև մանրամասն տեղեկություններ տվեց այն հոդվածի մասին, որը մտադիր էր հրապարակել "Fortnightly Review" պարբերականում: [4] 1878թ. մայիսին Լոնդոնում Խրիմյանը հանդիպեց նաև ապագա Շոտլանդա-հայկական ընկերության նախագահ Արկայլի դուքսի հետ:

---

[1] Տէր Պետրոսեան Յովհ., Ճեյմս Պրայս և հայերը, Գահիրէ, 1975, էջ 73-77, Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ. էջ 74:

[2] Սարուխան. նշվ. աշխ., էջ 378-379:

[3] Ալպոյաճեան Ա., Մինաս Չերազ, իր կյանքը և գործը, իր 60 ամեայ յոբելեանին առթիվ, Գահիրէ, 1927, էջ 168-169:

[4] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 170-171:

Վերջինս նախ հետաքրքրվեց, թե որոնք են այն նահանգների սահմանները, որոնց համար հայերն ինքնավարություն էին պահանջում և հայտնեց, որ որպեսզի անգլիական կառավարությունը հնարավորություն ունենա պաշտպանելու Հայաստանում Լիբանանի նման մի վարչակարգ ստեղծելու ծրագիրը, պետք է իմանա, թե ինչ գործնական միջոցներ կան դրա համար:[1]

1878թ. հունիսի սկզբին Հայկական հարցն առաջին անգամ քննարկվեց բրիտանական խորհրդարանի Համայնքների պալատում: Ելույթ ունեցան խորհրդարանականներ Կարնարվոնը և Շեֆտսբյուրին: Նրանք ներկայացրին արևմտահայության ծանր վիճակը, նշեցին, որ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը հավասար իրավունքներ չի ապահովում կայսրության բոլոր քրիստոնյաների համար, պահանջեցին բրիտանական կառավարությունից՝ Բեռլինի վեհաժողովի աշխատանքի ընթացքում պաշտպանել հայերի իրավունքները, ինչպես նաև նպաստել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործմանը:[2]

1878թ. "Fortnightly Review" պարբերականի համարներից մեկում լույս տեսավ Բրայսի «Ասիական Թուրքիայի ապագան» վերնագրով հոդվածը, որում վերջինս մասնավորապես գրում էր. «Գավառները, որոնք ենթակա են քրդերի խժդժություններին, ամբողջությամբ Օսմանյան Հայաստանի մեջ են, և սպեղանու կարիք ունեն, քանի որ բացառիկ չարիքից են տառապում: Նրանք կարող են մի նոր մեծ նահանգի վերածվել, որը կունենա ելք դեպի Սև ծով Տրապիզոնով և Կիրասոնով: Այսպիսի նահանգը կարող է տրվել եվրոպական տերությունների հավանությամբ ընտրված կամ նույնիսկ եվրոպացի կառավարչի ձեռքը: Հայ ժողովուրդը վերջապես պետք է կարողանա հասուն գտնվել ամբողջական ինքնավարության, ընդարձակ քաղաքական կյանքի համար...»:

Եթե ցանկանում ենք Ռուսաստանի առաջխաղացումը դեպի Ասիա կանխել, հայ ազգի զարգացումը ամենալավ և, թերևս, միակ տևական միջոցն է...:

---

[1] Սարուխան, նշվ. աշխ., էջ 391:

[2] Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը, (XIX դարի 30-ական թթ.-1914թ.), Երևան, 1999, էջ 108:

Հայերի ազդեցությունը հակառուս ազդեցություն կլինի և նրանց գոհացումը ռուսական միջամտության պատրվակները կվերացնի...:

Հայերին անհրաժեշտ է կենտրոն, երկիր, որը կարող են իրենցը կոչել և որը կարող են ժամանակի ընթացքում պետության վերածել, երբ վերջիններիս հարստությունն ու թիվն ավելանա...»:[1] Նույն հոդվածում Բրայսը գրում էր, որ թեև հայերի թիվն ամբողջ Թուրքիայում 4 միլիոն է, սակայն նրանք բավարար զորավոր չեն Հայաստանի մեջ, որպեսզի անկախ իշխանություն դառնան:[2]

1880թ. Բրայսն ընտրվեց Համայնքների պալատի անդամ, որտեղ ևս շարունակեց իր ակտիվ գործունեությունը Հայկական հարցում: Պատահական չէ, որ իր առաջին պառլամենտական նիստում (1880թ. հուլիսի 23) նա ներկայացրեց Հայկական հարցը՝ հիշեցնելով հայերի դժգոհությունները, նշելով, որ նրանք անկախություն չեն ուզում, այլ միայն պաշտպանություն սպանություններից և կողոպուտներից: Իր ելույթը նա եզրափակեց՝ շեշտելով հայ ազգի հիանալի որակները, ներկայացնելով այնպիսի մարդկանց գործունեությունը, ինչպիսիք էին Լոռիս Մելիքովը և Նուբար փաշան:[3]

1880-ական թթ. Բրայսը շարունակեց իր ակտիվ ներգրավվածությունը հայկական խնդրում՝ նամակագրական կապ պահպանելով հայ տարբեր գործիչների, այդ թվում Ներսես Վարժապետյան պատրիարքի հետ:[4] 1880թ. նա ժամանեց Կ. Պոլիս, այցելեց Արամյան երկսեռ վարժարանը, ազգային փոքրիկ մատենադարանը:[5] 1888-1891թթ. անգլիական պառլամենտի Համայնքների պալատում կազմակերպվում էին «հայ հայրենասերների» և հայասեր անգլիացիների համատեղ ժողով-

---

[1] Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 85-86:

[2] Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Երևան, 1978, էջ 233:

[3] Fisher H. A. L., ibid., vol 1. pp. 182-187.

[4] Այդ շրջանում նրա գործունեության մասին առավել մանրամասն տես՝ Տէր Պետրոսեան Յովհ.,նշվ. աշխ. էջ 99-119:

[5] Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, (XIX դարի 80-ական թթ.), Երևան, 1980, էջ 125:

ներ: Դրանցում սովորաբար նախագահում էր Ջեյմս Բրայսը:[1] Բրայսի այս գործունեությունը առաջացնում էր թուրքական իշխանությունների դժգոհությունը: 1889թ. մարտի 29-ին Կ. Պոլսում անգլիական դեսպան Ուայթին ուղղված նամակում Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Սոլսբերին գրում էր, որ Լոնդոնում թուրք դեսպանը՝ Ռուսթեմ փաշան, սըր Ջեյմս Ֆերգյուսոնի հետ իր զրույցում անդրադարձել է «Հայաստան» պարբերականին և Համանքների պալատում Հայաստանի վերաբերյալ պրն. Բրայսի բարձրացրած հարցին: Ֆերգյուսոնը պատասխանել է, որ հնարավոր չէ կանխել Համայնքների պալատում տեղի ունեցող քննարկումները, եթե ստացվում են իրական փորձությունների մասին վկայող զեկույցներ:[2]

Հայասիրական շարժման նոր վերելքը Մեծ Բրիտանիայում կապված էր 1894-96թթ. համիդյան սարսափելի կոտորածների հետ, և այստեղ ևս Բրայսն իրադարձությունների կենտրոնում էր: Անհրաժեշտ ենք համարում ավելի մանրամասն անդրադառնալ նրա այս շրջանի գործունեությանը: Ա. Նասիպեանն իր «Բրիտանիա և Հայկական հարցը» Պէյրութ, 1994 և Տ. Տիգրանյանն իր «Անգլիան և հայերը» Երևան, 1994 աշխատության մեջ նշում են, որ 1893թ. Բրայսը հիմնեց "Anglo-Armenian Association" («Անգլո-հայկական ընկերակցություն»), որի նախագահ դարձավ պառլամենտի անդամ Ֆ. Ստիվենսոնը:[3] Սակայն մեզ այլ բան է հուշում "The Case for the Armenians" հրատարակությունը, որի նախաբանը գրել է ինքը՝ Ստիվենսոնը:

Այդտեղ բերվում է "Daily News" թերթի 1893թ. մայիսի 5-ի համարում տպագրված հոդվածը: Այնտեղ նշվում էր, որ Կ. Պոլսում Մեծ Վեզիրի և Սայիդ փաշայի կողմից արված հայտարարությունների կապակցությամբ, ըստ որոնց Անգլո-հայկական ընկերակցությունը հեղափոխական կազմակերպություն է, ընկերակցությունը վերահրատարակել է երկու տարի առաջ հրապարակված պաշտոնական հայտարարությունն

---

[1] Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 375:

[2] British Documents on Ottoman Armenians, vol II, (1880-1890), edited by Bilal Simsir, Ankara, 1983, pp. 604-605.

[3] Նասիպեան Ա., Բրիտանիա և Հայկական հարցը 1915-1923, Պէյրութ, 1994, էջ 47 և Տիգրանյան Տ., Անգլիան և հայերը, Երևան, 1994, էջ 29:

այն մասին, որ իր անդամները սոսկ ցանկանում են իրականացված տեսնել վարչական և իրավական այն բարենորոգումները, որոնք երաշխավորված են Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով:[1] Հետևաբար, Անգլո-հայկական ընկերակցությունը գոյություն է ունեցել առնվազն սկսած 1891թ.:

Նույն հրատարակության մեջ բերված է հաղորդագրություն 1893թ. մայիսի 12-ին Ջեյմս Բրայսի մեծարանքի հավաքույթի մասին, որին, բացի ընկերակցության անդամներից, ներկա էին նաև նշանավոր այլ անձինք: Ելույթներ են ունեցել ընկերակցության նախագահ Ֆ. Ստիվենսոնը, Հակոբյանը և ուրիշներ: Ստիվենսոնն իր ելույթում ասել է, որ հավաքույթի նպատակն է նշել Հայկական հարցին Բրայսի մատուցած ծառայությունները:

Նա եղել է ընկերակցության առաջին նախագահը, սակայն ստիպված էր հրաժարվել նախագահի իր պաշտոնից, երբ նա դարձավ ներկա կառավարության անդամ:[2] Այս փաստերը հավաստում են, որ ընկերակցությունը հիմնվել է 1893թ. առաջ և առաջին նախագահն է եղել ինքը՝ Բրայսը: Ցավոք, գրքույկում տեղեկություն չկա ընկերակցության հիմնադրման մասին: Այդ հարցի վրա որոշ լույս է սփռում Ե. Սարգսյանի բերած այն տեղեկությունը, համաձայն որի 1882թ. ստեղծվել էր անգլո-հայկական ընկերություն, որի անդամներ էին հանդիսանում թե՛ հայեր, և թե՛ անգլիացիներ, ընդ որում հայերից ընկերության ակտիվ անդամներից է եղել արևելյան լեզուների պրոֆեսոր Օհանյանը, իսկ անգլիացիներից ամենանշանավորը եղել է հայտնի պատմաբան պրոֆեսոր Բրայսը: Ընկերության գանձապահն է եղել Ատկինը:[3] Թերևս, կարելի է ենթադրել, որ խոսքը հենց այն ընկերության մասին է, որի նախագահը 1893թ. դարձավ Ստիվենսոնը:

1895թ. հուլիսի 26-ին Չեստերում Անգլո-հայկական ընկերակցությունը կազմակերպեց միտինգ, որի ժամանակ ելույթ

---

[1] The Case for the Armenians, London, 1893, p. 5.

[2] ibid., pp. 33-34.

[3] Саркисян Е. К., Политика Османского Правительства в Западной Армении и Державы в Последней Четверти XIX и Начале XX века, Ереван, 1972, стр. 162-164.

ունեցավ նաև Գլադստոնը:[1] Միտինգում ընդունված բանաձևում հույս էր հայտնվում, որ անգլիական կառավարությունը միջոցներ կձեռնարկի արևմտահայերի կյանքի և գույքի անվտանգությունն ապահովելու համար:[2]

Այս շրջանում ստեղծվեցին նաև այլ հայանպաստ կազմակերպություններ: Այսպես, 1895թ. ստեղծվեց "Scotland-Armenian Association"-ը (Շոտլանդա-հայկական ընկերակցությունը), որի ղեկավարն էր արդեն մեր կողմից հիշատակված Արկայլի Դուքսը: 1896թ. կազմակերպվեց "International Association of the Friends of Armenia" (Հայաստանի բարեկամների միջազգային ընկերակցությունը):

Այս կազմակերպության նախագահն էր Ռոչեստրի եպիսկոպոսը, պատվավոր քարտուղարությունն էր Լեդի Հենրի Սոմերսեթը: 1897թ. Լոնդոնում հիմնադրվեց "Friends of Armenia" (Հայաստանի բարեկամներ) միությունը, որի նախագահն էր Լեդի Ֆրեդերիկ Գավնդիշը: Այն 1900թ. փետրվարից սկսեց հրատարակել եռամսյա "Friend of Armenia" (Հայաստանի բարեկամ) պաշտոնաթերթը:[3] Այս շրջանում ստեղծվեց նաև «Գրովենոր Հաուզ» ընկերակցությունը, որի ստեղծմանը աջակցություն ցուցաբերեց Սոլսբերիի կառավարությունը և որի նախագահն էր Վեստմինստրի դուքսը:[4]

1895թ. մայիսի 7-ին Սենտ Ջեյմս հոլլում կազմակերպվեց ևս մի հավաք Հայկական հարցի կապակցությամբ, որի ժամանակ ելույթներ ունեցան Արկայլի դուքսը, Լիվերպուլի քաղաքագլուխը և ուրիշներ: Հավաքում նշվեց, որ եթե մյուս մեծ տերությունները համերաշխ չգործեն Անգլիայի հետ, ապա վերջինս պետք է գործի միայնակ:[5] 1895թ. դեկտեմբերի 25-ին "Times" պարբերականում հրապարակվեց Արկայլի դուքսի նամակը: Արկայլի դուքսը գրում էր, որ Անգլիան ունի պարտավորութ-

---

[1] Բայրամյան Լ., Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում, Երևան, 1982, էջ 235:

[2] Степанян Ст., Армения в Политике Империалистической Германии (конец XIX-начало XX века), Ереван, 1975, стр. 60.

[3] Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 47-48:

[4] Армянский Вопрос, Энциклопедия, Ереван, 1991, стр. 97.

[5] Բայրամյան Լ., նշվ. աշխ., էջ 222:

յուններ սուլթանի քրիստոնյա հպատակների հանդեպ, քանի որ սկսած 1853թ. երկու անգամ փրկել է Թուրքիային լիակատար հպատակեցումից, և հիմնականում Անգլիայի գործողությունների շնորհիվ Թուրքիան այժմ գոյություն ունի որպես անկախ տերություն: Եթե Անգլիան չկարողանա այլ տերությունների հետ միասնաբար հանդես գալ իրենց ընդհանուր պարտավորությունները կատարելու համար, ապա պետք է հրաժարվել իրենց նախանձախնդրությունից և հրավիրել Ռուսաստանին անելու այն, ինչ վերջինս հեշտությամբ կարող է իրականացնել իր աշխարհագրական դիրքի և ռազմական ուժի շնորհիվ: Եթե իրենք շարունակեն պահպանել իրենց նախանձը, ապա պետք չէ թաքցնել, որ դրա գինը մարդկային արյունն ու թշվառությունն է:[1]

1896թ. հրատարակած իր աշխատության մեջ Արկայլի դուքսը քննադատում էր Անգլիային Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը Բեռլինի 61-րդ հոդվածով փոխելու համար՝ նշելով, որ դա շատ ճակատագրական եղավ Հայաստանում Բ. Դռան քրիստոնյա հպատակների համար:[2]

Այս տարիներին թե՛ Բրայսի, և թե՛ այլոց կողմից հրապարակվեցին մի շարք աշխատություններ և հոդվածներ Հայկական հարցի և 1894-1896թթ. հայկական կոտորածների մասին:[3] Բրիտանական հասարակությունը, բրիտանական տարբեր կազմակերպություններ հայերին նյութական օգնություն ցույց տալու համար ձեռնամուխ եղան նաև հանգանակությունների կազմակերպմանը: Դրանցից, թերևս, առաջինը բրիտանական «Բարեկամների կրոնական ընկերության հայկական առաքելությունն» էր ("Armenian Mission of Religious Society of Friends"), որը հիմնադրվել էր Կ. Պոլսում դեռևս 1881թ.: 1889թ. հայկական առաքելության աշխատակից Աննա Բարջիսի նախաձեռնությամբ հիմնադրվեցին հայկական կիրակնօրյա դպրոց, արհեստագործական ուսումնարան և ցերեկային

[1] Betrayal of Armenia, second edition, Manchester, 1896, pp. 14-15.
[2] Duke of Argyll, Our Responsibilities For Turkey, London, 1896, pp. 70-73.
[3] Այդ մասին առավել մանրամասն տես՝ Киракосян А., Великобритания и Армянский Вопрос (90-е годы XIX века). Ереван, 1990, стр. 162-164, 172-179, 188-196.

Ա 90273

դպրոց: Հանգանակությամբ էր զբաղվում նաև "Հայաստանի բարեկամներ" միությունը, որը միայն 1899թ. հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հանգանակեց Մանչեստրից 172, Էդինբուրգից 60, Բեյսլիից 60, Լիվերպուլից 217 ֆունտ ստեռլինգ: Ընդհանրապես 1897-1908թթ. հավաքվեց 60000 ֆունտ ստեռլինգ, որն օգտագործվեց 1894-1896թթ. կոտորածներից տուժածներին օգնելու համար:[1]

Խոսելով այս շրջանում Բրայսի հայանպաստ գործունեության մասին՝ հարկ է նշել 1896թ. հունվարի 22-ին "Times"-ում հրապարակված հոդվածի մասին, որում նա գրում էր. «Մեր քաղաքականությունը, Ռուսաստանի հանդեպ մեր նախանձը պատասխանատու է հայերին թուրքերի ողորմածությանը հանձնելու համար: Մենք պարտավոր ենք օգնել: Եթե դիմումները Ռուսաստանին, Ֆրանսիային՝ օգնել մեզ Թուրքիային հարկադրելու համար անօգուտ լինեն և մենք էլ պատրաստ չլինենք ինքներս դիմելու հարկադրանքի, այդ դեպքում մենք պետք է հրավիրենք Ռուսաստանին՝ վերականգնելու խաղաղությունը, որպես Եվրոպայի մանդատ ունեցողի»:[2]

1896թ. հոկտեմբերի 2-ին նույն լրագրում տպագրվեց նրա մեկ այլ հոդվածը, որտեղ Բրայսն առաջարկում էր երեք ելք.

1. Վերջ տալ թուրքական կայսրությանը և բաժանել նրա տարածքները, որը կլիներ լավագույն լուծումը, քանի որ թուրքն անուղղելի է:

2. Ներկայացնել բարեփոխումների ամբողջական ծրագիր, որը, մասնավորապես, կկիրառվի այն նահանգներում, որտեղ հայ բնակչության թիվն ամենամեծն է:

Սակայն Բրայսը նշված երկու լուծումները մի շարք պատճառներով իրատեսական չէր համարում և որպես երրորդ տարբերակ առաջարկում էր գահընկեց անել Աբդուլ Համիդին: Ըստ նրա, այդ տարբերակի առավելությունն այն էր, որ դա կարելի էր իրականացնել արագ և հեշտությամբ, քանի որ մահմեդականները նրան չեն սիրում, միաժամանակ՝ այն չէր առաջաց-

---

[1] Киракосян А., նշվ. աշխ., стр. 162-164.
[2] Fisher H. A. L., ibid., vol 1, pp. 300-302.

նի ոչ մի տարածքային խնդիր:[1]

1896թ. հունվարի 21-ին Բրայսն, Աբերդինում ելույթ ունենալով իր ընտրողների առաջ, անդրադարձավ նաև Հայկական հարցին: Նա շեշտեց, որ ներկա վիճակի համար Բրիտանիան պատասխանատու է ավելի, քան որևէ այլ տերություն: Վերջինս պետք է ակտիվ քայլեր ձեռնարկի Թուրքիային զսպելու ուղղությամբ, իսկ եթե կառավարությունը դա չանի, կմնա հնարավոր մեկ ելք՝ հրավիրել Ռուսաստանին, որպեսզի նա վերականգնի խաղաղությունը հայկական նահանգներում որպես Եվրոպայի մանդատ ստացած պետություն:[2]

Բրայսը 1896թ. Լոնդոնում չորրորդ անգամ վերահրատարակեց իր «Անդրկովկաս և Արարատ» աշխատությունը՝ հավելելով «Հայկական հարցի քսան տարիները» գլուխը:

Այստեղ նա իրավիճակը քննարկում է երեք տեսանկյունից՝ դիվանագիտական (որը վերաբերում է Ռուսաստանի, Անգլիայի և այլ մեծ տերությունների վարքագծին), վարչական, (որը վերաբերում է սուլթանի և նրա պաշտոնյաների գործողություններին) և ազգային, (որը նկարագրում է իրենց՝ հայերի զգացմունքներն ու վարքագիծը):[3]

Ըստ Բրայսի, 1880-ականների կեսից բարեփոխումների իրականացման հարցում հուսախաբությունը հանգեցրեց նրան, որ Օսմանյան կայսրությունից դուրս Աթենքում, Շվեյցարիայում, Թիֆլիսում, ստեղծվեցին հայկական կոմիտեներ, սակայն, երկրի ներսում բնակչության առավել գիտակից մասը դեմ էր ապստամբությանը և հեղափոխական գործունեությանը, քանի որ հաջողության որևէ հույս չկար, իսկ դրան կարող էր հետևել համընդհանուր կոտորած: Անգլիայում և Ամերիկայում հայերի բարեկամները ևս համոզում էին չդիմել ֆիզիկական ուժի՝ նշելով, որ դա, ի վերջո, կբերի ազգովի կոտորածի և ավերածության:

Սուլթանը որպես առաջնորդող սկզբունք ընդունել էր մոտ

---

[1] Պողոսյան Բ., Ջեյմս Բրայսի հայանպաստ գործունեությունը 1876-1914թթ., Հայոց Ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, թիվ 7, Երևան 2003, էջ 94:

[2] Armenia, Information (Armenia) Bureau, London, 1896, pp. 58-59.

[3] Bryce J., ibid., fourth revised edition, London, 1896, pp. 445-446.

տաս տարի առաջ արտահայտված՝ «Հայկական հարցից ազատվելու ճանապարհը հայերից ազատվելու մեջ է», կարգախոսը: Այդ գործում խիստ կարևոր էր 1891թ. քրդական անկանոն հեծելազորի հիմնումը:

Այնուհետև Բրայսն անդրադառնում է 1894թ. Սասունի դեպքերին, այդտեղ ուղարկված հանձնաժողովի գործունեությանը, 1895թ. մայիսի 11-ի բարեփոխումների ծրագրին և ժամանակագրական կարգով թվարկում է 1895թ. սեպտեմբերի 30-ին Կ. Պոլսում սկսված և այնուհետև տարբեր վայրերում շարունակված հայկական ջարդերը:[1]

Բրայսը գալիս է այն եզրակացության, որ Անգլիայի ավանդական քաղաքականությունը՝ աջակցել Թուրքիային ընդդեմ Ռուսաստանի, լիակատար ձախողում է կրել, քանի որ Թուրքիան այժմ շրջվել է Ռուսաստանի կողմը՝ Անգլիայի սպառնալիքների դեմ աջակցություն ստանալու համար:

Նշելով, որ 1894-1896թթ. կոտորածների ժամանակ սրից ու սովից սպանվել է 100-200 հազար քրիստոնյա, Բրայսը դրա հիմնական պատճառ համարում է դաժան բռնապետության և ֆանատիկ հասարակ ժողովրդի ետևում կանգնած եվրոպական տերությունների ճակատագրական գործողությունները կամ անգործությունը: Նախքան Բեռլինի պայմանագիրը սուլթանը չուներ որևէ հատուկ թշնամանք հայերի հանդեպ, ոչ էլ հայ ազգն ուներ որևէ քաղաքական ձգտումներ: Նրանց պաշտպանության համար արված քայլերն էին, որ դարձրին նրանց կասկածի և ատելության առարկա և նրանց մեջ ազատագրման հույս արթնացրին:

Եթե չլիներ Բեռլինի պայմանագիրը և անգլո-թուրքական համաձայնագիրը, հայերն անկասկած կշարունակեին ճնշումների ենթարկվել, ինչպես դարեր շարունակ, բայց նրանք կխուսափեին կրակի, կոտորածի և սովի մրրիկից, որ նրանց վրա իջավ 1895թ.:

Բրայսը եզրակացնում է, որ Արևելքի քրիստոնյաների համար ավելի լավ կլիներ, եթե որևէ դիվանագետ երբեք որևէ արձանագրություն չստորագրեր կամ ճառ չգրեր նրանց օգտին:

---

[1] Bryce J., ibid., pp. 476-507.

Սակայն ինչ էլ բերի ապագան, անցյալը անցյալ է և մի օր պետք է կանգնի սերունդների դատավճռի առջև:[1]

Ինչպես նշեցինք՝ 1894-96թթ. ընթացքում որոշակի քայլեր ձեռնարկվեցին նաև կոտորածներից փրկված հայերին օգնություն ուղարկելու համար և այստեղ ևս առկա էր Բրայսի և Անգլո-հայկական ընկերակցության դերը:

Ֆ. Ստիվենսոնի նախագահությամբ մի շարք ժողովներ հրավիրվեցին, դիմեցին բրիտանական կառավարությանը՝ հորդորելով ստիպել օսմանյան իշխանություններին բարենորոգումներ իրականացնել Թուրքահայաստանի կառավարման գործում: Անատոլիայում անտուններին և աղքատներին օգնելու նպատակով կազմակերպվեց «Հայկական օգնության Ֆոնդ»-ը: Ֆոնդի պրեզիդենտն էր արդեն մեր կողմից հիշատակված Արկայլի դուքսը, նախագահը՝ Ֆ. Ստիվենսոնը: Անդամներն էին՝ Ջեյմս Բրայսը, Յորքի արքեպիսկոպոսը, Լորդ Էդմոնդ Ֆիցմորիսը, պառլամենտի անդամներ Ջոն Քենիվեյը, Չարլզ Շվանը:[2]

Բրայսը 1894-96թթ. իրադարձություններից հետո էլ շարունակեց զբաղվել Հայկական հարցով: Այսպես, 1904թ. հունիսի 29-ին Լոնդոնում տեղի ունեցավ Մերձավոր Արևելքին նվիրված կոնֆերանս Արևելյան հարցի միջազգային ընկերության հովանավորությամբ, որի նախագահն էր Ջեյմս Բրայսը, իսկ գործադիր կոմիտեի նախագահ՝ Ֆ. Ստիվենսոնը: Իր ելույթում Բրայսը ներկայացրեց թուրքական կայսրության ժողովուրդների ծանր վիճակը՝ նշելով, որ վերջինս որևէ քայլ չի ձեռնարկում իրականացնելու համար Բեռլինի պայմանագրով նախատեսված բարեփոխումները:

Բրայսը նշեց երկու ելք.

1. այնպիսի խոշոր փոփոխություններ կայսրության կառավարման բնագավառում, որոնք վերջ կտան սուլթանի բռնապետական իշխանությանը:

2. շատ ավելի հեշտ իրագործելի. առավել շատ տանջված նահանգները դուրս բերել սուլթանի անմիջական իշխանությունից:

---

[1] Bryce J., ibid., pp. 519-526.

[2] Krikorian M., Armenians in the Service of the Ottoman Empire, 1860-1908, London, 1977, p. 9.

Նա առաջարկեց հետևյալ բանաձևը. «Այս համաժողովը, իր ուրախությունն արտահայտելով այն փոխադարձ հասկացողության կապակցությամբ, որն առկա է ֆրանսիական, իտալական և բրիտանական ազգերի միջև, խորին ափսոսանքով արձանագրում է, որ թուրքական կառավարությանը չի հաջողվել իրականացնել Բեռլինի պայմանագրի 23-րդ և 61-րդ հոդվածներով նախատեսված բարեփոխումները:

Համաժողովը համառորեն պնդում է, որ Փարիզի, Հռոմի և Լոնդոնի կառավարությունների պարտականությունն է՝ ձեռնարկել միջոցառումներ թուրքական կայսրության բոլոր նահանգներում արդարացի և հումանիստական կառավարման խնդիրն իրականացնելու համար»: Բանաձևն ընդունվեց միաձայն:[1]

Կոնֆերանսն ընդունեց նաև երկու այլ բանաձևեր, որոնցից մեկը հետևյալն էր.

«Այս վեհաժողովը, գիտակցելով սուլթանի չկամությունը՝ իրականացնել արդյունավետ քայլեր իր հպատակների դրության բարելավման համար, հայտարարում է, որ եկել է ժամանակը, երբ տերությունները պետք է պնդեն Օսմանյան կայսրությունում վարչական այնպիսի փոփոխությունների անհրաժեշտության վրա, որոնք կապահովեն բնակչության բոլոր մասերի շահերից բխող կարգ ու կանոնը»:[2]

1904թ. նոյեմբերի 2-ին Բոստոնի "Vendom" պանդոկում հայերի կողմից ճաշկերույթ տրվեց ի պատիվ Բրայսի, որին մասնակցում էին նաև ամերիկյան հայանպաստ շարժման ներկայացուցիչներ: Բրայսը հանդես եկավ ելույթով և նշեց, որ 1878թ. հետո թուրքերն ոչինչ չեն արել հայերի հանդեպ խժդժությունները կասեցնելու համար, և այն ահավոր ջարդերը, որոնք իրենց գագաթնակետին հասան 1895-96թթ.՝ խնամքով ծրագրված և հրահանգված էին Կ. Պոլսի թուրքական իշխանությունների կողմից:

---

[1] Report of the International Conference on the Situation in the Near East held in London on 29th June 1904, London 1904, pp. 26-38.

[2] ibid., pp. 38-47. կոնֆերանսի մասին տես նաև՝ Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 213:

Անցյալ ամռանն ապստամբություն է տեղի ունեցել Սասունի և Մուշի մեջ, բայց ինքը դա ճիշտ չի համարում. նման շարժումները կհանգեցնեն ավելի մեծ ջարդերի: Ըստ Բրայսի, ցանկալի է, որ ԱՄՆ-ն իր ազդեցությունն օգտագործի ի նպաստ հայ ժողովրդի: Նման մի միջոցառում էլ ամերիկահայերը կազմակերպեցին 1906թ. փետրվարի 23-ին, որտեղ ևս Բրայսը հանդես եկավ ելույթով:[1]

Նշենք, որ Բրայսն ակտիվորեն ընդգրկված էր բրիտանական քաղաքական կյանքում՝ զբաղեցնելով մի շարք պատասխանատու պաշտոններ, իսկ 1907թ. Բրայսը նշանակվեց Մեծ Բրիտանիայի դեսպան Վաշինգտոնում (փետրվարի 21 1907թ.-ապրիլ 24 1913թ.): Դեսպան եղած ժամանակ էլ Բրայսը հետևում էր Հայկական հարցի շուրջ տեղի ունեցող իրադարձություններին:

Հայանպաստ շարժման մեջ նոր աշխուժություն սկսվեց 1912թ. վերջին՝ արդեն սկսված բալկանյան առաջին պատերազմի պայմաններում: 1912թ. վերջին կամ 1913թ. սկզբին ստեղծվեց բրիտանական հայանպաստ շարժման պատմության մեջ ամենաազդեցիկ կազմակերպությունը՝ British Armenia Committee-ը (Բրիտանիա-Հայաստան Կոմիտե, այսուհետև տեքստում BAC), որն իր ակտիվ գործունեությունը շարունակեց ընդհուպ մինչև 1924թ.: Կոմիտեն կազմվեց դեռևս 1903թ. ստեղծված Բալկանյան կոմիտեի շրջանակներում: Պատահական չէ, որ վերջինիս քարտուղար Արթուր Սայմոնդսը դարձավ BAC-ի քարտուղար: BAC-ի նախագահն էր հաշտարար դատավոր և պառլամենտի անդամ Անեուրին Վիլիամսը, որը ղեկավարեց կոմիտեն մինչև նրա լուծարումը 1924թ.:[2]

Մի փոքր ավելի մանրամասն անդրադառնանք Բալկանյան կոմիտեի գործունեությանը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ բրիտանացի հայասերների մի մասը, այդ թվում Նոել և Չարլզ Ռոդեն Բաքսթոնները, Անեուրին Վիլիամսը արդեն ակտիվ աշխատանքներ էին ծավալել նրա շրջանակներում:

Կոմիտեի ստեղծման գաղափարը պատկանում էր Նոել

---

[1] Տէր Պետրոսեան Յովհ., նշվ. աշխ., էջ 131-139:
[2] Դասիպեան Ա., նշվ.աշխ., էջ 48-49:

Բաքսթոնին, որն առաջին անգամ եղել էր Բալկաններում 1899թ.: Նա առաջարկել էր Ջեյմս Բրայսին լինել կոմիտեի պրեզիդենտ, և վերջինս տվել էր իր համաձայնությունը: Այն բանից հետո, երբ Բրայսը 1907թ. նշանակվեց դեսպան Միացյալ Նահանգներում, կոմիտեի պրեզիդենտ դարձավ հենց ինքը:[1]

1907թ. նա հրատարակեց «Եվրոպան և թուրքերը» աշխատությունը, որը նվիրված էր Բալկաններում տիրող իրավիճակին և մասնավորապես Մակեդոնիայի խնդրին: Գրքի վերջում առկա հավելվածում ներկայացվում էին Բալկանյան կոմիտեի հիմնական նպատակները: Բերվում էր կոմիտեի անդամների ամբողջական ցանկը, որտեղ հանդիպում ենք հայանպաստ շարժման մեջ դերակատարում ունեցած մի շարք երևելի անձանց՝ լեդի Ֆրեդերիկ Գավնդիշ, պատվելի Ֆ. Բ. Մեյեր, Արթուր Սայմոնդս. Ջ. Փ. Գուչ, Անեուրին Վիլիամս և ուրիշներ:[2]

Կոմիտեի հիմնադրումից անմիջապես հետո ԲԱՀ-ը սկսեց իր ակտիվ գործունեությունը: Մասնավորապես 1913թ. երեք անգամ հրատարակեց "Armenia, Its People, Sufferings and Demands" («Հայաստան, նրա ժողովուրդը, տառապանքները և պահանջները») գրքույկը կոմիտեի անդամ Ջ. Փ. Գուչի նախաբանով: Գրքույկում նախ շարադրված են ԲԱՀ-ի նպատակները, որոնք անհրաժեշտ ենք համարում ներկայացնել ամբողջությամբ:

1. Ստիպել Մեծ Բրիտանիայի կառավարությանը իրականացնել Հայաստանի հանդեպ այն պարտավորությունները, որոնք իր վրա է վերցրել Բեռլինի պայմանագրով և Կիպրոսի կոնվենցիայով. մեծ տերությունների հետ միասին հարկադրել թուրքական կառավարությանն իրականացնել այն բարենորոգումները, որոնք անհրաժեշտ են խաղաղության, բարեկեցության և հայերի կյանքի, սեփականության ու պատվի ապահովման համար:

2. Տեղեկացնել Մեծ Բրիտանիայի ժողովրդին Հայաստանի հանդեպ իրենց պատասխանատվությունների և պարտավո-

---

[1] Anderson M., Noel Buxton: A Life, London, 1952, pp. 32-37.
[2] ibid., pp. 134-137.

րությունների մասին և նրա դատին հանձնել այն սարսափելի հետապնդումների և կոտորածների փաստերը, որոնց պատճառով հայերը երկար ժամանակ դարձել և այժմ էլ դառնում են անօգնական զոհեր:

3. Հայկական հարցի արագ և մեկընդմիշտ լուծումը ապահովելու համար, բոլոր եվրոպական կառավարությունների վրա միասնական և միաժամանակյա ճնշում գործադրելու նպատակով համագործակցել այլ երկրներում կազմակերպված կոմիտեների հետ:[1]

Գրքույկում առաջ է քաշվում այն գաղափարը, որ հայերը չեն ցանկանում ինքնավարություն կամ անկախություն, նրանք չեն ձգտում անջատվել Թուրքիայից: Նրանց նպատակն է մնալ որպես թուրքական կայսրության բաղկացուցիչ մաս՝ երաշխիքով, որ կունենան կյանքի, պատվի և սեփականության ապահովություն, և գտնում են, որ այս կարևոր պահանջների իրականացման լավագույն ճանապարհն իրենց նույնպես Լիբանանում մտցված կառավարման ձև շնորհելն է: Նշվում էր, որ իրականացվելիք բարեփոխումներն օգտակար կլինեն ինչպես այն թուրքերի և քրդերի համար, որոնք բնակեցնում են Թուրքահայաստանի վեց վիլայեթները (Վան, Բիթլիս, Էրզրում, Դիարբեքիր, Խարբերդ և Սվազ), այնպես էլ թուրքական պետության համար, քանի որ Հայաստանի ներկա ոչ գոհացուցիչ վիճակը մշտական հրավեր է հանդիսանում արտաքին միջամտության համար և սպառնում Թուրքիայի ամբողջականությանը:[2]

Հետաքրքիր է, որ ԲԱՀ-ի կապը Բալկանյան կոմիտեի հետ նկատել էր նաև Լոնդոնում Ավստրո-Հունգարիայի դեսպանը: Նա, 1913թ. մայիսի 9-ին հաղորդելով ապրիլի 25-ին Լոնդոնում կայացած տարբեր երկրների հայասիրական կոմիտեների կոնֆերանսի մասին, նշում է, որ ԲԱՀ-ի ցուցակներից երևում է, որ այնտեղ նույն անուններն են, ինչ որ Լոնդոնի բալկանյան կոմիտեում: Դեսպանը ենթադրում է, որ այդ անձանց գործունեությունը, որին վերջ էր տրվել բալկանյան երկրներում վեր-

---

[1] Armenia, Its People, Sufferings and Demands, third edition, The British Armenia Committee, London, n. d., p. 1.

[2] ibid., pp. 25-32.

ջին իրադարձությունների պատճառով, այժմ շարունակություն է գտել Հայկական հարցի ոլորտում:[1]

1913թ. ապրիլին ԲԱՀ-ը մասնակցեց հիշյալ հայասեր կոմիտեների պատվիրակների միջազգային խորհրդաժողովին, որին մասնակցում էին նաև ֆրանսիական, շվեյցարական, գերմանական կոմիտեների ներկայացուցիչներ: Հայ ազգային պատվիրակությունը ներկայացված էր հանձինս Պողոս Նուբարի և Յ. Մոստիչյանի: Խորհրդաժողովը միաձայն որոշեց մեծ տերություններին առաջարկել՝ Հայկական հարցի լուծումը դարձնել բալկանյան պատերազմի ավարտին հետևող ընդհանուր համաձայնության անհրաժեշտ մասը: Առաջարկվում էր արևելյան նահանգների համար նշանակել եվրոպացի ընդհանուր կոմիսար, նշանակումը կատարելու էր սուլթանը մեծ տերությունների համաձայնությամբ: Պետք է կազմվեր նաև այդ պետությունների ներկայացուցիչներից բաղկացած մնայուն հանձնաժողով, որը պետք է վերահսկեր խոստացված բարեփոխումների կատարումը:[2]

1913թ. հուլիսի 12-ին ԲԱՀ-ի նախագահ Անեուրին Վիլիամսը նամակով դիմեց "Times" պարբերականի խմբագրին: Այստեղ նա նշում էր, որ այժմ մեծ տերությունների համար հնարավորություն կա կատարել իրենց պարտքը հայերի հանդեպ, որը նրանց վրա է դրվել հենց տերությունների գործողություններով, և, բացի այդ, փրկել Թուրքիային անխուսափելի քայքայումից: Այժմ Թուրքիան ևս մեկ անգամ մտադրվել է բարեփոխումներ իրականացնել և որոշակիորեն կզգա ֆինանսական օգնության կարիք: Վիլիամսը որպես ֆինանսական օգնության բացարձակ պայման առաջարկում էր բարեփոխումների իրականացման հարցում եվրոպական վերահսկողության ընդունումը, առանց որի չի կարող լինել որևէ իրական բարեփոխում և որևէ ապահովություն այն գումարի համար, որը պարտքով կտրվի թուրքական կառավարությանը:[3] 1913թ. օգոստոսի 14-ին ԲԱՀ-

---

[1] Օհանջանյան Ա., 1915 թվական, Անհերքելի Վկայություններ, Երևան, 1997, էջ 51:

[2] Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 53:

[3] "Ararat: A Searchlight on Armenia", London, vol. I N 2, August 1913. p. 67.

ի անունից Մեծ Բրիտանիայի արտգործնախարարին հանձնվեց հուշագիր, որը ստորագրել էին նաև կոմիտեի անդամ չհանդիսացող անգլիացիներ: Հուշագրում նշվում էր, որ Թուրքիայում բարենորոգումների իրագործումն անհնար է առանց եվրոպական տերությունների կողմից իրականացվող վերահսկողության:

Շեշտվում էր, որ խնդիրը Թուրքիայից տարածք վերցնելը չէ, հայերն իրենք ցանկանում են մնալ որպես թուրքահպատակներ, եթե կարողանան ստանալ լավ կառավարում: Միաժամանակ նշվում էր, որ միայն դրական կառավարումը Հայաստանում և ընդհանրապես ողջ ասիական Թուրքիայում կարող է փրկել երկիրը քայքայումից, որն իր հերթին հանդիսանում է մեծ վտանգ Եվրոպայի խաղաղությանը:[1]

ԲԱՀ-ի մի քանի անդամներ մասնակցեցին 1913թ. նոյեմբերին Փարիզում տեղի ունեցած հայասիրական կոնֆերանսին, որին մասնակցում էին նաև ներկայացուցիչներ Գերմանիայից, Ռուսաստանից, Իտալիայից, Ավստրիայից:

Միջազգային այս կոնֆերանսն ընդունեց հայտարարություն՝ ուղղված եվրոպական դիվանագիտությանը, համաձայն որի տերությունները չպետք է համաձայնվեին օսմանյան մաքսերի բարձրացմանը, Թուրքիայում գործող օտարերկրացիներից նոր հարկերի գանձմանը:

Նրանք պետք է թույլ չտային օսմանյան որևէ փոխառության էմիսիա և ընդհանրապես չբավարարեին Թուրքիայի՝ ֆինանսական բնույթի որևէ խնդիր, քանի դեռ վերջինս չէր երաշխավորել հայկական բարենորոգումների նախագծի իրականացումը և եվրոպական տերությունների ռեալ վերահսկողությունն այդ գործում:[2]

Նույն 1913թ. աշնանը ԲԱՀ-ի երկու անդամներ՝ Նոել և Հարոլդ Բաքսթոնները, ճանապարհորդեցին և «հետազոտեցին» Թուրքահայաստանը, Ռուսահայաստանը և Պարսկահայաս-

---

[1] "Ararat: A Searchlight on Armenia", London, vol. I, N 3, September 1913, pp. 81-83.

[2] Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916թթ., Երևան, 1967, էջ 191-192:

տանը: Այս ճանապարհորդության տպավորություններն էլ հիմք հանդիսացան 1914թ. լույս տեսած "Travel and Politics in Armenia" (Ճանապարհորդություն և քաղաքականություն Հայաստանում) գրքի համար, որի ներածությունը գրեց Ջեյմս Բրայսը:

Ավելորդ չի լինի նշել, որ գրքի վերջում բերված է ավելի քան 100 էջանոց ակնարկ Հայաստանի պատմության, մշակույթի և հայ ժողովրդի որակների մասին՝ տրված Արամ Բաֆֆու կողմից:[1]

Ներկայացնելով իրենց ճանապարհորդությունը Թուրքահայաստանում և Ռուսահայաստանում և ստացած տպավորությունները, եղբայրները նշում էին այն ապշեցուցիչ հակադրությունը, որն առկա է դրանց միջև:

Թուրքահայաստանի ապագայի վերաբերյալ հեղինակների կատարած եզրակացության մեջ նշվում է, որ հույսն այն մասին, թե ժամանակի ընթացքում առաջընթացի սերմերը կդառնան ծառ, զրոյական է: Օգտակար կլինի, եթե թուրքերն ու հայերը միասին աշխատելով Փոքր Ասիան վերականգնված պետություն դարձնեն, բայց դա անիմն երևակայություն է: Նշվում է նաև, որ հայերի դժբախտությունները չափազանց մեծ են դրանք հանդուրժելու համար: Սեծ շնորհներով օժտված ժողովուրդն արհեստականորեն ենթարկված է մի համակարգի, որը պիտանի չէ նույնիսկ վայրենիներին կառավարելու համար, ուստիև ներսից թուրքական բարեփոխումներով խնդրի լուծումը պետք է մի կողմ նետվի:[2]

1913թ. նոյեմբերի 26-ին ԲԱՀ-ը արտգործնախարար Էդուարդ Գրեյին հանձնեց ևս մեկ հուշագիր: Կոմիտեն առաջ էր քաշում հետևյալ տեսակետը:

Որևէ բարենորոգում չի հանգեցնի դրական արդյունքների, եթե չիրականացվի եվրոպացի կառավարիչների կողմից, որոնց թեկնածությունը կառաջարկեն մեծ տերությունները: Նշվում էր, որ հայերը չեն ցանկանում դադարել թուրքական հպատակ-

---

[1] Buxton N. and Buxton H., Travel and Politics in Armenia, London, 1914, pp. 163-269.

[2] Buxton N. and Buxton H., ibid., pp. 120-122.

ներ լինելուց, բայց և միևնույն ժամանակ պահանջում են, որ իրենք արագ և ընդմիշտ ազատվեն այն ամենից, որոնց պատճառով նրանք երկար ժամանակ տառապել են: Կոչ էր արվում որևէ զիջում չանել թուրքական կառավարությանը ֆինանսական բնույթի հարցերում, քանի դեռ վերջինս չի ընդունել բարեփոխումների նախագիծը: Կարծիք էր հայտնվում, որ ֆինանսական ճնշումը գուցե միակ և անշուշտ ամենանվազ վտանգավոր և առավել էժան ճնշման միջոցն է, որի շուրջ մեծ տերությունները կարող են միավորվել:[1]

1913թ. Մեծ Բրիտանիայում ստեղծվեց ևս մեկ հայանպաստ կազմակերպություն՝ "Armenian Society" (Հայկական ընկերություն): Ընկերության հիմանդիրը օրիորդ Էմիլի Ռոբինսոնն էր, "Daily News" պարբերականի նախկին խմբագիր սըր Ջոն Ռոբինսոնի դուստրը: Ընկերության անդամները միայն անգլիացիներ էին և նրա նպատակն էր ուսումնասիրել հայոց պատմությունը, գրականությունը և արվեստը: Դեռևս մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Ռոբինսոնը հրատարակեց անգլերեն լեզվով «Ճշմարտությունը Հայաստանի մասին» գրքույկը, որտեղ ներկայացնում էր հայերի դրությունը և հիշեցնում էր Անգլիայի պատասխանատվությունը տաճկահայերի հանդեպ:[2]

Ինքը Ռոբինսոնը գրում էր, որ Հայկական հարցով սկսել է հետաքրքրվել դեռևս 19-րդ դարի վերջից, երբ իր հայրը՝ "Daily News" պարբերականի խմբագիրը, խիստ հետաքրքրված լինելով Հայաստանով, 1895-1896թթ. սարսափելի կոտորածների ժամանակ թղթակիցներ է ուղարկել Հայաստան: Մինչդեռ վիճակը Հայաստանում գրեթե չի փոխվել և Ռոբինսոնը գրում է, որ ցանկացած մարդ, որը քարսիրտ չէ դեպի մարդկային տառապանքները, չի կարող անտարբեր լինել հայերի ճակատագրի նկատմամբ:[3]

---

[1] "Ararat", vol. I, N 6, December 1913, pp. 172-173.
[2] «Համբավաբեր», 1916թ. մայիսի 8, թիվ 19, էջ 594-595:
[3] "Ararat", vol. I, N 2, August 1913, pp. 40-42.

Գլուխ երկրորդ
Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին

Մաս առաջին. Լորդ Ջեյմս Բրայսի հայանպաստ գործունեությունը

Առաջին գլխում մենք ներկայացրինք այն հանգամանքները, որոնց արդյունքում Բրայսն սկսեց զբաղվել Հայկական հարցով, ինչպես նաև նրա հայացքները վերջինիս լուծման հնարավոր տարբերակների շուրջ: Օրինաչափ պետք է համարել այն, որ հայ ժողովրդի համար այնպիսի մի ծանր ժամանակաշրջանում, ինչպիսին էր Առաջին համաշխարհային պատերազմը, Բրայսը շարունակեց իր ակտիվ գործունեությունն այդ խնդրում: 1914թ. հունվարին Բրայսը, ԱՄՆ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանի (1907-1913թթ.) պաշտոնը թողնելուց հետո, դարձավ Լորդերի պալատի անդամ:[1] Նա մտադիր էր Լորդերի պալատի ամբիոնը ևս օգտագործել հայկական խնդիրներն արծարծելու համար:

Հարկ ենք համարում անդրադառնալ պատերազմի սկզբնական շրջանում Բրայսի իրականացրած գործունեության այն կողմին, որը թեև անմիջականորեն չէր առնչվում Հայկական հարցին, սակայն կարևոր է «Հայերի դրությունն Օսմանյան Կայսրությունում 1915-1916թթ.» փաստաթղթերի ժողովածուի հրատարակման որոշ շարժառիթներ պարզելու համար:

Նախ նշենք այն, որ պատերազմին մասնակից երկու կողմերն էլ մեծ նշանակություն էին տալիս քարոզչական պայքարին: Բացառություն չէր նաև բրիտանական կառավարությունը: Եվ ահա, ռազմական գործողություններն սկսվելուց շատ չանցած, կառավարության ղեկավարը 1914թ. սեպտեմբերին Ջեյմս Բրայսին հրավիրեց նախագահելու պատմաբաններից և իրավաբաններից կազմված մի փոքրիկ հանձնաժողով, որը պետք է քննարկեր այն տեղեկությունները, որոնք հավաքվել էին կա-

[1] Fisher H. A. L., ibid., vol. 2, p. 323.

ռավարության անունից և վերաբերում էին ներկա պատերազմի ընթացքում գերմանական զորքերի վայրագություններին, նվաճված տարածքներում քաղաքացիական բնակչության նկատմամբ ցուցաբերված կոպիտ վերաբերմունքին: Եռամսյա քննարկումներից հետո հանձնաժողովի զեկույցը հրապարակվեց 27 լեզուներով և մեծ ազդեցություն ունեցավ հասարակական կարծիքի վրա ամբողջ աշխարհում և հատկապես ԱՄՆ-ում:[1] Հանձնաժողովի անդամ սըր Էդվարդ Քլարկը հանձնաժողովի անունից շնորհակալություն հայտնեց Բրայսին՝ նրա փայլուն նախագահության համար:

Այս փաստը ցույց է տալիս բրիտանական կառավարության շահագրգռվածությունը պատերազմում իր թշնամիներին վարկաբեկող նյութերի հայտնաբերման, դրանց հրապարակման և քարոզչական աշխատանքներում լայնորեն օգտագործելու հարցում: Այս հանգամանքն իր դերը խաղաց նաև «Հայերի դրությունն Օսմանյան Կայսրությունում 1915-1916թթ.» փաստաթղթերի ժողովածուի հրապարակման գործում: Այդ հարցին ավելի մանրամասն մենք դեռ կանդրադառնանք:

1914թ. վերջին Բրայսի՝ Հայկական հարցի հետ առնչվող գործունեությունը կապված է վերակազմյալ հնչակյան կուսակցության ծրագրի հետ՝ Ֆրանսիայի օգնությամբ ազատագրել Կիլիկիան: Նշենք, որ վերակազմյալ հնչակյանները դեռևս երիտթուրքական հեղափոխությունից առաջ մշակել էին Կիլիկիան ազատագրելու ծրագիր, սակայն երիտթուրքական հեղափոխությունից հետո կուսակցությունն առժամաբար օրակարգից հանեց այն:

Առաջին աշխարհամարտի սանձազերծումը կուսակցությանը, հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող կազմակերպություններին, հնարավորություն տվեց նորից վերադառնալ այդ ծրագրին և այն իրականացնելու համար անհրաժեշտ ուղիներ և միջոցներ որոնել:

Ծրագիրը նախատեսում էր Ֆրանսիայի աջակցությամբ ստեղծել հայ կամավորական զորամասեր: Այնուհետև այդ կամավորները պետք է կենտրոնանային Կիպրոսում, որտեղ

[1] Fisher H. A. L., ibid., vol. 2, pp. 132-134.

մարզվելուց և ֆրանսիական զինվորների հետ միավորվելուց հետո, պետք է ստեղծեին բավարար ուժ Կիլիկիա ներխուժման համար, որն էլ պետք է երաշխավորեր Կիլիկիայի ազատագրումը: Պահանջվող ծախսերի մի մասն իրենց վրա պետք է վերցնեին ամերիկահայ քաղաքական կազմակերպությունները: Ահա այս ծրագիրն առաջ տանելու մտադրությամբ Լոնդոն և Փարիզ գործուղվեց Ալեքսան (Վահե) Արզույանը: Արզույանն այն ներկայացրեց Ֆրանսիայի հայտնի պետական գործիչ Դ-ենի Քոշենին և հայասեր Վիկտոր Բերարին: Վերջիններս այս ծրագրի կապակցությամբ դիմումներ կատարեցին Ֆրանսիայի արտգործնախարար Դ-ելքասեին, սակայն մերժում ստացան:[1]

Մերժումից հետո վերակազմյալ հնչակյանները փորձեցին նույն ծրագրի շրջանակներում դիմումներ կատարել նաև անգլիական կառավարությանը՝ այդ նպատակի համար օգտագործելով Լորդ Բրայսի և հայանպաստ շարժման մեջ ընդգրկված այլ բրիտանացի գործիչների քաղաքական ազդեցությունն ու կապերը:

Նշենք, որ Վահե Արզույանն իր այս առաքելության ընթացքում սերտ հարաբերություններ էր պահպանում նշանավոր մտավորական Արշակ Չոպանյանի հետ: Վերջինս իր հերթին նամակագրական ակտիվ հարաբերությունների մեջ էր Ջեյմս Բրայսի հետ: Նրանց միջև նամակագրական կապն սկսվել էր 1899թ.:

Վահե Արզույանին 1914թ. դեկտեմբեր 24-25-ին գրած նամակում Չոպանյանն ասում է, որ ինքը կցանկանար Լոնդոն գնալ և տեսակցել որոշ մարդկանց, նամանավանդ Բրայսի հետ: Նա տեղեկացնում է, որ ինքը նամակ է գրել Բրայսին, իբրև հայերի անկեղծ բարեկամի, խորհուրդ է հարցրել և անկեղծորեն ամեն ինչ ասել է: Սակայն, ըստ Չոպանյանի, Բրայսը, դժբախտաբար, հակառակ է եղել շարժումներին և, ըստ երևույթին, այդ տեսակետից ելնելով՝ խորհուրդ պիտի տար ետ կանգնել Կիլիկիայի շարժումներից: Նա միշտ ասել է.

---

[1] Գասպարյան Ե., Ֆրանսիան և Մեծ Եղեռնը 1915-1918թթ., Երևան, 2000, էջ 33-36:

«ջանացեք տնել, չջարդվել, լավ օրերը պետք է գան, պետք է շատ լինեք, որ օգտվեք և տիրապետեք»:[1]

Այնուամենայնիվ, Արզույանը որոշում է հանդիպել Բրայսի հետ: Այդ հանդիպման մասին նա Չոպանյանին պատմում է 1915թ. հունվարի 8-ի նամակում:

Այստեղ նա գրում է, որ նախորդ օրը հանդիպել է Բրայսին և նրան ասել, որ երկու ամսից ավել է, ըստ լուրերի, Զեյթունը ոտքի է կանգնել: Հայ ժողովուրդը չի կարող անտարբեր մնալ: Նա ոչ միայն ցանկանում է օգնել Զեյթունին և թույլ չտալ, որ այն ջախջախվի, այլև փափագում է ապստամբությունը տարածել ամբողջ Կիլիկիայի վրա և այն հռչակել ինքնավար նահանգ, եթե դաշնակիցները որոշել են Վերին Հայաստանը կցել Ռուսաստանին:

Արզույանը խնդրել է Բրայսին իրեն հայտնել, թե արդյոք դաշնակից տերությունները որևէ պայմանավորվածության եկե՞լ են Հայաստանի ապագայի նկատմամբ: Ըստ Արզույանի, Լորդ Բրայսը Զեյթունի և Կիլիկիայի մասին հայտնած կարծիքներին հավանություն է տվել, իսկ վերջին կետի մասին ասել է, որ դաշնակից տերություններն այդ հարցում որևէ փոխհասկացողության չեն եկել: Բրայսը ցանկացել է իմանալ, թե որքա՞ն կամավորներ ունեն Ամերիկայում, որքա՞ն պայքարող ուժ կարող են առաջ բերել Կիլիկիայի մեջ, ունե՞ն արդյոք զենք: Նա բերել է Անատոլիայի քարտեզը, որի վրա նշումներ է կատարել Կիլիկիայի մասին: Արզույանը պատասխանել է Բրայսի բոլոր հարցումներին: Ինչպես գրում է Արզույանը, այս հանդիպումից ինքն այն տպավորությունն է ստացել, որ եթե Կիլիկիայի մեջ շարժումներ սկսեն, դաշնակիցներն իրենց չեն լքի:[2]

Իր հերթին Բրայսը շարունակում էր ակտիվ նամակագրությունը Չոպանյանի հետ: 1915թ. հունվարի 30-ի նամակում Բրայսը գրում է, որ Չոպանյանի տեղեկությունները Հայաստանում թուրքերի կողմից իրականացվող հայերի կոտորածների և դժբախտ փախստականների տառապանքների մասին

---

[1] Չոպանյան Ա., Նամականի, Երևան, 1980, էջ 120-122:

[2] Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան, (այսուհետև տեքստում ԳԱԹ), ԱՉՖ, բաժին I, թիվ 705:

շատ ցավալի են:

Նա տեղեկացնում է, որ վերջիններիս օգնության համար ֆոնդ է ստեղծվել Անգլիայում (նկատի ունի Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը, որի գործունեությունը մանրամասն կներկայացնենք հաջորդ մասում) և նշում, որ այդ փաստերը կփոխանցի Անգլիայի հայկական կոմիտեին (նկատի ունի ԲԱՀ-ը), որն աշխատում է Չոպանյանի հայրենակիցներին քաղաքական օգնություն ցուցաբերելու համար:[1]

Արզույանի առաջարկի վերաբերյալ Բրայսի կարծիքը պարզելու տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում արտգործնախարարության աշխատակիցներից մեկի՝ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էդուարդ Գրեյին ուղղված 1915թ. մարտի 9-ի նամակը: Այնտեղ ասվում է, որ Լորդ Բրայսը երեկ զանգահարել է իրեն՝ առաջարկելով դիմել Ռուսաստանին, որպեսզի վերջինս հայտարարի իր պատրաստակամությունը՝ ունենալ ինքնավար Հայաստան՝ Ռուսաստանի հովանավորության ներքո: Այդպիսի հայտարարությունը կուրախացնի հայերին և կդրդի նրանց տալ նյութական օգնություն դաշնակիցներին: Բրայսը նաև ասել է, որ 5-10000 հայեր կարող են կամավորագրվել և ուղարկվել Եգիպտոս՝ մարզումների համար: Բրայսին պատասխան է տրվել, որ վերջին առաջարկի շուրջ պատերազմական նախարարությունը պետք է որոշում կայացնի, իսկ հայտարարության մասին արտգործնախարարին տեղյակ կպահվի:[2]

Այս նամակը ցույց է տալիս, որ Բրայսը, օգտագործելով իր կապերը հայկական որոշ շրջանակների ցանկություններն ու առաջարկները բրիտանական իշխանություններին ներկայացնելու համար, որպես պետական գործիչ, չէր մոռանում այնպիսի քայլերի մասին, որոնք կհանգեցնեին դաշնակիցներին հավելյալ նյութական օգնության հատկացմանը:

Բրայսը դիմում է նաև պատերազմական նախարարությանը: Այդ մասին է վկայում 1915թ. ապրիլի 4-ին Չոպանյանին

---

[1] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3898:

[2] Armenia: Political and Ethnic Boundaries 1878-1948, Editor Anita L. P. Burdett, Archive Editions, 1998, pp. 335-337.

ուղղված նրա նամակը: Այստեղ Բրայսը գրում է, որ ինքը դիմել է պատերազմական նախարարությանը՝ ամբողջովին ներկայացնելով Չոպանյանի և իր սեփական տեսակետները հայ կամավորների մասին, սակայն դեռևս պատասխան չի ստացել:[1]

Այս խնդիրների շուրջ մանրամասն քննարկումների համար Չոպանյանը մեկնում է Լոնդոն՝ հանդիպումներ ունենալու համար անգլիական իշխանությունների և Լորդ Բրայսի հետ:[2] Չոպանյանի հետ հանդիպման ընթացքում Բրայսը ցանկություն է հայտնում, որ դիմում ներկայացվի անգլիական կառավարությանը:

Վերջինիս հանձնարարականով Չոպանյանը և Հ. Մոստիչյանը (Լոնդոնի հայկական միացյալ ընկերության անդամ) այցելում են պատերազմական նախարարության կարևոր պաշտոնյաներից մեկին:

Վերջիններս նրան են ներկայացնում վերակազմյալ հնչակյանների ծրագիրը՝ հարցնելով, թե անգլիական կառավարությունը կցանկանա՞ր իր միջոցներով օգնել՝ դյուրացնելով հայկական լեգեոնի կազմությունը: Զորավարը հայտարարում է, որ անգլիական բանակը օտար կամավորներ չի ընդունում, բայց ավելացնում է, որ եթե հայերն իրենց սեփական միջոցներով լեգեոն կազմեն, անգլիական հրամանատարությունը հանձն կառնի այդ լեգեոնը մարզել և թույլ կտա նրան կռվել իր բանակի կողքին, իր նշանակած տեղում:[3] Այն մասին, որ այս հանդիպման նախաձեռնությունը պատկանում է Բրայսին, վկայում է 1915թ. մայիսի 13-ին Չոպանյանին գրած Բրայսի նամակը: Նամակում Բրայսը Չոպանյանին առաջարկում է գնալ գեներալ Քալվելի մոտ և քանի որ Չոպանյանն անգլերենին չի տիրապետում, նա առաջարկում է իր հետ հանդիպման տանել պրն. Մոստիչյանին:[4]

Ինչպես գրում է Չոպանյանը, Բրայսը նկատելիորեն ուրախանում է, երբ նրան հայտնում են նախարարությունում իրենց

---

[1] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3901:

[2] Դալլաքյան Կ., Արշակ Չոպանյան, Երևան, 1987, էջ 328:

[3] Չոպանյան Ա., Կիլիկիան երազը և Ալեքսան Արզուման, «Պայքար», Բոստոն, 1935թ., Խուլիսի 24, թիվ 172 (8312):

[4] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3902:

տրված պատասխանի մասին, և իր կողմից դիմում է անգլիական կառավարությանը, որպեսզի վերջինս գոնե որոշ նյութական օգնություն հատկացնի այդ գործին, սակայն որևէ հաջողության չի հասնում:[1]

Այս խնդրում իր վերջնական տեսակետը Բրայսը պարզում է 1915թ. հունիսի 25-ին Չոպանյանին ուղղված նամակում: Նա գրում է, որ տվյալ պահին բրիտանական և ֆրանսիական էքսպեդիցիայի դրությունը Թուրքիայում խրամատային կռիվների փուլում է, այլ ոչ թե ներխուժման, որի ժամանակ հայ կամավորների ուժերը կարող են օգտակար լինել:

Ըստ իր ունեցած տեղեկությունների, շատ վայրերում մահմեդականներն սկսել կամ պատրաստվում էին սկսել քրիստոնյաների կոտորածներ, հատկապես հայ քրիստոնյաների: Այն վայրերում, որտեղ կոտորածներ դեռևս չէին եղել, լուրերը, որ հայ կամավորները կռվում են դաշնակիցների կողքին, կարող էին միանգամից արագացնել նման կոտորածների սկիզբը: Ըստ Բրայսի, դա, իհարկե, ցավալի դժբախտություն կլիներ, ուստի գուցե լավ կլիներ հետաձգել հայ կամավորների շարժումը: Նա գրում է, որ երբ գա դրա ժամանակը, իրենք բոլորն էլ ուրախ կլինեն դրա համար: Միաժամանակ Բրայսը հարցնում է, թե կարո՞ղ է Չոպանյանը տեղեկություններ տալ Կիլիկիայի և մասնավորապես Զեյթունի դրության մասին:[2]

Բրայսը շարունակում էր Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին Չոպանյանից տեղեկություններ ստանալ և համապատասխան քայլեր ձեռնարկել: Այսպես, 1915թ. հուլիսի 30-ին Չոպանյանին ուղղված նամակում նա գրում է, որ Հայաստանում տեղի ունեցող ողբալի իրադարձությունների մասին վերջինիս նամակն ստանալուց հետո ինքն այդ տեղեկությունները փոխանցել է արտգործնախարարություն և այդ խնդրի կապակցությամբ հուլիսի 28-ին հարց է բարձրացրել Լորդերի պալատում: Նա գրում է, որ այդ մասին կարճ հաղորդագրություններ են հրապարակվել "Times", "Morning Post",

---

[1] Չոպանյան Ա., նշվ. հոդվածը, «Պայքար», 1935թ., հուլիսի 25, թիվ 173 (8313):

[2] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3905:

Daily Telegraph" պարբերականների հուլիսի 29-ի համարներում:[1]

Լորդերի պալատում տեղի ունեցած քննարկման մասին հրապարակումներ եղան նաև ամերիկյան մամուլում: 1915թ. հուլիսի 29-ին "The New York Times" պարբերականը տեղեկություններ հրապարակեց հուլիսի 28-ին Լորդերի պալատում հայկական կոտորածների մասին Լորդ Բրայսի կատարած հարցապնդման մասին:

Համաձայն այդ հրապարակման, Լորդ Բրայսը հարցրել է Խորհրդի Լորդ նախագահին, թե արդյոք նորին գերազանցության կառավարությունը ունի՞ որևէ տեղեկություն՝ կապված քրիստոնյա բնակչության կոտորածի հետ:

Նույն քննարկման ընթացքում ելույթ ունեցած Լորդ Կրոմերը ասել է, որ, ցավոք, որևէ կասկած չկա այդ տեղեկությունների ճշմարտացիության մեջ: Քենտերբերիի արքեպիսկոպոսն իր ելույթում նշել է, որ հաճախ է կապի մեջ լինում թուրքական և պարսկական սահմաններին բնակվող քրիստոնյաների հետ, և վերջին երկու ամիսներին ստացված նամակները վկայում են թուրքերի կողմից իրականացված կոտորածների մասին:[2]

1915թ. սեպտեմբերի 5-ին Չոպանյանին ուղարկված նամակում Բրայսը շնորհակալություն է հայտնում վերջինիս իրեն ուղարկված նամակների համար և նշում, որ դրանց պարունակած տեղեկություններն իրոք սարսափելի են: Նա գրում է, որ պետք է ձեռնարկել միակ հնարավոր բանը՝ միջոցներ հավաքել թեթևացնելու համար անօգնական փախստականների ծանր դրությունը:[3]

Սեպտեմբերի 22-ի նամակում Բրայսը խնդրում է Չոպանյանին շարունակել իրեն ուղարկել ցանկացած նորություն Հայաստանից և Փոքր Ասիայից, որոնք Չոպանյանը կարողանում է ձեռք բերել և ունի լուրջ հիմքեր՝ դրանք վստահելի համարելու համար: Նա գրում է, որ անգլիական լրատվական գործակա-

---

[1] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3906:

[2] Kloian R., The Armenian Genocide, News Accounts from the American Press: 1915-1922, third edition, USA, 1985, p.22.

[3] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3907:

լությունները և պարբերականներն իրեն ասել են, որ կիրապարակեն ցանկացած վստահելի տեղեկություն Հայաստանի մասին: Նա նաև տեղեկացնում է, որ նամակ է ուղարկել Ամերիկա՝ փորձելով այնտեղ ձեռք բերել աջակցություն:[1]

Այս կապակցությամբ հիշատակենք "The New York Times" պարբերականի 1915թ. սեպտեմբերի 21-ի հրապարակումը: Այստեղ նշվում էր, որ Լորդ Բրայսը՝ ԱՄՆ-ում Մեծ Բրիտանիայի նախկին դեսպանը, սեպտեմբերի 20-ին հաղորդագրություն է ուղարկել Ասոշիեյթեդ Փրես գործակալությանը, որով Ամերիկային կոչ է արվում փորձել դադարեցնել հայերի կոտորածը:

Ըստ պարբերականի, Բրայսը, մասնավորապես, ասել է. «Քաղաքակիրթ աշխարհը, հատկապես Ամերիկան, պետք է իմանա, թե ինչ սարսափներ են կատարվել ասիական Թուրքիայում վերջին մի քանի ամիսների ընթացքում, քանի որ եթե ինչ-որ բան կարող է բռնել թուրքական կառավարության քանդող ձեռքը, դա չեզոք ազգերի՝ հիմնականում հումանիստ Ամերիկայի դիրքորոշումն է»: Ներկայացնելով հայերի կոտորածների պատմությունը՝ Բրայսը կոչի վերջում ասել է. «Մենք բոլորս պետք է փորձենք օգնություն ուղարկել այժմ ռուսական տարածքում գտնվող թշվառ փախստականներին, բայց ո՞վ կարող է դադարեցնել կոտորածները: Դա չեն կարող իրականացնել Թուրքիայի հետ պատերազմի մեջ գտնվող դաշնակից տերությունները: Միայն մի տերություն կա, որ կարող է որոշակի քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ, դա Գերմանիան է: Արդյոք ամերիկյան հասարակական կարծիքը, որ կդիմի չեզոք ազգերի խղճին, կստիպի՞ Գերմանիային կանգնեցնել թուրքական կառավարությանը»:[2]

Նշենք, որ այս կոչը բերված էր 1915թ. սեպտեմբերի 18-ին ԲԱՀ-ի նախագահ Անեուրին Վիլիամսին ուղարկված Բրայսի նամակից: Այս նամակի մասին հիշատակում է Ավետիս Եափուճեանը, նշելով, որ այն լույս է տեսել "The New York Times"

---

[1] ԳԱԹ, ԱՉՑ, բաժին III, թիվ 3908:
[2] Kloian R. ibid., p. 34.

պարբերականում:[1] Բրայսի նամակի ամբողջական տեքստը հրապարակվեց նաև անգլիական "The Daily News and Leader" պարբերականի 1915թ. սեպտեմբերի 22-ի համարում:[2]

Բրայսի այս կոչը միանշանակ արձագանք չգտավ: Այդ մասին է վկայում 1915թ. նոյեմբերի 4-ին Մերսինում ամերիկյան հյուպատոս Էդվարդ Նաթանի՝ Կ. Պոլսում ամերիկյան դեսպան Մորգենթաուին ուղղված նամակը:

Նշելով Լորդ Բրայսի առաջարկի մասին՝ համաձայն որի Միացյալ Նահանգները պետք է միջոցներ ձեռնարկեին հայերի կոտորածները կանխելու համար, Նաթանը գրում է, որ ճիշտ կլինի հիշատակել այն փաստը, որ 1909թ. Ադանայի կոտորածների ժամանակ բրիտանական և այլ կառավարություններն անտարբեր մնացին, և Հայկական հարցի լուծման գործում տարբեր եվրոպական տերությունների անգործության տեսանկյունից հազիվ թե իմաստ ունի, որ որևէ եվրոպական գործիչ այս խնդրի բեռը դնի Միացյալ Նահանգների կառավարության վրա:[3]

Բրայսը Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկություններ էր ստանում ոչ միայն Արշակ Չոպանյանից: Նա ակտիվ նամակագրական կապի մեջ էր նաև Ա. Սաֆրաստյանի հետ: Վերջինիս ուղարկված 1915թ. օգոստոսի 10-ի նամակում Բրայսը գրում էր, որ Հայաստանից եկող լուրերը սարսափելի են, թուրքերն ակնհայտորեն ցանկանում են ոչնչացնել ողջ հայ ժողովրդին և թվում է, նրանք քաջալերվում են գերմանացիների կողմից:

Այստեղ ևս նա կրկին շեշտում էր ամերիկյան հասարակական կարծիքի կարևորությունը՝ գրելով, որ այդ տեղեկությունները պետք է հրապարակել այնտեղ և քայլեր պետք է իրականացնել՝ արթնացնելու համար ամերիկյան ժողովրդի խիղճը և

---

[1] Եափուճեան Ա., Մեծ Եղեռնը օտար մտաւորականութեան գնահատումով, համառօտ մատենագիտութիւն Մեծ Եղեռնի մասին (օտար հեղինակներ) պատրաստեց Գէորգեան Տ., Գահիրէ, 1980, էջ 73-75:

[2] Տես՝ "Ararat", vol. III, N 27, September 1915, pp. 118-120.

[3] United States Official Documents on the Armenian Genocide, vol. II, The Peripheries, Compiled and Introduced by A. Sarafian. Watertown, 1994, pp. 99-100.

զգացմունքները:[1]

1915թ. հոկտեմբերի 28-ին Բրայսին ուղարկված նամակում Սաֆրաստյանը հավելյալ մանրամասներ էր ներկայացնում փախստականների վիճակի մասին:[2]

1915թ. հոկտեմբերի 20-ին Չոպանյանին ուղղված նամակում Բրայսը գրում է, որ թուրքերն ուշադրություն չեն դարձնում ամերիկացիների կոչերին, միակ ուժը, որ կարող է ազդել նրանց վրա, դա գերմանական կառավարությունն է: Բրայսը գրում է, որ իր ամերիկացի ընկերոջ առաջարկով ինքը խնդրել է տեղի ռազմական իշխանություններին՝ կապնվել Միջագետքում բրիտանական գեներալի հետ՝ պարզելու համար, թե ի՞նչ կարող է արվել, որպեսզի այնտեղ ապրող արաբներին համոզեն ազատել այն փախստականներին, որոնք տեղահանվել են այնտեղ: Նա նաև գրում է, որ ամերիկացիները մեծ ֆոնդ են կազմակերպում փախստականներին օգնելու համար:[3]

Հայկական կոտորածները բրիտանական հասարակությանը ներկայացնելու համար Բրայսը շարունակում էր օգտագործել Լորդերի պալատի ամբիոնը: 1915թ. հոկտեմբերի 6-ի իր ելույթում նա նշեց, որ տարբեր աղբյուրներից իրեն հասած տեղեկությունների համաձայն Հայաստանում և Ասիական Թուրքիայում կոտորածների հետևանքով սպանվածների թիվը գնահատվում է մոտ 800000:

Ինքը չի համարձակվում այդ թիվն անհավանական համարել, քանի որ արարքները շատ կանխամտածված են և համակարգված, իրականացվում են անգութ արդյունավետությամբ: Նշելով, որ ողջ ազգի 3/4–ը կամ 4/5–ը թվում է արդեն բնաջնջված է, նա ասաց, որ չկա պատմության մեջ որևէ դեպք, համենայն դեպս սկսած Լենկ-Թեմուրի ժամանակներից, երբ այդպիսի սարսափելի ոճրագործություն և այդպիսի մեծ մասշտաբով իրականացվի:

Ելույթի վերջում անդրադառնալով Գերմանիայի վերաբեր-

---

[1] Հայաստանի ազգային արխիվ, (այսուհետև տեքստում ՀԱԱ) ֆ. 412, ց. 1, գ. 989, թ. 1-2:

[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1286, թ. 1:

[3] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3911:

մունքի խնդրին՝ Բրայսը հայտարարեց, որ ինքը դեռևս ձեռք չի բերել տեղեկություն, համաձայն որի գերմանական պաշտոնյաները ղեկավարում կամ քաջալերում են այս կոտորածները, սակայն ակնհայտ է, որ միակ հնարավորությունը՝ փրկելու հին քրիստոնյա ազգի մնացորդներին, չեզոք ազգերի հասարակական կարծիքի արտահայտման մեջ է, որը հավանաբար որոշ ազդեցություն կգործադրի Գերմանիայի կառավարության վրա և կստիպի վերջինիս ձեռնարկել միակ քայլը, որով կոտորածները կարող են դադարեցվել:[1]

1915թ. նոյեմբերի 27-ին անգլիական թերթերից մեկում տպագրվեց Բրայսի հոդվածը հայկական կոտորածների մասին: Այստեղ նա գրում էր, որ յուրաքանչյուր նոր փաստ, յուրաքանչյուր նոր վկայություն ավելի են մեծացնում սարսափը՝ հաստատելով անհավատալի իրողությունը: Բրայսը նշում էր, որ այդ չարագարծությունները ֆանատիզմի արդյունք չեն, միևնույն բանը հաստատում են իրար հետ կապ չունեցող տարբեր աղբյուրներ: Իր տրամադրության տակ եղած տեղեկությունների համաձայն, սկսած 1915թ. օգոստոսի 1-ից Հալեպ էին ժամանել շուրջ 20000 հայեր, որոնք բոլորն էլ աքսորվել էին անապատ: Բրայսը գրում էր, որ ճանապարհին երեխաներին խլում էին մայրերից և ջարդուփշուր անում, իսկ նրանց, ում հաջողվում էր փրկվել, ավելի ուշ սպանում էին ժանդարմները:[2]

Բրայսը շարունակում էր քայլեր ձեռնարկել տեղի ունեցող ողբերգական իրադարձությունների մասին ամերիկյան հասարակությանը և իշխանություններին տեղյակ պահելու ուղղությամբ: 1916թ. հունվարի 26-ի համարում "The New York Times" պարբերականը գրում էր, որ հունվարի 25-ին Բրայսը դիմել է Լոնդոնում ԱՄՆ դեսպան Փեյջին: Նա հորդորել է դեսպանին ամերիկյան կառավարությանն արագ կերպով տեղյակ պահել

---

[1] Toynbee A., Armenian Atrocities. The Murder of a Nation, London, New York, Toronto, 1915, pp. 5-14. Լորդերի պալատում հոկտեմբերի 6-ի քննարկումների մասին տես նաև՝ Геноцид Армян в Османской Империи, сборник документов и материалов, под. редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1982, стр. 365-370.

[2] Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Երևան, 1964, էջ 244-245:

առկա փաստերին, որպեսզի շտապ օգնություն առաջարկվի: Դեսպանը Բրայսին հավաստիացրել է, որ հանդիպման մասին անմիջապես կհաղորդի Վաշինգտոն:[1]

Բրայսը Հայկական հարցին անդրադարձավ նաև Փարիզում եղած ժամանակ, որտեղ նա գլխավորում էր անգլո-ֆրանսիական պառլամենտական համաժողովին մասնակցող բրիտանական պատվիրակությունը: Ինչպես գրում էր "The New York Times" պարբերականը 1916թ. փետրվարի 23-ի համարում, Բրայսը հարցազրույց էր տվել Փարիզի պարբերականներից մեկին, որտեղ այլ հարցերի քննարկման հետ միասին նշել էր, որ հայ ժողովուրդը դարձել է ոչ թե կրոնական ֆանատիզմի, այլ այն սրիկաների սառնարյուն, կանխամտածված ատելության զոհը, ովքեր իրենց անվանում են թուրքական կառավարություն և ովքեր մտադիր չեն թույլ տալ որևէ ազգության գոյությունը, բացի իրենց սեփական ազգից:[2]

Փարիզում իր ձեռնարկած քայլերի մասին նա գրում էր Չոպանյանին ուղղված 1916թ. մարտի 3-ի նամակում:

Այստեղ Բրայսը վստահեցնում էր, որ իր համար պատիվ է համարում հայ ազգի խնդրի պաշտպանությունը: Նա նաև նշում է, որ Փարիզում եղած ժամանակ զրուցել է Ֆրանսիայի քաղաքական գործիչների հետ Հայաստանի հարցով և, ընդհանուր առմամբ, դրական վերաբերմունք է տեսել: Նա գրում է, որ Չոպանյանի խնդիրն է Ֆրանսիայում և նրա ընկերներինը՝ Անգլիայում, հասարակության առաջ ներկայացնել Հայաստանի պահանջները: Բրայսը նշում է, որ հրատարակության են պատրաստում մի գիրք, որը կպարունակի կոտորածների և տեղահանության ամբողջական հաշվետվությունը և խնդրում է Չոպանյանին ուղարկել վերջին շաբաթների ընթացքում նրա ստացած տեղեկություններն այդ դեպքերի մասին, եթե այդպիսիք կան:[3]

1916թ. ապրիլի 28-ին Չոպանյանին ուղղված նամակում Բրայսը որպես գաղտնիք Չոպանյանին տեղեկացնում է, որ,

---

[1] Kloian R., ibid., p. 128

[2] ibid., p. 141.

[3] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3916:

համաձայն իր ձեռք բերած տեղեկությունների, անհնար է, որ պատերազմում դաշնակիցների հաղթանակի դեպքում թուրքական իշխանությունը վերականգնվի հայկական շրջաններում: Նա գրում է, որ այդ շրջանների մեծ մասը Ռուսաստանը գուցե ցանկանա անեքսիայի ենթարկել, բայց, իր կարծիքով, նա հայկական ինքնավարություն կստեղծի նվազագույնը մի որոշակի, և ինքը հուսով է մեծ տարածքում: Վերջում Բրայսը կրկին շեշտում է, որ այդ տեղեկությունները գաղտնի են:[1]

Խոսելով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հայկական հարցի առնչությամբ Բրայսի իրականացրած գործունեության մասին՝ անհնար է չանդրադառնալ նրա և երիտասարդ պատմաբան Առնոլդ Թոյնբիի կողմից 1916թ. հրատարակած «Հայերի դրությունն Օսմանյան կայսրությունում 1915-1916թթ..» փաստաթղթերի ստվարածավալ ժողովածուին, որը հանդիսանում է Մեծ Եղեռնի վերաբերյալ հրատարակված արժեքավոր աշխատություններից մեկը:

Ինչպե՞ս կարելի է վերաբերվել այս աշխատությանը. որպես զուտ քարոզչական նկատառումներ ունեցող և հետևաբար օբյեկտիվության ոչ բավարար պաշարով մի գործ, թե որպես զուտ հայանպաստ մի աշխատանք, որի միակ նպատակը համայն աշխարհին հայ ժողովրդի կրած սարսափների մասին տեղեկացնելն էր:

Թուրք պատմաբաններն այս աշխատանքին մոտենում են միայն առաջին տեսանկյունից: Այսպես, Էնվեր Զիա Քարալն իր «Հայկական հարց (1878-1923թթ..)» աշխատության մեջ, խոսելով հայկական կոտորածները փաստագրող աղբյուրների մասին, փաստաթղթերի այս ժողովածուն համարում է զուտ միակողմանի բրիտանական քարոզչություն, որի վրա չարժե նույնիսկ մանրամասն կանգ առնել: Նա գրում է, որ այդ գրքի հրատարակությունը միայն հասարակական կարծիքը շեղելու նպատակ ուներ:[2]

Մեկ այլ թուրք պատմաբան՝ Քամուրան Գյուրունը, իր «Հայկական Թղթապանակ» աշխատության մեջ գրում է, որ

---

[1] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3917:

[2] Enver Zia Karal. Question Armenian (1878-1923), Ankara, 1975, pp. 17-18.

Բրայսի այդ ժողովածուն կազմվել է՝ կողք կողքի դնելով փաստաթղթերը, առանց ստուգելու դրանց ճշգրտությունը, փաստաթղթերը հավաքվել են միայն հայկական աղբյուրներից, կամ հայերին համակրող մարդկանցից, երկրորդ կամ երրորդ ձեռքից:[1]

Իհարկե այս տեսակետն անընդունելի է, և մենք կվորձենք ցույց տալ, որ ժողովածուի կազմողներն ամենայն լրջությամբ են մոտեցել տեղեկությունների հավաստիության խնդրին:

Սակայն ճիշտ չէր լինի միանշանակորեն պնդել երկրորդ տեսակետի ճշմարտացիության մասին, քանի որ անկասկած այս գրքի հրատարակումն ուներ նաև քարոզչական նկատառումներ: Անշուշտ բրիտանական կառավարությանը ձեռնտու էր պատերազմում իր հակառակորդ Թուրքիային դատապարտող տեղեկությունների հրապարակումը, մանավանդ որ հնարավորություն կար դրանք չկանխելու մեջ մեղադրանք առաջադրել Գերմանիային:

Նախ նշենք, որ պատահական չէր այն հանգամանքը, որ Բրայսի հետ միասին այս ժողովածուի կազմմանը ձեռնամուխ եղավ հենց Թոյնբին: Վերջինս արդեն մեկ տարի առաջ՝ 1915թ., հրատարակել էր «Հայկական վայրագություններ: Մի ազգի սպանություն» վերնագիրն ունեցող գրքույկը, որտեղ ներկայացված էր Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի նկատմամբ իրականացվող քաղաքականությունը: Ներկայացնելով կոտորածների սխեման. տեղահանություն, ջարդեր ճանապարհին և դանդաղ մահ սովից և հիվանդություններից անապատներում, Թոյնբին գրում է, որ այդ ամենը կատարվում էր կառավարության ծրագրի համաձայն, Կ. Պոլսից եկող հրահանգները տեղական իշխանությունների կողմից իրականացվում էին ուշագրավ ճշգրտությամբ:[2]

Առանձին գլուխ նվիրելով ջարդերի հնարավոր արդարացումների քննադատությանը և հերքմանը՝ Թոյնբին աշխատության վերջին գլուխը վերնագրել էր «Գերմանիայի վերաբերմունքը»: Նման առանձին գլխի ի հայտ գալն այս աշխա-

---

[1] Kamuran Gürün, The Armenian File, London, Nicosia, Istanbul, 1985, p. 43.
[2] Toynbee A., ibid., pp. 26-68.

տությունում արդեն վկայում է այն մասին, որ այս գիրքն ուներ հակաթուրքականից բացի նաև հակագերմանական տրամադրության ալիք բարձրացնելու միտում:

Այդ գլխում Թոյնբին գրում է, որ պատերազմի մեջ մտնելով՝ Թուրքիան դարձավ Գերմանիայի աշակերտը և իր գործողությունների ազատությունը հանձնեց նրան: Ըստ Թոյնբիի, հավանական չէ, որ հայ ազգի կոտորածը նախաձեռնել են գերմանական իշխանությունները, քանի որ թուրքերը կարիք չունեն որևէ դրդիչների: Սակայն գերմանացիները մնում են մեղադրելի, քանի որ պարզ է, որ գերմանացիները երբեք չեն ձեռնարկել քայլեր կոտորածների հրամանները վերացնելու ուղղությամբ, և դա այն դեպքում, երբ բռնությունները կարող էին կանգնեցվել հենց սկզբում մի բառի շնորհիվ:

Միաժամանակ Թոյնբին գրում է, որ հարցը դեռևս մնում է բաց: Գերմանիան կարող է տալ պատասխան, որը հենց իրենք կողջունեն բոլորից առավել, եթե միայն նա առաջ տանի իր ձեռքը և փրկի հայերին: Ինչ էլ անի Գերմանիան, պետք է դա անի արագ, ոչ միայն որպեսզի վերջին զոհերին խլի մահվան երախից, այլև որովհետև մարդկության դատավճիռը հրաժարվում է սպասել և առաջ է շարժվում բոլոր երկրներում:[1]

Նշենք, որ Թոյնբիի այս գիրքը լայն տարածում ստացավ: Այն թարգմանվեց ֆրանսերեն, գերմաներեն և հայերեն լեզուներով:[2] Միաժամանակ գրքի մասին հայտնի դարձավ նաև Ռուսաստանում: Մասնավորապես նրա մասին հրապարակումներ եղան մի շարք մոսկովյան պարբերականներում:[3] Ինչպես տեսնում ենք, արդեն 1915թ. Թոյնբին լրջորեն զբաղվել էր հայկական կոտորածների ուսումնասիրման և դրանք հրապարակային դարձնելու խնդրով:

Այն մասին, որ «Հայերի դրությունն Օսմանյան կայսրությունում 1915-1916թթ.» ժողովածուի հրատարակումը ուներ նաև քարոզչական նպատակներ, վկայում է ժողովածուի սկզբում

---

[1] Toynbee A., ibid., pp. 106-117.

[2] Гарибджанян Г., Геноцид Армян и мировая общественность, Ереван, 1989, стр. 45.

[3] Մնացականյան Ա., Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1965, էջ 144-145:

հրատարակված արտգործնախարար Գ-ռեյին ուղղված Բրայսի նամակը և վերջինիս պատասխանը: Բրայսը գրում է, որ հանուն պատմական ճշմարտության, ինչպես նաև այն հարցի տեսանկյունից, որն ի հայտ կգա պատերազմի ավարտից հետո, ինքն անհրաժեշտ է համարում շարադրել դեպքերի ընդհանուր պատմությունը: Դա շատ ցանկալի է ոչ միայն այն բանի համար, որ նշված փաստերը կգրանցվեն պատմաբանների համար, այլև պատերազմող, չեզոք երկրների ժողովուրդների հասարակական կարծիքը հնարավորություն կունենա, տեղեկանալով Փոքր Ասիայում և Հայաստանում տեղի ունեցածի մասին, կայացնելու իր դատավճիռը, երբ ներկա պատերազմի ավարտին Մերձավոր Արևելքի քաղաքական կարգավորումը նախաձեռնվի: Պատասխան նամակում Գ-ռեյն ասում է, որ այդ փաստաթղթերի ժողովածուն արժեքավոր կլինի ոչ միայն որպես ապագա պատմաբանների համար տեղեկության աղբյուր, այլև Բրայսի նամակում նշված այլ նպատակների համար:[1]

Այն փաստի օգտին, որ բրիտանական կառավարությունը շահագրգռված էր «հայկական իրադարձությունները» քարոզչական նպատակներով օգտագործելու և առաջին հերթին դրանով Գերմանիային հարվածելու գործում, վկայում են նաև այլ փաստեր:

Այսպես, Բրայսի և Թոյնբիի ժողովածուի հրապարակումից մի քանի ամիս առաջ՝ 1916թ. հուլիսի 25-ին հրապարակվեց "The Times" պարբերականի «Պատերազմի պատմություն և հանրագիտարան» հոդվածաշարքի առանձին մի գլուխ՝ նվիրված հայկական կոտորածներին: Այստեղ նշվում էր, որ երիտթուրքերի այս քաղաքականությունը ճշտորեն համապատասխանում է գերմանական ձգտումներին:[2]

---

[1] The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916. Documents Presented to Viscount Grey of Fallodon by Viscount Bryce, Uncensored Edition, Edited and with an Introduction by Ara Sarafian, Taderon Press, England, 2000, pp. 14-16.

[2] The Times, History and Encyclopaedia of the War, The Extermination of the Armenians, Part 101, vol. 8, Chapter CXXXIII, July 25, 1916, pp. 353-392.

Իսկ 1917թ. Լոնդոնում հրատարակվեց «Գերմանիա, Թուրքիա և Հայաստան» վերնագրով փաստաթղթերի մի ժողովածու, որի ներածության մեջ ուղղակիորեն ասվում էր, որ բերված փաստերը ընթերցողին պետք է համոզեն երեք հարցում.

1. Հայաստանում գտնվող գերմանացիները լի են վրդովմունքով և ցանկանում են տեսնել թուրքական կառավարության կողմից կիրառվող բնաջնջման մեթոդների դադարեցումը այն չափով, որքան Մեծ Բրիտանիայում Հայկական հարցի անկեղծ բարեկամները:

2. Գերմանական մամուլում և գերմանական պամֆլետային գրականությունում փաստերի անպատասխանատու խեղաթյուրման և ընդհանրապես գերմանական հասարակության անտարբերության պատճառով մեծամասնությունը կամ անտեղյակ է իրերի իսկական դրության, կամ արհամարհում է այն:

3. Գերմանական կառավարությունը կարող էր դադարեցնել բռնությունները, եթե ցանկանար:[1]

Անդրադառնանք «Հայերի դրությունն Օսմանյան Կայսրությունում 1915-1916թթ.» փաստաթղթերի ժողովածուի ստեղծման գործընթացին իբրև արժանահավատ և վավերականություն ունեցող մի աշխատանքի:

1916թ. փետրվարից Ջեյմս Բրայսը և Առնոլդ Թոյնբին սկսեցին փաստեր հավաքել Հայաստանում վերջին դեպքերին վերաբերող ժողովածուի հրատարակման համար: Նշենք, որ Օսմանյան կայսրությունից հայերի կոտորածների վերաբերյալ եկած հաղորդագրությունների մի զգալի մասը նախ հասել էր Միացյալ Նահանգներ, որտեղից էլ Պատվելի Ջեյմս Բարտոնի միջոցով ուղարկվել էին Բրայսին և Թոյնբիին:[2]

Անհրաժեշտ ենք համարում ավելի մանրամասն կանգ առ-

---

[1] Germany, Turkey and Armenia. A selection of Documentary Evidence Relating to the Armenian Atrocities From German and Other Sources, London, 1917, pp. 1-2.

[2] Sarafian A., The Archival Trail, Authentication of The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916, in Remembrance and Denial. The Case of the Armenian Genocide, ed. Hovannisian R., Wayne State University Press, 1998, p. 54.

նել այս հարցում Բրայսի և Թոյնբիի՝ Պատվելի Ջեյմս Բարտոնի հետ ունեցած համագործակցության վրա:

Նախ նշենք, որ Ջեյմս Բարտոնը քննարկվող ժամանակահատվածում հանդիսանում էր մի շարք ամերիկյան կազմակերպությունների ղեկավար, որոնք այս կամ այն կերպ առնչվում էին հայկական խնդրին: Նա Օտարերկրյա միսիաների լիազորների ամերիկյան խորհրդի քարտուղարն էր, սա ամերիկյան միսիոներական կազմակերպություն էր, որի կենտրոնատեղին գտնվում էր Բոստոնում: Կազմակերպությունն ուներ վաղեմի շահեր Օսմանյան կայսրությունում:

Բարտոնը մեծ հեղինակություն էր վայելում նախագահ Վիլսոնի վարչակազմում և ուներ հնարավորություն՝ ծանոթանալ Օսմանյան կայսրությունից ստացվող ամերիկյան հյուպատոսական զեկույցներին: Արդեն 1915թ. հունիսին ԱՄՆ պետդեպարտամենտը Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի հետապնդումների մասին տեղյակ պահեց Բարտոնին և մինչև 1915թ. հոկտեմբեր նրան ավելի լայն հնարավորություն տրվեց ծանոթանալու այդ նյութերին: Բարտոնն առաջին անգամ ներգրավվեց Օսմանյան կայսրությունում հայերի կացության մասին տեղեկությունների հրապարակման գործում Հայերի հանդեպ իրականացվող վայրագությունների կոմիտեի միջոցով, որը հիմնվել էր 1915թ. սեպտեմբերի կեսերին հենց Բարտոնի նախագահությամբ, և այնուհետև Հայերի և ասորիների օգնության ամերիկյան կոմիտեի միջոցով, որը հիմնվել էր 1915թ. նոյեմբերին նույնպես նրա նախագահությամբ:[1] Այդ հաղորդագրությունների մի մասը հրապարակվեց Նյու-Յորքում արդեն 1915թ. հոկտեմբերի 4-ին:

Բրայսի և Բարտոնի միջև նամակագրական կապ էր հաստատվել դեռևս 1915թ.: Այսպես 1915թ. նոյեմբերի 11-ին Բրայսին ուղարկված նամակում Բարտոնը գրում էր. «Մեր պետդեպարտամենտը թույլատրել է ինձ հրապարակել այդ նյութերը, եթե ես կարողանամ թաքցնել տեղեկատվության աղբյուրը:

---

[1] Sarafian A., The Paper Trail: The American State Department and the Report of Committee on Armenian Atrocities, in Revue du Monde Arménien. Moderne et Contemporain, Tome I, Paris, 1994, pp. 127-129.

Թուրքիայում գտնվող հյուպատոսները զգուշացվել են (թուրքական իշխանությունների կողմից) չհաղորդել տվյալներ տեղական պայմանների մասին: Կա վտանգ, որ եթե հրապարակումը հանգեցնի հյուպատոսների հետքի բացահայտմանը, վերջիններս կարող են հեռացվել երկրից»:[1]

Այսպիսին էին այն հանգամանքները, որոնք հարկադրեցին Բրայսին և Թոյնբիին փաստաթղթերի ժողովածուում շատ դեպքերում թաքցնել տեղեկությունների հեղինակների ու բնակավայրերի անունները: Սակայն այդ բոլոր տվյալները նրանք ունեին և նույն 1916թ. հիմնական ժողովածուից առանձին հրատարակվեց «Անձնանունների և տեղանունների գաղտնագիր, որոնք չեն հրապարակվել «Հայերի դրությունն Օսմանյան կայսրությունում 1915-1916թթ.» հրատարակության մեջ» գրքույկը:[2]

Բարտոնի այս նամակը ցույց է տալիս, որ Մեծ Բրիտանիայում քաջատեղյակ էին Միացյալ Նահանգներում հայերի կոտորածների վերաբերյալ առկա տեղեկություններին: Պատահական չէ, որ 1916թ. փետրվարի 1-ին Թոյնբին Բարտոնին գրած նամակում առաջարկում էր հավելյալ տեղեկություններ տրամադրել հայկական կոտորածների վերաբերյալ:

Բրայսի և Թոյնբիի հետ Բարտոնի սերտ համագործակցության մասին է վկայում նաև 1916թ. մարտի 7-ին Բրայսին ուղարկած Բարտոնի նամակը: Բարտոնը գրում է, որ ձեռք է բերել մեծ քանակությամբ նյութեր, որոնք իրեն տրվել են պետդեպարտամենտի կողմից, և տեղեկացնում են թուրքական կայսրության տարբեր մասերում իրավիճակի մասին: Նա գրում է, որ հենց հիմա փոստով պրն. Թոյնբիին է ուղարկում զգալի քանակությամբ նյութ, քանի որ վերջինս Բրայսի անունից խնդրել է բոլոր այդ նյութերը ուղարկել իրեն հնարավորինս շուտ՝ պատրաստվող հրատարակության համար:

Բարտոնը նաև ավելացնում է, որ հնարավոր է ինքը ձեռք բերի ավելի շատ ժամանակակից նյութեր, բայց հակված է մտածելու, որ պրն. Թոյնբին բավարար քանակությամբ նյութ

---

[1] The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916, p. XI.

[2] Sarafian A., The Archival Trail, p. 53.

կունենա ազդեցիկ գործ ստեղծելու համար:[1]

1916թ. մարտի 6-ին Թոյնբիին ուղարկած նամակում Բարտոնը գրում է, որ առաջին անգամ պատրաստվում է պատասխանել փետրվարի 1-ին Թոյնբիի՝ իրեն ուղղված նամակին, որում Թոյնբին խնդրում էր փաստաթղթեր ուղարկել հայկական ջարդերի և կոտորածների վերաբերյալ: Բարտոնը գրում է, որ ուղարկում է Թոյնբիին տարբեր փաստաթղթեր, որոնց մի մասը նորություն կլինի վերջինիս համար և մյուսները կարող են լրացնել այն, ինչ Թոյնբին արդեն ունի: Ընդ որում, այդ փաստաթղթերի օգտագործման դեպքում անհրաժեշտ է ցանկացած հրապարակային հայտարարությունում թաքցնել այն փաստը, որ դրանք պաշտոնական փաստաթղթեր են և ուղարկվել են Վաշինգտոնի կառավարությանը ԱՄՆ-ի հյուպատոսների և դեսպան Մորգենթաուի կողմից: Նա նաև գրում է, որ չպետք է հրապարակվեն միսիոներների անունները, քանի դեռ անորոշ է, թե ինչ է լինելու Թուրքիայի ապագան, իսկ այդ միսիոներները ցանկանում են վերադառնալ և աշխատել այնտեղ, և նրանց մի մասն արդեն այնտեղ է:[2]

Անհրաժեշտ է նշել, որ Թոյնբին մեծ ուշադրություն էր դարձնում ստացված հաղորդագրությունների հավաստիությանը: Այսպես, 1916թ. փետրվարի 15-ին Բարտոնին ուղղված նամակում Թոյնբին խնդրում էր մանրամասնություններ ուղարկել մեր կողմից արդեն հիշատակված Նյու-Յորքում հոկտեմբերի 4-ին Հայերի հանդեպ իրականացվող վայրագությունների կոմիտեի հրապարակած զեկույցի վերաբերյալ: Նա նաև հարցնում էր, թե արդյոք Բարտոնը ունի՞ կամ կարո՞ղ է ձեռք բերել հաղորդագրություններ հայերի վերաբերյալ Վանում գտնվող պրն. Էռնեստ Յարրոուից, Պարտիզակում գտնվող դոկտոր Ջեյմս Մաքնաուբոնից:[3]

Այն հանգամանքի մասին, որ ժողովածուի կազմողները մեծ ուշադրություն էին հատկացնում փաստերի հավաստիության խնդրին, վկայում է նաև այն փաստը, որ նախքան տպագրումը

---

[1] Sarafian A., The Paper Trail, p. 131.
[2] ibid., p. 131.
[3] Sarafian A., The Archival Trail, p. 55.

Բրայսը ժողովածուն ուղարկել էր մի շարք անվանի մտավորականների և խնդրել կարծիք հայտնել հրապարակվող փաստաթղթերի արժեքի մասին: Այդ մտավորականներն էին Շեֆիլդի համալսարանի փոխռեկտոր Հ. Ա. Լ. Ֆիշերը, Օքսֆորդի համալսարանի հունարեն լեզվի պրոֆեսոր Ժ. Մարեյը և հայտնի ամերիկյան իրավաբան, ամերիկյան իրավաբանների ընկերության նախկին նախագահ Մ. Սթորին: Նրանք բոլորն էլ իրենց պատասխաններում նշում էին, որ բերված փաստերը վստահելի են և նրանց վավերականությունը կասկած չի հարուցում:[1]

Ընդհանուր առմամբ պետք է ասել, որ Հայերի և ասորիների օգնության ամերիկյան կոմիտեն հանդիսացավ փաստաթղթերի այս ժողովածուում հայտնված 76 զեկույցների աղբյուրը:[2]

Իհարկե, Բրայսը և Թոյնբին չէին բավարարվում միայն Միացյալ Նահանգներից ստացված տեղեկություններով և օգտագործում էին իրենց ունեցած այլ հնարավորությունները ևս: Այսպես՝ Ա. Սաֆրաստյանին ուղղված իր նամակներից մեկում, որի վրա կա Բրայսի կողմից արված ձեռագիր «գաղտնի» մակագրությունը, նա գրում է, որ պրն. Թոյնբին Հայաստանում տեղի ունեցած վերջին դեպքերին վերաբերող փաստաթղթեր է հավաքում իր անունից հրատարակելու համար:

Բրայսը Սաֆրաստյանին խնդրում է տեղեկություններ հաղորդել Արևմտյան Հայաստանի մի շարք բնակավայրերում տեղի ունեցած դեպքերի և հայերի տեղահանության մասին թուրքական իշխանությունների ընդունած հայտարարության մասին:[3]

1916թ. օգոստոսի 31-ին Չոպանյանին ուղարկած նամակում Բրայսը շնորհակալություն է հայտնում իրեն ուղարկած նյութերի, համար, նշում, որ դրանք ուղարկել է պրն. Թոյնբիին, որը գուցե կկարողանա տեղ գտնել դրանց համար փաստաթղթերի գրքում, որը գրեթե պատրաստ է:[4]

---

[1] The Treatmant of Armenians in the Ottoman Empire 1915-1916, pp. 26-29.

[2] Ժողովածուում առկա բոլոր փաստաթղթերի ստացման աղբյուրները և վերջիններիս դասակարգումը ըստ այդ հաղորդագրությունների հեղինակների տես՝ Sarafian A., The Archival Trail, pp. 58-61.

[3] ՀԱԱ, ֆ. 412, ցուցակ 1, գ. 989, թ. 23-26:

[4] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3919:

Ավարտելով փաստաթղթերի այս ժողովածուի ներկայացումը՝ նշենք, որ նրա առաջաբանը գրել էր Բրայսը, և ժողովածուում տրված էր հայոց պատմության համառոտ շարադրանքը մինչև 1915թ. ներառյալ:[1]

Ինչ վերաբերում է ժողովածուի նկատմամբ գնահատականին, պետք է նշել այն հանգամանքը, որ Բրայսի և Թոյնբիի կազմած փաստաթղթերի ժողովածուն, ունենալով նաև քարոզչական նկատառումներ, միաժամանակ Մեծ Եղեռնի վերաբերյալ հրապարակված աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեցող աշխատություն է, որը կազմվել է խնամքով և հնարավորին ճշգրտությամբ: Բրայսը և Թոյնբին գրքի հրատարակման ուղղությամբ կատարել են դրվատանքի արժանի աշխատանք:

Նման կարծիք է արտահայտում այս աշխատության մասին նաև անգլիացի պատմաբան Քրիստոֆեր Ուոքերը: Նա գրում է, որ այդ աշխատությունն իր մնայուն տեղն ունի Հայկական հարցի շուրջ բանավեճում, քանի որ տալիս է մի շարք պարզ և անհերքելի վկայություններ այն մասին, ինչ պատահեց 1915թ. և 1916թ. սկզբին:[2]

Հարկ է նշել, որ պատերազմի տարիներին Թոյնբիի և Բրայսի համագործակցությունը չսահմանափակվեց միայն մեր կողմից հիշատակված փաստաթղթերի ժողովածուի հրատարակմամբ: 1917թ. Թոյնբին հրատարակեց Թուրքիայի վերաբերյալ ևս մեկ աշխատություն, որի նախաբանը գրել էր Բրայսը: Գրքում Թոյնբին հակիրճ ներկայացնում էր 1915թ. սկսված հայկական ջարդերի պատմությունը: Նա գրում է, որ այդ ամենը թուրքական կառավարության ուղղակի աշխատանքն է, և հրամանները գալիս են Կ. Պոլսից: Օսմանյան պետությունը պատասխանատու է պատերազմի ընթացքում իր հպատակ ժողովուրդների հանդեպ իրականացրած սարսափելի ոճրագոր-

---

[1] The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916, pp. 19-25 և pp. 596-649.

[2] Walker Ch., Britain as World Policeman: The Armenian Case and the Failure of Moral Imperatives, in Genocide and Human Rights, A Special Issue of the Journal of Armenian Studies, Volume IV, No. 1 and 2 (1992), National Association for Armenian Studies and Research, Armenian Heritage Press, p. 93.

ծությունների համար:[1]

Աշխատության առաջաբանում Բրայսը գրում էր, որ չպետք է զարմանալ այն բանի կապակցությամբ, որ դաշնակից տերություններն իրենց նպատակ են հռչակել վերջ տալ թուրքական իշխանությանը Եվրոպայում և չպետք է տարակարծիք լինել նրանց վճռականության հանդեպ՝ ազատագրել թուրքական կայսրության քրիստոնյա ժողովուրդներին թե՛ Ասիայում, և թե՛ Եվրոպայում: Բրայսը նշում է, որ եվրոպական տերությունները պարտավոր էին դա անել ավելի քան մեկ դար առաջ: Ըստ Բրայսի, դաշնակից տերություններն անհավատարիմ կգտնվեն իրավունքի և հումանիզմի բոլոր սկզբունքներին, որոնց համար նրանք կռվում են, եթե նրանք չհայտարարեն, որ ոչ մի թուրքական կառավարության հետագայում չի թույլատրվելու բռնանալ այլակրոն ազգերի վրա:[2]

Թոյնբին այս շրջանում ևս մեկ աշխատություն հրատարակեց Թուրքիայի վերաբերյալ, որի մեջ կրկին անդրադարձավ հայկական կոտորածներին: 1917թ. Նյու-Յորքում հրապարակված այդ աշխատության մեջ խոսելով 1915թ. հայկական ջարդերի մասին՝ նա գրում էր, որ հայերը չեն կոտորվել տարերայնորեն տեղական մահմեդականների կողմից, նախաձեռնությունն ուղղակի եկել է Կ. Պոլսի կենտրոնական կառավարությունից, որը ծրագրել էր Օսմանյան կայսրությունում հայ ազգի համակարգված բնաջնջումը:

Հայերը կոտորվեցին չեթե հրոսակների կողմից, որոնք հիմնականում բաղկացած էին բանտերից ազատված հանցագործներից: Վերջիններս ազատվել էին կառավարության կողմից հենց այդ աշխատանքի համար:[3]

Խոսելով այս շրջանում Բրայսի ծավալած գործունեության մասին՝ նշենք, որ նա կապ էր պահպանում ոչ միայն ամերիկյան կազմակերպությունների և անհատների, այլև եվրոպացի հայասեր գործիչների հետ: Մասնավորապես, նա կապ էր հաստատել 1916թ. օգոստոսին Հոլանդիա մեկնած Յոհաննես

---

[1] Toynbee A., The Murderous Tyranny of the Turks, London, 1917, pp. 15-17.
[2] ibid., pp. 4-6.
[3] Toynbee A., Turkey: A Past and a Future, New York, 1917, p. 22.

Լեփսիուսի հետ և նրա հետ որոշ նյութերի փոխանակում կատարել:[1]

Բրայսի ակտիվ գործունեությունը Հայկական հարցում իր վրա էր հրավիրել նաև Ամենայն հայոց կաթողիկոսի ուշադրությունը: Եվ պատահական չի կարելի համարել, որ կաթողիկոսը 1916թ. ապրիլի 27-ին առանձին կոնդակով իր հայրապետական օրհնությունն էր առաքել Ջեյմս Բրայսին: Կոնդակը 1916թ. նոյեմբերի 30-ին Բրայսին էր հանձնել Գերաշնորհ Տեր Գևորգ արքեպիսկոպոս Ութուճյանը:[2] Կոնդակի ամբողջական տեքստը հրապարակվեց Էջմիածնի «Արարատ» ամսագրում:[3]

Բրայսն իր հերթին շնորհակալություն հայտնեց կոնդակի համար և նշեց, որ այն ամենն, ինչ ինքը կարողացել է անել Հայկական հարցի համար, արել է ամենայն անկեղծությամբ, որովհետև իր արտոնությունն ու պարտքն է համարել պաշտպանել մի դատ, որը քրիստոնեության և ազատագրության դատն է: Միաժամանակ Բրայսը հույս է հայտնել, որ երբ դաշնակիցները հաղթանակով ավարտին կհասցնեն պատերազմը, թուրքը կհեռանա Հայաստանից և նրա փոխարեն այնտեղ կհաստատվի մի քաղաքակիրթ վարչություն՝ որն ընդունակ կլինի կյանքի և գույքի ապահովություն տալ ազգաբնակչությանը:[4]

Բրայսին կաթողիկոսական կոնդակ շնորհելու հարցում իր գոհունակություն արտահայտեց ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան 1916թ. դեկտեմբերի 15-ին կաթողիկոսին ուղարկված հեռագրում:[5]

Նույն՝ 1916թ. Լոնդոնում, Բրայսի առաջաբանով, լույս տեսավ հայ գրականության դասականների մի մեծ ժողովածու: Այդ գրքի վաճառքից ստացված ամբողջ գումարը հանձնվեց Հայ գաղթականների օգնության ֆոնդին:[6]

---

[1] Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուս, հայանվեր գործիչն ու հրապարակախոսը, Երևան, 2001, էջ 64:
[2] «Հովիտ», Թիֆլիս, թիվ 8, 1917թ. փետրվարի 26, էջ 115-116:
[3] «Արարատ», Էջմիածին, թիվ Գ-Դ, 1916թ. մայիս-հունիս, էջ 313-314:
[4] «Հովիտ», թիվ 9, 1917թ. մարտի 5, էջ 134-135:
[5] ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 5, գործ 128, թ. 2-3:
[6] "Армяне и Война", Одесса, 1916г. номер 6, стр. 89.

Բրայսն առաջաբան էր գրել նաև Լոնդոնի միացյալ հայկական ընկերության փոխնախագահ Ա. Հակոբյանի կողմից 1917թ. հրատարակած «Հայաստանը և պատերազմը» աշխատության համար: Աշխատության նպատակն էր բրիտանական հասարակությանը ներկայացնել պատերազմի ընթացքում հայ ժողովրդի կրած տառապանքները, վերջինիս ցանկություններն ու իղձերը: Անկասկած Բրայսի առաջաբանը մեծացնում էր գրքի արժեքն ու հեղինակությունը:[1]

1916թ. դեկտեմբերի 20-ին Չոպանյանին ուղղված նամակում Բրայսը հույս էր հայտնում, որ նա ստացել է Հայաստանում թուրքական ոճրագործություններին վերաբերող իրենց հրատարակած գիրքը, որը լայնորեն տարածվում է ԱՄՆ-ում և պետք է մեծ ազդեցություն գործի այնտեղ:

Նա գրում էր, որ իրենք վստահ են, որ եթե որևէ հարց կա Գերմանիայի կամ թուրքերի հետ բանակցություններ սկսելու վերաբերյալ, հայերի խնդիրը կբարձրացվի թե՛ ֆրանսիական, և թե՛ բրիտանական կառավարությունների կողմից, և որ ամեն ինչ կարվի, որպեսզի թուրքերն երբեք հնարավորություն չունենան իշխելու կամ կոտորելու իրենց քրիստոնյա հպատակներին:[2]

1917թ. ընթացքում Բրայսը շարունակում էր իր նամակագրական կապն Ա. Չոպանյանի հետ: 1917թ. ապրիլի 10-ի նամակում Բրայսը գրում է, որ հավանաբար Գերմանիան կստիպի թուրքերին պատերազմ հայտարարել ԱՄՆ-ին, ինչը շատ ծանր հարված կլինի մեծաքանակ հայ փախստականների համար, ովքեր այժմ գտնվում են Փոքր Ասիայում և Սիրիայում դեռևս գործող ամերիկյան միսիոներների պաշտպանության ներքո: Բրայսը նաև տեղեկացնում է, որ որոշ ժամանակ առաջ ինքը գրել է արտգործնախարարություն՝ խնդրելով ցուցումներ տալ Միջագետքում բրիտանական զորքերի հրամանատարին, որպեսզի վերջինս դիմի արաբ շեյխերին՝ Եփրատի և Մոսուլի շրջակայքում գտնվող հայ փախստականներին օգնելու առաջարկով: Միաժամանակ Ռուսաստա-

---

[1] Hacobian A., Armenia and the War, Hodder and Stoughton, London New York Toronto, Printed in Great Britain, 1917, pp. XI-XVII.

[2] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3922:

նում տեղի ունեցած հեղափոխության կապակցությամբ Բրայսը գրում է, որ Հայաստանի հեռանկարը նկատելիորեն բարելավվել է, և հույս է հայտնում, որ Հայաստանին կտրվի ինքնավարություն, և Ռուսաստանն էլ եռանդով կշարունակի պատերազմը Գերմանիայի դեմ:[1] Նույն օրը Ա. Սաֆրաստյանին ուղղված նամակում Բրայսը գրում էր, որ Թուրքիայի կողմից ԱՄՆ-ին պատերազմ հայտարարելու դեպքում հայ փախստականների վիճակը կլինի ավելի վատ, քան երբևէ, հատկապես եթե ամերիկյան միսիոներները թողնեն Թուրքիայի տարածքը:[2]

1917թ. հոկտեմբերի 22-ին Չոպանյանին ուղղված նամակում Բրայսը խնդրում է իրեն ուղարկել տպագիր հուշագիր, որը կպարունակեր Չոպանյանի կողմից իրեն հաղորդած տվյալները՝ կապված մահմեդականների ծրագրերի և պանիսլամական քարոզչության հետ, որն ինքը կտրամադրի Հնդկաստանի նախարարությանը և արտգործնախարարությանը: Բրայսը գրում է, որ լավ կլինի, որ վերջիններս տեղյակ լինեն այդ ծրագրերին, որոնք վտանգավոր են ինչպես Հնդկաստանի, այնպես էլ Պարսկաստանի և Կովկասի համար:[3]

Սաֆրաստյանին ուղղված 1917թ. հոկտեմբերի 27-ի նամակում Բրայսը շնորհակալություն է հայտնում նրա կողմից Անդրկովկասում դեպքերի շատ հետաքրքիր հանրագումարի համար: Նա նաև տեղեկացնում է, որ Չոպանյանն իրեն արդեն գրել է Գերմանիայի պանիսլամական պրոպագանդայի մասին, որն առաջ է տարվում Կովկասում թուրքերի և այլ մահմեդականների շրջանում, ինչպես նաև Ռուսաստանի այլ տարածքներում: Նշելով իր սեփական կարծիքը՝ Բրայսը գրում է, որ Ռուսաստանի այլ շրջաններում դա հազիվ թե մեծ վտանգ պատճառի, բայց Կովկասում կարող է դա անել: Նա գրում է, որ այդ պայմաններում խիստ կարևոր է, որ հայերն ու վրացիները գործեն միասին:[4]

---

[1] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3923:
[2] ՀԱԱ, ֆ. 412, ցուցակ 1, գործ 989, թերթ 18-19:
[3] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3926:
[4] ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 989, թերթ 21:

Ահա այսպիսի պայմաններում հայ ժողովուրդը մուտք գործեց 1918թ., որի սկիզբն արդեն խիստ վտանգավոր էր հայ ժողովրդի համար:

Օգտվելով ռուսական զորքերի կազմալուծումից՝ 1918թ. հունվարի վերջին թուրքերը կովկասյան ճակատում լայնածավալ հարձակման անցան: 1918թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում Ռուսաստանի և քառյակ դաշինքի պետությունների միջև կնքված հաշտության պայմանագրով Թուրքիային էին անցնում ոչ միայն Արևմտյան Հայաստանի տարածքները, այլև Կարսը, Արդահանը և Բաթումը:[1]

Ստեղծված պայմաններում ինչպիսին էր Բրայսի դիրքորոշումը: Այդ մասին կարելի է դատել հետևյալ փաստից: 1918թ. փետրվարին Հոլանդիայի «Խաղաղության ընկերության» անունից Բրայսին առաջարկվեց մասնավոր հանդիպում կազմակերպել գերմանական ռայխստագի անդամներից մի քանիսի հետ՝ հաշտության պայմանների շուրջ բանակցելու նպատակով: Բրայսն այս առաջարկը մերժեց՝ գրելով մասնավորապես հետևյալը. «Գերմանական կառավարության վերջին գործողությունները Ռուսաստանում հակադրվում են «առանց ասնեքսիաների» քաղաքականությանը և հակադրվում են այլ ժողովուրդների իրավունքների հարգմանը, որը ռայխստագը ցանկանում է հայտարարել: Գերմանական կառավարությունն այժմ մասնատում է Ռուսաստանը և աշխատում է Ռուսաստանից կտրել նոր, փոքր պետություններ: Վերջիններս ակնհայտորեն լինելու են Գերմանիայի և Ավստրիայի վասալները կամ ենթակաները: Գերմանիայի վերջին գործողությունն էր ռուս բոլշևիկներից կորզված պայմանագրով Թուրքիային բռնակցել Անդրկովկասի զգալի մասը՝ բնակեցված քրիստոնյաներով, որոնք հանձնվել են նրանց ձեռքը, ովքեր վերջերս իրականացրին հայկական կոտորածները»:[2]

Բրայսի մտահոգությունը երևում է նաև այս շրջանում Չոպանյանին ուղղված նամակներից: Եթե 1918թ. փետրվարի 8-ի

---

[1] Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը, 1918թ. մայիս, Երևան, 1998, էջ 27:

[2] Fisher H. A. L., ibid., vol. II, pp. 141-142.

նամակում Բրայսը գրում է, որ իր ունեցած տեղեկությունները Թիֆլիսից ընդհանուր առմամբ բարենպաստ են, շեշտում է հայերի և վրացիների միջև համագործակցության անհրաժեշտության և հայկական ճակատի ապահովման կարևորությունը,[1] ապա մարտի 15-ի նամակում նա արդեն գրում է, որ իրենք լիովին զգում են այն սարսափելի իրավիճակը, որում հայտնվել են հայերն ինչպես Անդրկովկասում, այնպես էլ նախկին թուրքական նահանգներում:[2]

Միաժամանակ պետք է նշել, որ Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ կար տեղեկատվության պակաս: Այս հանգամանքը երևում է հետևյալ փաստից: Մեր հիշատակած նամակում Բրայսը գրում է, որ Էրզրումի համար խիզախորեն կռվող հայերի հիմնական խնդիրը իրենց դիրքերի պաշտպանումն է: Մինչդեռ Էրզրումն արդեն ընկել էր փետրվարի 27-ին:[3]

Բրայսի ձեռնարկած քայլերի մասին մեզ շարունակում են տեղեկություններ տալ վերջինիս նամակները Ա. Չոպանյանին: Այսպես 1918թ. մարտի 26-ի նամակում Բրայսը գրում է, որ ինքը պնդել է, որ հարավային և կենտրոնական Պարսկաստանում գտնվող անգլիական ուժերը կարող են ուղարկվել դեպի հյուսիս՝ անելու համար այն ինչ հնարավոր է, սակայն նաև նշում է, որ խոչընդոտները շատ մեծ են:

Միաժամանակ կարևոր խնդիր էր շարունակում մնալ տեղեկությունների ստացման դժվարությունը: Այդ մասին Բրայսը գրում է իր 1918թ. հուլիսի 5-ի նամակում՝ ասելով, որ իրենք ոչինչ չգիտեն Կովկասի մասին, բացի կիսատ-պռատ, հաճախ իրար հակասող լուրերից, որոնք հայտնվում են բրիտանական մամուլում: Նա գրում է, որ կառավարության անդամների հետ մասնավոր զրույցների ընթացքում վերջիններս խոր համակրանքով են խոսում հայերի փայլուն ծառայությունների մասին կովկասյան ճակատում: Նույն նամակում Բրայսը խնդրում է Չոպանյանին իրեն ուղարկել Կովկասի վերաբերյալ ցանկա-

---

[1] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3928:
[2] Նույն տեղում, թիվ 3929:
[3] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 96:

ցած կարևոր տեղեկություն:[1]

Մինչ Մուդրոսի զինադադարի կնքումը Հայկական հարցում Բրայսը ձեռնարկեց ևս մեկ գործողություն:

Դա Բաքվի գրավման կապակցությամբ բրիտանական պատերազմական նախարարության հայտարարությանն (որում մեղադրանքներ էին հնչում նաև հայերի հասցեին) ի պատասխան քայլերի ձեռնարկումն էր:

Մասնավորապես, 1918թ. սեպտեմբերի 30-ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարարին ուղղված նամակում Բրայսը գրում էր, որ պատերազմի ողջ ընթացքում հայ ժողովուրդը որպես ամբողջություն արել է ամեն ինչ և տանջվել այնքան, որ արժանի է համակրանքի և հարգանքի: Մեծ քանակությամբ հայեր կամավոր զինվորական ծառայության մեջ էին մտնում թե՛ Ֆրանսիայում, և թե՛ Ամերիկայում, հայերը հանդիսացել են Կովկասի ռուսական բանակի լավագույն մարտիկները և մեծապես աջակցել են Էրզրումի գրավմանը: Իսկ կովկասյան նահանգները բոլշևիկների կողմից լքվելուց հետո նրանք միայնակ հերոսաբար դիմադրել են՝ պաշտպանելով իրենց: Նամակի վերջում Բրայսը նշում է, որ մեծ հուսահատություն կլինի թե՛ Ֆրանսիայի, թե՛ Եվրոպայի և թե՛ Ռուսաստանի հայերի համար, որոնք իրենցից կախված ամեն ինչ անում են հանուն դաշնակիցների գործի, եթե ենթադրվի, թե իրենք խարան են դնում ողջ հայ ազգի վրա:[2] Այդ կապակցությամբ Չոպանյանին 1918թ. հոկտեմբերի 4-ին գրած նամակում Բրայսն ասում է, որ Անգլիայում Հայաստանի բոլոր բարեկամները խիստ ափսոսում են պատերազմական նախարարության՝ Բաքվի դեպքերի վերաբերյալ հայտարարության կապակցությամբ, քանի որ ինքը լսել է, որ հայերը հուսահատ կռվել են ևս երկու օր՝ քաղաքը փրկելու համար, այն բանից հետո, երբ բրիտանական

---

[1] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3930 և թիվ 3933:

[2] Armenia's Charter. Issued by the Armenian Bureau, London. 1918. pp. 3-4. և Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ Մելքոնյան Ս., Ղազիյան Ա., Երևան, 2003, էջ 45-46:

զորքերը հեռացել էին:[1]

Այսպիսին էր իրավիճակը, երբ 1918թ. հոկտեմբերի 30-ին կնքվեց Մուդրոսի զինադադարը, որով Թուրքիան դուրս եկավ պատերազմից: Դա նոր էջ բացեց և նոր խնդիրներ առաջադրեց ինչպես հայ ժողովրդի առջև, այնպես էլ բրիտանացի հայասերների և մասնավորապես Լորդ Ջեյմս Բրայսի գործունեության մեջ: Անհրաժեշտ ենք համարում ավելացնել, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ջեյմս Բրայսն ակտիվ մասնակցություն ունեցավ նաև տարբեր հայանպաստ կազմակերպությունների գործունեությանը: Այդ մասին նպատակահարմար ենք համարել անդրադառնալ այդ կազմակերպությունների գործունեության ընդհանուր համատեքստում:

Մաս երկրորդ. Հայանպաստ կազմակերպությունների գործունեությունը

1914-1918թթ. Մեծ Բրիտանիայում ակտիվ գործունեություն ծավալեցին մի շարք հայանպաստ կազմակերպություններ, որոնց մի մասն ստեղծվել էր մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելը, իսկ մի քանիսն իրենց գործունեությունն սկսեցին պատերազմի ընթացքում: Այդ կազմակերպություններին, ըստ իրենց գործունեության ոլորտների, կարելի է բաժանել երկու խմբի 1. կազմակերպություններ, որոնք գործում էին քաղաքական հարթության վրա՝ ընդունելով զանազան հայտարարություններ, ներկայացնելով հուշագրեր բրիտանական կառավարության տարբեր անդամներին և անձամբ վարչապետին, Հայկական հարցին առնչվող խնդիրներ բարձրացնելով բրիտանական խորհրդարանի նիստերի ժամանակ: 2. կազմակերպություններ, որոնց խնդիրն էր պատերազմի և Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող ցեղասպանության հետևանքով առաջացած բազմահազար հայազգի փախստականներին հումանիտար օգնության տրամադրումը, նրանց համար աշխատատեղերի ստեղծումը, որք երեխաների խնամքով զբաղվելը:

---

[1] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3934:

Հարկ ենք համարում նշել, որ ամեն դեպքում այս երկու խնդիրներով զբաղվող կազմակերպություններում ակտիվ դեր ստանձնած մի շարք անձինք հանդիսանում էին միաժամանակ թե՛ քաղաքական և թե՛ հումանիտար գործունեություն ծավալած կազմակերպությունների ղեկավար անդամներ: Մասնավորապես, BAC-ի նախագահ Անեուրին Վիլիամսը հանդիսանում էր նաև քննարկվող ժամանակահատվածում հումանիտար բնագավառում գործունեություն ծավալած ամենախոշոր բրիտանական կազմակերպության՝ Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդի գործադիր կոմիտեի նախագահ, այդ նույն կոմիտեի անդամ էր BAC-ի ևս մեկ ներկայացուցիչ՝ Նոել Բաքսթոնը, իսկ վերջինիս եղբայր Հարոլդը հանդիսանում էր ֆոնդի պատվավոր քարտուղարը:

Քննարկվող ժամանակահատվածում քաղաքական հարթության մեջ իր ակտիվ գործունեությունն էր շարունակում BAC-ը, որի ստեղծմանն ու ծավալած առաջին քայլերին մենք արդեն անդրադարձել ենք: Նշենք, որ կոմիտեն սերտ կապեր էր հաստատել Լոնդոնի հայկական միացյալ ընկերության հետ, որի անդամներից շատերը մասնակցում էին BAC-ի նիստերին: Կազմակերպության երկու հիմնական նպատակներն էին՝ 1. միավորել բրիտանական մայրաքաղաքում ապրող բոլոր հայերին, շփումներ հաստատել բրիտանական հասարակության հետ և դրանով այդ երկու ազգերի միջև սերտ համակրանք ստեղծել: 2. քաղաքակիրթ աշխարհի ուշադրության կենտրոնում պահել սոցիալական և ազգային շատ հարցեր, որոնք ազդում էին Հայաստանի և հայերի վրա:[1]

Ինչպես երևում է ընկերության առջև դրված նպատակներից, նրա և BAC-ի միջև սերտ շփումների հաստատումը չի կարելի պատահական համարել: Դրա մասին է վկայում այն փաստը, որ 1914թ. ապրիլի 24-ին Անգլիայի հայկական քաղաքական կոմիտեն, որի Լոնդոնի մասնաճյուղն էր հանդիսանում ընկերությունը, ընթրիք կազմակերպեց BAC-ի նախագահ Անեուրին Վիլիամսի պատվին՝ նրա՝ Համայնքների պալատի անդամ ընտրվելու կապակցությամբ: Ընթրիքը հետաքրքիր էր նաև

[1] "Ararat", vol. II, N 22, April 1915, p. 403.

նրանով, որ իր ելույթում Ա. Վիլիամսը ներկայացրեց ԲԱՀ-ի նպատակները և կոմիտեի վերաբերմունքը 1914թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով նախատեսված բարեփոխումների ծրագրին: Վիլիամսը ևս մեկ անգամ շեշտեց, որ կոմիտեի նպատակը չէ Հայաստանի անջատումը թուրքական կայսրությունից, կամ Հայաստանի զավթումը որևէ այլ տերության կողմից: Ինչ վերաբերում է բարեփոխումների նախագծին, ապա, ըստ Վիլիամսի, այն նրանց հիասթափեցրել է, քանի որ չի տալիս լավ կառավարման որևէ իրական երաշխիք, ինչին իրենք ձգտում էին: Անդրադառնալով ԲԱՀ-ի ներկա խնդիրներին, Վիլիամսը նշեց, որ իրենք պետք է հետևեն և Եվրոպային տեղյակ պահեն Հայաստանում կատարվող դեպքերի մասին: Նա շեշտեց Մեծ Բրիտանիայի ունեցած պարտավորությունը, քանի որ 1878թ. նա կանխեց Ռուսաստանի կողմից Հայաստանի ազատագրումը և նրա պարտքն է փոխհատուցել, ենթադրաբար հանուն իր սեփական շահերի, բայց ի վնաս Հայաստանի խաղաղության իր ձեռնարկած քայլի համար: Երեկույթի ժամանակ ելույթներ ունեցան նաև պրն. Բալյանը, Նոել Բաքսթոնը, Ֆունդուկլյանը:[1] Իսկ հունիսի 26-ին Լոնդոնի հայ համայնքը ընթրիք կազմակերպեց ի պատիվ Նոել Բաքսթոնի և նրա տիկնոջ՝ վերջիններիս ամուսնության կապակցությամբ: Ընթրիքին ներկա էին նաև ԲԱՀ-ի անդամներ Անեուրին Վիլիամսը, Արթուր Սայմոնդսը, Բաքսթոն եղբայրներից Հարոլդը, Չարլզ Ռոդենը և ուրիշներ:[2]

Եվ իրոք, ԲԱՀ-ի անդամները Համայնքների պալատում մի քանի անգամ բարձրացրին Հայաստանում տեղի ունեցող զարգացումների խնդիրը: Հայկական հարցի առնչությամբ ԲԱՀ-ի նախագահը Համայնքների պալատում ընդարձակ ելույթով հանդես եկավ հուլիսի 10-ին՝ ևս մեկ անգամ շարադրելով կոմիտեի տեսակետները: Նա նշեց, որ որևէ հարց չի կարող լինել թուրքահայ նահանգներում ինքնավարություն ստեղծելու մասին, քանի որ բնակչության հարաբերակցությունն այնպի-

---

[1] "Ararat", vol. I, N 11, May 1914, pp. 367-372.

[2] ibid., vol. II, N 13, July 1914, pp. 25-31.

սին է, որ որևէ ինքնավարության նման բան, նույնիսկ եթե թուրքական կառավարությունը մտադրություն ունենա ստեղծել այն, հնարավոր չէ: Մեծ շրջաններում հայազգի բնակչությունն ընդամենը 40% է, իսկ մարդկանց մնացած մասը բաժանված է զարգացման ամենատարբեր աստիճանների վրա գտնվող բազմաթիվ ազգություններ: Բայց այդ նահանգներում անհրաժեշտ է լավ կառավարում և դրան հասնել հնարավոր է:

Վիլիամսը նշում է, որ եթե հայերը շրջեն իրենց հայացքը դեպի Ռուսաստան, կարող է մեծ վտանգ առաջանալ, քանի որ որոշ պատահարներ կմղեն Ռուսաստանին անցնել սահմանը և զբաղեցնել այդ նահանգները: Ըստ Վիլիամսի, այդ ժամանակ տերությունների միջև կսկսվի պայքար ողջ ասիական Թուրքիայի համար, և ասիական Թուրքիայի քայքայումը կհետևի եվրոպական Թուրքիայի քայքայմանը: Բոլոր մեծ տերություններից Մեծ Բրիտանիան այս հարցում առավել շահագրգռված է, քանի որ իրենք ունեն ընդարձակ մահմեդական կայսրություն հատկապես Հնդկաստանում, և եթե ասիական Թուրքիայի բաժանումը տեղի ունենա, այն ազդեցություն կունենա իրենց մահմեդական կայսրության և, հատկապես, Հնդկաստանի մահմեդականների վրա: Նա կրկին շեշտում էր, որ այս հարցը սոսկ մի հեռավոր երկրի որոշակի մասում ապրող մի քանի միլիոն մարդու ճակատագրի համար մարդասիրական մտահոգության խնդիր չէ, այլ հարց է, որից ոչ հեռու ապագայում կարող է կախված լինել եվրոպական մեծ ազգերի խաղաղությունը:[1]

Ահա այսպիսին էր ԲԱՀ-ի նախագահի և կարող ենք ասել նաև ընդհանրապես կոմիտեի դիրքորոշումը Հայկական հարցում Առաջին համաշխարհային պատերազմին անմիջապես նախորդող շրջանում:

Սկսված պատերազմը և մանավանդ դրանում Թուրքիայի ներգրավումը Գերմանիայի կողմում իր շտկումները բերեց նաև ԲԱՀ-ի գործունեության և նպատակների հարցում: Այս տեսանկյունից կարևոր է 1915թ. ապրիլի 3-ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էդուարդ Գրեյին ուղղված Անեուրին Վիլիամսի նամակը: Վիլիամսը նախ նշում է, որ, թերևս, նախա-

[1] "Ararat", vol. II, N 13, July 1914., pp. 12-19.

բարն ուշադրություն չի դարձրել Համայնքների պալատում իր կողմից բարձրացված այն հարցին, թե արդյոք Նորին գերազանցության կառավարությունը կօգտագործի՞ իր ազդեցությունը պատերազմի ավարտից հետո Հայաստանի համար Լեհաստանին խոստացված ինքնավարության մի ձև ձեռք բերելու համար: Այնուհետև, Վիլիամսը մասնավոր կարգով արտգործնախարարին տեղեկացնում է, որ հայերը շատ են անհանգիստ, որ կարող են ամբողջովին թողնվել Ռուսաստանի հայեցողությանը: Նրանք ցանկանում են, որ գոնե լինի որոշակի համաձայնություն Ռուսաստանի և մյուս տերությունների միջև, որով, ռուսական գերիշխանության ներքո, որոշակի իրավունքներ կապահովվեն Հայաստանի համար: Ըստ Վիլիամսի, հայերն ամենից շատ կցանկանային, որ հնարավորության դեպքում Անգլիան կառավարի իրենց երկիրը:[1]

Ինչպես տեսնում ենք, ԲԱՀ-ը որոշակիորեն փոխել էր իր դիրքորոշումը: 1914թ. հուլիսի 10-ին Համայնքների պալատում ունեցած ելույթում Ա. Վիլիամսը հայտնարարում էր, որ որևէ հարց չի կարող լինել հայերին ինքնավարություն շնորհելու մասին:

Իսկ այժմ արդեն ինքն էր առաջարկում Հայաստանին ինքնավարություն տրամադրել, թեև նշում էր բառի ամբողջական իմաստով ինքնավարության անհնար լինելը: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ խոսելով ընդհանրապես հայերի անունից և նշելով, որ նրանք ցանկանում են հնարավորության դեպքում իրենց երկրի կառավարումը տեսնել Անգլիայի ձեռքում, Վիլիամսը, մեղմ ասած, գերազանցում էր իր լիազորությունները: Թերևս նա կարող էր արտահայտվել միայն Լոնդոնի հայ համայնքի այն ներկայացուցիչների անունից, ովքեր ակտիվորեն մասնակցում էին ԲԱՀ-ի նիստերին և, թերևս, կարող էին նման կարծիք արտահայտել:

Ինչ վերաբերում է Վիլիամսի՝ նամակում արտահայտած այն տեսակետին, որ հայերը ցանկանում են ինքնավար Հայաստան երեք պետությունների՝ Ռուսաստանի, Բրիտանիայի և Ֆրանսիայի հովանավորության ներքո, ապա այդ կապակ-

[1] Burdett A., ibid., p. 343.

ցությամբ նշենք, որ 1915թ. իրոք քննարկվում էր թուրքական պետության սահմաններում Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հովանավորությամբ հայկական վեց վիլայեթների (Վանի, Երզրումի, Սեբաստիայի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքիրի) և Կիլիկիայի (միջերկրածովյան Մերսին նավահանգստով հանդերձ, բացառությամբ Ալեքսանդրեթի ծովածոցի՝ Յումուրթալիքով) տարածքում ինքնավար Հայաստանի ստեղծման ծրագիրը: Այն մշակել էր ռուսական կառավարությունը՝ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի նկատմամբ դաշնակից պետությունների հետաքրքրություններն զգուշորեն շոշափելու, միաժամանակ նշված տարածքները գրավելու հնարավորությունը պարզելու նպատակով: Ռուսաստանի արտգործնախարարությունը, Պետրոգրադում հայ ներկայացուցիչների հետ գաղտնի բանակցություններից հետո, այդ ծրագիրը Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի կառավարությունների առջև պաշտպանելու գործը դրեց հայերի վրա: 1915թ. ապրիլին Փարիզ, իսկ մայիսին այնտեղից Լոնդոն մեկնեցին Հ. Զավրիյանը (Զավրին) և Ա. Ղուկասյանը:[1]

1915թ. մայիսին առաքելության նպատակների մասին Լոնդոնում և Փարիզում ռուսական դեսպաններին Զավրիևը գրություն ներկայացրեց, որում շարադրելով հայկական ինքնավարության ծրագրի էությունը՝ նշում էր, որ ռուսական արտգործնախարարությունը խոստացել է իր օգնությունը Լոնդոնում և Փարիզում իր դեսպանների միջնորդությամբ, միաժամանակ համաձայնություն է կայացվել, որ հայ պատվիրակները պետք է գործեն որքան հնարավոր է առանց ռուս դեսպանների բացահայտ միջամտության, որը կարող էր առաջացնել Անգլիայի և Ֆրանսիայի կասկածամտությունն այդ պատվիրակների դերի նկատմամբ: Դեսպանների միջամտությունը կարող է լինել միայն դժվարություն ներկայացնող դեպքերում:[2]

---

[1] Հովհաննիսյան Լ., Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917թթ., Երևան, 2002, էջ 87-88:

[2] Международные Отношения в Эпоху Империализма, серия III, том 7, часть 2, подготовил к печати Нотович Ф. О., Москва-Ленинград, 1935, стр. 455-458.

Իր հերթին Փարիզում ռուսական դեսպան Իզվոլսկին 1915թ. մայիսի 17-ին արտգործնախարար Սազոնովին ուղարկած հեռագրում տեղեկացնում էր, որ Զավրիևն իրեն ներկայացրել է ինքնավար Հայաստանի ստեղծման ծրագիր, որը վերջինիս ասելով, արժանացել է արտգործնախարարության հավանությանը: Դեսպանը խնդրում էր իրեն տեղեկացնել, թե այդ ծրագիրն իսկապե՞ս արժանացել է հավանության նախարարի կողմից, և ինչ չափով ինքը պետք է պաշտպանի այն:[1]

Նշենք, որ հայ գործիչները հանդիպեցին ֆրանսիական և անգլիական պաշտոնական ներկայացուցիչների, նաև այդ երկրների խորհրդարանների բազմաթիվ անդամների հետ, այդ թվում Լորդ Բրայսի հետ: Սակայն այդ հանդիպումները կոնկրետ որևէ արդյունքի չհանգեցրին:[2]

Ա. Վիլիամսը նամակագրական կապ էր պահպանում նաև Ա. Չոպանյանի հետ: 1915թ. մայիսի 21-ին նրան ուղարկված նամակում Վիլիամսը գրում է, որ ստացել է նույն ամսի 19-ի Չոպանյանի նամակը և շատ մեծ վիշտ է զգում՝ տարբեր աղբյուրներից լսելով հայերի տառապանքների մասին: Վիլիամսը խոստանում է, որ կոտորածների մասին Չոպանյանի ուղարկած մանրամասնությունները կուղարկի պրն. Սայմոնդսին, որն էլ կփորձի դրանք հրապարակել անգլիական մամուլում:[3]

ԲԱՀ-ը պարբերաբար հրավիրվող իր նիստերում շարունակում էր քննարկումները Հայկական հարցի վերաբերյալ: Այդ նիստերի արձանագրությունները, որոնք հնարավորություն են տալիս տեղեկանալ դրանց ընթացքում քննարկվող հարցերին և կոմիտեի անդամների արտահայտած տեսակետներին, խիստ կարևոր են ԲԱՀ-ի տեսակետները և նպատակները հասկանալու համար: Հերթական՝ 1915թ. հոկտեմբերի 13-ի նիստում նախագահում էր պրն. Անեուրին Վիլիամսը, ներկա էին Ն. Բաքսթոնը, Թ. Փ. Օ'Քոնորը, Ջ. Հարրիսը, պրոֆ. Թումայանը, պրն. Արսլանյանը, Հակոբյանը և ուրիշներ: Կոմիտեի նախա-

---

[1] Раздел Азиатской Турции, по секретным документам министерства иностранных дел, под редакцией Е. А. Адамова, Москва, 1924, стр. 135-136.

[2] Հովհաննիսյան Լ., նշվ. աշխ., 88-91:

[3] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 9383:

գահը հաղորդեց այն քայլերի մասին, որ ձեռնարկվել են նպաստամատույց կոմիտե կազմելու և մի հավաքույթ կազմակերպելու համար:

Պրն. Օ'Քոնորը և Բաքսթոնը կարծիք հայտնեցին, որ Համայնքների պալատում քննարկումների կազմակերպումն օգտակար կլինի: Պրն. Հակոբյանը բարձրացրեց Հնդկաստանի, Եգիպտոսի և այլ մահմեդականների կողմից հայտարարության ձեռք բերելու հնարավորության հարցը՝ կապված թուրքերի վայրագ գործողությունների և քաղաքականության հետ: Ա. Վիլիամսը խոստացավ քննարկել այդ հարցը Լորդ Բրայսի հետ: Բարձրացվեց հասարակական քարոզչության հարցը, կարծիք հայտնվեց, որ քարոզչական բնույթի միտինգները պետք է տեղի ունենան նպաստամատույց աշխատանքների հետ կապված:[1]

Ինչպես տեսնում ենք, կոմիտեի նիստին իրենց ակտիվ մասնակցությունն են բերում և հայազգի անձինք: Մենք արդեն նշել ենք, որ պրն. Արսլանյանը և Հակոբյանը հանդիսանում էին Լոնդոնի հայկական միացյալ ընկերության անդամները:

Ինչ վերաբերվում է նիստին մասնակցող պրոֆեսոր Թումայանին, որը, ինչպես ցույց կտրվի, կոմիտեի նիստերի մշտական մասնակիցների թվում էր, հարկ է նշել, որ նա դեռևս 1880-ական թթ. դասավանդում էր Մարզվանի ամերիկյան քոլեջում և Մարզվանի «Փոքր Հայքի կազմակերպության» ղեկավարներից մեկն էր:[2]

Թումայանը և իր կոլեգան այնտեղ ձերբակալվեցին և 1893թ. հունիսի 12-ին դատապարտվեցին մահվան: Սակայն նույն թվականի հուլիսի 5-ին Թումայանն ազատ արձակվեց և կնոջ հետ անցավ Անգլիա:

Այստեղ նա իրեն նվիրել էր Հայաստանի տառապանքները և պահանջները Եվրոպայում և մասնավորապես Անգլիայում

---

[1] Rhodes House Library, Oxford, Mss. Brit. Emp. S. 22. G. 506 (1), Minute Book of the British Armenia Committee Oct. 13 1915-Feb. 21 1921, quoted October 13, 1915., այսուհետև տեքստում՝ Rhodes House Library, BAC minutes.

[2] Չորմիսյան Լ., Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության, հատոր Բ, 1878-1908, Պեյրութ, 1974, էջ 141:

հայտնի դարձնելու խնդրին: 1890-ական թթ. վերջերին Թումայանը և իր կինը Լոնդոնի մոտակայքում հիմնադրեցին 1894-1986թթ. կոտորածների հետևանքով որբացած հայ մանկահասակ տղաների համար մի տուն:[1]

1915թ. նոյեմբերի 17-ին Համայնքների պալատում ելույթներ ունեցան Անեուրին Վիլիամսը և Թ. Փ. Օ'Քոնորը: Վիլիամսը, իր ելույթում ներկայացնելով Արևմտյան Հայաստանում կատարվող ողբերգական իրադարձությունները, պնդեց, որ բրիտանական կառավարությունը պետք է ինչ-որ բան ձեռնարկի արևմտահայերի տառապանքները թեթևացնելու համար: Նա անդրադարձավ հայ փախստականների խնդրին՝ ասելով, որ մոտավորապես 180000 արևմտահայ փախստականներ կան այժմ ռուսական Կովկասի տարածքում: Վիլիամսը հարց բարձրացրեց, որ բրիտանական կառավարությունը պետք է բոլոր հնարավոր քայլերը ձեռնարկի այդ մարդկանց կործանումից փրկելու համար:

Թ. Փ. Օ'Քոնորը կոչ արեց դիմել ամերիկյան և շվեյցարական կառավարություններին, որպես չեզոք պետությունների, որպեսզի վերջիններս փորձեն վերջ տալ այդ սարսափներին: Միաժամանակ հետաքրքիր է Օ'Քոնորի այն միտքը, որ հայկական կոտորածների պատմությունը լսելուց հետո, ներկա գտնվողներից յուրաքանչյուրը կհամաձայնվի, որ ռազմական ծախսերի համար կառավարության պահանջած բավականին մեծ չափի գումարն անհրաժեշտ է և հիմնավորապես կծախսվի պատերազմի ընթացքում: Նշենք, որ պատասխան ելույթով հանդես եկավ Լորդ Ռոբերտ Սեսիլը:[2]

ԲԱՀ-ի հաջորդ նիստը տեղի ունեցավ 1915թ. դեկտեմբերի 9-ին, որին մասնակցում էր նաև Լորդ Բրայսը: Նա նշեց, որ ինքն ունի նամակներ Նուբար փաշայից ինչպես քաղաքական հարցերի, այնպես էլ պատերազմից հետո Հայաստանի ապագայի վերաբերյալ: Նա պնդեց, որ կոմիտեն պետք է ուշադիր հետևի դեպքերի ընթացքին և պատրաստ լինի միավորելու հասարակական կարծիքը, և միաժամանակ պետք է շատ զգույշ լինի

---

[1] Album of Armenia, Belfast, 1916, pp. 1-3.

[2] "Ararat", vol. III, N 29, Nov. 1915, pp. 216-231.

չասելու կամ չհրատարակելու մի այնպիսի բան, որը կհասնի թուրքերի ականջին, քանի որ դա անկասկած կհանգեցնի թուրքերի կողմից գործողությունների վերսկսմանը՝ շարունակել և ավարտել հայերի ոչնչացումը:

Ինչ վերաբերվում է Հնդկաստանի, Եգիպտոսի և այլ մահմեդականների կողմից հայտարարության ձեռք բերման հնարավորությանը՝ կապված թուրքերի վայրագ գործողությունների և քաղաքականության հետ, Բրայսը կարծիք հայտնեց, որ դա լավ բան կլինի, եթե հնարավոր լինի անել:[1]

Ինչպես տեսնում ենք նիստի արձանագրությունից, կոմիտեն իր ուշադրության կենտրոնում էր պահում Հայկական հարցին առնչվող տարբեր խնդիրներ:

Կոմիտեի 1916թ. ապրիլի 13-ի նիստում, որին կրկին իր մասնակցությունը բերեց Լորդ Բրայսը, Ա. Վիլիամսը ներկայացրեց իր կողմից կազմված հուշագրի նախագիծը Հայաստանի ապագայի խնդրի առնչությամբ: Լորդ Բրայսի և կոմիտեի անդամների կողմից արվեցին մի շարք առաջարկություններ: Բոլորը համաձայնվեցին, որ այդ հուշագիրը պետք է ներկայացվի արտգործնախարարությանը կոմիտեի նախագահի և պառլամենտի այլ անդամների կողմից:[2]

Ցավոք, արձանագրության մեջ չի բերվում այդ հուշագրի տեքստը, սակայն այս շրջանում կոմիտեի հետապնդած նպատակների մասին որոշակի տեղեկություններ է տալիս ԲԱՀ-ի քարտուղար Ա. Սայմոնդսի «Հայաստանի ապագան» վերնագրով հոդվածը, որը հրապարակվեց լոնդոնյան «Ararat» ամսագրի 1916թ. օգոստոսի համարում: Այստեղ Սայմոնդսն այն միտքն է հայտնում, որ հնարավոր չէ պատերազմի ավարտից հետո Հայաստանին վերաբերվել որպես թուրքական կայսրության մի մասի:

Ներկայացնելով Հայաստանի ապագայի վերաբերյալ իր սեփական տեսակետը՝ Սայմոնդսն առաջ է քաշում Հայաստանի ինքնավարության գաղափարը՝ մեծ տերությունների որոշակի հովանավորության ներքո, որը սակայն չպետք է բա-

---

[1] Rhodes House Library, BAC minutes, quoted December 9, 1915.
[2] ibid., quoted April 13, 1916.

ցառի հայերի անկախությունն ապագայում, երբ նրանք պատրաստ կլինեն դրան: Սայմոնդսը նշում է, որ հույս ունի տեսնել ինքնավար հայկական պետություն, որը կձգվեր Սինոպից մինչև Ադանա, Ադանայից մինչև պարսկական սահմանները և այնտեղից էլ մինչև Սև ծով, որը կդառնար խաղաղության և բարգավաճման կենտրոն ողջ Փոքր Ասիայի համար:[1]

Ինչպես տեսնում ենք, ԲԱՀ-ը առաջ է քաշում հայկական վեց վիլայեթներն ու Կիլիկիան ընդգրկող ինքնավար Հայաստանի ստեղծման գաղափարը, միաժամանակ, փաստորեն, ներկայացվում է վերջինիս նկատմամբ տերությունների մանդատի գաղափարը, թեև կոնկրետ մանդատ բառը Սայմոնդսի հոդվածում բացակայում է, իսկ վերջնական նպատակ է հռչակվում Հայաստանի անկախությունը:

Միաժամանակ հարկ է ընդգծել, որ այդ հոդվածը հրապարակվեց Սայքս-Պիկոյի համաձայնագրի կնքումից հետո, որով ինչպես հայտնի է, Սայմոնդսի առաջարկած ինքնավար Հայաստանի տարածքներն անցնում էին Ռուսաստանին և Ֆրանսիային:

Դժվար է միանշանակ պնդել, արդյոք ԲԱՀ-ի քարտուղարը և ընդհանրապես կոմիտեն 1916թ. օգոստոսին տեղյա՞կ էին այդ համաձայնագրին թե ոչ, սակայն ակնհայտ է, որ Սայմոնդսի առաջարկը ուղղակի հակասության մեջ էր ֆրանսիական և ռուսական շահախնդրությունների հետ: Միևնույն ժամանակ, սա առաջին փաստաթուղթն է, որտեղ կոմիտեի որևէ անդամ առաջ է քաշում, թեկուզև ապագայում, անկախ հայկական պետության ստեղծման գաղափարը:

ԲԱՀ-ի հաջորդ նիստը տեղի ունեցավ 1916թ. օգոստոսի 15-ին: Նախ լսվեց Պաստվելի Հարոլդ Բաքսթոնի և պրն. Հոջկինի զեկույցը՝ Հայաստան կատարած նրանց այցելության արդյունքների մասին: Այդ մասին մանրամասն կխոսենք Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդի գործունեությունը ներկայացնելիս, որի նախաձեռնությամբ էլ տեղի էր ունեցել այդ այցելությունը: Նույն նիստի ընթացքում պրն. Նոել Բաքսթոնը հակիրճ զեկույց ներկայացրեց իր և դոկտոր Ռոսլին

[1] "Ararat", vol. IV, N 38, August 1916, pp. 62-64.

Բրյուի վերջերս Ամերիկա կատարած այցելության մասին, որի նպատակն էր համակրանք արթնացնել և գործնական օգնություն ապահովել հայերի համար: Նա խոսեց այն էնտուզիազմի մասին, որով ընդունել են իրենց Միացյալ Նահանգների մի շարք խոշոր քաղաքներում, և այն հիանալի կազմակերպությունների մասին, որ կազմվել են թե՛ ամերիկացիների և թե՛ այնտեղ ապրող հայերի կողմից՝ Հայաստան օգնություն ուղարկելու համար:[1]

Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում ընդգծել այն հանգամանքը, որ ԱՄՆ կատարած իր այցի ընթացքում Նոելը չէր սահմանափակվել միայն հայկական խնդրով, նա հանդիպել էր նաև գնդապետ Հաուսի հետ և քննարկել պատերազմի նկատմամբ ԱՄՆ վերաբերմունքը:[2]

Նշենք նաև, որ դա եզակի դեպք չէր, երբ Նոել Բաքսթոնը ներգրավվում էր արտաքին քաղաքականությանն առնչվող խնդիրների լուծման գործընթացներում:

ԲԱՀ-ի 1916թ. ընթացքում վերջին նիստը տեղի ունեցավ 1916թ. նոյեմբերի 14-ին: Քննարկվեց Հայաստանի ապագայի խնդիրը: Նախագահը հաղորդեց Լորդ Ռոբերտ Սեսիլի հետ իր հանդիպման արդյունքների մասին, որի ընթացքում վերջինիս ներկայացրել էր հուշագիր, և ստացել նրա խոստումը՝ ընդունել այն և արտգործնախարարությունում ուշադիր քննարկել:

Նիստում ելույթ ունեցավ նաև Լորդ Բրայսը: Նա հայտարարեց, որ Ռուսաստանը որոշել է անեքսիայի ենթարկել հյուսիսային վիլայեթները, և որ Ֆրանսիան ցանկանում է իր վերահսկողությունը հաստատել Կիլիկիայում:

Նա խստորեն պահանջեց, որ հայերը թե՛ Փոքր Ասիայում, թե Կովկասում և թե՛ Մեծ Բրիտանիայում պետք է ձեռնպահ մնան բոլոր կարգի փորձերից՝ սկսել քարոզչություն ողջ Հայաստանի ինքնավարության համար: Նա կարծում էր, որ սխալ կլիներ Հայաստանի բրիտանացի բարեկամների կողմից ձեռ-

---

[1] Rhodes House Library, BAC minutes, quoted August 15, 1916. Տես նաև՝ Պողոսյան Բ., Բրիտանիա-Հայաստան կոմիտեի գործունեությունը (1913-1924թթ.), Երևան, 2003, էջ 29-30:

[2] Anderson M., ibid., pp. 81-82.

նարկել ցանկացած բան, որը կառաջացներ ռուսական կառավարության ցավոտ զգայնությունը: Կոմիտեի մի շարք անդամներ իրենց համաձայնությունը հայտնեցին Լորդ Բրայսի տեսակետներին, և միաձայն ընդունվեց հետևյալ բանաձևը. «Նշելով, որ Հայաստանի ապագայի վերաբերյալ իր տեսակետները ներկայացրել է արտգործնախարարությանը, կոմիտեն գտնում է, որ ճիշտ չի լինի, եթե ինքը որևէ հրապարակային գործողություն կատարի ներկայումս: Կոմիտեն կհետևի իրադարձությունների ընթացքին՝ հուսալով, որ նպաստավոր պայմաններ կստեղծվեն հայ ազգային բաղձանքների ինչ-որ ձևով իրականացման համար»:[1]

Նիստում տեղի ունեցած քննարկումներից պարզ է դառնում, որ արտգործնախարարությանը ներկայացված հուշագիրը հիմնականում համապատասխանում էր կոմիտեի քարտուղար Ա. Սայմոնդսի՝ մեր հիշատակած հոդվածում բերված մտքերին: Միաժամանակ հետաքրքիր է այն հանգամանքը, որ Լորդ Բրայսը փաստորեն կոչ է անում հրաժարվել այդ գաղափարներից Ռուսաստանին չվշտացնելու համար՝ հայտնելով Ռուսաստանի՝ Հայաստանի հյուսիսային վիլայեթներն անեքսիայի ենթարկելու որոշման և Ֆրանսիայի՝ Կիլիկիան զբաղեցնելու ցանկության մասին: Կոմիտեն փաստորեն ընդունեց այս խորհուրդը՝ հրաժարվելով առաջիկայում ակտիվ գործունեություն ծավալելուց:

1917թ. կոմիտեի առաջին նիստը տեղի ունեցավ ապրիլի 3-ին: Քննարկվեց Ռուսաստանում փետրվարյան հեղափոխությունից հետո ստեղծված իրավիճակը: Նիստի ընթացքում Լորդ Բրայսը, խոսելով քաղաքական կացության մասին, ասաց, որ ԱՄՆ-ի մուտքը պատերազմ կունենա մեծ ազդեցություն, ինչպիսին կունենա հեղափոխությունը Ռուսաստանում: Նա նշեց, որ միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ պարզելու ռուսական ներկա կառավարության տեսակետները նորից գրավված շրջանները հայերով բնակեցնելու հարցի շուրջ: Նախագահն ասաց, որ ինքը կայցելի արտգործնախարարություն՝ պարզելու, թե արդյոք նրանք որևէ բան գիտե՞ն այդ առնչությամբ: Լորդ Բրայսի

[1] Rhodes House Library, BAC minutes, quoted November 14, 1916.

առաջարկով միաձայն ընդունվեց պրն. Միլյուկովին ուղղված հետևյալ հեռագիրը Ա. Վիլիամսի ստորագրությամբ:

«Բրիտանիա-Հայաստան կոմիտեն, հիշելով ձեր երկարատև համագործակցությունը Հայկական հարցում, սրտանց շնորհավորում է ձեզ ազատ Ռուսաստանի ժամանակավոր կառավարության քաղաքականության մասին վերջինիս հայտարարության կապակցությամբ՝ ի պաշտպանություն բոլորի համար հավասար իրավունքների, ազգության ու հայկական ինքնավարության սկզբունքների ճանաչման»:

Կոմիտեի նիստում միաձայն ընդունվեցին նաև Ա. Վիլիամսի ստորագրությամբ ևս երկու նույնաբովանդակ հեռագրեր՝ ուղղված Ամենայն հայոց կաթողիկոսին և Դումայի հայազգի պատգամավոր պրն. Պապաջանյանին:[1]

Ինչպես տեսնում ենք, թեև կոմիտեի համար դեռևս վերջնականապես պարզ չէին ժամանակավոր կառավարության հայացքները Հայկական հարցում, սակայն նա ընդհանուր առմամբ ողջունում էր տեղի ունեցած հեղափոխությունը:

Միաժամանակ՝ կապված ռուսական հեղափոխության բերած պայմանների փոփոխության հետ, կոմիտեի նիստերի ընթացքում նորից բարձրացվեցին Հայաստանի ապագային առնչվող հարցեր: 1917թ. օգոստոսի 2-ին տեղի ունեցած նիստում կոմիտեի նախագահ Վիլիամսն այդ կապակցությամբ նշեց, որ իր կարծիքով ամենամեծ հույսերը կապված են այն հնարավորության հետ, որ Միացյալ Նահանգները կցանկանա գործել որպես տերությունների մանդատատեր՝ բոլոր դեպքերում վերահսկելով Հայաստանի ադմինիստրացիան վաղ փուլերում:[2]

Փաստորեն, կոմիտեն 1917թ. ամռանը նորից վերադարձավ մեկ տարի առաջ իր կողմից ներկայացված մեծ տերությունների հովանավորության տակ գտնվող հայկական պետության կազմավորման գաղափարին, ընդ որում ի տարբերություն 1916թ., առաջին անգամ կոնկրետ նշվում էր հնարավոր հովանավորող պետության անունը:

---

[1] Rhodes House Library, BAC minutes, quoted April 3, 1917.

[2] ibid., quoted August 2, 1917.

Սակայն Ռուսաստանում և հետևաբար նաև Կովկասում իրադարձությունների արագ փոփոխությունները հարկադրում էին կոմիտեին իր առջև դնել այլ խնդիրներ: 1917թ. նոյեմբերի 15-ի նիստում լուրջ քննարկման արժանացան Կովկասից եկած այն տեղեկությունները, համաձայն որոնց թուրքերը հարձակումներ էին իրականացնում հայերի վրա և քայլեր ձեռնարկում՝ վրացիներին հայերից օտարացնելու ուղղությամբ: Որոշվեց այդ կապակցությամբ մի հուշագիր կազմել և Լորդ Բրայսի ստորագրությամբ ներկայացնել արտգործնախարարությանն ու վարչապետին: Նույն նիստում որոշվեց հետաձգել Հայաստանի ապագա կառավարության և ԱՄՆ-ի հնարավոր մանդատատեր դառնալու հարցի քննարկումները:[1]

Ահա այսպիսի խնդիրներով ԲԱՀ-ը թևակոխեց հայ ժողովրդի համար վայրէջքներով և վերելքներով հարուստ 1918թ.: Անհրաժեշտ է նշել, որ կոմիտեն կանգնած էր տարածաշրջանից հրատապ տեղեկատվության բացակայության խնդրի առջև:

Այնուամենայնիվ, պարզ էր, որ Հայաստանի վիճակը բավականին ծանր է: 1918թ. հունվարի 24-ին Չոպանյանին ուղղված նամակում Վիլիամսը գրում է, որ սա «մութ ժամ» է հայերի համար, սակայն ավելացնում է, որ անգլիացիների մի ասույթի համաձայն ամենամութ ժամը գալիս է լուսաբացից առաջ և Վիլիամսը հույս է հայտնում, որ մոտ է փառավոր ապագայի արշալույսը:[2]

Տեղեկատվության պակասի խնդիրը շեշտվեց կոմիտեի 1918թ. հունվարի 31-ի և մարտի 12-ի նիստերում: Այն ստիպված էր բավարարվել իր նիստերին մասնակցող Լոնդոնի միացյալ հայկական ընկերության անդամների տարբեր աղբյուրներից ստացված տեղեկություններով:

Փորձելով քիչ թե շատ ճշգրիտ տեղեկություններ ստանալ՝ կոմիտեն մի պատվիրակություն կազմեց, որը 1918թ. փետրվարի 5-ին հանդիպեց Մեծ Բրիտանիայի փոխարտգործնախարար Լորդ Ռոբերտ Սեսիլի հետ, սակայն վերջինս էլ որևէ կոն-

---

[1] Rhodes House Library, BAC minutes, quoted November 15, 1917.

[2] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 9390:

կրետ տեղեկություն չտրամադրեց:[1]

Այնուամենայնիվ, շարունակվում էին տեղեկատվություն ստանալու փորձերը: 1918թ. ապրիլի 15-ին Լորդ Ռոբերտ Սեսիլին ուղարկված նամակում Ա. Վիլիամսը հույս էր հայտնում, որ վերջինս իրեն որևէ տեղեկատվություն կտա Հայաստանի վերաբերյալ: Վիլիամսը գրում էր, որ վերջերս կոմիտեի անդամները կարդացել են, որ կովկասյան հանրապետությունը հավանություն է տվել Թուրքիայի հետ անջատ հաշտության հիմնական պայմաններին, այն է՝ 1914թ. սահմանների վերականգնում և ինքնավարություն Հայաստանի համար, որն ակներևաբար նշանակում է, թե այն լինելու է թուրքական գերիշխանության ներքո: Վիլիամսը գրում է, որ դա շատ անհանգստացնող փաստ է և նշում, որ իրենք շատ ուրախ կլինեն, եթե Սեսիլը կարողանա լույս սփռել այդ ամենի վրա: Նա հույս է հայտնում, որ Սեսիլը կկրկնի այն հավաստիացումները, որ Անգլիան իր հնարավորությունների սահմանում կանի ամեն ինչ՝ պատերազմի ավարտից հետո Հայաստանի՝ թուրքերի ձեռքում հայտնվելը կանխելու համար:[2]

Ընդգծենք այն հանգամանքը, որ սկսած 1918թ. առաջին իսկ նիստից կոմիտեի աշխատանքներին սկսեց մասնակցել մեր կողմից արդեն հիշատակված Ա. Թոյնբին: Իսկ ո՞րն էր նրա տեսակետը Հայկական հարցում 1918թ.: Այս մասին մեզ որոշակի տեղեկություն է տալիս Թոյնբիի հուշագիրը, որը 1918թ. հոկտեմբերի 26-ին ներակայացրել էր ոմն պրն. Քիդսթոնի (նա հավանաբար արտգործնախարարության աշխատակից էր):

Այստեղ Թոյնբին գրում է, որ իր կարծիքով բրիտանական քաղաքականության նպատակը պետք է լինի ազատագրել Հայաստանը թուրքերից, և դրա համար կան երկու, Թոյնբիի բառերով, «հիանալի հիմքեր»՝ շահեր և մարդասիրություն:

Թոյնբին պարզաբանում է այդ հիմքերը. ա. այլևս երբեք չպետք է հնարավորություն տրվի 1915թ. և ավելի վաղ տարիներին տեղի ունեցած վայրագությունների կրկնման համար, բ. Բրիտանիան պետք է արդյունավետ կերպով կործանի թու-

---

[1] Rhodes House Library, BAC minutes, quoted January 31 and March 12, 1918.
[2] A. Burdett, ibid., p. 402.

ռանական շարժումը և անջատի թուրքերին արաբներից՝ ստեղծելով ոչ թուրքական, ոչ մահմեդական արգելապատնեշ:[1]

Այս շրջանում BAC-ը շարունակում էր որոշ տեղեկություններ ստանալ Կովկասում տիրող քաղաքական իրավիճակի մասին: Մայիսի 2-ի նիստում կոմիտեի նախագահը հաղորդեց, որ ըստ տարբեր աղբյուրների, Կովկասում ստեղծվել է հայերի, թաթարների և վրացիների միացյալ հանրապետություն:[2]

Մինչև Մուդրոսի զինադադարը BAC-ի վերջին նիստը տեղի ունեցավ 1918թ. հոկտեմբերի 21-ին: Այդ օրերին, երբ արդեն պարզ էր Թուրքիայի շուտափույթ պարտության հեռանկարը, կոմիտեն կրկին վերադարձավ Հայաստանի ապագայի վերաբերյալ հարցի քննարկումներին:

Նախագահը հաղորդեց Լորդ Բրայսի հետ իր ունեցած նամակագրության և Լորդ Ռոբերտ Սեսիլի հետ իր հանդիպման մասին, որի ժամանակ քննարկվել են պատերազմից հետո Հայաստանի խնդրի կարգավորման դժվարությունները, մանդատատեր տերության հարցը, երկրի ներքին վերահսկողության, նրա պարունակելիք տարածքի և այլ հարցեր:

Ցավոք, նիստի արձանագրության մեջ չի բերվում այդ կապակցությամբ Ա. Վիլիամսի արտահայտած տեսակետները, սակայն ակնհայտ է, որ կոմիտեն կրկին որպես հնարավոր տարբերակ առաջ էր քաշում Հայաստանի մանդատը որևէ տերության հանձնելու գաղափարը: Կոմիտեն Հայաստանի խնդրով նամակ էր ուղարկել արտգործնախարար Բալֆուրին: Վերջինս 1918թ. հոկտեմբերի 8-ին ուղարկված իր պատասխանում կրկին հավաստիացնում էր, որ բրիտանական կառավարությունը հավատարիմ է Հայաստանն ազատագրելու գաղափարին:

Կոմիտեն որոշեց նաև հեռագիր ուղարկել ԱՍՆ նախագահ Վիլսոնին, որում ասվում էր. «Բրիտանիա-Հայաստան կոմիտեն, տեղեկանալով, որ թուրքական կառավարությունը դիմել է նախագահ Վիլսոնին՝ զինադադարի հասնելու համար, լրջորեն

---

[1] A. Burdett, ibid., pp. 374-376.

[2] Rhodes House Library, BAC minutes, quoted May 2, 1918.

հույս է հայտնում, որ ցանկացած համաձայնություն կներառի թուրքական գերիշխանության լիակատար և վերջնական վերացումը Հայաստանի նկատմամբ»:

Միաժամանակ BAC-ը շարունակում էր Հայաստանի վերաբերյալ տարբեր աղբյուրներից տեղեկություններ ստանալու իր ջանքերը: Կոմիտեի այս նիստում Հայաստանի վիճակի և ապագայի մասին զեկուցումով հանդես եկավ Թավրիզում ամերիկյան վերջին հյուպատոս պրն. Սմիթը:[1]

Մենք արդեն նշել ենք, որ քննարկվող ժամանակահատվածում Բրիտանիայում ծավալվեց նաև հուժկու շարժում՝ պատերազմի և թուրքական կոտորածների հետևանքով ի հայտ եկած բազմահազար հայ փախստականներին օգնելու համար: Ստեղծվեցին մի շարք կազմակերպություններ, որոնք իրենց առջև նմանատիպ նպատակներ էին դրել: Այդ կազմակերպություններից հատկապես լայնածավալ գործունեություն ծավալեցին երկուսը՝ Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը և Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդը: Փորձենք ներկայացնել նրանց ծավալած գործունեության հիմնական ուղղություններն ու արդյունքները՝ համառոտ ներկայացնելով նաև այդ շրջանում ստեղծված և նույնպես մարդասիրական օգնության բնագավառում քայլեր իրականացրած բրիտանական այլ կազմակերպությունների գործունեությունը:

Պատերազմի ընթացքում ստեղծված առաջին բրիտանական կազմակերպությունը, որն իր առջև նպատակ էր դրել օգնել հայ փախստականներին, Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդն էր: Ֆոնդի հիմնադիր համաժողովը տեղի ունեցավ 1914թ. դեկտեմբերի 18-ին: Ֆոնդի ստեղծման նախաձեռնությունը պատկանում էր 1913թ. հիմնադրված «Հայկական ընկերության» քարտուղար Էմիլի Ռոբինսոնին: Ֆոնդն իր առջև նպատակ էր դրել նաև օգնել ռուսական բանակում մարտնչող հայ կամավորներին: Հիմնադիր համաժողովին իրենց մասնակցությունը բերեցին Լոնդոնի միացյալ հայկական ընկերության ղեկավար անդամները, այդ թվում ընկերու-

[1] Rhodes House Library, BAC minutes, quoted October 21, 1918.

թյան նախագահ Գրեգորին:[1]

Ստեղծված ֆոնդի ղեկավար կազմը բավականին ներկայացուցչական էր՝ ֆոնդի նախագահն էր Լեդի Բրայսը, այն ուներ 26 փոխնախագահներ, և 11 անդամներից բաղկացած ընդհանուր կոմիտե:[2]

Հայկական կարմիր խաչի և հայ փախստականների ֆոնդը մինչև 1915թ. հոկտեմբերի կեսերը, երբ հիմնադրվեց Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդը, հանդիսանում էր հայ փախստականներին օգնություն տրամադրող հիմնական բրիտանական կազմակերպությունը:

Արդեն 1915թ. հունվարին ֆոնդն առաջին 200 ֆունտ ստեռլինգն ուղարկեց Մոսկվայում բրիտանական գլխավոր հյուպատոսին՝ խնդրելով գումարը փոխանցել Թիֆլիսի քաղաքագլխին, այն պետք է հավասարապես բաժանվեր փախստականների և հայ կամավորների բժշկական կարիքների համար:[3]

1915թ հունվարի 12-ին "The Times" պարբերականում հրապարակվեց Լեդի Սոմերսեթի, Լեդի Գավնդիշի և Լորդ Բրայսի կոչը՝ ուղղված բրիտանական հասարակությանը: Այստեղ ներկայացվում էին նորաստեղծ ֆոնդի նպատակները՝ ռուսական բանակում մարտնչող հայ կամավորների համար բժշկական պարագաների և հագուստների ուղարկում և հայ փախստականներին օգնության տրամադրում: Կոչ էր արվում տրամադրել ինչպես դրամական օգնություն, այնպես էլ տաք հագուստներ և այլ պարագաներ:[4]

Այս ֆոնդը միջոցներ էր ուղարկում ոչ միայն Թիֆլիսի քաղաքագլխին: Այսպես, 1915թ. ապրիլի 16-ին պրն. Բոնը 600 ֆունտ ստեռլինգ փոխանցեց Մոսկվայում բրիտանական գլխավոր հյուպատոսին՝ խնդրելով գումարը փոխանցել Ամենայն հայոց կաթողիկոսին՝ որպես նվիրատվություն վերջինս գլխավորած ֆոնդին, ընդ որում, գումարի կեսը պետք է տրամադրվեր հայ կամավորների համար կարմիր խաչի աշխա-

---

[1] "Ararat", vol. II, N 18, December 1914, pp. 205-208.

[2] ֆոնդի ղեկավար անդամների ամբողջական ցուցակը տես՝ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գործ 901, թերթ 14:

[3] "Ararat", vol. II, N 19, Januar 1915. p.245.

[4] "The Times", London, Tuesday, January 12, 1915.

տանքներին, իսկ մյուս կեսը պետք է օգտագործվեր փախստականներին օգնելու համար:[1]

Քանի որ Բրիտանիայում ստեղծված կազմակերպությունները իրենց հավաքած գումարները հիմնականում փոխանցում էին Կովկասում արդեն գործող բարեգործական հայկական կազմակերպություններին, անհրաժեշտ ենք համարում համառոտ ներկայացնել վերջիններիս գործունեությունը և ընդհանրապես իրավիճակը Կովկասում կապված հայ փախստականների հետ:

Նախ նշենք, որ կովկասյան ճակատի փախստականների դրությունը կարգավորող գլխավոր մարմնի դիվանատան տվյալների համաձայն, կովկասյան երկրամասում 1916թ. հունվարի 1-ի դրությամբ ապաստանել էր 234400 փախստական, նույն տարվա դեկտեմբերի 1-ի դրությամբ վերջիններիս թիվն արդեն հասել էր 373553-ի, իսկ 1917թ. սկզբին, մի փոքր նվազելով, կազմում էր 283063:[2]

Փախստականների խնդիրների կարգավորմամբ զբաղվում էին թե՛ պետական մարմինները և թե՛ տարբեր հասարակական կազմակերպություններ: 1915թ. հոկտեմբերի 29-ին հրապարակվեց ներքին գործերի նախարարության կողմից հաստատված «Կայսրության ներսում գաղթականների տեղավորման գլխավոր լիազորների» հրամանը, իսկ մինչ այդ՝ 1915թ. հոկտեմբերի 19-ին, Կովկասի փոխարքային կից կովկասյան ճակատի գաղթականների տեղավորման գլխավոր լիազոր էր նշանակվել գեներալ-մայոր Ալ. Թամամշյանը (Թամամշև): Սակայն հասկանալի է, որ հայ հասարակությունը ևս չէր կարող անտարբեր մնալ ծանր իրավիճակում հայտնված իր հայրենակիցների ճակատագրի հանդեպ: Գաղթականներին օգնելու գործում մեծ դեր խաղացին հատկապես Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը և Հայկական կենտրոնական կոմիտեն, Հայ նպաստամատույց և Մեղու ընկերությունները,

---

[1] "Ararat", vol. II, N 22, April 1915, p. 393.

[2] Հարությունյան Ա., Հայոց Մեծ եղեռնը և հայ գաղթականությունը Կովկասում 1914-1916թթ., Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, թիվ 6, Երևան, 2002, էջ 25:

Հայ տիկնանց և Հայ ուսուցչական կոմիտեները, Հայրենակցական միությունների միությունը, Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Կարսի և այլ բնակավայրերի եղբայրական օգնության կոմիտեները, Հայ գյուղատնտեսական ընկերությունները, Քաղաքների միության կոմիտեն և այլ կազմակերպություններ:[1]

Ինչպես տեսնում ենք, Կովկասում գործում էին փախստականներին օգնություն ցույց տվող բավականին մեծ թվով կազմակերպություններ, որոնցից մի քանիսի հետ բրիտանական կազմակերպությունները ստեղծեցին սերտ հարաբերություններ:

Ինչպիսին էին ֆոնդի առաջին տարվա գործունեության արդյունքները: 1915թ. դեկտեմբերի դրությամբ այն հավաքել էր 4600 ֆունտ ստեռլինգ գումար՝ չհաշված ֆոնդի անունով ստացված մեծ քանակությամբ հագուստեղենը և այլ իրերը: Ֆոնդը շարունակում էր գումարների հիմնական մասը Կովկաս ուղարկել Մոսկվայում բրիտանական հյուպատոսի միջոցով: Այսպես, նոյեմբերին ուղարկվել էր 1000 ֆունտ ստեռլինգ Ամենայն հայոց կաթողիկոսին փոխանցելու համար:[2]

Անհրաժեշտ ենք համարում համառոտ ներկայացնել ֆոնդի առաջին տարեկան հաշվետվությունը: Դրա համաձայն, ֆոնդը հաշվետու ժամանակահատվածում ստացել էր 47000ռ., ընդ որում մեծամասնությունը ոչ թե հայերից, այլ անգլիացիներից: Գումարների մեծամասնությունը ժամանակին ուղարկվել էր Մոսկվայում անգլիական հյուպատոսին: Որոշ գումարներ փոխանցվել էին անմիջապես Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսովին: Թիֆլիս էին ուղարկվել նաև զգալի քանակությամբ տաք շորեր և 3000ռ. դեղամիջոցներ:[3]

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ բրիտանական նպաստամատույց կազմակերպությունների և Կովկասում ստեղծված փախստականներին օգնող հայկական հասարակական կազ-

---

[1] Հարությունյան Ա., նշվ. հոդվածը, էջ 25-26:

[2] "Ararat", vol. III, N 30, December 1915., pp. 279-281.

[3] Պողոսյան Ռ., Բրիտանական հայանպաստ կազմակերպությունների օգնությունը հայ փախստականներին Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, թիվ 8, Երևան, 2003, էջ 33:

մակերպությունների համագործակցությունը միշտ չէ, որ ընթանում էր առանց տարաբնույթ խնդիրների:

Դրանց մասին որոշակի տեղեկություններ ենք ստանում լոնդոնաբնակ ոմն պրն. Տոնապետյանի 1916թ. մարտի 4-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գ-նորգ V-ին ուղարկված նամակից և դրան կցված նյութերից: Նյութերում բերվում է Տոնապետյանի նամակը ուղղված օր. Ռոբինսոնին, որով Տոնապետյանն իր անհանգստությունն է արտահայտում, որ ֆոնդը 1915թ. դեկտեմբերի 10-ին 200 ֆունտ ստեռլինգ է ուղարկել պրն. Սաֆրաստյանին և նշում, որ դա վիրավորանք է արդեն գործող հայկական բարեգործական կազմակերպությունների հասցեին: Հետաքրքիրն այն է, որ Տոնապետյանին ուղարկված պատասխանում Ռոբինսոնը գրում է, որ Կովկասում նպաստամատույց աշխատանքների կազմակերպումը բարձր մակարդակի վրա չէ: Այն փաստի մասին, որ այդ խնդիրը միայն Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդին չէ, որ մտահոգում էր, խոսում է նույն այդ նյութերում բերված մի հրապարակում "The Friend of Armenia" պարբերականից: Այնտեղ նշվում էր, որ "Friends of Armenia"կազմակերպությունը, վստահ չլինելով Ռուսաստան ուղարկված միջոցների ճակատագրի հարցում՝ առայժմ հետաձգում է դրանց ուղարկումը:[1]

Այնուամենայնիվ, Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը շարունակեց իր համագործակցությունը հայկական նպաստամատույց կազմակերպությունների հետ: Այսպես, Ռոբինսոնը հայ օրիորդների կոմիտեին փոխանցեց 8000ռ.՝ կոմիտեի հաշվին պահվող որբանոցների օգտին:[2] Թիֆլիսում բնակվող վանուհիների միությունը օր. Ռոբինսոնից ստացավ 3080ռ. ի նպաստ միության նորաբաց արհեստանոցի: Գումարի կեսը փոխանցվեց վանուհիների Երևանի միությանը:[3]

Վասպուրականի կանանց միությունը օր. Ռոբինսոնից ստացավ ևս 1500ռ. ի նպաստ արհեստանոցի: Ռոբինսոնը նաև

---

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1286, թ. 5-15:

[2] «Մշակ», Թիֆլիս, 1916թ. փետրվարի 21, թիվ 39, էջ 3 և «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916թ. փետրվարի 14, թիվ 12, էջ 16:

[3] «Մշակ», 1916թ. հունիսի 30, թիվ 143, էջ 3:

շնորհակալական գրություն էր ուղարկել միությանը, քանի որ վերջինս Ռոբինսոնին էր ուղարկել միության արհեստանոցում պատրաստված զանազան ձեռագործների նմուշներ:[1]

Հարկ է նշել, որ Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդն առավել սերտ հարաբերություններ էր հաստատել Թիֆլիսի պատերազմի զոհերի կենտրոնական նպաստամատույց կոմիտեի և մասնավորապես նրա նախագահ Սամսոն Հարությունյանի հետ: Ընդ որում, ֆոնդը չէր սահմանափակվում միայն ընդհանուր դրամական փոխանցումներ կատարելով, այլև ներգրավվում էր նաև կոնկրետ ծրագրերի իրականացման մեջ:

Այսպես, 1916թ. նոյեմբերի 4-ին Ս. Հարությունյանին ուղղված նամակում օր. Ռոբինսոնը գրում էր, որ ստացել է նրա հեռագիրը՝ հայ փախստական երիտասարդների համար Դիլիջանում տեխնիկական դպրոցի և ֆերմերային տնտեսության ստեղծման ծրագրին հնարավոր օժանդակություն ցուցաբերելու հետ կապված: Ռոբինսոնը գրում է, որ իրենց կոմիտեն հանձնարարել է իրեն 6200-ռ. (400 ֆունտ ստեռլինգ) ուղարկել այդ ծրագրի համար: Միաժամանակ Ռոբինսոնը տեղեկացնում է, որ ինքը Հարությունյանին է ուղարկել 7750ռ. և խնդրում է գումարի մնացած մասը՝ 1550ռ. (100 ֆունտ ստեռլինգ) հանձնել Վանից եկած արծաթագործների միությանը: Նույն նամակում Ռոբինսոնը խնդրում է մանրամասն զեկույց ուղարկել այն մասին, թե ինչպես են ծախսվում այդ փողերը, որպեսզի ինքը կարողանա բավարարել բրիտանական իշխանությունների հետաքրքրությունը:[2]

Ռոբինսոնի այս վերջին խոսքերը թույլ են տալիս ենթադրել, որ բրիտանական նպաստամատույց կազմակերպությունների անհանգստությունը՝ Ռուսաստան ուղարկվող միջոցների ճակատագրի և դրանց ծախսման նպատակահարմարության հետ կապված, որոշակիորեն գալիս էր նաև բրիտանական իշխանություններից:

---

[1] «Վան-Տոսպ», 1916թ. նոյեմբերի 13, թիվ 51, էջ 15:
[2] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 901, թ. 15-16:

Ֆոնդը շուտով ձեռնամուխ եղավ ևս մեկ ծրագրի իրականացմանը: 1916թ. դեկտեմբերի 22-ին Ս. Հարությունյանին ուղղված նամակում օր. Ռոբինսոնը տեղեկացնում էր, որ ֆոնդը որոշել է Ալեքսանդրապոլում հիմնել որբանոց 100 սասունցի երեխաների համար, և այդ նպատակով արդեն փոխանցել է 4635ռ. (300 ֆունտ ստեռլինգ):[1]

Ֆոնդն սկսեց այս ծրագրի իրականացումը, սակայն միջոցների որոշակի պակասը հարկադրեց նրան կրճատել իր աշխատանքի ծավալները, մանավանդ որ այն չէր սահմանափակվում միայն վերը նշված ծրագրերով: 1917թ. հունվարի 29-ի Ս. Հարությունյանին ուղարկված իր նամակում Ռոբինսոնը գրում է, որ բարձր գների պատճառով ճիշտ կլիներ սկսել Ալեքսանդրապոլի որբանոցի աշխատանքները 40 երեխաներով:[2]

Ռոբինսոնին ուղարկված իր հերթական նամակում Ս. Հարությունյանը ներկայացնում է նրանից ստացած գումարների ամբողջական հաշվետվություն, համաձայն որի օր. Ռոբինսոնից ստացվել էր 6200ռ.՝ Դիլիջանում փախստականների համար ստեղծված արհեստանոցի օգտին, 3200ռ.՝ Երևանի կանանց կոմիտեի օգտին՝ փախստականներին օգնելու համար, 1550ռ.՝ Վանի արծաթագործ փախստականների, 8225ռ.՝ սասունցի երեխաների որբանոցի, 8225ռ.՝ Էրզրումի և Երզնկայի փախստականների համար:[3]

1916թ. դեկտեմբերի դրությամբ, այսինքն երկու տարվա գործունեության արդյունքում, ֆոնդը հավաքել էր 8774 ֆունտ ստեռլինգ գումար՝ չհաշված ստացված զանազան իրերը:[4]

Նշենք, որ 1916թ. վերջին Է. Ռոբինսոնը հրատարակեց «Հայաստան և հայերը» ութ էջանոց բրոշյուրը, որտեղ համառոտ ներկայացվում էր հայ ժողովրդի և հայ եկեղեցու պատմությունը մինչև Առաջին համաշխարհային պատերազմը: Նշվում էր, որ 1915-1916թթ. օսմանյան կառավարության կարգադրությամբ նվազագույնը 500000 հայ է սպանվել և գրեթե նույնքան

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 158, թ. 24-25:
[2] Նույն տեղում, գ. 901, թ. 14:
[3] Նույն տեղում, թ. 23-24:
[4] "Ararat", vol. IV, N 42, December 1916, pp. 270-272.

մարդ էլ քշվել է դեպի անապատներ:[1]

Թուրքահայաստանի նահանգների բնակչության մնացորդները՝ մոտավորապես 250000 մարդ, գտնվում են Կովկասում և ունեն օգնության կարիք: Կոչ էր արվում նվիրատվություններ ուղարկել Է. Ռոբինսոնին՝ Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդի քարտուղարուհուն:[2]

Ֆոնդը նվիրատվություններ էր հավաքում տարբեր ձևերով: Դրանցից մեկը Մեծ Բրիտանիայի տարբեր քաղաքներում այսպես կոչված «Հայկական դրոշի օրերի» կազմակերպումն էր: Դրանց ընթացքում վաճառվում էին հայկական դրոշներ, իսկ վաճառքից գոյացած գումարներն ամբողջովին անցնում էին ֆոնդի տրամադրության տակ:

Առաջին այդպիսի միջոցառումը տեղի ունեցավ Մանչեստրում և Սոլֆորդում 1916թ. հոկտեմբերի 13-ին և 14-ին: Վաղորոք քաղաքի մարդաշատ վայրերում փակցվել էին պլակատներ, որոնք տեղեկացնում էին միջոցառման մասին: Ընդ որում այս միջոցառմանը իրենց մասնակցությունը բերեցին ինչպես հայ գաղութի ներկայացուցիչները, այնպես էլ զգալի թվով անգլուհիներ և բելգուհիներ:[3]

Այս առաջին միջոցառման հաջողությունը նպաստեց նմանատիպ այլ միջոցառումների իրականացմանը: «Հայկական դրոշի օրեր» կազմակերպվեցին 1916թ. հոկտեմբերի 21-ին Վիտի քաղաքում, հոկտեմբերի 28-ին՝ Լեդիբանքում, նոյեմբերի 18-ին՝ Միլնգարնվիում, նոյեմբերի 25-ին՝ Նորս Բերվիքում, նույն օրը նաև Բրիջ օֆ Ալենում, դեկտեմբերի 2-ին՝ Դեննիում, դեկտեմբերի 4-ին Լիդսում: Նմանատիպ մեծ միջոցառում ֆոնդը ծրագրել էր անցկացնել Լիվերպուլում դեկտեմբերի 18-ին: Նշենք, որ ֆոնդին հաճախ ֆինանսական օգնություն էին տրամադրում Բրիտանիայում գործող տարբեր հասարակական կազմակերպություններ: Այսպես, Հիլսթոն քաղաքի «Դաշնակիցների օգնության ֆոնդը» ուղարկել էր 125 ֆունտ ստեռլինգ: Ֆոնդին որոշ գումարներ էին փոխանցել նաև Աթերթոնի «Քա-

---

[1] Robinson E., Armenia and the Armenians, London, n.d., pp. 3-7.
[2] Robinson E., ibid., p. 8.
[3] "Армянский Вестник", 1916г., 30-ое октября, номер 40, стр. 16.

ղաքացիների լիգան», Լամփեթերի «Դաշնակիցների օգնության հայրենասերների կոմիտեն», Վուլվերհեմփթոնի «Դաշնակիցների ֆոնդի» քաղաքային ղեկավարությունը, Միդլսբրոյի «Նպաստների կենտրոնական ֆոնդի» քաղաքային ղեկավարությունը, Ռոթերհեմի «Նպաստների կենտրոնական ֆոնդի» քաղաքային ղեկավարությունը, Սթոկթոնի «Նպաստներ հատկացնող դաշնակիցների ընդհանուր կոմիտեն» և այլն:[1]

1917թ. ընթացքում ֆոնդը շարունակեց իր գործունեությունը հումանիտար օգնության բնագավառում: Ս. Հարությունյանի՝ օր. Ռոբինսոնին ուղարկված 1917թ. ապրիլի 6-ի նամակից պարզ է դառնում, որ 1917թ. հունվարի 15-ին Ալեքսանդրապոլում բացվել է սասունցի 40 երեխաների համար նախատեսած որբանոցը: Միաժամանակ նշվում է, որ որբանոցի համար ստացված 4600ռ. ծախսվել է մինչև 1917թ. մարտի 15-ը: Նույն նամակում տեղեկացվում է, որ ֆոնդն ապրիլի 3-ին Հայկական կենտրոնական կոմիտեի անունով փոխանցել է ևս 6660ռ.:[2]

Ֆոնդի Կովկաս ուղարկված գումարների մասին մանրամասն տեղեկություններ են պարունակվում Ս. Հարությունյանի՝ Ռոբինսոնին ուղարկված 1917թ. հոկտեմբերի 5-ի նամակում: 1916թ. նոյեմբերի 9-ից մինչև 1917թ. հունիսի 11-ն ընկած ժամանակամիջոցում Հայկական կենտրոնական կոմիտեն Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդից ստացել է 41412ռ., որոնք բաշխվել են հետևյալ կերպ. տարբեր անձանց և կազմակերպությունների հատկացվել է 18420ռ., Դիլիջանի արհեստանոցին հատկացվել է 12342ռ. և Ռոբինսոնի անվան որբանոցին հատկացվել է 10650ռ.:[3]

Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը շարունակում էր միջոցներ ուղարկել Ս. Հարությունյանին: 1917թ. հոկտեմբերի 14-ին Հայկական կենտրոնական կոմիտեի նիստում վերջինս հայտարարեց, որ Ռոբինսոնի կոմիտեից ստացել է հետևյալ գումարները. 5900ռ.՝ Ալեքսանդրապոլի որբանոցի օգտին, 4425ռ.՝ Դիլիջանի արհեստանոցների օգտին և

---

[1] "Армянский Вестник", 1917г. 1-ое января, номер 1, стр. 18-19.
[2] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 901, թ. 20-22:
[3] Նույն տեղում, թ. 2:

2950ռ.՝ Արևմտահայ ուսուցչական միության օգտին:[1]

Ֆոնդը շարունակում էր միջոցներ ուղարկել նաև Թիֆլիսի քաղաքագլուխ Խատիսովին, որոնք չնայած որոշակի ուշացումներին, տեղ էին հասնում և իրենց դերը ունեին հայ փախստականների դրության թեթևացման գործում: Այսպես, 1917թ. հունվարի 27-ին Խատիսովը, Ռոբինսոնին ուղարկված նամակում գրում էր, որ ստացվել են չորս արկղ տաք հագուստ, 28 արկղ դեղամիջոցներ, և այդ մասին ինքը Ռոբինսոնին տեղյակ է պահել 1916թ. նոյեմբերի 24-ի նամակով:[2] Ինչ վերաբերում է ֆոնդի 1917թ. գործունեությանն ընդհանրապես, ապա կարող ենք ասել, որ 1917թ. դեկտեմբերի դրությամբ նա հավաքել էր ավելի քան 11500 ֆունտ ստեռլինգ:

1918թ. իրադարձությունները՝ թուրքական արշավանքը, Արևմտյան Հայաստանի, իսկ այնուհետև Արևելյան Հայաստանի մի շարք շրջանների գրավումը թուրքական զորքերի կողմից, հաղորդակցական ուղիների փակվելը իրենց ազդեցությունն ունեցան նաև ֆոնդի գործունեության վրա: Գրեթե դադարեցվեց միջոցների ուղարկումը Անդրկովկաս, սակայն ֆոնդը շարունակեց իր աշխատանքները Մեծ Բրիտանիայում և 1918թ. վերջից վերսկսեց իր ակտիվ գործունեությունը:

Քննարկվող ժամանակահատվածում բրիտանական նպաստամատույց ամենախոշոր կազմակերպությունը Հայ փախստականների (Լորդ Քաղաքագլխի) ֆոնդն էր: Ֆոնդի ստեղծման մասին որոշումն ընդունվեց Լորդերի պալատի կողմից 1915թ. հոկտեմբերի 6-ին, իսկ հոկտեմբերի 15-ին այդ որոշման մասին հայտարարվեց Լոնդոնում Լորդ քաղաքագլուխ Չարլզ Ջանստոնի նախագահությամբ հրավիրված միտինգում: Ֆոնդի ստեղծման գործում մեծ ներդրում ունեին Լոնդոնի ապագա Լորդ քաղաքագլուխ Կառլ Ուեյկֆիլդը, պառլամենտի անդամներ, հայանպաստ շարժման մեջ իրենց արժանի տեղը զբաղեցնող պառլամենտականներ Ա. Ուիլյամսը, Ն. Բաքսթոնը և ուրիշներ:[3]

---

[1] «Համբավաբեր», 1917թ. հոկտեմբերի 29, թիվ 35, էջ 690:

[2] "Ararat", vol. IV, N 46, April 1917, p. 464.

[3] Акопян С., Западная Армения в Планах Империалистических Держав в Период Первой Мировой Войны, Ереван, 1967, стр. 90.

Ֆոնդի կարևորության մասին է վկայում արդեն այն փաստը, որ նրա մշտական նախագահն էր Լոնդոնի Լորդ քաղաքագլուխը, փոխնախագահների թվում էին Քենթերբերիի և Յորքի արքեպիսկոպոսները, Լոնդոնի եպիսկոպոսը, Անգլիայի կաթոլիկների առաջնորդ կարդինալ Բուրնը, Անգլիայում ռուսական դեսպան Բենկենդորֆը, Լորդեր Բրայսը, Քերզոնը, Կրոմերը, սըր Էդվին Փիրսը, սըր Վիլիամ Ռամսեյը, Լեդի Ֆրեդերիկ Գավնդիշը:

Ֆոնդն ուներ նաև գործադիր կոմիտե, որի նախագահն էր ԲԱՀ-ի նախագահ Անեուրին Վիլիամսը, անդամների թվում էին Թ. Փ. Օ'Քոնորը, Նոել Բաքսթոնը, գնդապետ Գրեգորին, օրիորդ Էմիլի Ռոբինսոնը և ուրիշներ, պատվավոր քարտուղարն էր Հարոլդ Բաքսթոնը:[1]

Ֆոնդը քայլեր ծավալեց նաև բրիտանական այլ քաղաքներում հանգանակություններ կազմակերպելու համար: Հոկտեմբերի 25-ին միտինգ տեղի ունեցավ Մանչեստրում, որի ժամանակ ելույթներ ունեցան Լորդ Բրայսը, Անեուրին Վիլիամսը և եպիսկոպոս Վելդոնը: Այս նախնական արշավի ընթացքում Լոնդոնի Լորդ քաղաքագլխի ֆոնդի հաշվին փոխանցվեց 2500 ֆունտ ստեռլինգ: Նշենք, որ Մանչեստրն արդեն ակտիվորեն ներգրավված էր հօգուտ հայերի միջոցների հավաքման գործում: Այստեղ դեռևս 1915թ. հոկտեմբերի 1-ին քաղաքի Լորդ քաղաքագլխի նախագահությամբ տեղի էր ունեցել մի հավաքույթ, որի ընթացքում որոշվել էր ստեղծել «Հայ օգնության ֆոնդ» հայ փախստականների տառապանքները թեթևացնելու համար: Ֆոնդի նախագահ դարձավ քաղաքագլուխ Ալդերման Դանիել Մաքքեյբը, իսկ ֆոնդի կոմիտեի նախագահ դարձավ քաղաքի խոշոր առևտրական տներից մեկի ղեկավար Թուքալ Բրոդհարսթը: Նույն հավաքույթում հրապարակվեց կոչ, որում նշվում էր, որ այդ ֆոնդի նպատակն է հավաքել գումարներ և փոխանցել Լորդուհի Բրայսի նախագահությամբ գործող Լոնդոնի կոմիտեին (նկատի ունեն Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը):[2]

---

[1] Ֆոնդի ամբողջ կազմը տես՝ "Ararat", vol. III, N 28, October 1915, p. 136.
[2] ibid., pp. 153-162.

Լոնդոնի Լորդ քաղաքագլխի ֆոնդը գրեթե ստեղծման պահից սկսեց միջոցների փոխանցումը Կովկաս: 1915թ. դեկտեմբերի 21-ին Ս. Հարությունյանին ուղղված նամակում ֆոնդի քարտուղարը տեղեկացնում էր, որ նախորդ օրը նրան է ուղարկվել 37312ռ. Թիֆլիսի շրջակայքում գտնվող հայ փախստականների համար:[1] Ֆոնդի գործադիր կոմիտեի նախագահ Ա. Վիլիամսը 1916թ. հունվարի 18-ին ուղարկված նամակում տեղեկացնում էր, որ հունվարի 17-ին Թիֆլիսի շրջակայքում գտնվող հայ փախստականների համար փոխանցել են 80750ռ.:[2] 1916թ. փետրվարի 7-ին նույն հասցեով փոխանցվեց ևս 64000ռ.:[3] Մեկ ամիս անց Հայկական կենտրոնական կոմիտեին փոխանցվեց 74750ռ.:[4]

Ֆոնդի վաղ շրջանի գործունեության մասին որոշ տեղեկություններ կան նաև վերջինիս գործադիր կոմիտեի նախագահ Ա. Վիլիամսի՝ Ա. Չուպանյանին 1915թ. նոյմբերի 23-ին ուղարկված նամակում: Այստեղ Վիլիամսը ցանկություն է հայտնում տեղեկատվության փոխանակություն կատարել իրենց և Չուպանյանի կոմիտեի միջև երկուստեք կատարված աշխատանքների մասին: Վիլիամսը տեղեկացնում է, որ մինչ օրս իրենց հավաքել են 14000 ֆունտ ստեռլինգ, որից 10000-ը ուղարկել են Կովկաս, 550-ը Թավրիզի բրիտանական հյուպատոսին և 170 ֆունտ ստեռլինգ արժողությամբ ապրանքներ՝ Եգիպտոսում գտնվող հայ փախստականների համար: Վիլիամսը գրում է, որ գումարները ուղարկվում են Մոսկվայի բրիտանական գլխավոր հյուպատոսին, որպեսզի վերջինս դրանք փոխանցի Էջմիածնի հայոց կաթողիկոսին: Նա նաև Չուպանյանին տեղեկացնում է, որ ֆոնդը չի փորձում որևէ օգնություն ուղարկել Թուրքիա՝ անհավանական համարելով այդ օգնության նպատակին հասնելը:[5]

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 423, թ. 67:

[2] Նույն տեղում, թ. 49: և Համբավաբեր, 1916թ. հունվարի 10, թիվ 3, էջ 82:

[3] «Համբավաբեր», 1916թ. փետրվարի 7, թիվ 7, էջ 210 և ՀԱԱ, ֆ. 28, ց1, գ. 423, թ. 16:

[4] «Վան-Տոսպ», 1916թ. մարտի 13, թիվ 16, էջ 16:

[5] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 9385:

Ֆոնդը որոշեց Կովկաս ուղարկել հատուկ առաքելություն: Դրա կազմում էին ութ հոգի, այդ թվում ֆոնդի պատվավոր քարտուղար Հարոլդ Բաքսթոնը, բժիշկ Գրահամ Ասպլանդը, որը պատերազմի ընթացքում արդեն ծառայություն էր կատարել Ֆրանսիայում և Սերբիայում: Ասպլանդին ուղեկցում էին երեք գթության քույրեր. օրիորդ Բեատրիս Քարը, որը եղել էր Սերբիայում, օրիորդ Մարգարետ Բարբրը, նույնպես եղել էր Սերբիայում, գերվել ավստրիացիների կողմից և մի քանի ամիս Վիեննայում պահվելուց հետո ազատ էր արձակվել, տիկին Արմսթրոնգը, որն ուներ զինվորական հիվանդանոցներում աշխատելու երկար փորձ: Առաքելության կազմում էին նաև պրն. Ալֆրեդ Բաքհաուզը, բանկիր Ջորջ Հոջկինը: Առաքելության քարտուղարի պաշտոնը զբաղեցնում էր Ա. Սաֆրաստյանը:[1]

Ապրիլի 2-ին խումբը ժամանեց Պետրոգրադ: Հաջորդ օրը Պետրոգրադի հայկական կոմիտեն ընդունելություն կազմակերպեց ի պատիվ հյուրերի, որին մանակցեցին և ելույթներ ունեցան Պետական դումայի պատգամավորներ Պապաջանովը և Աճեմովը: Պատասխան ելույթում Հարոլդ Բաքսթոնը նշեց, որ իրենց տեղեկությունների համաձայն Ռուսաստանի տարածքում այժմ գտնվում են 250000 հայ փախստականներ: Նա նաև տեղեկացրեց, որ առաքելությունն իր հետ բերել է 45000 ֆունտ ստեռլինգ գումար:[2]

Առաքելության Թիֆլիս ժամանելուց հետո ապրիլի 18-ին տեղի ունեցավ Հայկական կենտրոնական կոմիտեի արտակարգ նիստ Ս. Հարությունյանի նախագահությամբ, որին մասնակցում էին նաև առաքելության անդամները և Ամերիկայից եկած բժիշկ Գրեյսին:

Ս. Հարությունյանը ներկայացրեց Հայկական կենտրոնական կոմիտեի դրամական հաշիվները սկսած այն ժամանակվանից, երբ վերջինիս գումարներ էր ուղարկել Լոնդոնի Լորդ քաղաքագլխի կոմիտեն: Հրապարակված տվյալների համաձայն 1915թ. դեկտեմբերից մինչև 1916թ. ապրիլի 1-ը կոմիտեն տարբեր աղբյուրներից ստացել էր 841000ռ., որից 252000ռ.

---

[1] «Համբավաբեր», 1916թ. ապրիլի 24, թիվ 17, էջ 517-518:

[2] "Армянский Вестник", 24-ое апреля, 1916г., номер 12-13, стр. 33.

ուղարկել էր Լորդ քաղաքագլխի կոմիտեն: Պատասխան ելույթով հանդես եկավ Հարոլդ Բաքսթոնը: Արդեն հաջորդ օրը Բաքսթոնի հետ ժամանած բժշկական խումբը մեկնեց Վան:[1]

Առաքելությունն զբաղվեց ակտիվ գործունեությամբ: Նրանք մեծ ուշադրություն էին դարձնում փախստականների ետ վերադարձին և տեղում վերջիններիս օգնության ցուցաբերմանը: Առաքելության անդամներից մեկը տեղի թերթերից մեկին տված հարցազրույցում հայտարարեց, որ իրենք մտադիր են լայն գործունեություն ծավալել Ղարաքիլիսայի և Ալաշկերտի օկրուգներում փախստական հայերին աջակցող Կովկասյան կոմիտեի հետ համատեղ:[2]

Առաքելության անդամները չսահմանափակվեցին միայն Թիֆլիսում լինելով: Բաքսթոնի գլխավորությամբ նրանք մեկնեցին Էջմիածին՝ կաթողիկոսի հետ հանդիպելու համար:[3] Այնուհետև Բաքսթոնը եղավ Կարինի վիլայեթում, այնտեղից անցավ Վան, իսկ այնուհետև պետք է գնար Բիթլիս:[4]

Անգլիա վերադառնալուց առաջ Բաքսթոնը տեղեկացրեց կովկասյան ճակատի փախստականների հարցերով լիազոր գեներալ Թամամշևին, որ գեներալ Վորոնովի թույլտվությամբ իրենց կոմիտեն գյուղատնտեսական օգնություն կցուցաբերի Վանա լճի հարավում գտնվող փախստականներին, ընդ որում այդ աշխատանքները ղեկավարելու էր առաքելության անդամ Բաքհաուզը, որը մնալու էր Կովկասում:

Բաքհաուզը շուտով մեկնեց Վան, որտեղ սկսեց հետևել անգլիական գումարների բաշխմանը և ընդունել հաշվետվություններ փախստականների կազմակերպությունների ղեկավարությունից: Այս կապակցությամբ նշենք, որ եթե 1915թ. հոկտեմբերից մինչև 1916թ. ապրիլ անգլիացիները համագործակցում էին հիմնականում Եղբայրական օգնություն և Հայկական կենտրոնական կոմիտե կազմակերպությունների հետ, ապա 1916թ. գարնանից սկսած, երբ Արևմտյան Հայաստանում

---

[1] «Համբավաբեր», 1916թ. ապրիլի 24, թիվ 17, էջ 518-519:
[2] "Кавказское Слово", Тифлисъ, 1916г., номер 87, стр. 3.
[3] «Վան-Տուպ», 1916թ. մայիսի 15, թիվ 25, էջ 16:
[4] «Համբավաբեր», 1916թ. հունիսի 12, թիվ 24, էջ 753:

սկսեցին ավելի նշանակալի դեր խաղալ Հայաստանի վերաշինման հանձնաժողովը և Հայկական գյուղատնտեսական և արհեստագործական ընկերությունը, անգլիացիները որոշեցին հիմնականում համագործակցել նրանց հետ: Միաժամանակ նշենք, որ Լորդ քաղաքագլխի ֆոնդը որոշ միջոցներ տրամադրում էր նաև ազգությամբ ոչ հայ փախստականներին՝ ասորիներին, նաև մահմեդականներին: Այսպես, Բաքսթոնը մահմեդական բարեգործական ընկերության նախագահին էր տվել 15000ռ.:[1]

Անգլիական նպաստամատույց կազմակերպությունները գնալով ավելի շատ ուշադրություն էին դարձնում հայ փախստականների՝ բնակության նախկին վայրերը վերադառնալու խնդրին: 1916թ. հունիսին Լոնդոնի Մենշոն Հաուս սրահում Լորդ քաղաքագլխի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հավաքույթ՝ նվիրված այդ խնդրին: Հավաքույթի ընթացքում ելույթ ունեցավ նաև Լորդ Բրայսը՝ նշելով, որ օգնություն հատկացնելով տուն վերադարձող հայերին, իրենք օգնում են ողջ Ասիային, քանզի հայերն իրենցից ներկայացնում են մի խելացի և աշխատասեր ժողովուրդ: Հավաքույթը Թ. Փ. Օ'Քոնորի առաջարկով հեռագիր ուղարկեց ռուսական կառավարությանը՝ շնորհավորելով վերջինիս ռուսական զենքի հաղթանակների կապակցությամբ՝ հայկական նահանգները թուրքական տիրապետությունից ազատելու գործում:[2]

Խոսելով Բաքսթոնի առաքելության և տարածաշրջանում մնացած Լորդ քաղաքագլխի կոմիտեի ներկայացուցիչ Բաքհաուզի գործունեության մասին, անհրաժեշտ է նշել, որ ցարական իշխանություններն ամենայն ուշադրությամբ հետևում էին նրանց քայլերին: Այսպես, Էջմիածնի գավառական ոստիկանության պետը 1916թ. օգոստոսի 18-ին իր պրիստավներին հրամայել էր խստորեն հետևել Վան այցելած բրիտանացի հպատակներ Մակկալումի և Բաքհաուզի վերադարձին և վերջիններիս հայտնվելու պես իրեն հաղորդել, թե որտե՞ղ են նրանք կանգ առել, ու՞մ հետ են շփվում: Մեկ այլ հրամանով նա

---

[1] Акопян С., նշվ. աշխ., стр. 97.

[2] "Армянский Вестник", 26-ое июня 1916г., номер 22, стр. 16-17.

պահանջում էր իրեն հաղորդել, թե «Արարատ» հյուրանոցում հիշեցված նշված բրիտանացիները ունեցե՞լ են արդյոք որևէ շփումներ և եթե այո, ապա ու՞մ հետ և ի՞նչ գործերով:[1]

Առաքելության հանդեպ իշխանությունների առկա որոշակի անվստահությունը նկատել էին նաև Բաքսթոնն ու Հոջկինը: 1916թ. օգոստոսի 15-ին Համայնքների պալատում BAC-ի անդամների հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ Հարոլդ Բաքսթոնը՝ հակիրճ ներկայացնելով Հայաստան կատարած իրենց այցելությունը և այն սրտագին ընդունելությունը, որին արժանացել են թե՛ Ռուսաստանի և թե՛ Փոքր Ասիայի հայերի կողմից, անդրադարձավ նաև քաղաքական իրավիճակին՝ նշելով, որ այն բարդ է, և ինքը առարկում է այդ հարցի կապակցությամբ որևէ վաղաժամ հրապարակային քննարկման անցկացմանը:

Իսկ սրն. Հոջկինը, հիմնականում ներկայացնելով իր տպավորությունները Պարսկաստանի հայերի և այդ շրջաններում ասորիների վիճակի կապակցությամբ, հաստատեց Բաքսթոնի կարծիքը քաղաքական վիճակի դժվարությունների վերաբերյալ՝ նշելով, որ դրանք ոչ քիչ չափով գալիս են ռուս պաշտոնյաների մի մասի հակումից՝ կասկածանքով վերաբերվել բոլոր տիպի «առաքելություններին»:[2]

Բաքսթոնը և Հոջկինը վերադարձից հետո մանրամասն հաշվետվություն ներկայացրին Կովկասում տիրող իրավիճակի, այնտեղ գտնվող հայ փախստականների թվի, նրանց օգնող հասարակական տարբեր կազմակերպությունների, դեպի իրենց նախկին բնակավայրերը փախստականների վերադարձի խնդրի մասին: Զեկույցում բերվում էին փաստեր նաև Պարսկաստանի ասորիների և մահմեդական փախստականների դրության մասին:[3]

Առաքելության վերադարձից հետո էլ ֆոնդը շարունակեց իր ակտիվ գործունեությունը ինչպես Բրիտանիայում՝ ուղղված

---

[1] Акопян С., նշվ. աշխ., стр. 102.

[2] Rhodes House Library, BAC minutes, quoted August 15, 1916.

[3] Զեկույցի ամբողջական տեքստը տես՝ "Ararat", vol. IV, N 39, September 1916, pp. 110-126 և Ararat, vol. IV, N 40, October 1916, pp. 165-173.

նոր միջոցների հանգանակությանը, այնպես էլ Կովկասում, որտեղ այդ աշխատանքները կորդինացնում էր ֆոնդի ներկայացուցիչ պրն. Բաքհաուզը: 1916թ. դեկտեմբերի դրությամբ ֆոնդի հավաքած ընդհանուր գումարը կազմում էր 62300 ֆունտ ստեռլինգ, որն զգալիորեն գերազանցում էր Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդի այս նույն ժամանակամիջոցում հավաքած գումարին, որը կազմում էր ավելի քան 8700 ֆունտ ստեռլինգ:[1]

Միաժամանակ, որոշակի փոփոխությունների էր ենթարկվել նաև ֆոնդի գործադիր կոմիտեի կազմը: Անդամներից գնդապետ Գ-ռեգորին դարձել էր ֆոնդի պատվավոր քարտուղարը: Կոմիտեից դուրս էր եկել Է. Ռոբինսոնը, նրա փոխարեն կազմում ընդգրկվել էր Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդի նախագահ Լեդի Բրայսը, նոր անդամներից նշենք նաև Ա. Սայմոնդսին, Պատվելի Ֆ. Բ. Մեյերին, Ջ. Հոջկինին, օրիորդ Հիկսոնին:[2]

Կովկասում աշխատանքների առավել լավ կազմակերպման համար 1917թ. հունվարին Թիֆլիս ժամանեց Լորդ քաղաքագլխի ֆոնդի ևս մեկ ներկայացուցիչ՝ պրն. Է. Քեչփուլը: Իր հերթին Ա. Բաքհաուզը շարունակում էր այցելել տարբեր բնակավայրեր՝ փախստականների վիճակն ուսումնասիրելու համար: 1917թ. հունվարին նա այցելեց Իգդիր և շրջակայքի գյուղերը: Իր այցելությունների մասին նա զեկույցներ էր ուղարկում Լոնդոն:

Իգդիր կատարած այցելության մասին զեկույցում Բաքհաուզն առաջ էր քաշում այն միտքը, թե անհրաժեշտ է աշխատատեղեր բացել փախստական կանանց՝ հատկապես նրանց համար, ովքեր կորցրել են իրենց ամուսիններին: Բաքհաուզը գրում էր, որ որոշել է Իգդիրում բամբակագործության արտադրություն հիմնել և արդեն վարձել է համապատասխան տարածք և ձեռք բերել որոշ սարքավորումներ:[3]

Այս առաջարկը հավանության արժանացավ ֆոնդի կողմից:

---

[1] "Ararat", vol . IV, N 42, December 1916, pp. 244-245.
[2] ibid., N 42, December 1916, p. 240.
[3] ibid., N 45, March 1917, pp. 411-415.

Արդեն 1917թ. մարտի սկզբին փոքրիկ գործարանը սկսեց աշխատել: Սկզբնական շրջանում աշխատանք կար միայն մանողների համար, բոլոր ցանկացողներին տրվում էր անվճար ճախարակ և շաբաթական երեք ֆունտ բամբակ, յուրաքանչյուր ֆունտի համար 1ռ. վարձավճարով: Միջինը յուրաքանչյուր աշխատող կարող էր ամսեկան 12ռ. աշխատավարձ ստանալ: Ընդ որում սկզբնական շրջանում աշխատողների թիվը հասնում էր 100-ի:[1]

Փախստականների համար աշխատատեղեր ստեղծելու նպատակով փոքր ձեռնարկությունների հիմնումը նորություն չէր: Մենք արդեն նշել ենք, որ Դիլիջանում նմանատիպ արհեստանոց հիմնելու համար որոշակի գումարներ տրամադրեց Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը: Նման արհեստանոցներ ստեղծվեցին նաև Երևանում, Նոր Բայազետում և այլ վայրերում:[2]

Լորդ քաղաքագլխի ֆոնդը ևս, որպես միջոցներ հավաքելու հաջողված տարբերակ, ձեռնամուխ եղավ «Հայկական դրոշի օրերի» կազմակերպմանը: Նման ամենախոշոր միջոցառումը տեղի ունեցավ 1917թ. հունիսի 13-ին Լոնդոնում: Այդ օրը դրոշների վաճառք էր կազմակերպվել քաղաքի բոլոր թաղամասերում: Վաղօրոք աչքի ընկնող տեղերում փակցվել էին տարբեր կոչեր՝ հորդորելով քաղաքի բնակիչներին ակտիվ մասնակցություն ցուցաբերել միջոցառմանը: Նշենք, որ միջոցառումից ստացված հասույթն ավելի մեծ կլիներ, եթե նույն օրն առավոտյան գերմանական ինքնաթիռները չռմբակոծեին Լոնդոնի կենտրոնական թաղամասերը:[3] Ֆոնդի կազմակերպած միջոցառումներից կարելի նշել նաև «Հայկական կիրակիների» կազմակերպումը, որոնց ընթացքում եկեղեցիներում ընթացող ժամերգությունների ժամանակ հոգևորականները ներկայացնում էին պատերազմի ընթացքում հայ ժողովրդի կրած կո-

---

[1] «Վան-Տոսպ», 1917թ., մարտի 12, թիվ 16, էջ 10:

[2] Акопян С., նշվ. աշխ., стр. 91.

[3] "Армянский Вестник", 22-ое октября, 1917г., номер 41-42, стр. 18-19., միջոցառման նախապատրաստման մասին տես՝ «Արձագանք Փարիզի», Փարիզ, 1917թ. հունիսի 10, թիվ 5, էջ 5:

ռուստները և կոչ անում ունկնդիրներին հնարավորության սահմաններում օժանդակել նրան:

Ընդհանուր առմամբ, ֆոնդը 1917թ. հուլիսի դրությամբ ստացել էր ավելի քան 78000 ֆունտ ստեռլինգ, չհաշված Լոնդոնում անցկացված «Հայկական դրոշի օրվա» հավաքված գումարը:[1] Ֆոնդը շարունակում էր ավելացնել Իգդիրի մանածագործական ձեռնարկության արտադրանքը և համապատասխանաբար նաև այնտեղ աշխատողների թիվը: Արդեն 1917թ. սեպտեմբերին այնտեղ աշխատում էին շուրջ 500 կանայք, որոնք, համաձայն Ա. Բաքհաուզի՝ ֆոնդին ուղարկված զեկույցի, ստանում էին 3 ռուբլի երեք ֆունտ բամբակ մանելու համար: Միաժամանակ Բաքհաուզը գրում էր, որ դժվարություններ կան արտադրանքն իրացնելու գործում: Նա նշում էր, որ իրենք որոշել են սկսել հյուսման աշխատանքներ և պրն. Քեչփուլը գնացել է Մոսկվա՝ ջուլհակահաստոցների մասեր գնելու համար: Միաժամանակ ֆոնդը Երևանի հիվանդանոցում աշխատելու համար այնտեղ էր ուղարկել դոկտոր Քենեդիին՝ իր վրա վերցնելով բոլոր ծախսերը:[2]

1917թ. դեկտեմբերի դրությամբ ֆոնդը հավաքել էր շուրջ 85500 ֆունտ ստեռլինգ գումար ներառյալ «Հայկական դրոշի օրերի» ընթացքում ստացված գումարները: Ֆոնդը որոշ գումարներ էր տրամադրում նաև Միջագետքում գտնվող հայ փախստականներին օգնելու համար: Այսպես, 1917թ. մայիսին այն 1000 ֆունտ ստեռլինգ էր ուղարկել Բաղդադ՝ գնդապետ Հոուքերին՝ հայ փախստականներին օգնություն տրամադրելու համար:[3] Նշենք, որ հատուկ որոշմամբ ֆոնդն իր տրամադրության տակ եղած գումարների 10%-ը ծախսում էր ասորիների և այլ ազգերի պատկանող փախստականներին օգնելու նպատակով:

Ֆոնդի Կովկասում ծավալած գործունեությանը լուրջ հարված հասցրեց 1918թ. թուրքական արշավանքը և Հայաստանի զգալի տարածքների օկուպացումը: Ֆոնդը փաստորեն դադարեցրեց իր ծրագրերի իրականացումը տարածաշրջանում, իսկ

---

[1] "Ararat", vol. V, N 49, July 1917, p. 6.
[2] ibid., N 51, September 1917, pp.125-126.
[3] ibid., vol. IV, N 48, June 1917, p. 526.

նրա ներկայացուցիչ Բաքհաուզը վերադարձավ Լոնդոն: 1918թ. հուլիսի 23-ին նա Լորդ քաղաքագլխի ֆոնդի գործադիր կոմիտեի և BAC-ի համատեղ հանդիպման ժամանակ հանդես եկավ ելույթով՝ ներկայացնելով Կովկասում առկա իրավիճակը:[1]

Այնուամենայնիվ, ֆոնդը չդադարեցրեց իր գործունեությունը և արդեն 1919թ. վերսկսեց իր ծրագրերը Հայաստանի Հանրապետությունում, դրանք շարունակելով նաև այստեղ խորհրդային կարգերի հաստատումից հետո: Այդ շրջանում ֆոնդի և բրիտանական նպաստամատույց մյուս կազմակերպությունների գործունեությունը կներկայացնենք աշխատության հաջորդ գլխում:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մեծ Բրիտանիայում գործունեություն էին ծավալել նաև հայ ժողովրդին օգնելու նպատակով ստեղծված այլ կազմակերպություններ ևս:

Մենք արդեն նշել ենք 1915թ. հոկտեմբերի 1-ին Մանչեստրում ստեղծված կոմիտեի մասին, որի նպատակն էր միջոցներ հավաքել և տրամադրել Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդին: 1917թ. Մանչեստրում հիմնվեց ևս մեկ կազմակերպություն՝ Հայ որբերի ֆոնդ: Նրա ստեղծման մասին 1917թ. մարտի 11-ին հաղորդում հրապարակեց "Manchester Guardian" պարբերականը:[2]

Ֆոնդի նախագահն էր Մանչեստրի Լորդ քաղաքագլուխը, պատվավոր նախագահն էր Լորդ Բրայսը, քարտուղարն էր Դանիել Մաք Քեյբը, գանձապահը՝ Ջոն Մուդին, պատվավոր քարտուղարն էր Մանչեստրի հայ համայնքի ներկայացուցիչ Ա. Մանաշյանը:[3]

Ա. Մանաշյանը մինչև ֆոնդի կազմումը արդեն որոշ գումարներ ուղարկել էր Հայկական կենտրոնական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին: Այսպես, 1917թ. փետրվարի 21-ին ստացված հեռագրով Մանաշյանը վերջինիս հայտնում

---

[1] Rhodes House Libraray, BAC minutes, quoted July 23, 1918.
[2] Акопян С., նշվ. աշխ., стр. 91.
[3] «Համբավաբեր», 1917թ. հունիսի 11, թիվ 22, էջ 480:

էր, որ փոխանցել է 7000ռ.:[1] Ֆոնդը ևս իր հավաքած միջոցները ուղարկում էր նույն հասցեով: Այսպես, 1917թ. մայիսի 18-ին ստացված հեռագրում նշվում էր, որ ֆոնդը Ս. Հարությունյանին է փոխանցել 5000ռ.: Հուլիսի 3-ին ստացված հեռագրում նշվում էր ևս 6000ռ. ուղարկելու մասին: Բացի այդ, Մանաշյանը գրում էր, որ կոմիտեն որոշել է իր բոլոր միջոցները դնել Ս. Հարությունյանի կոմիտեի տրամադրության տակ:[2]

Ներկայացնելով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ստեղծված բրիտանական նպաստամատույց կազմակերպությունների գործունեությունը, հիշատակենք նաև Գլազգոյում ստեղծված Հայ փախստականների Լորդ Փրովոսթի ֆոնդը: Վերջինիս նախագահն էր Լորդ Փրովոսթը, պատվավոր քարտուղարն էր սըր Ջոն Լինդսեյը, պատվավոր գանձապետը՝ սըր Ջոն Սամուելը: Այն իր հավաքած միջոցները տրամադրում էր Լոնդոնի Լորդ քաղաքագլխի ֆոնդին: Ստեղծված լինելով 1915թ. վերջին՝ այն մինչև 1917թ. նոյեմբերը Գլազգոյի քաղաքացիներից ստացել էր գրեթե 4000 ֆունտ ստեռլինգ:[3]

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մեծ Բրիտանիայում մի շարք աշխատություններ հրապարակեցին՝ նվիրված հայ ժողովրդի և Հայկական հարցի պատմությանը: Դրանցից առանձնացնենք Վ. Վիլիամսի՝ "The Sunday Strand" պարբերականի նախկին խմբագրի, «Հայաստան: Անցյալը և ներկան» աշխատությունը: Այստեղ հեղինակը ներկայացնում էր Փոքր Ասիայի. և մասնավորապես. Հայաստանի աշխարհագրական դիրքը, ազգային կազմը, տնտեսական դրությունը: Աշխատության մեջ բերվում էր նաև հայ ժողովրդի և հայ եկեղեցու համառոտ պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև 1915-1916թթ. հայկական ջարդերը, նշվում էր, որ 1915-1916թթ. սպանվել, դեպի անապատներն են տեղահանվել 800000-ից մեկ միլիոն հայեր, բերվում էր Լորդերի պալատում 1915թ. հոտեմբերի 6-ին Բրայսի ելույթից մի փոքր հատված:[4]

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 159, թ. 13:
[2] Նույն տեղում, թ. 26 և թ. 14:
[3] "Ararat", vol. V, N 53, November 1917, p. 196.
[4] Williams W. Llew., Armenia, Past and Present, London, 1916, pp. 3-143.

Գլուխ երրորդ
Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում 1918թ. վերջ-1923թ.

Մաս առաջին. Լորդ Ջեյմս Բրայսի հայանպաստ գործունեությունն Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո

Աշխատության նախորդ գլուխներում արդեն ներկայացրել ենք 19-րդ դարի վերջին քառորդից մինչև Առաջին համաշխարհային պատերազմի վերջն ընկած ժամանակաշրջանում Ջեյմս Բրայսի՝ Հայկական հարցում ծավալած գործունեությունը: Չնայած պատկառելի տարիքին՝ 1918թ. Բրայսն արդեն 80 տարեկան էր, նա շարունակում էր ակտիվորեն մասնակցել հայ ժողովրդին հուզող խնդիրների քննարկումներում:

Դրանցից առաջինը, թերևս, 1918թ. հոկտեմբերի 30-ին Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում Թուրքիայի հետ կնքված զինադադարի պայմաններն էին: Հիշեցնենք, որ այնտեղ ոչինչ ասված չէր Արևմտյան Հայաստանից թուրքական զորքերի դուրս բերման մասին: Այդ տարածքներին վերաբերող 24-րդ հոդվածում ասվում էր, որ դաշնակից զորքերը կարող էին օկուպացնել նաև Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթները, եթե նրանցից որևէ մեկում անկարգություններ ծագեին:[1] Փաստորեն այդ տարածքները, թեկուզ առժամաբար, թողնվում էին թուրքական գերիշխանության ներքո, ինչը չէր կարող չառաջացնել հայանպաստ շարժման մեջ ընդգրկված տարբեր գործիչների անհանգստությունը:

Բրայսն այս հարցի կապակցությամբ իր մտահոգությունն արտահայտեց 1918թ. նոյեմբերի 13-ին Լորդերի պալատում ունեցած իր ընդարձակ ելույթում: Այստեղ նա դաշնակից զորքերի կողմից այդ տարածքների օկուպացման երեք հիմնական պատճառ ներկայացրեց:

---

[1] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, 1999, էջ 49:

Առաջին. զորացրվող թուրքական բանակի զինվորները, որոնք վերջին չորս տարիների ընթացքում քրիստոնյաների զանգվածային կոտորածներ են կազմակերպել, ամենայն հավանականությամբ, կշարունակեն իրենց այդ գործողությունները:

Երկրորդ. Ջարդերից փրկված մեծ թվով փախստականներ ցանկանում են վերադառնալ իրենց բնակավայրերը, սակայն զրկված են այդ հնարավորությունից տիրող խառնաշփոթի պատճառով:

Երրորդ. կոտորածների ընթացքում հազարավոր երիտասարդ կանայք բռնի կերպով թուրքական հարեմներ են տարվել: Մեծ քանակությամբ մանկահասակ տղաներ հանձնվել են դերվիշներին և դաստիարակություն են ստանում մահմեդական մենաստաններում: Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել այդ կանանց և տղաների գոնե մի մասին փրկելու համար:

Բրայսը նշեց, որ հասկանում է կառավարության դժվարություններն իր առաջ քաշած հարցերին պատասխանելու խնդրում, սակայն հույս հայտնեց, որ իր ներկայացրած փաստերը համապատասխան ուշադրության կարժանանան:

Պատասխան ելույթով հանդես եկավ կոմս Քրոուֆորդը: Նա նշեց, որ այդ հարցի կապակցությամբ հստակ հայտարարություն անել չի կարող, բայց հավաստիացրեց, որ նորին գերազանցության կառավարությունը որոշել է ջանք չխնայել՝ ապահովելու համար հայերի արդար պահանջների բավարարումը:[1]

Ինչպես տեսնում ենք, Մուդրոսի զինադադարի կնքումից արդեն երկու շաբաթ անց Բրայսն իր մտահոգությունն էր արտահայտում Արևմտյան Հայաստանին վերաբերող 24-րդ հոդվածի կապակցությամբ և կոչ էր անում բրիտանական կառավարությանն անհապաղ զորքեր ուղարկել՝ Արևմտյան Հայաստանի տարածքները զբաղեցնելու համար:

Բրայսի մտահոգությունն իրոք հիմքեր ուներ: Ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա ընթացքը, Արևմտյան Հայաստան

---

[1] Parliamentary Debates. House of Lords, November 13, 1918. House of Commons, October 23, 24, 30, 31, November 6, 7, 12, 14, 18, 1918, Armenia, London, 1918, pp. 1-7.

դաշնակիցների զորքեր չուղարկելն իր բացասական դերն ունեցավ այդ տարածքներն, ի վերջո, թուրքական պետության կազմում թողնելու խնդրում:

Ինչպիսի՞ն էր Բրայսի դիրքորոշումը ապագա խաղաղության պայմանների հարցում: Մուդրոսի զինադադարի կնքման օրը՝ 1918թ. հոկտեմբերի 30-ին, Միացյալ Նահանգների նախկին նախագահ պրն. Թեոդոր Ռուզվելտին ուղարկած նամակում նա գրում էր. «Ինչ վերաբերում է Ասիային, ապա անհրաժեշտ է բոլոր քայլերը ձեռնարկել այնտեղ թուրքական գերիշխանությունը վերացնելու համար: Ես հուսով եմ, որ Ամերիկայի ձայնը շատ պարզ կհնչի այս հարցում: Ոչ մի տեղից հայերն ու ասորիները չեն ստացել այնպիսի անշահախնդիր օգնություն, ինչպես ԱՄՆ-ից, և ձեր ժողովուրդը պետք է պարզ ասի, որ այդ մարդիկ ամբողջովին կազատվեն թուրքերից: Էնվերը և Թալեաթը՝ երկու գլխավոր չարագործները, պետք է կախաղան բարձրացվեն, եթե նրանց հնարավոր լինի բռնել»:[1]

"The Contemporary Review" պարբերականի 1918թ. դեկտեմբերյան համարում Բրայսը հրապարակեց «Հայաստանի ապագան» ծավալուն հոդվածը: Այստեղ նա մանրամասն ներկայացնում էր քննարկվող խնդրի վերաբերյալ իր տեսակետները:

Բրայսը նշում է, որ ապագա խաղաղության պայմանները պետք է հենվեն երկու սկզբունքների վրա, «Հարգանք ազգությունների ցանկությունների նկատմամբ» և «Յուրաքանչյուր ազգի կամ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչում»: Ուշագրավ է Բրայսի այն տեսակետը, որ թուրքական կառավարությունը Գերմանիայի դաշնակիցն էր, իսկ վերջինս մտադիր էր իշխել ողջ Մերձավոր Արևելքի վրա և տարածել իր ազդեցությունը մինչև Թուրքեստան, որտեղից էլ այն կարող էր սպառնալ բրիտանական դիրքերին Հնդկաստանում: Հետևաբար, ոչ միայն հումանիստական, այլև գործնական քաղաքականության տեսակետից ակնհայտ է, որ այս արևելյան շրջաններում թուրքական կառավարմանը պետք է վերջ տրվի:[2]

---

[1] Fisher H. A. L., ibid., vol. II, pp. 195-196.

[2] Viscount Bryce, O. M., The Future of Armenia, reprinted from "The Contemporary Review" December 1918, The National Press Agency Ltd., pp. 3-4.

Անդրադառնալով այս շրջանների ապագայի խնդրին՝ Բրայսը գրում է, որ առաջին հերթին պետք է վերականգնել կարգուկանոնը Հայաստանի և Կիլիկիայի ամայացած շրջաններում, անհրաժեշտ է զորքեր ուղարկել այդ շրջաններն օկուպացնելու համար: Բրայսն այստեղ բերում է այդ քայլի այն հիմնավորումները, որոնք ներկայացրել էր Լորդերի պալատում ունեցած նոյեմբերի 13-ի ելույթում:[1]

Ապագայի համար Բրայսն առաջարկում է հետևյալ լուծումը: Վեց վիլայեթներին և Տրապիզոնի մի մասին՝ ներառյալ նավահանգիստը, ինքնավարություն տրամադրել: Այդ շրջանները, Կիլիկիայով հանդերձ, կլինեն նոր Հայաստանը: Նա գրում է, որ պետք է խորհել և աշխատել քրիստոնյա հայկական պետության ստեղծման ուղղությամբ:

Բրայսը նշում է, որ այդ գործընթացն առնվազն 15-20 տարի կտևի, և այդ ընթացքում այդ շրջանները հովանավորող տերության աջակցության կարիք կունենան: Ըստ Բրայսի, այդ տերությունը պետք է լինի Միացյալ Նահանգները, որպես անաչառ և սեփական հավակնություններ չունեցող պետություն: Միաժամանակ, եթե որևէ պատճառով ամերիկյան կառավարությունը կմերժի այդ տարբերակը, ապա այդ խնդրի լուծումն իրենց վրա պետք է վերցնեն եվրոպական տերությունները: Բրայսն առաջարկում է նաև որոշակի փոխհատուցում պահանջել Գերմանիայից և Թուրքիայից: Նա ավելացնում է, որ այդ շրջաններում տեղի ունեցած սարսափների համար մեղավոր են ինչպես Ռուսաստանը, այնպես էլ Ֆրանսիան, Իտալիան և Մեծ Բրիտանիան: Մասնավորապես, վերջինիս պետական գործիչները մոտավորապես մեկ դար կառչել էին այն հիմար ավանդույթից, որ բրիտանական շահերը պահանջում են թուրքական տերության պահպանում:[2]

1918թ. դեկտեմբերի 20-ին ամերիկյան իրավաբանների ընկերության նախկին նախագահ Մ. Սթորիին ուղարկված նամակում Բրայսը գրում էր, որ Հայաստանի համար միակ ընդունելի լուծումը թուրքական գերիշխանության վերացումն է:

---

[1] Viscount Bryce, O. M., ibid., pp. 5-6.
[2] ibid., pp. 7-10.

Նա հույս էր հայտնում, որ Միացյալ Նահանգները կհամաձայնվեն օգնել երկրի վերականգնմանը: Նա գրում է, որ եթե Սթորին կարող է ազդեցություն բանեցնել ամերիկյան հասարակական կարծիքի վրա՝ հասնելու համար այդ տարբերակի ընդունմանը, ապա Հայաստանի բարեկամները նրանից շնորհակալ կլինեն:[1]

Բրայսը Հայկական հարցին անդրադառնում էր նաև տարբեր հասարակական միջոցառումների ժամանակ:

Այսպես, 1919թ. փետրվարի 12-ին նախագահելով Աբրահամ Լինկոլնի հիշատակին տրված ճաշկերույթում՝ նա անդրադարձավ նաև հայկական խնդրին՝ նշելով, որ թուրքերից ազատագրված հայ ժողովրդին անհրաժեշտ օգնություն կարող է տրամադրել Միացյալ Նահանգները, քանի որ այն լիովին անշահախնդիր է և չունի որևէ եսասիրական նկրտումներ:[2]

Բրայսը շարունակում էր հայկական խնդիրներին անդրադառնալ նաև Լորդերի պալատի նիստերի ժամանակ: Փետրվարի 21-ի նիստում նա հարց ուղղեց կառավարությանը, խնդրելով տեղեկություններ տրամադրել դաշնակից կառավարությունների կողմից անզեն քրիստոնյա բնակչությանը պաշտպանելու համար ձեռնարկված քայլերի մասին: Բրայսը կրկին պնդեց, որ անհրաժեշտ է զորքեր ուղարկել այդ շրջանները զբաղեցնելու համար և հույս հայտնեց, որ բրիտանական ազդեցությունը միշտ կգործադրվի ազատության և խաղաղության օգտին:[3]

Քննարկվող ժամանակաշրջանում Բրայսը շարունակում էր իր նամակագրական կապը Ա. Չոպանյանի հետ՝ նրան հաղորդելով իր ձեռնարկած քայլերի մասին և վերջինիցս տեղեկություններ ստանալով Հայաստանում տիրող իրավիճակի մասին:

1919թ. փետրվարի 10-ին վերջինիս ուղարկված նամակում նա գրում էր, որ բավարար տեղեկություններ չունի Հայաստանում տիրող իրավիճակի մասին, սակայն իր համար պարզ է, որ այդ տարածաշրջանում թուրքական իշխանությանը վերջ է

---

[1] Fisher H. A. L., ibid., vol. II, pp. 201-202.
[2] "Ararat", vol. VI, N 63, January-February 1919., pp. 274.
[3] ibid., pp. 282-283.

տրվելու:[1]

Բրայսը շարունակում էր նամակներ ուղարկել ազդեցիկ ամերիկյան գործիչներին՝ ներկայացնելով նրանց Հայկական հարցի լուծման իր տեսակետները: 1919թ. փետրվարի 20-ին Մ. Սթորիին գրած նամակում նա նշում էր, որ իր կարծիքով ճիշտ չի լինի Միացյալ Նահանգների համար միջամտել եվրոպական քաղաքականությանը, սակայն նա կարող է որոշակի ժամկետով պատասխանատվության ստանձնել և Արևմտյան Ասիայի քրիստոնյա ազգերին առաջնորդել խաղաղության արահետներով: Բրայսը գրում էր, որ Ամերիկան հսկայական առավելություն կունենա, եթե նման պատասխանատվություն ստանձնի Հայաստանի հանդեպ: Ինչ վերաբերում է Բրիտանիային, վերջինս չի ցանկանում որևէ լրացուցիչ պատասխանատվություն ստանձնել, իսկ Ֆրանսիային չի կարելի վստահել, որովհետև նա պաշտպանում է ֆինանսական արկածախնդիրների շահերը:

Բրայսը նաև գրում է, որ այդ խնդիրը խոշոր միջոցներ չի պահանջում, պետք է ուղարկել ունակ մարդկանց՝ կազմակերպելու և ղեկավարելու ոստիկանությանը և բացելու համար առևտրական ուղիներ: Նա նաև նշում է, որ հայերն իրենք են ցանկանում, որ Ամերիկան ստանձնի այդ խնդիրը:[2]

1919թ. մարտի 26-ին Ա. Չոպանյանին ուղղված նամակում Բրայսը տեղեկացնում է, որ ինքը բազմիցս դիմել է կառավարությանը՝ խնդրելով զորքեր ուղարկել Հայաստան՝ բնակչությանը պաշտպանելու համար, սակայն իրեն միշտ պատասխանել են, որ դժվար է բավարար զորքեր գտնել այդ նպատակի համար: Միաժամանակ նա գրում է, որ քանի դեռ չի որոշվել Ամերիկայի՝ Լիգա մտնելու հարցը, նրա կողմից Հայաստանի մանդատի ընդունման հարցը չի կարող լուծվել:[3]

Ինչպես տեսնում ենք, 1919թ. առաջին կեսին Բրայսի քայլերն ուղղված էին հիմնականում երկու խնդիրների լուծմանը: Նա փորձում էր հասնել Արևմտյան Հայաստան դաշնակից զորքերի ուղարկմանը և, միաժամանակ, օգտագործելով ամերիկ-

---

[1] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3935:
[2] Fisher H. A. L., ibid., vol. II, pp. 211-213.
[3] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3936:

յան մի շարք ազդեցիկ գործիչների հետ ունեցած իր կապերը՝ փորձում էր նպաստել Ամերիկայի կողմից հայկական ապագա պետության մանդատն ստանձնելուն: Միաժամանակ նա կողմ էր արտահայտվում հայկական վեց վիլայեթներն ու Կիլիկիան ընդգրկող հայկական պետության ստեղծման օգտին: Այս շրջանում Բրայսը աշխատում էր մեկ այլ ուղղությամբ ևս: Նա Հայաստանի մասին իր ունեցած տեղեկությունները հաղորդում էր բրիտանական կառավարությանը: Այդ մասին է վկայում 1919թ. մայիսի 8-ին Պողոս Նուբար փաշային կամ Ա. Սաֆրաստյանին ուղղված նրա նամակը, որում մասնավորապես ասված էր. «Հարգարժան պրն., ես հաղորդում եմ բրիտանական արտգործնախարարությանն այն տեղեկությունները, որը ես ժամանակ առ ժամանակ ստացել եմ տարբեր հայկական աղբյուրներից՝ կարծելով, որ դա օգտակար կլինի Հայաստանի համար»:[1]

Իրեն հուզող այս խնդիրներին Բրայսն անդրադառնում էր Ա. Չոպանյանին ուղղված 1919թ. մայիսի 24-ի նամակում: Նա գրում էր, որ իր ունեցած տեղեկություններով, վեհաժողովը (նկատի ունի 1919թ. հունվարին Փարիզում բացված խաղաղության վեհաժողովը) որոշել է ամբողջովին վերացնել թուրքական իշխանությունը Հայաստանում: Միաժամանակ, դեռևս հայտնի չեն Հայաստանի ապագա սահմանները: Չկա կոնկրետություն նաև մանդատն ստանձնող պետության խնդրում: Ֆրանսիան շատ ուժեղ ճնշում է գործադրում Կիլիկիայի համար, սակայն, ըստ Բրայսի, Կիլիկիան չպետք է անջատվի Հայաստանից: Ինչ վերաբերում է մանդատին, ապա պահպանվում է Ամերիկայի՝ Ազգերի Լիգա չմտնելու վտանգը, ուստի անհրաժեշտ է կենտրոնացնել ջանքերը նրան Լիգա մտցնելու համար: Ամերիկայի իրենց ընկերների կարծիքով ևս նախ պետք է աշխատել Ամերիկային Լիգա մտցնելու ուղղությամբ, որից հետո բոլորը միասին քայլեր կձեռնարկեն, որպեսզի Ամերիկան ընդունի Հայաստանի մանդատը:[2]

Այս շրջանում Բրայսը ջանում էր հայկական խնդրի կարգա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1045, թ. 1:
[2] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3940:

վորման վրա կենտրոնացնել բրիտանական հասարակական կարծիքը: Մասնավորապես, նաև նրա ջանքերով 1919թ. հունիսի 19-ին Վեսթմինսթերի կենտրոնական սրահում Հայկական հարցին նվիրված հավաքույթ կազմակերպվեց:

Հավաքույթի նախապատրաստման մասին 1919թ. մայիսի 28-ի իր հեռագրում Պողոս Նուբար փաշային էր գրում Լոնդոնի հայկական բյուրոյի քարտուղար Արամ Ռաֆֆին: Նա տեղեկացնում էր, որ Բրայսի առաջարկով ժողովի հիմնական նպատակն է լինելու ազդեցություն գործել Ամերիկայի վրա, որպեսզի վերջինս ընդունի Հայաստանի մանդատը: Ռաֆֆին ներկայացնում էր նաև ելույթ ունեցողների ցուցակը:[1]

Նշենք, որ Լոնդոնի հայկական բյուրոն ստեղծվել էր 1918թ. և դրա հիմնական խնդիրը բրիտանական հասարակությանը Հայաստանին վերաբերող տեղեկություններով ապահովելն էր: Այս բյուրոն համագործակցում էր բրիտանական հայանպաստ կազմակերպությունների, մասնավորապես BAC-ի հետ:[2]

Հավաքույթում նախագահում էր Լորդ Գլադստոնը: Ներկաների թվում էր գեներալ Անդրանիկը: Ելույթներ ունեցան Լորդ Բրայսը, Թ. Փ. Օ'Քոնորը, Անեուրին Վիլիամսը, Նոել Բաքսթոնը, Ջ. Փ. Գուչը և ուրիշներ: Բրայսն իր ելույթում նշեց, որ հայկական պետությունը պետք է ընդգրկի ամբողջ Հայաստանը: Այն պետք է ներառի Կիլիկիան և այն քաջ լեռնականների հովիտը, ովքեր դարեր շարունակ Զեյթունում պահպանել են իրենց անկախությունը:

Հայկական պետությունը պետք է ելք ունենա դեպի ծով և այն պետք է ընդգրկի Կովկասում հիմնված հայկական հանրապետությունը:

Այդ պետության ստեղծումից հետո այն և Երևանի Հանրապետությունը պետք է միավորվեն: Ըստ Բրայսի, անհրաժեշտ է որոշակի օգնություն ցուցաբերել երիտասարդ պետությանը, և այդ կապակցությամբ առաջարկվել է նման հնարավորություն

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 616, թ. 18-19:

[2] Բյուրոյի նպատակների և աշխատանքի առաջին ամիսների արդյունքների մասին ավելի մանրամասն տես՝ Պողոսյան Բ., Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում ըստ վավերագրերի (1918-1923թթ.), Երևան, 2002, էջ 22-25:

տալ Միացյալ Նահանգներին: Նա հույս հայտնեց, որ Նահանգները չեն մերժի այդ առաջարկը:[1]

Թ. Փ. Օ'Քոնորի ելույթից հետո ընթերցվեց և միաձայն ընդունվեց հետևյալ բանաձևը.

«Այս հավաքույթն իր գոհունակությունն է հայտնում այն հեռանկարի կապակցությամբ, որ դարերի ընթացքում Հայաստանն ամայացրած թուրքական իշխանությունն ընդմիշտ կվերացվի այնտեղից և վստահություն է հայտնում, որ Ազգերի Լիգայի բարեկամական օգնությամբ հիմնվելիք նոր հայկական պետությունը կներառի այն բոլոր հայերին, ովքեր ապրում են հին հայկական թագավորության սահմաններում՝ ներառյալ նրանք, ովքեր բնակվում են Կիլիկիայում և Անդրկովկասում, (որտեղ արդեն գոյություն ունի անկախ հայկական պետություն):

Հայաստանի ապագա կառավարությունը և նոր պետության սահմանները: Շրջանները, որոնք պետք է կազմեն հայկական պետությունը, հետևյալներն են.

1. Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սվազի, Էրզրումի և Տրապիզոնի յոթ վիլայեթները (համապատասխան 1914թ. փետրվարի բարենորոգումների փաստաթղթի), բացառությամբ Տիգրիսից հարավ և Օրդու-Սվազի միջև գծից արևմուտք գտնվող շրջանների:

2. Կիլիկիայի չորս սանջակները՝ Մարաշ, Քոզան (Սիս), Ջեբել-Բերեկեթ և Ադանա՝ Ալեքսանդրեթով հանդերձ:

3. Կովկասի հայկական հանրապետության ամբողջ տարածքը, ներառյալ Երևանի ամբողջ նահանգը, Թիֆլիսի նախկին նահանգի հարավային մասը, Ելիզավետպոլի նահանգի հարավ-արևմտյան մասը, Կարսի նահանգը՝ բացառությամբ Արդահանից հյուսիս ընկած շրջանի»:[2]

---

[1] Armenia and the Settlement, Report of Public Meeting to Express Sympathy With the Armenian Cause, Held at the Central Hall, Westminster, on Thursday, June 19th 1919, edited by A. Raffi, Issued by the Armenian Bureau, London, 1919, pp. 17-21.

[2] ibid., p. 26. Այս հավաքի մասին տես նաև՝ Hovannisian R., The republic of Armenia, vol. I, The First Year, 1918-1919, University of California Press, 1971, pp. 310-311.

Ահա այսպիսին էր բրիտանացի հայասերների և, մասնավորապես, Ջեյմս Բրայսի տեսակետը Հայկական հարցի լուծման հնարավոր տարբերակների շուրջ:

1919թ. երկրորդ կեսին Բրայսի ուշադրության կենտրոնում էր ևս մեկ խնդիր՝ Անդրկովկասից բրիտանական զորքերի դուրս բերումը: Նա խիստ դեմ էր այդ քայլին: 1919թ. սեպտեմբերի 27-ին Չոպանյանին ուղղված գաղտնի նամակում Բրայսը գրում էր, որ պնդել է Կովկասում բրիտանական զորքեր պահելու կարևորությունը: Այդ հարցով դիմել է ռազմական նախարարություն, գրել է վարչապետին:[1]

Այնուամենայնիվ, այս շրջանում Բրայսի համար ամենակարևոր խնդիրը շարունակում էր մնալ ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի ստանձնումը: Նա հասկանում էր, որ որևէ առաջխաղացում Հայկական հարցի լուծման ուղղությամբ գրեթե անհնար է առանց Միացյալ Նահանգների կողմից մանդատի ստանձնման: Ուստիև շարունակում էր ակտիվ նամակագրությունն ամերիկյան գործիչների հետ այդ հարցի առնչությամբ: 1919թ. նոյեմբերի 29-ին Հարվարդի համալսարանի նախագահ Լոուելլին ուղղված նամակում նա գրում էր, որ ճգնաժամը Հայկական հարցում ակնհայտ է: Դաշնակից տերությունները պատրաստվում են անմիջապես սկսել թուրքական պայմանագրի կնքումը: Ֆրանսիան ցանկանում է Թուրքիային վերադարձնել նրա բոլոր տիրույթները, բացի Սիրիայից և Կիլիկիայից, որոնք նա ինքն է ցանկանում:

Ըստ Բրայսի, ֆրանսիացիները ցանկանում են զբաղեցնել գերմանացիների տեղը, ստանալ երկաթուղիների և հանքերի կոնցեսիաներ: Բրիտանական կառավարությունը նման բան չի ցանկանում, սակայն չունի Հայաստանի ապագայի համար որևէ լուծում: Գնալով նվազում է նաև Միացյալ Նահանգների կողմից Հայաստանի մանդատի ընդունման հավանականությունը:

Բրայսը հարցնում է Լոուելլին, թե հնարավոր չէ՞ արդյոք ստիպել ամերիկյան վարչակազմին՝ մասնակցել այդ հարցի լուծմանը: Նույն նամակում Բրայսը բարձրացնում էր նաև հետևյալ խնդիրը:

---

[1] ԳԱԹ, ԱՉՖ, բաժին III, թիվ 3941:

Եթե ԱՄՆ-ը մերժում է մանդատը, չի՞ կարելի արդյոք նրան համոզել դրամաշնորհ հատկացնել՝ օգնելու համար որևէ պետության (օր. Նորվեգիային կամ Հոլանդիային) մանդատն ստանձնելու գործում: Նա գրում է, որ, անշուշտ, այդ դեպքում իրենց աջակցությունը պետք է բերեն նաև Անգլիան և Ֆրանսիան: Նամակի վերջում Բրայսը շեշտում է, որ հիմնական խնդիրը հետևյալն է՝ ԱՄՆ-ը պետք է աջակցի բրիտանական կառավարությանը՝ ընդդեմ Թուրքիայում նախկին վիճակը վերականգնելու ֆրանսիական ծրագրի:[1]

1919թ. դեկտեմբերին Բրայսը "The Contemporary Review" պարբերականում հրապարակեց «Մերձավոր Արևելքի կարգավորումը» խորագրով ծավալուն հոդվածը, որտեղ անդրադարձավ նաև Հայաստանի հնարավոր ապագայի խնդրին: Բրայսը գրում է, որ Ռուսահայաստանի ճակատագիրը չի կարող բաժանվել Թուրքահայաստանի ճակատագրից: Ըստ Բրայսի, Անդրկովկասն ունի ռազմավարական և առևտրական կարևորություն Պարսկաստանի, Թուրքեստանի և նույնիսկ Հնդկաստանի համար, և այդ հանգամանքը չի կարելի անտեսել: Զգուշացնց ուշագրավ է Բրայսի անդրադարձը պանթուրքիզմի գաղափարախոսությանը: Նա գրում է, որ երիտթուրքերը, գերմանական տեսաբանների ազդեցությամբ, ընդունեցին և պատերազմի հենց սկզբից փորձեցին քարոզել այն: Այդ հայեցակարգի համաձայն թուրքական կամ թաթարական ժողովուրդները՝ օսմանները, Կովկասի, հյուսիս-արևմտյան Պարսկաստանի և արևելյան Ռուսաստանի թաթարները, Խիվայի և Բուխարայի թուրքմենները պետք է միավորվեին որպես մի մեծ ազգային ամբողջություն: Այն պետք է տարածվեր Բոսֆորից մինչև Աֆղանստան, և, Գերմանիայի ղեկավարման ներքո, պետք է բացեր նոր երկաթուղային ճանապարհ դեպի կենտրոնական Ասիա՝ սպառնալով Չինաստանին արևելքում և Հնդկաստանին հարավում:

Ըստ Բրայսի, չնայած ներկայումս այդ գաղափարի իրականացումը հավանական չէ, սակայն նրա հնարավոր վերսկսումն ու տարածումը վտանգավոր է: Մեծ հովիտը, որն

[1] Fisher H. A. L., ibid., vol. II, pp. 233-234.

ընկած է հյուսիսում Կովկասի հսկա լեռնաշղթայի և հստավում Հայաստանի լեռների միջև, բաց ճանապարհ է Արևելյան Եվրոպայից և Փոքր Ասիայից դեպի Կենտրոնական Ասիա, ճանապարհ, որով կարող են անցնել բանակներ: Ինչպես գրում է Բրայսը, Անգլիան չի կարող թույլ տալ, որ այդ ճանապարհը հայտնվի թշնամական ձեռքերում և դառնա հենակետ, որտեղից հարձակման կարող է ենթարկվել Հնդկաստանը: Նշելով, որ այժմ այդ տարածքը բաժանված է չորս հանրապետությունների միջև՝ Վրաստան, Ադրբեջան, Հայաստան և այսպես կոչված Կովկասյան Հանրապետություն, Բրայսը գրում է, որ նրանք չափազանց թույլ են միայնակ գոյատևելու համար և կարիք ունեն որոշ պաշտպանիչ ձեռքի՝ խորհուրդներ տալու, երկուստեք վեճերը կանխելու համար:

Այս չորս պետություններից դեպի հարավ ընկած են Հայաստանը (նկատի ունի Արևմտյան Հայաստանը) և Կիլիկիան: Ըստ Բրայսի, քանի որ Կիլիկիայի բնակչության մեծամասնությունը հայեր են, Կիլիկիան և Հայաստանը պետք է ընթանան միասին և կազմավորեն մեկ պետություն, որի հետ պետք է միավորվի Երևանի փոքր հայկական հանրապետությունը: Բրայսն առաջարկում է նաև ինքնավարության որոշ ձև տալ քրդական երկրին, որն ընկած է Հյուսիսային Միջագետքում՝ Մոսուլի շրջանի և Պարսկաստանի ուղղությամբ:

Հոդվածում Բրայսն անդրադառնում է նաև Հայաստանի մանդատի խնդրին: Նշելով, որ Փարիզի վեհաժողովը պատրաստվում էր հրավիրել ԱՄՆ-ին՝ ընդունելու Հայաստանի մանդատը, Բրայսը հույս է հայտնում, որ չնայած այն հանգամանքին, որ այժմ ԱՄՆ-ի մուտքը Լիգա ավելի կասկածելի է թվում, քան գարնանը, այնուամենայնիվ, այս կամ այն ձևով ԱՄՆ-ը կմատուցի իր օգնությունը հայ ազգին:

Բրայսը ևս մեկ անգամ շեշտում է, որ ինչ համաձայնություն էլ որ կայացվի, կարևոր է մեկ բան: Թուրքական իշխանությունը պետք է լիովին վերացվի այն երկրներից, որոնք վերջինս ավերել է: «Ոչ մի թուրքական վերահսկողություն Տավրոսյան լեռներից արևելք», սա պետք է լինի այն սկզբունքը, որից պետք է սկսվի այս երկրների ապագա վարչակարգի ցանկացած նա-

խագիծ: Նորից հաստատել թուրքին որպես տիրապետող այլակրոն և այլազգի բնակչության նկատմամբ, նշանակում է կոպտորեն ոտնահարել արդարության և հումանիզմի այն սկզբունքները, հանուն որոնց այս պատերազմում միլիոնավոր ազնիվ կյանքեր են տրվել:[1]

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո էլ հայ տարբեր հասարակական գործիչներ շարունակում էին դիմել Բրայսին՝ օժանդակություն խնդրելով մի շարք հարցերում: Այսպես, Ղարաբաղի և Զանգեզուրի հայրենասիրական միության պատվիրակ Տիգրան Նազարյանը 1920թ. հունվարի 1-ին Բրայսին ուղղված նամակում խնդրում էր Ղարաբաղը և Զանգեզուրը դնել Անգլիայի հովանավորության ներքո, իսկ Ադրբեջանի Հանրապետության զինվորներին դուրս քշել այդ տարածքներից: Նազարյանը գրում էր, որ հայերի համար անընդունելի է, որ բրիտանական հզոր դրոշն իր պաշտպանության տակ է վերցրել Ադրբեջանի արնախում թաթարներին, որոնք գործիք են հանդիսանում Էնվերների և Թալեաթների ձեռքում ընդդեմ Հայաստանի: Նամակի վերջում նա գրում է, որ եթե մերժվի Զանգեզուրի և Ղարաբաղի միավորումը և այդ շրջաններում Ադրբեջանի իշխանության վերացումը, դա արյունահեղության կիսանգեցնի: Նա Բրայսի օգնությունն էր խնդրում ադրբեջանական զորքերի այդ շրջաններից արագ ետ քաշման, և դրանց կառավարումը բրիտանական հրամանատարությանը հանձնելու հարցում:[2]

Բրայսը Նազարյանին պատասխանեց 1920թ. փետրվարի 2-ին: Նա գրում էր, որ արել է հնարավոր ամեն ինչ, բրիտանական կառավարությանը ներակայացնելու համար այն ծանր իրավիճակը, որում գտնվում է Երևանի Հանրապետությունը, և ասել է, որ վերջինս հնարավոր ամեն ինչ անի նրա պաշտպանության համար: Նույն նամակում նա գրում էր, որ իր ունեցած տեղեկություններն Ադրբեջանում տեղի ունեցող դեպքերի մա-

---

[1] Viscount Bryce, O. M., The Settlement of the Near East, reprinted by permission from "The Contemporary Review", The British Armenia Committee, London, 1920, pp. 7-16.

[2] ԳԱԹ, Տիգրան Նազարյանի ֆոնդ, թիվ 583:

սին աղքատիկ են և ոչ այնքան վստահելի:[1]

Մինչ Բրայսն իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացրել էր ԱՄՆ-ի կողմից ապագա հայկական պետության մանդատի ստանձնման վրա, Կիլիկիայում սկսվեցին քեմալականների հարձակումները: 1920թ. հունվարի 21-ին Մարաշում բռնկվեց վաղուց նախապատրաստված հակաֆրանսիական ապստամբությունը:[2]

Բրայսը Լորդերի պալատում իր ձայնը բարձրացրեց ընդդեմ Կիլիկիայում կատարվող իրադարձությունների:

1920թ. մարտի 11-ի նիստում նա հանդես եկավ դաշնակից տերությունների քաղաքականության քննադատությամբ՝ բրիտանական կառավարությանը մեղադրելով այն բանում, որ անգլիական զորքերը, գրավելով Կիլիկիան, չէին զինաթափել թուրքական զորքերին: Պատասխանելով Լորդ Բրայսին՝ արտգործնախարար Քերզոնը փորձեց հավաստիացնել, որ Ֆրանսիան մտադրություն չունի ետ կանգնել հայերին պաշտպանելու իր պարտավորությունից:[3]

Ահա այսպիսին էին Բրայսի ձեռնարկած քայլերը Հայկական հարցի լուծման ուղղությամբ, երբ արագորեն մեկը մյուսին հաջորդող իրադարձությունները գլխիվայր փոխեցին տարածաշրջանում առկա իրավիճակը (նկատի ունենք ամերիկյան սենատի կողմից Հայաստանի մանդատի ստանձնման մերժումը, Սևրի պայմանագրի կնքումը, 1920թ. աշնանը քեմալականների հարձակումը Հայաստանի վրա, Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումը, 1921թ. փետրվար-մարտ ամիսների Լոնդոնի կոնֆերանսը, 1920թ. դեկտեմբերին Ալեքսանդրապոլում կնքված հայ-թուրքական և 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված ռուս-թուրքական պայմանագրերը):

Ինչպիսին էր Բրայսի դիրքորոշումը այդ իրադարձությունների հանդեպ: Նա իր տեսակետը ներկայացրեց Հայկական հարցի վերաբերյալ հրատարակած իր վերջին հոդվածում, որը

---

[1] ԳԱԹ, Տիգրան Նազարյանի ֆոնդ, թիվ 597:

[2] Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ., Երևան, 1970, էջ 148:

[3] նշվ. աշխ., էջ 164-165:

լույս տեսավ նրա մահվանից ութ ամիս առաջ՝ 1921թ. մայիսին, "The Contemporary Review" պարբերականում: Այստեղ Բրայսը համառոտ ներկայացնում էր տարածաշրջանում դեպքերի ընթացքը սկսած Օսմանյան կայսրության Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտնելուց մինչև Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացումը:

Անդրադառնալով Հայաստանի դեմ քեմալականների արշավանքին՝ Բրայսը նշում է, որ ակնհայտորեն Բրիտանիայի երկու թշնամիները՝ բոլշևիկները և քեմալականները, գործում են միասին:

Բրայսը ներկայացնում է հետևյալ առաջարկությունները.

Ապահովել, եթե հնարավոր է, թուրքական և բոլշևիկյան զորքերի ետ քաշվելը հայկական և վրացական հանրապետություններից, դա դարձնելով որպես պայման ցանկացած համաձայնության, որը կկնքվի մի կողմից Բրիտանիայի ու Ֆրանսիայի և մյուս կողմից, այդ երկու նվաճող տերություններից որևէ մեկի հետ:

Ստիպել թուրքերին հեռանալ այժմ թուրքական տիրապետության տակ գտնվող ցանկացած տարածքից, որը կարող է փոխանցվել Հայաստանին: Հասնել այդ տարածքում անկախ հայկական պետության ստեղծմանը՝ անկախ Երևանի Հանրապետության հետագա ճակատագրից:

Թուրքիայի հետ կնքվելիք ցանկացած համաձայնագրում ընդգրկել Արևելյան Կիլիկիայի քրիստոնյա բնակչությանը պաշտպանող տեղական ինքնավար ինստիտուտների ստեղծման մասին կետ:

Իրականացնել Վերսալի պայմանագրի կետերը՝ տրամադրելով ֆոնդեր, որոնք հնարավորություն կտան Ազգերի Լիգայի անդամ հանդիսացող մի որևէ տերության ընդունել Հայաստանի մանդատը:

Այդ քայլերն զգալի միջոցներ են պահանջում, սակայն, շատ ավելի թանկ կարժենա թույլատրել Բրիտանիայի թշնամիներին՝ թուրքերին և բոլշևիկներին, սպառնալ Աֆղանստանին և Հնդկաստանին: Բացի այդ, նման քայլը միակ միջոցն է խուսափելու համար այն անպատվությունից, որը կընկնի Բրիտանի-

այի վրա, եթե վերջինս լքի այն անմեղ ժողովուրդներին, որոնց նա ազատություն և պաշտպանություն է խոստացել:[1]

Ինչպես նշեցինք, սա Բրայսի վերջին հոդվածն էր Հայկական հարցի վերաբերյալ, բայց ոչ նրա վերջին քայլն այդ ուղղությամբ: 1921թ. հունիսի 1-ին պրն. Բարտոնին, պրն. Մոնտգոմերիին (Հայաստան-Ամերիկա ընկերության նախագահ) և պրն. Ջերարդին (Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի նախագահ) ուղղված նամակներում նա իր և Անգլիայում Հայաստանի այլ բարեկամների անունից խնդրում էր հնարավոր ամեն տեսակի աջակցություն ցույց տալ ազգային պատվիրակության փոխնախագահ Գ. Նորատունկյանին, որը պատրաստվում էր մեկնել ԱՄՆ:[2]

Բրայսը Հայկական հարցին անդրադարձավ նաև 1921թ. ԱՄՆ կատարած իր վերջին այցելության ընթացքում՝ հանդիպելով մի շարք հայ գործիչների հետ: Նրանցից Վարդան Մալքոլմը 1921թ. օգոստոսի 12-ին Գ. Նորատունկյանին ուղղված նամակում գրում էր, որ հանդիպել է Լորդ Բրայսի հետ, որը դասախոսություններ է կարդում Վիլիամս քոլեջում: Բրայսը նշել է, որ թե՛ Ֆրանսիան, թե՛ Իտալիան լքել են հայերին, և նրանցից ոչ մեկը ոչինչ չի անի Սևրի պայմանագիրը կյանքի կոչելու համար: Մեծ Բրիտանիան հակված է որևէ բան անել հայերի համար, սակայն նա միայնակ ոչինչ չի նախաձեռնի:

Մալքոլմը հարցրել է Բրայսին, հնարավո՞ր է արդյոք համաձայնության հասնել քեմալականների հետ, որպեսզի վերջիններս դատարկեն Սևրի պայմանագրով հայերին հատկացված շրջանները: Ըստ Բրայսի, քանի դեռ թուրքերը չեն պարտվել հույներից, այդ հեռանկարը խիստ կասկածելի է: Նա խորհուրդ է տվել ամերիկահայերին՝ հասարակական կարծիք ստեղծել կոնգրեսի մոտ՝ Հայաստանին փոխառություն տալու համար: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, նախկին կառավարությունն իր տեղը զիջել է հայերից կազմված խորհրդային կառավարությանը, և որևէ հիմք չկա պնդելու, որ

---

[1] ՀԱԱ, ֆ. 412, g. 1, գ. 1968, թ 1-7:

[2] նույն տեղում, ֆ. 430, g. 1, գ. 365, թ. 1, 2, 3:

հին կառավարությունը դեռևս գոյություն ունի:[1]

ԱՄՆ-ում Բրայսի գտնվելու ժամանակ Հայ ազգային միության քաղաքական հանձնախմբի նախաձեռնությամբ նրա պատվին ճաշկերույթ տրվեց: Այդ մասին Գ. Նորատունկյանին ուղղված 1921թ. հոկտեմբերի 5-ի նամակում գրում է Հայ ազգային միության Նյու-Յորքի հանձնախմբի անդամ Վ. Քյուրքչյանը: Ըստ նրա, հանդիսությանը ներկա են եղել նաև մի շարք ամերիկացիներ, այդ թվում Օսմանյան Կայսրությունում ամերիկյան նախկին դեսպան Մորգենթաուն: Քյուրքչյանի հետ ունեցած առանձին տեսակցության ժամանակ Բրայսը կարծիք է հայտնել, որ Ազգային պատվիրակությունը, ուղղակիորեն կամ Ազգերի Լիգայի միջնորդությամբ, պետք է Հայաստանի մանդատն ստանձնող պետություն գտնի եվրոպական պետությունների շարքում: Դրանից հետո հնարավոր կլինի դիմել ԱՄՆ-ին՝ 25-30 միլիոն ֆունտ փոխառություն տրամադրելու խնդրանքով: Նա նշել է, որ նման դիմումի հաջողությունը կասկածելի է, բայց և այնպես մանդատատեր պետության առկայությունը կնպաստի Ամերիկայի հասարակական կարծիքն արթնացնելուն: Ամերիկացիները խորշում են մանդատի գաղափարից, բայց փոխառության նկատմամբ առարկությունը համեմատաբար փոքր է:[2]

Ինչպես տեսնում ենք, Ամերիկայում հայ տարբեր գործիչների հետ ունեցած հանդիպումներում Բրայսը պաշտպանում էր 1921թ. մայիսին մեր հիշատակած հոդվածում արտահայտած գաղափարները:

Բրայսն իր կյանքի վերջին հրապարակային ելույթն ունեցավ 1921թ. դեկտեմբերի 20-ին, և խորհրդանշական կարելի է համարել, որ այդ օրը նա նախագահում էր Մենշոն հաուսում գումարված ժողովում, որի նպատակն էր աջակցել քրիստոնյա ժողովուրդների ազատագրմանը թուրքական գերիշխանությունից:[3] Նշենք, որ կյանքի վերջին տարիներին ևս Բրայսն ակտիվ մասնակցություն ունեցավ ԲԱՀ-ի գործունեությանը: Այդ մասին կխոսենք աշխատության հաջորդ էջերում:

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 248, թ. 5-8:
[2] Նույն տեղում, գ. 588, թ. 9-10:
[3] Fisher H. A. L., ibid., p. 207.

Մաս երկրորդ. Հայանպաստ կազմակերպությունների գործունեությունը 1918թ. վերջ- 1923թ.

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո իրենց գործունեությունն ակտիվորեն շարունակեցին Մեծ Բրիտանիայում գործող հայանպաստ կազմակերպությունները: Ընդ որում սա վերաբերում է ինչպես քաղաքական հարթության վրա գործող ԲԱՀ-ին, այնպես էլ մարդասիրական օգնություն տրամադրող կազմակերպություններին:

Որո՞նք էին կոմիտեի տեսակետները Մուդրոսի զինադադարից անմիջապես հետո Հայկական հարցի շուրջ ստեղծված իրավիճակի և երկրի հնարավոր ապագայի շուրջ: Այդ մասին որոշ պարզաբանումներ ենք ստանում կոմիտեի նախագահ Ա. Վիլիամսի՝ 1918թ. նոյեմբերի 18-ին Համայնքների պալատում ունեցած ելույթից: Վիլիամսը հայտարարեց, որ թուրքական գերիշխանությունը Հայաստանի նկատմամբ պետք է վերացնել: Նա առաջարկեց հայկական վեց վիլայեթները և Կիլիկիան համարել մեկ պետություն՝ բացառություն անելով այն տարածքների նկատմամբ, որոնք թուրքերն արհեստականորեն են կցել հայկական վիլայեթներին՝ այնտեղ մահմեդական բնակչության թիվն ավելացնելու համար: Միաժամանակ նա կոչ արեց վեց վիլայեթների և Կիլիկիայի մանդատը հանձնել ԱՄՆ-ին, Ֆրանսիային կամ Մեծ Բրիտանիային:[1]

Հայաստանի շուրջ ստեղծված իրավիճակը ԲԱՀ-ը շարունակում էր քննարկել պարբերաբար հրավիրվող իր նիստերի ընթացքում: 1918թ. նոյեմբերի 7-ի նիստում կոմիտեի անդամներն առաջարկեցին դաշնակիցների զորքեր ուղարկել Հայաստան՝ հնարավոր բռնությունները կանխելու համար:

Որոշվեց պատվիրակություն ուղարկել արտգործնախարա-

---

[1] Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանության դատապարտումը Մեծ Բրիտանիայի խորհրդարանում, Երևան, 2000, էջ 53-61, տես նաև՝ Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք երկրորդ, Երևան, 1983, էջ 391:

ություն՝ մի շարք հարցեր քննարկելու համար:[1]

Պատվիրակության այցն արտգործնախարարություն տեղի չունեցավ: Կոմիտեի 1919թ. հունվարի 22-ի նիստում Ա. Վիլիամսը հայտարարեց, որ Լորդ Բրայսը նպատակահարմար չէր համարել նման քայլի իրականացումը:[2]

1919թ. առաջին կեսին ԲԱՀ-ի ուշադրության կենտրոնում Հայաստանի մանդատի խնդիրն էր: Կոմիտեն կապեր էր պաշտպանում Փարիզում գտնվող հայկական պատվիրակությունների հետ, ինչպես նաև մեր կողմից արդեն հիշատակված Լոնդոնում գործող հայկական ինֆորմացիոն բյուրոյի հետ, որը ժամանակ առ ժամանակ խորհուրդներ և օժանդակություն էր խնդրում ԲԱՀ-ից:

Այս շրջանում Հայաստանի ապագայի շուրջ կոմիտեի տեսակետների մասին է վկայում 1919թ. հունիսի 19-ին Վեսթմինսթերում կայացած հայանպաստ հավաքում ընդունված բանաձևը: Հավաքին և ընդունված բանաձևին մենք անդրադարձել ենք Բրայսի հայանպաստ գործունեությանը նվիրված հատվածում:

Մինչ Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի կնքումը շարունակվում էր հետաձգվել, կոմիտեն իր ուշադրությունը կենտրոնացրեց Անդրկովկասից բրիտանական զորքերի ետքաշման հարցի վրա:

Այդ հարցը քննարկվեց կոմիտեի 1919թ. օգոստոսի 18-ի արտակարգ նիստում: Նախագահը նշեց, որ այդ խնդիրը քննարկել է տարբեր նախարարությունների ներկայացուցիչների հետ:[3]

Նույն օրն այդ հարցի կապակցությամբ Վիլիամսը ելույթ ունեցավ նաև Համայնքների պալատում: Նա հայտարարեց, որ Կովկասի և ասիական Թուրքիայի ապագան միահյուսված է: Անատոլիայի ներքին շրջաններն իրենցից վառոդի տակառ են ներկայացնում, այնտեղ կան երիտթուրքական գործակալներ, թուրք գեներալներ, որոնք ապստամբություն են կազմակեր-

---

[1] Rhodes House Library, BAC minutes, quoted November 7, 1918.
[2] ibid., quoted Januar 22, 1919.
[3] ibid., quoted August 18, 1919.

պում ընդդեմ մեծ տերությունների: Եթե Բրիտանիան հեռանա Կովկասից, ապա նրա թշնամիների ֆանատիզմն ավելի կուժեղանա և ողջ տարածաշրջանը կհայտնվի քաոսի և սպանդանոցի մեջ:

Նշելով, որ ինքը ևս ողջունում է կառավարության՝ բյուջեի միջոցների տնտեսմանն ուղղված քաղաքականությունը, Վիլիամսն իր զարմանքն արտահայտեց այն բանի կապակցությամբ, որ այդպիսի առաջին խոշոր միջոցառումը իրականացվում է այնպիսի մի տեղում, որտեղ այն կարող է հսկայական բևնակությամբ մարդկային զոհերի պատճառ դառնալ: Նա պնդեց, որ տարբերություն պետք է դնել հյուսիսային և հարավային Ռուսաստանից զորքերի հետ քաշման մեջ: Հյուսիսային Ռուսաստանում բրիտանացիները մասնակցում են քաղաքացիական պատերազմի, մինչդեռ Կովկասում նրանք խաղաղություն և կարգուկանոն են պահպանում: Վիլիամսը պնդեց, որ մշտական օկուպացիայի կոչ չի անում, այլ հանդես է գալիս վաղաժամ նահանջի դեմ:[1]

BAC-ը շարունակում էր ուշադրության կենտրոնում պահել նաև Ամերիկայի կողմից Հայաստանի մանդատի ստանձնման հարցը: 1919թ. սեպտեմբերի 17-ին հրավիրված նիստում քննարկվեց ԱՄՆ պատվիրակություն ուղարկելու հարցը: Այն պետք է նպաստեր ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի ստանձնման գործընթացին: Այդ խնդրի առնչությամբ հեռագիր ուղարկվեց Մերձավոր Արևելքի նպաստամատույցի ամերիկյան կոմիտեին և Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեին:

Արդեն հաջորդ նիստում նախագահը տեղեկացրեց, որ ամերիկացիների շրջանում ուժեղ համոզմունք կա, որ նման հանձնաժողովի ուղարկումը ճիշտ չի լինի, ուստիև որոշվեց առժամաբար հետաձգել այդ հարցի քննարկումները:[2]

1919թ. իր վերջին նիստերը BAC-ը հրավիրեց 1919թ. նոյեմ-

---

[1] The Armenian Question, Published by The Armenian Refugees (Lord Mayor's) Fund, n.d., pp. 5-12.

[2] Rhodes House Library, BAC minutes, quoted September 17 and November 3, 1919.

բերի 25-ին և դեկտեմբերի 18-ին:

Նոյեմբերի 25-ի նիստի ժամանակ նախագահը հաղորդեց, որ այցելել է արտգործնախարարություն և ռազմական նախարարություն՝ ճշտելու, թե արդյոք որևէ բան ձեռնարկվե՞լ է հայերին օգնելու և պաշտպանելու համար: Նա ներկայացրեց Ա. Թոյնբիի նամակը: Վերջինս նշում էր, որ հենց Մեծ Բրիտանիայի շահերից է բխում (կապված Միջագետքում վերջինիս դրության հետ) աջակցել Հայաստանի ուժեղացմանը: Ներկայացվեց նաև Թոյնբիի ներողության նամակը՝ նիստին ներկա չգտնվելու համար: Սա նշանակում է, որ 1919թ. վերջին նա կոմիտեի լիարժեք անդամ էր: Կոմիտեի այս նիստին մասնակցում էին նաև Ա. Ահարոնյանը և Պողոս Նուբար փաշան: Նրանք ելույթներում ներկայացրին հայերի ցանկությունները և խաղաղության կոնֆերանսից ունեցած սպասումները:

Դեկտեմբերի 18-ի նիստի ժամանակ Ա. Վիլիամսը հաղորդեց, որ Լորդ Բրայսի և Թ. Փ. Օ'Քոնորի հետ միասին հանդիպել է վարչապետի հետ: Հանդիպման ընթացքում տարբեր առաջարկություններ են արվել, սակայն ոչ մի որոշակի տեղեկություն Հայկական հարցի լուծման ուղղությամբ վարչապետից ստանալ չի հաջողվել: Նիստին մասնակցում էր նաև Թոյնբին: Նա շեշտեց, որ նախորդ օրը Լորդերի պալատում Լորդ Քերզոնի արած հայտարարություններն այն նվազագույնն են, որ կոմիտեն կպահանջի Հայաստանի համար:[1]

Իսկ ի՞նչ էր ասել Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Քերզոնը վերը նշված ելույթում: Նրա ելույթը հրապարակվեց "Ararat" պարբերականի 1919թ. նոյեմբեր-դեկտեմբերի համարում: Քերզոնը հաստատել էր, որ բրիտանական կառավարությունը հավատարիմ է մնում թուրքական կայսրության տարածքների ապագայի վերաբերյալ իր բոլոր հայտարարություններին: Միաժամանակ նա կոչ էր արել համախմբված աշխատել այդ տարածաշրջանում հայկական պետության ստեղծման օգտին՝ առանց որոշակիացնելու վերջինիս սահմանները:[2]

---

[1] Rhodes House, BAC minutes, quoted November 25 and December 18, 1919.
[2] "Ararat", vol. VI, N 68, November-December 1919, pp. 587-588.

1920թ. իր առաջին նիստը BAC-ը հրավիրեց 1920թ. փետրվարի 19-ին: Նիստին մասնակցում էին և ելույթներ ունեցան Ա. Ահարոնյանը ու Պողոս Նուբար փաշան, որոնք ներկայացրին Հայաստանի Հանրապետության ներկա դրությունը, նրան սպառնացող հնարավոր վտանգները և հայկական պատվիրակության ձգտումները: Ելույթ ունեցավ նաև Լորդ Բրայսը, որը ներկայացրեց Հայաստանի մանդատը ԱՄՆ-ի կողմից չընդունելու դեպքում առաջ եկող դժվարությունները:[1]

Քարոզչական աշխատանքների կարևորության մասին կոմիտեի ընդունած որոշումները բավականին կարճ ժամկետում վերածվեցին ռեալ գործողությունների:

1920թ. մարտի 14-ին Լոնդոնի Տրաֆալգար հրապարակում տեղի ունեցավ հրապարակային հավաքույթ, որի նպատակն էր պահանջել վերջ տալ Թուրքիայում իրականացվող քրիստոնյա բնակչության կոտորածներին: Հավաքույթում նախագահում էր Ա. Վիլիամսը: Իր ելույթում նա անդրադարձավ Կիլիկիայում ստեղծված դրությանը՝ նշելով որ այնտեղ վերջին մի քանի շաբաթների ընթացքում մոտավորապես 20000 քրիստոնյաներ են սպանվել:

Հավաքույթը բանաձև ընդունեց, որը պահանջում էր ստեղծել եվրոպացիներից և տեղացի բնակիչներից բաղկացած մի հանձնաժողով, որը պետք է զբաղվեր այն քրիստոնյա կանանց և աղջիկներին փրկելու գործով, որոնք կոտորածների ժամանակ բռնի մահմեդականացվել և տարվել էին թուրքական հարեմները:[2]

Կիլիկիայի իրավիճակը քննարկվեց նաև BAC-ի մարտի 23-ի նիստում: Կոմիտեի անդամները համաձայնվեցին ճնշում գործադրել արտգործնախարարության վրա՝ շտապեցնելու համար Փոքր Ասիայի հյուսիսում սահմանագծման իրականացումը: Կիլիկիայի հարցի առնչությամբ կոմիտեի նախագահը հաղորդեց, որ կփորձի հանդիպել Լոնդոնում Ֆրանսիայի դեսպանի հետ:

1920թ. մայիսի 4-ի նիստում կոմիտեն առաջին անգամ

---

[1] Rhodes House Library, BAC minutes, quoted February 19, 1920.

[2] "Ararat", vol. VII, N 69, April 1920, pp. 6-8.

քննարկեց բոլշևիկյան գործոնի դերը Հայաստանի ապագայի հարցում: Վիլիամսը հայտարարեց, որ բացի թուրքական վտանգից, այժմ երկրի հյուսիսում առկա է բոլշևիկյան վտանգը: Նշելով, որ ակնհայտորեն դաշինք կա առավել մոլեռանդ մահմեդականների և բոլշևիկների միջև՝ նա կարծիք հայտնեց, որ բոլշևիկները կարող են նվաճել Հայաստանը, սակայն դրանից առավել մեծ վտանգն այն է, որ Կովկասի հայերը, կորցնելով արևմուտքից որևէ օգնության ստացման հույսը, կարող են համաձայնության գալ բոլշևիկյան Ռուսաստանի հետ: Ելույթ ունեցավ նաև Նոել Բաքսթոնը: Նա առաջարկեց ջանքեր գործադրել՝ Հայաստան զենք ուղարկելու աշխատանքների հետ կապված:

Ի վերջո կոմիտեն որոշեց պատվիրակություն ուղարկել արտգործնախարարություն՝ հետևյալ հարցերը քննարկելու համար.

1. Հայկական հանրապետությանը զենքի, սպաների և դրամի մատակարարում:

2. Կիլիկիայի իրավիճակը:

3. Թուրքահայաստանի սահմանները:

4. Երևանի Հանրապետության մեկուսացումը և նրան սպառնացող իրավիճակը:

Սակայն պատվիրակության այցը տեղի չունեցավ: Ինչպես կոմիտեի մայիսի 27-ի նիստում հաղորդեց Վիլիամսը, նա հանդիպել էր արտգործնախարար Լորդ Քերզոնի հետ, որը հավաստիացրել էր, որ հնարավոր բոլոր քայլերը ձեռնարկվում են Հայաստանին օգնելու համար, սակայն խնդրել էր որևէ պատվիրակություն իր մոտ չուղարկել:[1]

Գուցե Քերզոնի այս խնդրանքն էր պատճառը, որ BAC-ը որոշեց արտգործնախարարություն հուշագիր ուղարկել Հայաստանի խնդրի հետ կապված: 1920թ. հունիսի 10-ին Ա. Վիլիամսի ստորագրությամբ ուղարկված այս հուշագիրը կարևոր փաստաթուղթ է, որը հնարավորություն է տալիս պար-

[1] Rhodes House Library, BAC minutes, quoted March 23, May 4, and May 27, 1920.

վել կոմիտեի տեսակետները Հայկական հարցում 1920թ. ամռան սկզբին:

Հուշագիրն առաջարկում էր, առանց հետաձգման Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներն ամբողջությամբ միացնել Երևանի Հանրապետությանը՝ Սև ծով ելք տվող տարածքի հետ միասին: Կոմիտեն որպես գոհացուցիչ այլընտրանք էր դիտում Տրապիզոնի, Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթների սահմանների հարցը նախագահ Վիլսոնի իրավարարությանը թողնող առաջարկը և պնդում էր, որ ցանկալի է դաշնակիցների հայտարարությունն այն մասին, որ ԱՄՆ նախագահի որոշումը. ինչպես և պայմանագրի ցանկացած այլ հոդված, կիրականացվի դաշնակիցների միացյալ գործողությամբ: Առաջարկվում էր ջանքեր գործադրել Տրապիզոն քաղաքը և նվազագույնը վիլայեթի արևմտյան մասը դաշնային միությամբ Հայաստանին միացնելու համար:

Հուշագրում ներկայացվում էր Երևանի Հանրապետության ծանր վիճակը, առաջարկվում էր Երևանի Հանրապետությանը տրամադրել այն նույն հնարավորությունները, որոնք ունեն Վրաստանը և Ադրբեջանը, ինչպես դաշնակիցներից ռազմական սարքավորումներ գնելիս, այնպես էլ սկզբնապես Դենիկինի համար նախատեսված մատակարարումներից գնումներ կատարելիս: Այնուհետև նշվում էր, որ զենքի և զինամթերքի մատակարարումներից հետո Հայաստանի ամենամեծ կարիքը բավարար չափով սպաների ուղարկումն է: Կոմիտեն բերում էր 200 թիվը, և պնդում, որ Հայաստանի խնդրանքը նման օգնության համար պետք է բավարարվի: Այդ քայլերի համար անհրաժեշտ չեն զգալի ֆինանսական միջոցներ և դրանք հնարավորություն կտան Հայաստանին դառնալ կայուն և բարգավաճ պետություն, ինչը հսկայական առավելություն կլինի բրիտանական կայսրության շահերի, քաղաքականության և հեղինակության համար ողջ Միջին Արևելքում:[1]

Ինչպես տեսնում ենք, կոմիտեն հիմնականում ճիշտ էր պատկերացնում Հայաստանին սպառնացող վտանգները: Ինչ վերաբերում է տարածքային խնդիրներին, ապա կոմիտեն

[1] Burdett A., ibid., pp. 735-738.

արդեն նահանջել էր վեց վիլայեթների և Կիլիկիայի միավորմամբ հայկական պետության ստեղծման գաղափարից և առաջարկում էր միայն երեք վիլայեթների միացումը Հայաստանին. նաև ընդունելի համարելով Վիլսոնի իրավարարությունը:

Իսկ ինչպիսին էր արտգործնախարարության վերաբերմունքն այս հուշագրին: Ա. Վիլիամսին ուղղված հունիսի 15-ի նամակում արտգործնախարարության աշխատակից Ջ. Տիլլսին Քերզոնի անունից հայտնում էր, որ Հայաստանի վերջնական սահմանների մասին որոշման իրականացումը, հավանաբար, դաշնակիցների կողմից կստանա նույն աջակցությունը, ինչ որ կստանա թուրքական պայմանագրի մնացած մասի իրականացումը: Պատասխանում նշվում էր, որ Վրաստանին կամ Ադրբեջանին արտոնյալ վերաբերմունք չի ցուցաբերվել, ընդհակառակը, միայն Հայաստանին են զենքեր մատակարարվել:[1]

Հայաստանի համար այդքան ճակատագրական դարձած 1920թ. մայիս-նոյեմբեր ամիսներին կոմիտեն ևս մի քանի նիստ հրավիրեց: Հիշատակության է արժանի հուլիսի 29-ի նիստը, որին ներկա էր և ելույթ ունեցավ Հայաստանի նախկին վարչապետ Ա. Խատիսյանը: Նա հայտարարեց, որ Երևանի Հանրապետությունն իր ստեղծմամբ պարտական էր բրիտանական զորքերին. ստանալով նյութական օգնություն Ամերիկայից՝ իրենք քաղաքական օգնություն ստացել են միայն Մեծ Բրիտանիայից:

Խատիսյանը նշեց, որ Հայաստանում ծավալված բոլշևիկյան շարժումը ճնշվել է, և շեշտեց, որ Էրզրումը, Բայազետը և Տրապիզոնը պետք է ճանաչվեն հայկական տարածքներ: Եթե դաշնակիցները տնտեսական կապեր հաստատեն Հայաստանի հետ, նրանց նախապատվություն կտրվի և կերաշխավորվի ներդրված ցանկացած կապիտալի անվտանգությունը:

Նիստում ելույթ ունեցավ նաև Լորդ Բրայսը: Նա նշեց, որ Հայաստանի համար ամենամեծ վտանգը թուրքերի հարձակումն է: Անհրաժեշտ է քեմալականներին զբաղեցնել Անատոլիայում, որպեսզի նրանք հեռու մնան Կիլիկիայից և Հայաս-

[1] Burdett A., ibid., p. 739.

տանից:[1]

1920թ. երկրորդ կեսին բավականին ակտիվ գործունեություն ծավալեց նաև BAC-ի քարոզչության հարցերով ենթակոմիտեն: Այն հիմնականում զբաղվում էր մամուլի օրգաններին նամակներ ուղարկելով, միաժամանակ քննարկում էր BAC-ի հուշագրերը: Մասնավորապես 1920թ. հունիսի 8-ի նիստում քննարկվել էր Հայաստանի վերաբերյալ հուշագիրը, որը հունիսի 10-ին ուղարկվել էր Լորդ Քերզոնին:[2]

Ենթակոմիտեի ջանքերի շնորհիվ "Times", "Manchester Guardian", "Star" պարբերականներում հրապարակվեց Հայաստանի նախկին վարչապետ պրն. Խատիսյանի ուղերձը BAC-ին: Մի շարք պարբերականներում եղան նաև Հայկական հարցին առնչվող հրապարակումներ:[3]

1920թ. հուլիսի վերջից մինչև նոյեմբերի վերջը BAC-ը նիստեր չէր գումարում, և այդ շրջանում կոմիտեի ծավալած գործունեության մասին հիմնական տեղեկությունները ստանում ենք քարոզչության ենթակոմիտեի նիստերի արձանագրություններից: Դրանցից պարզ է դառնում, որ BAC-ը մասնակցել էր Ժենևում կայացած հայասիրական կազմակերպությունների կոնֆերանսին, որի ընթացքում որոշվել էր ստեղծել Միջազգային հայասիրական լիգա: Կոնֆերանսին մասնակցած Հ. Բաքսթոնն ենթակոմիտեին հաղորդեց, որ Լիգան զբաղվելու է հետևյալ խնդիրներով. ա) Հայաստանի մանդատ, բ) ֆինանսական օգնություն, գ) Կիլիկիայի ապագան: Լիգայի խորհրդի գործադիր կոմիտեի երեք անդամներ պետք է ներկայացնեին Մեծ Բրիտանիան: Ենթակոմիտեի նիստում Ա. Վիլիամսը, Հ. Բաքսթոնը և Ա. Թոյնբին ընտրվեցին որպես գործադիր կոմիտեի անդամներ:

Խոսելով այս շրջանում BAC-ի ծավալած գործունեության մասին՝ նշենք, որ վերջինիս ներկայացուցիչները հանդիպեցին

---

[1] Rhodes House Library, BAC minutes, quoted July 29, 1920.

[2] Rhodes House Library, Oxford, Mss. Brit. Emp. S. 22 G. 506 (2), Minute Book of the Propaganda Sub-Committee of the British Armenia Committee, June 1 1920-Nov. 23 1920., այսուհետև տեքստում՝ Rhodes House Library, Propaganda Sub-Committee minutes., quoted June 8, 1920.

[3] ibid., quoted August 10, 1920.

նաև Մեծ Բրիտանիայում գտնվող Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների հետ: Այսպես, քարոզչության ենթակոմիտեի 1920թ. օգոստոսի 24-ի նիստում որոշվեց հանդիպում կազմակերպել պրն. Կրասինի և Կամենևի հետ: Կրասինի հետ հանդիպումը կայացավ 1920թ. օգոստոսի 31-ից սեպտեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում: Ցավոք, նիստերի արձանագրություններում ոչինչ չի ասվում այդ հանդիպման ընթացքում քննարկված հարցերի, կողմերի արտահայտած տեսակետների մասին:[1]

1920թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Հայաստան այցելեց ենթակոմիտեի կազմակերպիչ քարտուղար Լ. Լիզը: Լիզի այցելության նպատակը կոմիտեին Հայաստանի իրավիճակի մասին ճշգրիտ տեղեկությունների տրամադրումն էր:

ԲԱՀ-ը շարունակում էր իր կապերը նաև Փարիզի խաղաղության վեհաժողովին մասնակցող հայկական պատվիրակությունների հետ: Այդ մասին է վկայում 1920թ. հոկտեմբերի 18-ին Ա. Վիլիամսին ուղղված Պողոս Նուբար փաշայի հեռագիրը: Վերջինս հաստատում էր թուրքական ուժերի՝ Հայաստանի վրա հարձակման տեղեկությունը:[2]

ԲԱՀ-ը Հայաստանի վրա քեմալականների հարձակման պայմաններում մի շարք քայլեր ձեռնարկեց:

Հոկտեմբերի վերջին Ա. Վիլիամսն անձամբ այցելեց Մեծ Բրիտանիայի վարչապետին և նրան հանձնեց Հայաստանի համար անհրաժեշտ ռազմական նյութերի ցուցակը:

1920թ. նոյեմբերին կոմիտեի անդամներ Նոել Բաքսթոնը և Թ. Փ. Ս. Էվանսը ևս մեկ հանդիպում ունեցան Կրասինի հետ: Ցավոք, նիստերի արձանագրություններում այս անգամ ևս ոչինչ չի ասվում հանդիպման արդյունքների մասին:[3]

Այնուամենայնիվ, պարզ է, որ այդ հանդիպման ընթացքում քննարկվել է Հայաստանի կացությունը: Ըստ երևույթին, կոմիտեն, չբավարարվելով Կրասինի հետ քննարկումներով, իր տե-

---

[1] Rhodes House Library, Propaganda Sub-Committee minutes, quoted August 24 and September 7, 1920.

[2] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1051, թ. 3-4:

[3] Rhodes House Library, Propaganda Sub-Committee minutes, quoted October 19 and 24, November 2 and 23, 1920.

սակետները խնդրել է փոխանցել Մոսկվա: 1920թ. նոյեմբերի 12-ին ԲԱՀ-ին հեռագիր էր ուղարկել Ռուսաստանի արտգործ-ժողկոմ Չիչերինը: Նա գրում էր, որ դաշնակիցները թույլ չեն տվել Հայաստանին ավելի մեղմ վերաբերմունք դրսևորել Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ: Չիչերինը պնդում էր, որ Հայաստանը մերժել է հարևանների հետ սահմանային հարցերում միջնորդի դեր ստանձնելու Խորհրդային Ռուսաստանի բոլոր առաջարկությունները:[1]

1920թ. նոյեմբերի վերջին ԲԱՀ-ը վերսկսեց իր նիստերը: Դեկտեմբերի 6-ի նիստում կոմիտեի անդամները քննարկեցին Հայաստանի խորհրդայնացման մասին տեղեկությունները: Կարծիք հայտնվեց, որ դա չի ներկայացնում հայերի, որպես ամբողջության, կարծիքն ու ցանկությունները: Խորհրդայնացումը բավարարում է բնակչության այն մասին, որը Ռուսաստանին մերձենալու մեջ է տեսնում թուրքերից փրկվելու ճանապարհը:[2]

Ա. Վիլիամսը 1920թ. դեկտեմբերի 23-ին ելույթ ունեցավ Համայնքների պալատում: Նա դատապարտեց բրիտանական կառավարության քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ և հանդիմանեց նրանց, ովքեր, Հայաստանը լուրջ գործոն չհամարելով, առաջարկում էին ընդհանրապես ձեռք քաշել Հայաստանից: Նա հայտարարեց, որ հայերը, չնայած բազմաթիվ խնդրանքներին, միայն մեկ անգամ են բրիտանական կառավարությունից զենք ստացել:[3]

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ կոմիտեն 1921թ. սկզբին կանգնեց կազմակերպչական մի շարք դժվարությունների առջև: Ինչպես ցույց են տալիս 1921թ. տեղի ունեցած կոմիտեի առաջին նիստերը, դրանց մասնակիցների թիվը կտրուկ նվազել էր: Փաստորեն կոմիտեն կանգնած էր լուծարման վտանգի առաջ: Սիայն նախագահ Վիլիամսի ձեռնարկած եռանդուն միջոցառումների շնորհիվ կոմիտեն կարողացավ հաղթահարել

---

[1] Махмурян Г., Лига Наций, Армянский Вопрос и Республика Армения, Ереван, 1999, стр. 124-125.

[2] Rhodes House Library, BAC minutes, quoted December 6, 1920.

[3] Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 188-189:

այդ ճգնաժամը և 1921-1923թթ. ընթացքում շարունակել իր ակտիվ գործունեությունը:

Սկսած 1921թ. կեսից կոմիտեի ուշադրության կենտրոնում էր Կիլիկիայի խնդիրը և 1921թ. Լոնդոնի կոնֆերանսում առաջքաշված հայերին ազգային օջախ տրամադրելու հարցը: Այս շրջանում Բրիտանիայում գործող հայանպաստ տարբեր կազմակերպություններ ստեղծել էին միացյալ խորհուրդ՝ աշխատանքները համակարգելու համար: Խորհրդի կազմում էին ԲԱՀ-ը, Հայ Դահիճներին (Լորդ Քաղաքագլխի) ֆոնդը, Հայաստանի բարեկամներ ընկերությունը: 1921թ. հուլիսին խորհուրդը որոշեց դիմել Հռոմի Պապին՝ Կիլիկիայի հայության խնդրով: Այդ մասին ասվում էր Պողոս Նուբար փաշային ուղղված խորհրդի նամակում: ԲԱՀ-ի կազմակերպիչ քարտուղար Լ. Լիզը իր հերթին փաշային ուղղված նամակում նշում էր, որ փորձելու են համոզել Հռոմի Պապին՝ կիլիկիահայերի պաշտպանության խնդրով դիմել Ֆրանսիային:[1]

Միացյալ խորհուրդը 1921թ. օգոստոսի 20-ին հուշագիր ներկայացրեց Ազգերի Լիգայի ասամբլեայում ընդգրկված պետությունների ներկայացուցիչներին: Հուշագրում ներկայացվում էին հայերի խնդրանքները.

1. Թուրքահայաստանում Ազգերի Լիգայի որոշած սահմաններում հայերի համար ազգային օջախ հիմնել, որը գտնվելու էր Ազգերի Լիգայի հովանավորության ներքո:

2. Ֆրանսիան պետք է մնա Կիլիկիայում և իրականացնի մարդկանց անվտանգության ապահովման իր խոստումները:

3. Ռուսահայերին պետք է ինքնորոշման իրավունք տալ, որպեսզի նրանք որոշեն՝ վերականգնել անկախությունը, թե՞ Ռուսաստանի մի մասը դառնալ:

Խորհուրդը կոչ էր անում հատուկ կոմիտե ստեղծել՝ այդ բոլոր հարցերը մանրամասն քննարկելու համար:[2]

Իհարկե, ԲԱՀ-ը շարունակում էր նաև ինքնուրույն քայլերը: 1921թ. նոյեմբերի վերջին կամ դեկտեմբերի սկզբին Վիլիամսը

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1051, թ. 8 և 9:

[2] Նույն տեղում, գ. 1056, թ. 1-2:

Հայկական հարցի կապակցությամբ նամակով դիմել էր արտգործնախարար Քերզոնին: Նամակի բովանդակությանը տեղեկանում ենք 1921թ. դեկտեմբերի 6-ին Վիլիամսին ուղղված Քերզոնի պատասխան նամակից: Վերջինս գրում էր, որ բոլոր տերությունների մեջ հայերի լավագույն բարեկամը եղել է Բրիտանիան և, հետևաբար, որևէ խնդիր չի կարող լինել Անգլիայի հանդեպ վստահության կորստի մասին: Քերզոնը նշում էր, որ Թուրքիայի հետ հարցերը կարգավորելիս ինքը չի անտեսի հայկական շահերը, սակայն Վիլիամսը չի կարող սպասել, որ Անգլիան, ինքնակամ կերպով կընտրի Թուրքիայի մի մասը, այնտեղից կվտարի մյուս ազգություններին, և հայ փախստականներին բրիտանական սվինների ներքո համախմբելով, հայկական պետություն կստեղծի՝ ծախսելով բրիտանական հարկատուների միջոցները: Ինչ վերաբերում է Կիլիկիային, ապա ըստ Քերզոնի, Անգլիան չի կարող կանխել ֆրանսիացիների կողմից Կիլիկիայի էվակուացիան, կամ զբաղեցնել նրանց տեղը: Անդրադառնալով Վիլիամսի դժգոհությանն այն բանի կապակցությամբ, որ բրիտանական կառավարությունը մերժել է Կիլիկիայի քրիստոնյա բնակչությանն ապաստան տալ բրիտանական տարածքներում՝ Քերզոնը որպես պատճառ բերում էր ֆինանսական դժվարությունները և այն փաստը, որ Անգլիայում հազարավոր մարդիկ կանգնած են սովամահության եզրին:[1]

ԲԱՀ-ը բնականաբար չէր կարող բավարարվել այս պատասխանով և 1921թ. դեկտեմբերի 17-ին այն վարչապետին հանձնեց «Հայաստանը և ասիական Թուրքիան» վերնագրով հուշագիրը:

Այստեղ ներկայացվում էին կոմիտեի տեսակետները հետևյալ չորս շրջաններում իրականացվելիք քայլերի շուրջ: ա) Կովկաս, բ) ասիական Թուրքիայի հյուսիս-արևելք, գ) Կիլիկիա, դ) Փոքր Ասիայի այլ մասեր, որտեղ ապրում են հայեր:

---

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 705-707:

Կովկասի վերաբերյալ նշվում էր, որ Երևանի Հանրապետությունն ամբողջովին ջախջախվել է թուրքերի և ռուսական խորհրդային կառավարության կողմից՝ կլանվելով երկուսի կողմից և կորցնելով իր ինքնուրույն գոյությունը:

Նշելով, որ սկզբունքորեն կոմիտեն համարում է, որ Կովկասի հայ բնակչությունն ինքը պետք է որոշի իր ապագան, շեշտվում էր, որ ԲԱՀ-ը չի առաջարկում Կովկասում գործողություններ ձեռնարկել ռուսների կամ թուրքերի դեմ, քանզի ռուսները պահպանում են որոշակի կարգուկանոն և խաղաղություն Հայաստանի՝ իրենց կողմից օկուպացված շրջաններում:

Ասիական Թուրքիայի հարավ-արևելքում կոմիտեն խնդրում էր հայերի համար ստեղծել թուրքական իշխանություններից ամբողջովին անկախ ազգային օջախ Վանա լճի շրջակայքում, ելնելով դեպի ծով: Չմասնավորեցնելով վերջինիս տարածքների խնդիրը՝ կոմիտեն խնդրում էր բավարար տարածք հատկացնել Կովկասում և այլուր գտնվող հայրյուր հազարավոր փախստականներին ապաստան տալու համար և առաջարկում էր ապագա ազգային օջախի մանդատը հատկացնել որևէ փոքր պետության:

Կիլիկիայի վերաբերյալ կոմիտեն ներկայացնում էր հետևյալ առաջարկը. Ազգերի Լիգայի հովանու ներքո հիմնել ինքնավար վարչակարգ: Նշվում էր, որ այդպիսի վարչակարգը կարող է թուրքական դրոշի ներքո ստեղծվել, բայց կարևոր է, որ այն ազատ լինի Անգորայի կամ Կ. Պոլսի կառավարությունների միջամտություններից:

Փոքր Ասիայի մնացած վայրերում կոմիտեն առաջարկում էր նշանակել ֆրանսիական և բրիտանական հյուպատոսներ, որոնք պետք է զեկուցեն ոչ թուրք հպատակների հանդեպ կատարված ապօրինությունների մասին: Առաջարկվում էր այդ շրջաններում ստեղծվելիք ոստիկանության գործունեության վերահսկումն իրականացնել եվրոպացի սպաների միջոցով:[1]

Ահա այսպիսին էր ԲԱՀ-ի դիրքորոշումը հայկական խնդրում 1921թ. վերջին: Այդ տարվա իր գործունեությունը կոմիտեն եզրափակեց՝ հրապարակելով «Փաստեր Հայաստանի

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1058, թ. 1-6:

օգտին» գրքույկը, որտեղ համառոտ ներկայացված էին հայկական խնդրում տեղի ունեցած իրադարձությունները սկսած Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից մինչև 1921թ. վերջը, մանրամասն բերվում էին դաշնակից երկրների բարձրաստիճան պաշտոնյաների տարբեր ժամանակ ունեցած ելույթները՝ հայ ժողովրդին տրված խոստումներով:[1]

1922թ. հունվարի 23-ին դաշնակից գլխավոր տերությունների խորհրդին նամակով դիմեցին մի խումբ անգլիացի պատգամավորներ: Ցավոք, փաստաթղթում չի բերվում այդ պատգամավորների ցուցակը, սակայն կարելի է ենթադրել, որ այս կոչը ևս ԲԱՀ-ի ջանքերի արդյունք էր: Ներկայացնելով դաշնակիցների գործին հայ ժողովրդի մատուցած ծառայությունները և նրա կրած տառապանքները՝ պատգամավորները ներկայացնում էին հետևյալ առաջարկները.

ա) Փոքր Ասիայի հյուսիս-արևելյան շրջանում թուրքական տիրապետությունից ամբողջովին անկախ հայկական ազգային օջախ հիմնել:

բ) Կիլիկիայում միջազգային հսկողության ներքո վարչակարգ ստեղծել, որն անհրաժեշտության դեպքում կարող է թուրքական դրոշի ներքո լինել, բայց պետք է լիովին անկախ լինի թուրքական կառավարության միջամտություններից:

գ) Փոքր Ասիայի մնացած շրջաններում թուրքական իշխանություններից բավարար երաշխիքներ պահանջել ոչ թուրք ժողովուրդների անվտանգությունն ապահովելու համար, այդ պարտավորությունների իրականացումը հսկելու համար եվրոպական հյուպատոսներ նշանակել և եվրոպացի սպաների հսկողության ներքո ժանդարմերիա ստեղծել:[2]

ԲԱՀ-ի 1921թ. դեկտեմբերի 17-ի հուշագրին Լորդ Քերզոնի անունից դեկտեմբերի 30-ին պատասխան նամակ էր ուղարկել արտգործնախարարության աշխատակից պրն. Օլիֆանտը: Քերզոնի արտահայտած հիմնական տեսակետները շարադրված են 1922թ. փետրվարի 20-ին նրան ուղարկած Վիլիամսի պատասխան նամակում: Վերջինս ազգային օջախի կապակ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1060, թ. 1-4:
[2] ԳԱԹ, Վահան Մալեզյանի ֆոնդ, թիվ 740:

ցությամբ ևս մեկ անգամ շեշտում էր, որ հուշագրում ինքը չի խնդրել նախագահ Վիլսոնի շնորհած ողջ տարածքը դարձնել ազգային օջախ այլ միայն «բավարար տարածություն ապաստան տալու համար Կովկասում և այլուր գտնվող հարյուր հազարավոր փախստականներին»: Պատասխանելով այդ կապակցությամբ Քերզոնի այն առարկությունը, որ կասկածելի է, թե արդյոք կա՞ն բավարար քանակությամբ հայ փախստականներ՝ բնակեցնելու համար քննարկվող տարածքի նույնիսկ փոքր հատվածը՝ Վիլիամսը գրում էր, որ Հարոլդ Բաքսթոնը վերջերս Կովկասից տեղեկացրել է, որ կովկասյան Հայաստանում առկա են 400000 հայ փախստականներ, որոնցից 300000-ը թուրքական վիլայեթներից, 100000-ը Կարսի շրջակայքից: (Հարոլդ Բաքսթոնի Կովկաս կատարած այցելության մասին ավելի մանրամասն կխոսենք աշխատության հետագա էջերում):[1]

Կոմիտեն քայլեր ձեռնարկեց նաև Կ. Պոլսի սուլթանական կառավարության հետ շփումներ հաստատելու և վերջինիս իր տեսակետները ներկայացնելու ուղղությամբ:

Այս առումով խիստ հետաքրքիր էր Կոմիտեի մի քանի անդամների հանդիպումը Կ. Պոլսի կառավարության արտգործնախարար Իզզեթ փաշայի հետ, որը տեղի ունեցավ 1922թ. մարտի 17-ին:

ВАС-ի պատվիրակության կազմում էին Ա. Վիլիամսը, պատվելի Ֆ. Մեյերը, պատվելի Այ. Ջենկինսը և Լ. Լիզը: Ա. Վիլիամսը հանդիպման ժամանակ անդրադարձավ Թուրքիայի արևելյան սահմաններում հայկական ազգային օջախի ստեղծման խնդրին՝ հիմնականում շարադրելով այն տեսակետները, որոնք կոմիտեն ներկայացրել էր վարչապետին՝ ուղղված 1921թ. դեկտեմբերի 17-ի հուշագրում:

Իր պատասխան խոսքում Իզզեթ փաշան նշեց, որ չի կարող քննարկել որևէ տարածքային զիջում, բայց պատրաստ է ամեն ինչ անել՝ ապահովելու կովկասյան Հայաստանի համար դեպի ծով ելքի հնարավորությունը մեկ կամ մի քանի թուրքական նավահանգիստների միջոցով: Նա նաև հայտարարեց, որ

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1058, թ. 14-16:

ԲԱՀ-ին կուղարկի վիճակագրական տվյալներ՝ հիմնված 1914թ. թուրքական մարդահամարի վրա և տարբեր եվրոպացի հետազոտողների կողմից բերված տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, որ հայերը Թուրքիայի բնակչության փոքր մասն են կազմել:[1]

1922թ. ապրիլի 8-ին ԲԱՀ-ը ևս մեկ հուշագիր հրապարակեց «Ազգերի Լիգան և Հայաստանը» խորագրով: Սա կոմիտեի պատասխանն էր դաշնակից պետությունների ներկայացուցիչների 1922թ. մարտի 22-26-ը տեղի ունեցած հանդիպման ժամանակ առաջ քաշված տեսակետների: Հանդիպման ընթացքում Քերզոնը, Պուանկարեն և Շանցերը հիմնականում անդրադարձան հույն-թուրքական պատերազմի խնդրին: Այնուամենայնիվ, քննարկվեց նաև հայկական խնդիրը, ընդ որում ի տարբերության Լոնդոնի կոնֆերանսում առաջ քաշված հայկական օջախի գաղափարի, այս անգամ նշվում էր միայն օջախ հասկացությունը: Ընդ որում անգլիացիները ցանկանում էին այն տեսնել Կիլիկիայում, իսկ ֆրանսիացիները՝ արևելյան վիլայեթներում:[2]

Այս հուշագրով կոմիտեն որոշակի փոփոխությունների էր ենթարկում իր տեսակետները: Հայկական ազգային օջախի տարածքի առնչությամբ ԲԱՀ-ը առաջին անգամ առաջարկում էր ազգային օջախը հիմնել Կիլիկիայում՝ Ազգերի Լիգայի կողմից հաստատված սահմաններում: Նշվում էր, որ հայկական ազգային օջախը կամ պետք է հատուկ ինքնավար կարգավիճակ ստանա թուրքական պետության շրջանակներում, կամ դառնա ամբողջովին անկախ պետություն: Նշելով, որ անկախ պետության ստեղծման տարբերակն ամենացանկալին է հայերի համար, կոմիտեն հավանական չէր համարում դրա իրականացումը: Որպես այլընտրանք առաջարկվում էր հորդորել հայերին՝ ընդունել թուրքական վերահսկողության ներքո Կիլիկիայում ազգային օջախի ստեղծման տարբերակը՝ երաշ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1064, թ. 1-8:

[2] Махмурян Г., Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг., Бремя Белого Человека, Ереван, 2002, стр. 245-246.

խավորելով, որ Ազգերի Լիգան կհսկի վերջինիս հարաբերությունները Թուրքիայի հետ:

Ինչ վերաբերում է ասիական Թուրքիայի հյուսիս-արևելյան հայկական վիլայեթներին, կոմիտեն հուշագրում առաջարկում էր ընդլայնել Երևանի Հանրապետությունը (Խորհրդային Հայաստանը) Թուրքահայաստանի տարածքների հաշվին (առանց կոնկրետ տարածքներ նշելու), որպեսզի հնարավոր լիներ հողով ապահովել այժմ այնտեղ գտնվող բազմահազար փախստականներին: Կոմիտեն խնդրում էր, որ Ազգերի Լիգան այս հարցի շուրջ բանակցություններ վարի շահագրգիռ կառավարությունների հետ:[1]

Կոմիտեի ոչ բոլոր անդամներ էին համաձայն հուշագրում առաջ քաշված տեսակետի հետ: Մասնավորապես, Ա. Թոյնբին 1922թ. ապրիլի 12-ին իր անունից «Հայկական ազգային օջախ» վերնագրով ևս մեկ հուշագիր ներկայացրեց Ազգերի Լիգային: Այստեղ խոսք էր գնում միայն Երևանի Հանրապետության ընդլայնման մասին: Թոյնբին գրում էր, որ ցանկացած նշանակալից ընդլայնում պետք է արվի Թուրքիայի վերահսկողության տակ գտնվող տարածքների հաշվին և դրանք Հայաստանին պետք է կցվեն բացառապես դիվանագիտական ճանապարհով: Նշվում էր, որ Թուրքիային կարելի է համոզել գնալ այդ քայլին՝ շեշտելով, որ դրանով վերջինս կվերականգնի իր համբավը արևմտյան հասարակական կարծիքի առջև: Միաժամանակ Թոյնբին գրում էր, որ այդ տարածքների զիջումից հետո էլ Թուրքիան կպահպանի իր սահմանը Պարսկաստանի հետ և դրանով կփարատվի թուրքերի կասկածը, որ այդ առաջարկի նպատակն է մեկուսացնել Թուրքիան մահմեդական աշխարհից:[2]

Իր տեսակետները Թոյնբին ներկայացնում է նաև Հայաստան-Ամերիկա ընկերության նախագահ Մոնտգոմերիին ուղարկած նամակում: Թոյնբին, ի պաշտպանություն իր տեսակետի, բերում էր հետևյալ փաստարկները.

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1067, թ. 2-12:
[2] Նույն տեղում, գ. 1068, թ. 9-13:

1. Ենթադրյալ անվտանգությունը, որը տալիս է Կիլիկիայի մոտիկությունը Միջերկրական ծովին, պատրանք է և դա ապացուցվել է 1909թ. և 1918-1922թթ դեպքերի ժամանակ:

2. Կիլիկիայում հայկական ազգային օջախի ստեղծման ճանապարհին առկա են դիվանագիտական անհաղթահարելի դժվարություններ: Միացյալ Նահանգներն այդ ուղղությամբ ոչ մի քայլ չեն ձեռնարկի: Մեծ Բրիտանիան և Իտալիան այդ շրջանը ճանաչել են որպես ֆրանսիական գոտի: Իր հերթին Ֆրանսիան այն հանձնել է Թուրքիային (օգոստոսի 10-ի և 1921թ. հոկտեմբերի 20-ի ֆրանս-թուրքական համաձայնագիրը):

3. Ռուսաստանը միակ տերությունն է, որ շահագրգռված է հայերին պաշտպանելու հարցում և այդ քայլի համար բավարար քանակությամբ ռազմական ուժ ունի: Միայն խորհրդային կառավարությունն է, որ զինադադարից սկսած գործնական որևէ քայլ է իրականացրել հայերի համար:

Հետևաբար, ըստ Թոյնբիի, արևմտյան դիվանագիտության նպատակը պետք է լինի փոխանցել Ալաշկերտը և Վանը Երևանի Հանրապետությանը (Խորհրդային Հայաստանին), (ինչ վերաբերում է Կարսին, ապա ոչ մի հույս չկա, որ թուրքերն ու ռուսները կխախտեն 1921թ. մարտի պայմանագիրը): Դրան հասնելը հեշտ չի լինի, բայց պետք է քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ: Դա երկու տերություններին՝ Ռուսաստանին և Թուրքիային համոզելու խնդիր է:[1]

Նշենք, որ Թոյնբին Հայկական հարցին շատ համառոտ անդրադարձավ նաև 1922թ. հրատարակած «Արևմտյան խնդիրը Հունաստանում և Թուրքիայում» աշխատությունում:

Խոսելով 1915թ. հայերի կոտորածների մասին՝ Թոյնբին գրում էր, որ 1915թ. թուրքական կառավարության հրամանով բանտերից ազատ արձակված հանցագործներից հրոսակախմբեր կազմվեցին, որոնք էլ իրականացրին իրենց բնակավայրերից տեղահանված հայերի կոտորածները:[2]

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1029, թ. 96-97:

[2] Toynbee A., The Western Question in Greece and Turkey, Boston and New-York, 1922, p. 280.

Բրիտանացի հայասերները հայկական խնդրի առնչությամբ դիմեցին նաև Ֆրանսիայի վարչապետ Ռայմոնդ Պուանկարեին: 1922թ. հունիսի 29-ին ուղարկված այդ դիմումում Պուանկարեի ուշադրությունը հրավիրվում էր թուրքերի կողմից քրիստոնյա ժողովուրդների շարունակական հետապնդումների վրա: Նշվում էր, որ Ֆրանսիայի և Անգորայի կառավարության միջև 1921թ. հոկտեմբերի 20-ին կնքված համաձայնագիրը չիրականացրեց այն սպասումները, համաձայն որոնց այն պետք է կանխեր թուրքերի կողմից քրիստոնյա ժողովուրդների ոչնչացման ծրագրի իրականացումը: Նամակի հեղինակները դիմում էին վարչապետին և ընդհանրապես Ֆրանսիային՝ խնդրելով պաշտպանել արդարության պահանջները և ապահովել Փոքր Ասիայի ճնշված քրիստոնյա ժողովուրդների ազատությունը և անվտանգությունը:[1]

Նամակը ստորագրել էին իննսուն անգլիացի գործիչներ, այդ թվում լորդեր, պառլամենտի անդամներ: Ստորագրողների թվում էր նաև ВАС-ի նախագահ Ա. Վիլիամսը:

Միաժամանակ ВАС-ը շարունակում էր որոշակի հարաբերություններ պահպանել Ազգային պատվիրակության հետ: Այսպես, վերջինիս քարտուղար Հ. Բերբերյանը կոմիտեի կազմակերպիչ քարտուղար Լ. Լիզին ուղարկված նամակում խնդրում էր ուղարկել օրիորդ Էթել Թոմփսոնի՝ Փոքր Ասիայում թուրքերի կատարած վայրագությունների մասին զեկույցի ամբողջական տեքստը, նաև խնդրում էր ուղարկել ВАС-ի հրատարակությունների ցուցակը և Հայկական հարցի վերաբերյալ անգլերեն լեզվով գրքերի մատենագիտությունը:[2]

Մենք արդեն նշել ենք, որ ВАС-ը 1919թ. վերջից տարբեր միջոցառումներ կազմակերպելու համար որոշել էր դրամական միջոցներ հավաքել՝ գանձապահ նշանակելով Ն. Բաքսթոնին: Իսկ ո՞վքե՞ր էին գումարներ տրամադրում կոմիտեին: Այդ հարցին որոշակի պատասխան են տալիս կոմիտեի դրամական հաշիվները, որոնք ընդգրկում են 1920թ. մարտի 6-ից մինչև 1922թ. հուլիսի 12-ն ընկած ժամանակահատվածը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1070, թ. 1-6:
[2] Նույն տեղում, գ. 1059, թ. 26:

Կոմիտեին հիմնականում գումարներ էին փոխանցում Մանչեստեր և Լոնդոն քաղաքի հայ համայնքները: Այսպես, 1920թ. մարտի 26-ին Մանչեստրի հայերը տրամադրել էին 1000 ֆունտ ստեռլինգ, որից 546 ֆունտ ստեռլինգը կոմիտեն հետ էր վերադարձրել, ևս 1900 ֆունտ ստեռլինգ նրանք հատկացրել էին մայիսի 20-ին, օգոստոսի 12-ին կոմիտեին 1000 ֆունտ ստեռլինգ էին փոխանցել Լոնդոնի հայերը: 1920թ. ապրիլին 2000 ֆունտ ստեռլինգ էր հատկացրել Պողոս Նուբար փաշան: Որոշակի գումարներ հատկացրել էին նաև կոմիտեի անդամները: 1920թ. հունիսի 11-ին Նոել Բաքսթոնը փոխանցել էր 500 ֆունտ ստեռլինգ: Ավելի համեստ էին կոմիտեին արված փոխանցումները 1921-1922թ. հուլիսն ընկած ժամանակաշրջանում: 1922թ. հուլիսի 12-ին 150 ֆունտ ստեռլինգ էին փոխանցել Գ.յուլբենկյան եղբայրները:[1]

ԲԱՀ-ը իր գործունեությունն ակտիվացրեց Լոզանի կոնֆերանսի նախօրյակին: 1922թ. հոկտեմբերի 10-ին Նոել Բաքսթոնի նախագահությամբ տեղի ունեցած նիստում միաձայն ընդունված բանաձևում նշվում էր, որ կոմիտեի կարծիքով հայերի համար ազգային օջախի հիմնումը և եվրոպական ու ասիական Թուրքիայում բոլոր փոքրամասնությունների համար անվտանգության պայմանների ապահովումը էական պայմաններ են հանդիսանում տարածաշրջանում մշտական խաղաղություն հաստատելու համար: Կոմիտեն պնդում էր, որ որևէ զիջումներ չպետք է արվեն Թուրքիային առանց վերոհիշյալ նպատակների ձեռք բերման:[2]

Կոմիտեն քայլեր ձեռնարկեց նաև բրիտանական կառավարության տեսակետները ճշտելու ուղղությամբ: 1922թ. հոկտեմբերի 16-ին կոմիտեի կազմակերպիչ քարտուղար Լ. Լիզը հանդիպեց բրիտանական արտգործնախարարության աշխատակից Ջ. Ռենդելի հետ: Լիզի նպատակն էր ճշտել, թե կոմիտեի ձեռնարկած որ քայլերը կարժանանան արտգործնախարարության հավանությանը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1059, թ. 23-25:
[2] նույն տեղում, գ. 1074, թ. 6:

Ռենդելը հայտարարեց, որ անիմաստ է աշխատել հայերին որևէ տարածք տրամադրելու ուղղությամբ: Ըստ նրա, ազգային օջախի գաղափարը «մեռած ձի էր» սկսած անցյալ մարտից և էներգիայի վատնում կլինի այն կրկին կյանքի կոչելու փորձը:

Լիզը նշեց, որ եթե Ռուսաստանը մասնակցի առաջիկա բանակցություններին, հնարավոր է Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև սահմանների որոշակի փոփոխման հասնել, օրինակ, վերջինիս զիջվի Ալաշկերտը և Վանը, որպեսզի հնարավոր լինի թուրքահայ փախստականների վերաբնակեցումն այդ շրջաններում:

Ռենդելը հայտարարեց, որ վերջ ի վերջո, Ռուսաստանը կարող է նման քայլ կատարել հայերի համար, բայց ոչ այժմ: Ըստ նրա, ամենագործնական քայլը դա Թուրքիայում փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ապահովումն է, և ամենաարժեքավոր գործը, որ կոմիտեն կարող է իրականացնել, դա անտարբեր հասարակության ուշադրությունն այդ հարցի վրա կենտրոնացնելն է, հասարակական կարծիքի ստեղծումը, որը բանակցությունների ժամանակ կնպաստեր կառավարության ջանքերին:[1]

Ահա այսպիսի նախապատրաստական աշխատանքներից հետո 1922թ. դեկտեմբերին ԲԱՀ-ը դիմում ներկայացրեց Լոզանի կոնֆերանսում բրիտանական պատվիրակության անդամներին: Կոմիտեն շեշտում էր հայերի համար ազգային օջախի ստեղծման անհրաժեշտությունը և համոզմունք էր հայտնում, որ այդ նպատակի իրականացման ամենագործնական տարբերակը Երևանի հայկական հանրապետության տարածքի ընդլայնումն է, որը հնարավորություն կտա վերջինիս հողով ապահովել ոչ միայն իր տարածքում գտնվող փախստական բնակչությանը, այլև այն հազարավոր հայերին, որոնք այժմ ցրված են Սերձավոր Արևելքում և այլ վայրերում: Կոնֆերանսին առաջարկում էր քննարկել այս շրջանակներում ռուսական և թուրքական կառավարությունների հետ համաձայնության հնարավորությունը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 2109, թ. 1-2:

Ինչ վերաբերում է ոչ մահմեդական այն բնակչության պաշտպանության հարցին, որոնք ցանկանում են մնալ Թուրքիայում, առաջարկվում էր փոքրամասնությունների անվտանգության ապահովման խնդիրը դնել Ազգերի Լիգայի ուղղակի վերահսկողության ներքո, որի հետ պետք է խորհրդակցել նախքան համաձայնագրի հոդվածների վերջնական մշակումը: Կոմիտեն պնդում էր, որ այդ ուղղությամբ ընդունված ցանկացած հոդվածի իրականացումը երաշխավորելու համար անհրաժեշտ է Ազգերի Լիգայի ներկայացուցիչ նշանակել Թուրքիայում և այլազգի պաշտոնյաներ կցել թուրքական ժանդարմերիային:[1]

Սա Հայկական հարցի վերաբերյալ BAC-ի ներկայացրած վերջին հուշագիրն էր: Կոմիտեն սպասում էր Լոզանի կոնֆերանսի արդյունքներին, որոնք, ցավոք, չարդարացրին նրա հույսերը: Կոմիտեի առաջ քաշած և ոչ մի պահանջ տեղ չգտավ Լոզանի պայմանագրում:

Պայմանագրի կնքումից հետո BAC-ը ևս մեկ փորձ կատարեց Հայկական հարցի շուրջ որևէ առաջընթացի հասնելու համար: Բրիտանիայում գործող հայանպաստ ընկերությունների միացյալ խորհուրդը հարյուր հազարավոր հայ փախստականների անունից 1923թ. հուլիսին կոչով դիմեց Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Քերզոնին: Այնտեղ նշվում էր, որ այդ կազմակերպությունները չեն կարող մոռանալ դաշնակից տերությունների կողմից հայ ժողովրդին տրված ազատության խոստումները: Շեշտելով այն հանգամանքը, որ այդ խոստումները մնում են չիրականացված՝ խորհուրդը շեշտում էր դրանց իրագործման անհրաժեշտությունը: Ներկայացնելով 750000 հայ փախստականների անմխիթար վիճակը՝ նշվում էր, որ որոշակի փոխհատուցում պետք է տրվի այդ տառապյալ ժողովրդին: Նորին մեծության կառավարությանը խնդրանք էր ներկայացվում՝ առաջարկել Ազգերի Լիգայում բրիտանական ներկայացուցիչներին՝ ասամբլեայի ուշադրությունը հրավիրել մեծ պատերազմի այս զոհերի ծանր պայմանների վրա և նրանց համար որոշակի լուծում ձեռք բերել: Հուշագիրը BAC-ի

[1] Burdeet A., ibid., pp. 865-866.

անունից ստորագրել էին Նոել Բաքսթոնը, Ռոբերտ Նյումենը, Ջոզեֆ Բլիսը, Լեոնարդ Լիզը, Հայաստանի բարեկամներ ընկերության անունից՝ Էդիթ Ֆրեյզերը, Է. Ռայթ Բրուկսը, Լիլ. Սայմինգտոն Մաքլեոդը, Ջորջ Ֆ. Ֆրեյսին, Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդի անունից՝ Հերբերտ Հ. Վորդը, Պատվելի Հարոլդ Բաքսթոնը, Էդվարդ Քարլիլը, Մագդա Քոն: Հուշագիրը ստորագրել էր նաև բրիտանահայկական ընկերությունների միացյալ խորհրդի քարտուղար Ջոն Հարրիսը:[1]

Նույն 1923թ. ԲԱՀ-ը հրատարակեց «Փաստեր Հայաստանի օգտին» վերնագրով երկրորդ գրքույկը: Ինչպես առաջին գրքույկում, այստեղ ևս համառոտ ներկայացվում էին Հայկական հարցի շուրջ տեղի ունեցած իրադարձությունները՝ սկսած Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից մինչև Լոզանի պայմանագրի կնքումը:[2]

Այս գրքույկում կոմիտեն ընդունում էր իր անհաջողությունը՝ սեփական տեսակետները իրականացված տեսնելու գործում: Գրքույկը կոմիտեի վերջին խոշոր հրապարակումն էր Հայկական հարցի վերաբերյալ: Դրանից հետո կոմիտեն որոշ ժամանակ պաշտոնապես շարունակեց իր գոյությունը և, ըստ Ա. Նասիպեանի, վերջնականապես լուծարվեց 1924թ. մայիսին:[3]

Կոմիտեի լուծարման պատճառն ինչպես Լոզանի կոնֆերանսից հետո բրիտանացի հայասերների շրջանում տիրող հուսախաբությունն էր, այնպես էլ, թերևս, կոմիտեի անխոնջ նախագահ Ա. Վիլիամսի մահը նույն 1924թ.:

Կոմիտեի լուծարումից հետո Հայկական հարցում իր գործունեությունը շարունակեց Հ. Բաքսթոնը, որպես Լորդ Քաղաքագլխի ֆոնդի պատվավոր քարտուղար:

Կոմիտեի անդամներից 1915թ. Հայոց ցեղասպանության մասին իր հետագա աշխատություններում անդրադարձավ նաև նշանավոր պատմաբան դարձած Ա. Թոյնբին: Ընդ որում նրա գնահատականները որոշակի փոփոխությունների ենթարկվեցին:

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1074, թ. 18-19:
[2] Նույն տեղում, գ. 1060, թ. 5-12:
[3] Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 49:

Այսպես, իր հիմնարար բնույթ կրող «Պատմության ուսումնասիրություն» տասներկու հատորանոց աշխատության մեջ Թոյնբին, թվում է, փորձում էր բացատրություն գտնել թուրքերի կողմից իրականացված Հայոց ցեղասպանության համար՝ գրելով, որ հայերի նկատմամբ թուրքերի իրականացրածը քիչ բանով էր տարբերվում նրանից, ինչ ռուսներն իրականացրել են Կենտրոնական Ասիայի թրքախոս քոչվոր ժողովուրդների նկատմամբ:[1] Նպատակահարմար չհամարելով մանրամասն անդրադառնալ Թոյնբիի հայացքների հոլովույթին, նշենք միայն, որ 1969թ. Լոնդոնում հրատարակած իր աշխատություններից մեկում Թոյնբին, խոսելով քսաներորդ դարում իրականացված ցեղասպանությունների մասին, գրում էր, որ ինքը բավականին ծեր է հիշելու համար Օսմանյան կայսրության հայ հպատակների հանդեպ իրականացված կոտորածների սարսափները, սակայն ցեղասպանության այդ գործողությունը սիրողական բնույթ էր կրում համեմատած կայսրությունում բնակվող հայերին ոչնչացնելու շատ ավելի հաջող փորձի հետ, որը 1915թ. իրականացվեց «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կողմից, և որի հիմնական հանցագործները Թալաաթն ու Էնվերն էին:[2] Ամերիկահայ Լ. Էթմեկչյանին ուղղված 1966թ. մարտի 16-ի նամակում Թոյնբին ընդունում էր, որ «Հայերի դրությունն Օսմանյան կայսրությունում 1915-1916թթ.» փաստաթղթերի ժողվածուի հրատարակման ժամանակ բրիտանական կառավարության հիմնական շարժառիթը քարոզչական նկատառումներն էին, սակայն գրում էր, որ ժողվածուն իրենից ներկայացնում է իրադարձությունների ճշմարիտ հաշվետվություն:[3]

Քննարկվող ժամանակաշրջանում իրենց գործունեությունը շարունակեցին նաև հայ ժողովրդին մարդասիրական օգնություն տրամադրող բրիտանական հայանպաստ կազմակերպությունները: Դրանցից հիմնականները շարունակում էին մնալ

---

[1] Baliozian A., The Armenian Genocide and the West, Jerusalem, 1984, p. 8.
[2] Toynbee A., Experiences, London, 1969, pp. 241-242.
[3] Etmekjian L., Toynbee, Turks and Armenians, Zoryan Institute, Cambridge, Special Report N 2, MA, 1985., p. 8

Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը և Հայ փախստականների (Լորդ Քաղաքագլխի) ֆոնդը:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Լորդ Քաղաքագլխի ֆոնդի կազմակերպած առաջին խոշոր միջոցառումը Վեսթմինսթերի կենտրոնական սրահում կազմակերպած հավաքույթն էր՝ նվիրված հայ և ասորի քրիստոնյաների ճակատագրին (մենք արդեն նշել ենք, որ այս ֆոնդն իր հավաքած գումարների մինչև 10%-ը օգտագործում էր ազգությամբ ոչ հայ փախստականներին օգնելու համար): Հավաքույթը նախագահում էր Քենթերբերիի արքեպիսկոպոսը, փաստ, որն ինքնին խոսում է այս միջոցառման կարևորության մասին: Միջոցառման նպատակներին իրենց ուղարկած նամակներով աջակցություն էին հայտնել Լորդ Բրայսը, Լոնդոնի Լորդ քաղաքագլուխը, Ա. Վիլիամսը, Թ. Փ. Օ' Քոնորը և այլոք:

Ելույթներ ունեցան Քենթերբերիի արքեպիսկոպոսը, Լոնդոնի Լորդ եպիսկոպոսը, Աբենքի արքեպիսկոպոսը, Լոնդոնի հայկական միացյալ ընկերության նախագահ գնդապետ Գրեգորին և ուրիշներ: Միջոցառումը չսահմանափակվեց միայն օգնության հատկացման կոչերով: Միաձայն ընդունվեց բանաձև, որով կառավարության ուշադրությունն էր հրավիրվում հայ և ասորի ժողովուրդների համար թուրքական գերիշխանությունից ազատ վարչակարգի ստեղծման վրա:[1]

Արդեն 1919թ. մարտին Լորդ Քաղաքագլխի ֆոնդն իր գործունեությունն իրականացնում էր երեք կենտրոններում՝ Ադանայում, Պարտիզակում՝ Իսմիթի շրջակայքում և Երևանում: Երևանում գործում էր որբանոց, որտեղ ապաստան էին գտել հարյուր որբ երեխաներ: Հայաստանի մայրաքաղաքում ֆոնդի ներկայացուցիչներն էին հայազգի երկու անձինք՝ Լևոնը և Սարգիսը:[2]

Ինչ վերաբերում է Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդին, ապա 1919թ. սկզբի դրությամբ նրա կողմից

---

[1] The Plight of Armenian and Assyrian Christians. Report of Public Meeting Organised by the Lord Mayor's Fund, held at Central Hall, Westminster, on December 4, 1918, Issued by the Armenian Bureau, London, 1919, pp. 15-22.

[2] "Ararat", vol. VI, N 64, March-April 1919, p. 363.

հավաքված գումարի չափը հասնում էր 15051 ֆունտ ստեռլինգի: 1919թ. սկզբին ֆոնդը 1000 ֆունտ ստեռլիգ էր ուղարկել՝ Հալեպում և նրա շրջակայքում գտնվող հայ փախստականներին օգնելու համար: Միաժամանակ ֆոնդը վերաբացել էր Ալեքսանդրապոլում դեռևս պատերազմի ընթացքում հիմնված որբանոցը:[1]

1919թ. ամռան ամիսների ընթացքում ֆոնդը 2500 ֆունտ ստեռլինգ գումար փոխանցեց Հայաստանի Հանրապետության վարչապետ Ա. Խատիսյանին, նրա անունով ֆոնդը ուղարկեց նաև 22000 նոր հագուստներ, տարբեր դեղամիջոցներ, զգալի քանակությամբ պահածոներ:

Այս նույն ժամանակաշրջանում Լորդ Քաղաքագլխի ֆոնդի հավաքած ընդհանուր գումարի չափը մոտեցել էր 120000 ֆունտ ստեռլիգի սահմանին: Այս շրջանում ֆոնդը որպես իր ներկայացուցիչ Երևան ուղարկեց մեր կողմից արդեն հիշատակված պրն. Բաքհաուզին՝ այնտեղ աշխատանքների ծավալներն ընդլայնելու համար: Միաժամանակ, Աղանայում ֆոնդն աշխատանքով էր ապահովում շուրջ 1100 տղամարդկանց և կանանց, այստեղ ֆոնդի ներկայացուցիչն էր դոկտոր Քենեդին: Լորդ Քաղաքագլխի ֆոնդը նաև ցավալի կորուստներ էր կրում: Իսմիթում տիֆից մահացավ ֆոնդի ներկայացուցիչներից մեկը՝ օրիորդ Չեփմենը:[2]

1919թ. վերջին Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը կոչով դիմեց Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջին՝ խնդրելով հետաձգել Հայաստանից բրիտանական զորքերի դուրս բերումը:

Իհարկե, այս կոչը չունեցավ և չէր էլ կարող որևէ ազդեցություն ունենալ բրիտանական կառավարության կողմից ընդունվող որոշումների վրա, սակայն բացի կոչերից և դիմումներից, ֆոնդը չուներ կառավարության վրա ներազդելու այլ հնարավորություններ:

Լորդ քաղաքագլխի ֆոնդը շարունակում էր իր աշխատանքներն Աղանայում, Պարտիզակում, և Երևանում: 1919թ. վերջին

---

[1] "Ararat", vol. VI, N 63, January-February 1919., pp. 315-316.
[2] ibid., vol. VI, N 66, Summer Number, 1919, pp. 446-450.

Պարտիզակի որբանոցում ապաստան էին գտել երկու հարյուր տղաներ: Իսմիթում գործում էր աղջիկների որբանոցը: Պարտիզակում ֆոնդի աշխատակցուհի օրիորդ Նյումանը աշխատանք էր տրամադրել բազմաթիվ տղամարդկանց և կանանց: Ֆոնդն այստեղ բացել էր նաև փոքրիկ վիրաբուժարան:[1]

1920թ. սկզբում այս երկու ֆոնդերը շարունակում էին իրենց ակտիվ գործունեությունը: Ապրիլի դրությամբ Լորդ Քաղաքագլխի ֆոնդն իր հիմնական աշխատանքները շարունակում էր իրականացնել երեք վայրերում: Ադանայում շուրջ 2000 մարդ էր աշխատում ֆոնդի արհեստանոցներում, այստեղ ֆոնդի միջոցների հաշվին գործում էր նաև տղաների և աղջիկների որբանոցը, Պարտիզակում գործում էր ֆոնդի որբանոցը և փոքրիկ վիրաբուժարանը, որտեղ միայն հունվար ամսին 1376 մարդ բժշկական օգնություն էր ստացել, Երևանում նախատեսվում էր բարելավվել գործող որբանոցի պայմանները, այդ նպատակով ֆոնդը 1920թ. սկզբին Երևան ուղարկեց իր ևս մեկ ներկայացուցչի՝ Պատվելի Հուբերտ Հերկուրտին:

Ինչ վերաբերում է Հայկական կարմիր խաչի և Փախստականների ֆոնդին, ապա 1920թ. ապրիլի դրությամբ նրա հավաքած գումարների թիվը հասել էր 23660 ֆունտ ստեռլինգի: Ֆոնդը որոշում էր ընդունել Դիլիջանում քառասուն երեխաների համար նախատեսված որբանոց բացել և այդ նպատակի համար ուղարկել էր 600 ֆունտ ստեռլինգ: 1920թ. մարտին ֆոնդը Երևան էր ուղարկել ծանրոցների ևս մեկ խումբ:[2]

Ցավոք, 1920թ. տեղի ունեցած քաղաքական բուռն իրադարձություններն իրենց ազդեցությունը թողեցին նաև այս կազմակերպությունների գործունեության վրա: Դրանցից առաջինը կապված էր Կիլիկիայում 1920թ. փետրվարից քեմալական ուժերի ձեռնարկած գործողությունների հետ, որոնք ստիպեցին Լորդ Քաղաքագլխի ֆոնդին քայլեր ձեռնարկել՝ Ադանայում իր ծավալած գործունեության սահմանափակման ուղղությամբ: Խոսքն առաջին հերթին վերաբերում էր Կիլիկիայում ֆոնդի

---

[1] "Ararat", vol. VI, N 68, Nov. Dec. 1919, pp. 536-537, 597-601.
[2] ibid., vol. VII, N 69, April 1920, pp. 64-67.

միջոցների հաշվին պահվող որբանոցի ճակատագրին: Ստեղծված պայմաններում ֆոնդը քննարկում էր գործողությունների երկու տարբերակ՝ որբերին տեղափոխել Կիպրոս կամ Կ. Պոլիս: Այս խնդիրը քննարկվեց նաև BAC-ի 1920թ. մայիսի 4-ի նիստում:

Նախագահ Վիլիամսը հաղորդեց, որ իրենք տեղեկացվել են այն մասին, որ կարող է անհրաժեշտ դառնալ որբերի տեղափոխումը, որ Ֆրանսիան մերժում է պատասխանատվություն ստանձնել Ադանայի համար, և նույնիսկ խոսք է գնում ամբողջ Կիլիկիան և հյուսիսային Սիրիան դատարկելու մասին: Այդ կապակցությամբ Լորդ Քաղաքագլխի ֆոնդի կոմիտեի մի շարք անդամներ գնացել են գաղութների նախարարություն և վերջի-վերջո թույլտվություն են ստացել որբերին Կիպրոս տեղափոխելու հարցում: Վիլիամսն հայտարարեց, որ անձամբ այցելել է Լորդ Միլներին, և վերջինս ասել է, որ չի կարող ստանձնել մերժման պատասխանատվությունը, չնայած Կիպրոսի գերագույն կոմիսարը պնդել է, որ որբերի տեղափոխումը Կիպրոս նպատակահարմար չէ, և որ Լորդ Քաղաքագլխի ֆոնդի 10000 ֆունտ ստեռլինգը բավարար կլինի միայն շատ կարճ ժամանակի համար:

Վիլիամսը ֆոնդի անունից պարտավորություն էր ստանձնել վճարել այնքան, որքան անհրաժեշտ է, և ի վերջո ձեռք էր բերել այդ թույտվությունը: Նույն նիստի ընթացքում նա տեղեկացրեց, որ նոր հեռագիր է ստացվել դոկտոր Քենեդիից, որում նշվում էր, որ որբերին կարելի է տեղափոխել Կ. Պոլիս:[1]

Ֆոնդն ավելի հակված էր հայ որբերին Կիլիկիայից Կիպրոս տեղափոխել: Այդ մասին է վկայում նաև Զ. Եսայանի նամակը դոկտոր Քենեդիին: Նշենք, որ Եսայանը հայ ազգային պատվիրակության որոշմամբ 1920թ. գարնանը մեկնել էր Կիլիկիա՝ հայ կրթական հաստատությունների և որբանոցների ճակատագրով զբաղվելու համար: Դոկտոր Քենեդիին 1920թ. հունիսի 1-ին Մերսինից ուղարկված նամակում Եսայանը գրում էր, որ իրեն հայտնի է դարձել որբերին Կիպրոս տեղափոխելու որոշման մասին: Նա նաև իր երախտագիտությունն էր հայտ-

[1] Rhodes House Library, BAC minutes, quoted May 4, 1920.

նում Լորդ Քաղաքագլխի ֆոնդին՝ Կիպրոս տեղափոխվող որբերի խնամքն ստանձնելու համար:[1]

Սակայն որբերին Կիպրոս տեղափոխելու որոշումը վերջնական չէր: 1920թ. հուլիսի 27-ին Հարոլդ Բաքսթոնը Պողոս Նուբար փաշային ուղղված նամակում գրում էր, որ այդ հարցն ուշադիր քննելուց հետո որոշել են, որ Կիպրոսը ոչ միայն ամենամոտ, այլև ամենաապահով և ամենաառողջարար ապաստարանն է այս երեխաների համար: Միաժամանակ նշվում էր, որ կոմիտեն պատրաստ է քննարկել երեխաներին Կ. Պոլիս տեղափոխելու հնարավորությունը:[2] Ի վերջո, Ադանայից որբերը տեղափոխվեցին Կիպրոս, իսկ այնտեղից էլ 1921թ. ամռանը Կ. Պոլիս, որտեղ ֆոնդը նրանց համար ևս մեկ որբանոց բացեց:

Այս ֆոնդերը չէին սահմանափակվում միայն գումարների հավաքմամբ և դրանք տարբեր նպատակների համար ծախսելով: Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդի պատվավոր քարտուղար Է. Ռոբինսոնը 1918թ. հրատարակեց «Հայերը» խորագրով մի փոքրիկ գրքույկ: Այստեղ նա շատ համառոտ ներկայացնում էր հայ ժողովրդի և հայ եկեղեցու պատմությունը՝ այն սկսելով հնագույն ժամանակներից, և անդրադառնում էր 1915թ. հայկական Հոլոքոստին՝, նշելով, որ դրան զոհ են գնացել ավելի քան մեկ միլիոն հայեր:[3]

Լորդ Քաղաքագլխի ֆոնդի պատվավոր քարտուղար Հ. Բաքսթոնը 1919թ. հրատարակեց «Հայոց եկեղեցին» գրքույկը: Այստեղ նա հակիրճ ներկայացնում էր հայ եկեղեցու պատմությունը և կառուցվածքը՝ սկսած Գրիգոր Լուսավորչի ժամանակներից մինչև ներկա շրջանը:[4]

---

[1] Սահակյան Ռ., Զապել Եսայանի նամակները Կիլիկիայից, Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 1968, թիվ 2, էջ 50-51, տես նաև Զապել Եսայան, Նամակներ, կազմեց և ծանոթագրեց Ա. Ավետիսյան, Երևան, 1977, էջ 169-171:

[2] ՀԱԱ, ֆ. 430. ց. 1, գ. 333, թ. 8:

[3] Robinson E., The Armenians, Issued by the Armenian Bureau, London, 1918. pp. 3-9.

[4] Buxton H., The Armenian Church, Issued by the Armenian Bureau, London. 1919, pp. 3-14.

Այնուհետև նա անդրադառնում էր վերջին երեք տարիների ընթացքում հայ եկեղեցուն հասցված ծանր հարվածներին՝ գրելով հարյուրավոր եկեղեցիների պղծման, բազմաթիվ հոգևորականների սպանության մասին, և նշում էր, որ հայոց եկեղեցիով պետք է հպարտանա ողջ քրիստոնյա աշխարհը, քանի որ մեկուսացած, իսկ երբեմն էլ լքված լինելով Արևմուտքի քրիստոնյա ազգերի կողմից՝ այն տասնվեց դար անընդմեջ պահել է անմահ հավատի և հույսի դրոշակը:[1]

1919թ. հունվարին Բաքսթոնը "The East and the West" պարբերականում հրապարակեց «Հայաստանը և կարգավորումը» հոդվածը: Համառոտ ներկայացնելով հայ փախստականների ծանր դրությունը և 1915թ. սկսած Լորդ քաղաքագլխի ֆոնդի գործունեությունը նրանց օգնելու ուղղությամբ՝ նա այնուհետև անդրադառնում էր Հայաստանի ապագայի խնդրին: Բաքսթոնը նշում էր, որ արդարությունը պահանջում է ինքնավարություն շնորհել յոթ հայկական վիլայեթներին և Կիլիկիային, որը հավասար իրավունքներ կստեղծեր այնտեղ ապրող քրիստոնյաների և մահմեդականների համար:

Բաքսթոնն առանձնացնում էր այդ շրջանների վերականգնման երեք փուլեր.

1. անմիջական օգնության հասցնում սովահար բնակչությանը:
2. քաղաքական կարգավորում:
3. քաղաքական և ֆինանսական օգնության տրամադրում:[2]

Հայաստանում գտնվող Լորդ Քաղաքագլխի ֆոնդի ներկայացուցիչներն երկրում տիրող իրավիճակի մասին տեղեկություններ էին փոխանցում Լոնդոնի իրենց կենտրոնակայանին: Պատվելի Հերկուրտը, 1920թ. հունիսի 28-ին ուղարկված զեկուցագրում անդրադառնալով մայիսյան ապստամբության պատճառներին, գրում էր, որ դրանցից մեկը բնակչության մեծ մասի և բանակի հիասթափությունն էր կառավարությունից, որի պատճառը պարենամթերքի սուր պակասն էր:

---

[1] Buxton H., ibid., pp. 14-16.

[2] Buxton H., Armenia and the Settlement, reprinted from "The East and the West" January 1919, Issued by the Armenian Bureau, London, 1919, pp. 7-9.

Այլ պատճառների թվում նշվում էին հայկական բանակի վատ զինվածությունը, երկրի սահմանների հաստատման ուշացումը, ամերիկացիների հանկարծակի հեռանալը Հայաստանից, դաշնակիցների կողմից ռազմական օգնություն ցույց չտալը և այլն: Խոսելով երկրի ապագայի մասին՝ Հերկուրտը գրում էր, որ հայերը պահպանել են իրենց կապվածության զգացումը Ռուսաստանի հետ, և անհնար կլինի համոզել կռվել հայ զինվորին իսկական ռուսների դեմ:[1]

Այս տեղեկություններին Լոնդոնում զգալի ուշադրություն էին դարձնում՝ դրանք համարելով այնտեղ տիրող իրավիճակի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվություն: Պատահական չէ, որ BAC-ի քարոզչության ենթակոմիտեի 1920թ. հունիսի 15-ի նիստում որոշվեց նամակ գրել Լորդ Քաղաքագլխի ֆոնդին՝ առաջարկելով ավելի սերտ հարաբերություններ հաստատել կոմիտեի հետ,[2] իսկ Հերկուրտի ավելի ուշ ուղարկված մեկ այլ հեռագիր, որը նույնպես վերաբերվում էր Հայաստանում ստեղծված իրավիճակին, քննարկվեց BAC-ի 1920թ. դեկտեմբերի 13-ի նիստում:[3]

Համառոտ ներկայացնենք Լորդ Քաղաքագլխի ֆոնդի 1921-1923թթ. ծավալած գործունեությունը: Հայաստանի խորհրդայնացումից հետո ֆոնդը չդադարեցրեց իր գործունեությունն այնտեղ: Ճիշտ է, 1920թ. նոյեմբերին, ընթացող հայ-թուրքական պատերազմի պայմաններում, ֆոնդի Հայաստանի ներկայացուցիչ Հ. Հերկուրտը Երևանից մեկնեց Թիֆլիս՝ ֆոնդի միջոցներով պահվող որբանոցը և հիվանդանոցը թողնելով Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի ներկայացուցիչ բժիշկ Աշերին: Սակայն ֆոնդն իր ուշադրության կենտրոնում էր պահում Հայաստանում ստեղծված իրավիճակը՝ տեղեկություններ ստանալու համար դիմելով նաև արտգործնախարարությանը: 1921թ. փետրվարի 11-ին արտգործնախարարության աշխատակից Դ. Օսբորնը, ի պատասխան

---

[1] Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 158-159:

[2] Rhodes House Library, Propaganda Sub-Committee minutes, quoted June 15, 1920.

[3] Rhodes House Library, BAC minutes, quoted December 13, 1920.

ֆոնդի կատարած հարցումի, ներկայացնում էր իր ունեցած տեղեկությունները Հայաստանում փսխստականների իրավիճակի և հայ բոլշևիկների՝ օտարերկրյա նպաստամատույց կազմակերպությունների հանդեպ ունեցած վերաբերմունքի մասին:[1]

Ֆոնդն իր աշխատանքները Հայաստանում վերսկսեց 1921թ. ամռանը, երբ Հերկուրտը կրկին վերադարձավ Երևան: 1921թ. օգոստոսի 19-ին ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմ Ասք. Մռավյանը սկզբունքային համաձայնություն տվեց ֆոնդի գործունեությունը Հայաստանում վերսկսելու վերաբերյալ:

Վերջինս այս ժամանակահատվածում Երևանում պահում էր երկու որբանոց և բացի այդ երկու ապաստարան նույնպես երեխաների համար: Ֆոնդի կողմից խնամվող որբերի թիվը 1923թ. հասնում էր հազարի: Բացի այդ, այն Երևանում և մի շարք այլ վայրերում (Աշտարակ, Բաշ-Գառնի, Ղամարլու) ուներ սննդակայաններ, որտեղ մոտ 5800 երեխաների և գաղթականների ճաշ և կես ֆունտ հաց էր տրվում: Ֆոնդն ուներ նաև կարի, կոշիկի արհեստանոցներ, որտեղ աշխատում էին մեծահասակ որբերը և գաղթականները: Ֆոնդը 1922թ. ընթացքում արտասահմանից Հայաստան ներմուծեց 65 վագոն զանազան ապրանքներ:[2]

1921թ. վերջին տեղում իրավիճակն ուսումնասիրելու նպատակով տարածաշրջան ժամանեց ֆոնդի պատվավոր քարտուղար Հ. Բաքսթոնը: Բացի Հայաստանից, նա եղավ նաև Վրաստանում ու Ադրբեջանում և մանրամասն զեկույց կազմեց երեք երկրներում տիրող իրավիճակի վերաբերյալ, որը ներկայացվեց նաև Ֆ. Նանսենին:[3]

Բաքսթոնը Հայաստանում գտնվելիս մշտապես կապի մեջ էր Ֆոնդի լոնդոնյան գրասենյակի հետ՝ ուղարկած հեռագրերում ներկայացնելով երկրում տիրող իրավիճակը:[4]

---

[1] ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 2512, թ. 1-2:

[2] Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան, Երևան, 1975, էջ 101-102:

[3] Պողոսյան Բ., Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում ըստ վավերագրերի, էջ 51-62:

[4] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1274, թ. 19:

1922թ. հունվարի 15-ին Ա. Վիլիամսին գրած նամակում Բաքսթոնը գրում էր, որ Հայաստանում գտնվում են մոտավորապես 400000 փախստականներ, և եթե նրանց բնակեցնելու համար բավարար տարածք չգտնվի, երկիրը կշարունակի լինել որպես շարունակական բեռ Ռուսաստանի և մշտական մուրացիկ Եվրոպայի համար: Գրելով հայերի համար ազգային օջախի ձեռք բերման կարևորության մասին՝ Բաքսթոնը որպես այլընտրանք առաջարկում էր ընդարձակել Հայաստանի Հանրապետությունը և նրա մեջ ընդգրկել ոչ միայն Կարսը և Սարիղամիշը, այլև Ալաշկերտն ու Վանը:[1]

Նույն տեսակետները նա ներկայացնում էր նաև 1922թ. ապրիլին Գ. Նորատունկյանին ուղղված նամակում, որը վերնագրել էր «Հայաստանի ընդարձակման տնտեսական հիմնավորումները»:[2] Բաքսթոնն իր այս առաքելության մանրամասները և սեփական տեսակետներն ընդհանրապես Անդրկովկասի և, մասնավորապես, Հայաստանի հնարավոր ապագայի, տարածաշրջանում Ռուսաստանի խաղացած դերի մասին շարադրեց 1926թ. Լոնդոնում հրատարակած իր փոքրածավալ գրքում:[3]

1921-1923թթ. Լորդ Քաղաքագլխի ֆոնդը չէր սահմանափակվում միայն Հայաստանում ծավալած գործունեությամբ: Մենք արդեն նշել ենք, որ Ադանայից ֆոնդն իր հոգածության ներքո գտնվող հայ որբ երեխաներին տեղափոխել էր Կիպրոս, իսկ 1921թ. ամռանը՝ Կ.Պոլիս: Այստեղ գործող որբանոցի մասին մանրամասն տեղեկություններ են բերվում 1922թ. հուլիսին ֆոնդի հրատարակած «Կ. Պոլսի շրջակայքում գործող բրիտանական ապաստարաններ հայ երեխաների համար» գրքույկում: Այս հաստատության գլխավոր տնօրենը դոկտոր Քենեդին էր, մինչ այդ Ադանայում ֆոնդի ներկայացուցիչը:

Գրքույկում նշվում էր, որ այս հաստատությունում պահվել է մոտ 1000 երեխա, որոնց մեծ մասը տեղափոխվել է Կիլիկիայից նախ Կիպրոս, իսկ այնուհետև Կ. Պոլիս: 1922թ. հուլիսի

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1062, թ. 1-2:
[2] Նույն տեղում, գ. 1274, թ. 34:
[3] Buxton H. Trans-Caucasia, London ,1926, pp. 55-56, 63-64, 90-96.

դրությամբ այստեղ ապաստան էին գտել 600 երեխաներ, մնացածին վերցրել էին ազգականները կամ ընկերները: Նշենք, որ բոլոր երեխաները հաճախում էին դպրոց, որտեղ դասավանդումն իրականացնում էին հայ ուսուցիչները, բացի այդ տղաների և աղջիկների համար տարբեր արհեստների ուսուցում էր կազմակերպվել: Կոչ էր արվում հավելյալ օգնություն ցուցաբերել Լորդ Քաղաքագլխի ֆոնդին, որպեսզի վերջինս կարողանար ապահովել այս հաստատության գործունեությունն առաջիկա հինգ տարիների ընթացքում:[1]

Ֆոնդը 1922թ. հրատարակեց մեկ այլ գրքույկ ևս, որտեղ ներկայացվում էր Խորհրդային Հայաստանում ապաստան գտած փախստականների ծանր դրությունը, Կ. Պոլսում և Երևանում ֆոնդի ձեռնարկած աշխատանքները: Այստեղ նույնպես կոչ էր արվում ֆոնդին հավելյալ օգնություն տրամադրել:[2]

Ցավոք, Կ. Պոլսում ֆոնդի միջոցներով պահվող հաստատությունների գործունեությունը բավականին կարճ տևեց: 1922թ. վերջին Ֆոնդը հարկադրված էր այնտեղ բնակվող երեխաներին այլ վայրեր տեղափոխելու որոշում կայացնել: Այդ մասին նշվում է Հ. Բաքսթոնի՝ Մեծ Բրիտանիայի արտգործնախարարին ուղարկված նոյեմբերի 11-ի նամակում:

Բաքսթոնը գրում էր, որ ֆոնդը որոշել է էվակուացնել Կ. Պոլսում իր հոգածության տակ գտնվող հազար հայ որբ երեխաներին և ցանկանում է նրանց տեղավորել Պոլսից ոչ հեռու գտնվող վայրերում՝ Կիպրոսում, Պաղեստինում կամ Մալթայում:[3]

Ի վերջո, որոշում ընդունվեց հայ երեխաներին տեղափոխել Կորֆու կղզի: Սակայն Կորֆուն ևս հայ որբերի համար մշտական ապաստան չդարձավ: Արդեն 1923թ. հիսուն երեխաներ ֆոնդի կողմից ուղարկվեցին Կանադա "The Armenian Relief Fund of Canada"-ի աջակցությամբ: Այդ մասին ֆոնդի ներկայացուցիչ Քարլիլը Անգլիայում հայ ազգային պատվիրակության ներկայացուցիչ Ջ. Մալքոլմին տեղեկացրեց 1923թ.

---

[1] ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 2107, թ. 5-8:
[2] նույն տեղում, թ. 9-10:
[3] նույն տեղում, թ. 26-27:

հունիսի 22-ին ուղարկված նամակում:[1]

Հետագա իրադարձությունները ստիպեցին ֆոնդին փակել Կորֆուում գործող որբանոցը և բոլոր որբերին տեղափոխել Կանադա:[2] Այն փաստի մասին, որ արդեն 1925թ. Լորդ Քաղաքագլխի ֆոնդը դադարեցրել էր գործունեությունը Կորֆու կղզում, իր գրքում նշում է նաև Ջոզեֆ Բրթը:[3]

Խոսելով 1921-1923թթ. Լորդ Քաղաքագլխի ֆոնդի իրականացրած աշխատանքների մասին՝ նշենք, որ այն օգնություն տրամադրեց նաև Միջագետքից Հայաստան տեղափոխված հայ փախստականներին:

Ընդ որում այս նպատակի համար ֆոնդը միջոցներ ստացավ նաև բրիտանական պետական գանձարանից: Գ. Նորատունկյանին ուղղված 1922թ. հունիսի 9-ի նամակում Հ. Բաքսթոնը գրում էր, որ իրենց համար շատ դժվար կլինի օգնել դեռևս Միջագետքում գտնվող հայ փախստականներին, նա տեղեկացնում էր, որ բրիտանական կառավարությունն իրենց 35000 ֆունտ ստեռլինգ է տրամադրել՝ Իրաքում գտնվող փախստականներին օգնելու և վերջիններիս Անդրկովկաս տեղափոխելու համար:

Մարտի 30-ին կառավարությունը հավելյալ 10000 ֆունտ ստեռլինգի դրամաշնորհ է տվել ֆոնդին այն պայմանով, որ վերջինս այլևս որևէ պահանջ չներկայացնի կառավարությանը Իրաքի փախստականների անունից:[4]

Ինչպիսին էր Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդի գործունեությունը 1921-1923թթ.: Այն շարունակում էր օգնության տրամադրումը Խորհրդային Հայաստանում ապաստան գտած արևմտահայ փախստականներին:

Այդ մասին է վկայում Իսկուհի Խրիմյանի 1922թ. հունվարի 28-ին Թիֆլիսից Է. Ռոբինսոնին ուղարկված նամակը: Նա տեղեկացնում էր, որ Ռոբինսոնի ջանքերով հիմնված վանուհիների միության արհեստանոցը Թիֆլիսից տեղափոխվել է Հայաս-

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1078, թ. 7-8:

[2] Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965, կազմեց Ահարոնեան Գ., Պէյրութ, 1965, էջ 948:

[3] Burtt J., The People of Ararat, London, 1926, pp. 97-98.

[4] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1057, թ. 15-16:

տան և կանոնավոր կերպով շարունակում է աշխատանքները՝ բազմաթիվ այրի կանանց իրենց ընտանիքների համար ապրուստ հայթայթելու հնարավորություն տալով:[1]

Ֆոնդն իր գործունեության համար անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու ակնկալիքով շարունակում էր դիմել բրիտանական հասարակությանը: 1921թ. հոկտեմբերին նա անգլիացիներին ուղղված կոչ-թերթիկ հրատարակեց, որում ներկայացվում էր Խորհրդային Հայաստանում գտնվող փախստականների անմխիթար վիճակը, նշվում էր հսկայական քանակությամբ սննդի և հագուստի պակասի մասին: Շեշտվում էր, որ ֆոնդի գործունեությունն ամբողջովին կախված է կամավոր մուծումներից:[2]

Ֆոնդի ծավալած գործունեության մասին զգալի տեղեկություններ կան ֆոնդի 1922թ. տարեկան թվով ութերորդ զեկույցում: Համաձայն դրա, 1922թ. ֆոնդը ստացել էր 1962 ֆունտ, 7 շիլինգ, 3 պենս նվիրատվություններ, որով ֆոնդի հավաքած ընդհանուր գումարի չափը գրեթե հասել էր 30000 ֆունտ ստեռլինգի: 1922թ. ստացված գումարի զգալի մասը ուղարկվել էր Երևան, այնտեղ գործող արհեստանոցների համար: Երևան էին ուղարկվել նաև հագուստներ և դեղամիջոցներ, մասնավորապես խինին: Որոշակի գումարներ էին ուղարկվել նաև Աթենքի և Սոֆիայի հայկական նպաստամատույց կոմիտեներին:[3]

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ ֆոնդի գործունեության ևս մեկ կողմին: 1920թ. դեկտեմբերի 15-ին Ազգերի Լիգայի ասամբլեայի միաձայն ընդունված բանաձևի համաձայն երեք հոգուց բաղկացած հանձնաժողով էր ստեղծվելու, որը զբաղվելու էր ստրկության մատնված հայ կանանց և երեխաների խնդրով: 1921թ. փետրվարի 22-ին Ազգերի Լիգայի խորհուրդը Փարիզում անցկացված նիստում քննարկեց այդ հանձնաժողովի ստեղծման հարցը:

Կապված Մերձավոր Արևելքի ռազմական և քաղաքական անկայուն իրավիճակի հետ՝ առաջարկվեց հանձնաժողով

---

[1] ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 2470, թ. 1:
[2] նույն տեղում, ֆ. 430, ց. 1, գ. 1052, թ. 3:
[3] Զեկույցն ամբողջությամբ տես՝ ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 2111, թ. 13-24:

ստեղծելու փոխարեն խնդրել այդ հարցով հետաքրքրվող և արդեն տարածաշրջանում գտնվող երեք անձանց, հավաքել այդ հարցի կապակցությամբ եղած ողջ տեղեկությունները: Ի վերջո, այդ խնդիրն իրականացնելու պարտականությունը դրվեց Էմմա Քուշմանի, մեզ արդեն ծանոթ Քենեդիի և Կարեն Յեպեսի վրա:[1]

Այս եռյակը Ազգերի Լիգայի 1921թ. սեպտեմբերի 21-ի նիստում ներկայացրեց իր հետազոտության արդյունքները, որոնց համաձայն զինադադարին հաջորդող շրջանում մահմեդական գերությունից ազատագրվել և որբանոցներում էին տեղավորվել 90000 հայ որբեր, սակայն շուրջ 73000 երեխաներ և հազարավոր կանայք ու աղջիկներ դեռևս գտնվում էին գերության մեջ: Ազգերի Լիգան իր սեպտեմբերի 23-ի նիստում որոշում ընդունեց սկսել նրանց գերությունից ազատելու աշխատանքները՝ դրանց իրականացումը հանձնարարելով վերոհիշյալ երեք անձանց: Նրանցից Կ. Յեպեն, որը Յ. Լեփսիուսի երկարամյա աշխատակցուհին էր, իր գործունեության կենտրոն ընտրեց Հալեպը: Հաստատվելով այնտեղ 1922թ. գարնանից՝ Յեպեն հիմնեց այսպես կոչված «փոխհատականների կացարան», որտեղ ժամանակավոր բնակություն էին հաստատում թուրքական գերությունից ազատագրված հայազգի անձինք:[2]

Ահա հենց Յեպեի հիմնած այս կացարանին որոշակի օգնություն ցուցաբերեց Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը: Այսպես, երբ 1923թ. ապաստարանն այրվեց, ֆոնդը միջոցներ տրամադրեց ժամանակավոր կացարան ստեղծելու համար, որտեղ նվազագույնը 200 մարդ կարող էր բնակվել:[3]

Ահա այսպիսին էր հայ ժողովրդին մարդասիրական օգնություն տրամադրող բրիտանական կազմակերպությունների գործունեությունը 1918-1923թթ.:

---

[1] Shemmassian V., The League of Nations and the Reclamation of Armenian Genocide Survivors, in Looking Backward, Moving Forward, editor R. Hovannisian, New Brunswick: Transaction Publishers, 2003, pp. 83-84.

[2] Հայրունի Ա, նշվ. աշխ., էջ 106-109:

[3] Shemmassian V., ibid., pp. 95-96.

Ավելացնենք, որ նրանք իրենց գործունեությունը շարունակեցին նաև հետագա տարիների ընթացքում: 1930թ. հունվարի 9-ին Լորդ Քաղաքագլխի ֆոնդը հանդես եկավ «Նոր հայկական արտագաղթը» կոչով: Այստեղ նշվում էր, որ սկսած անցյալ աշնանից հազարավոր հայեր և այլ քրիստոնյաներ հարկադրված են թողնել Անատոլիայում գտնվող իրենց տները և անցնել սիրիական սահմանը: Այդ Փախստականները զրկված են գոյության տարրական միջոցներից: Նշվում էր, որ Հարոլդ Բաքսթոնը այցելել է Սիրիա և ականատես է դարձել նրանց տառապանքներին: Կոչ էր արվում բոլորին օգնություն հատկացնել այդ փախստականներին: Թերևս հետաքրքիր կլինի նշել, որ ֆոնդի նախագահ շարունակում էր մնալ Լոնդոնի քաղաքագլուխը, գործադիր կոմիտեի նախագահի պաշտոնը մահացած Ա. Վիլիամսի փոխարեն զբաղեցնում էր Ա. Բաքհաուզը, իսկ պատվավոր քարտուղար շարունակում էր մնալ Հ. Բաքսթոնը:[1]

Իր գործունեությունը շարունակեց նաև Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը: 1928թ. մարտի 28-ին "West Sussex Gazette" պարբերականում հրապարակվեց հոդված Է. Ռոբինսոնի մահվան մասին: Այստեղ բերվում էր Ռոբինսոնի մասին "Times"-ի 1928թ. մարտի 5-ի համարում տպագրված հոդվածը, որտեղ նշվում էր, որ հայ փախստականների համար նրա ֆոնդի հավաքած գումարը հասել է 50000 ֆունտ ստեռլինգի:[2] Ինչպես տեսնում ենք, 1922թ. վերջից ֆոնդի հավաքած գումարը 30000-ից հասել էր 50000 ֆունտ ստեռլինգի:

Իր գործունեությունը շարունակեց նաև «Հայաստանի բարեկամներ» ընկերությունը: Այդ մասին է վկայում 1937թ. մարտին ընկերության հրապարակած կոչը: Այստեղ նշվում էր, որ Սիրիայում գտնվում են շուրջ 100000 հայեր, որոնց մեծ մասը խիստ կարիքավոր է: Տեղեկացվում էր, որ ավելի քան 200 հայ տղաներ և աղջիկներ են պահվում ընկերության Բեյրութի և Շեմշանի որբանոցներում: Կոչը ստորագրել էր ընկերության պատվավոր քարտուղար Մ. Ռեդգրեյվը:[3]

---

[1] Burdett A., ibid., pp. 943-944.
[2] ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 2247, թ. 1:
[3] նույն տեղում, գ. 2107, թ. 13-14:

Վերջաբան

1914-1923թթ. մի շարք երկրներում ծավալված հայանպաստ շարժման մեջ իր ուրույն տեղն է գրավում Մեծ Բրիտանիայում առկա հայանպաստ շարժումը՝ հանձինս ինչպես առանձին անհատների, այնպես էլ տարբեր կազմակերպությունների գործունեության:

Մեծ Բրիտանիայում ծավալված հայանպաստ շարժման նախակարապետը Ջեյմս Բրայսն էր: Իր գործունեությունն սկսելով 1877թ., Բրայսը հայանպաստ շարժման ամենակարկառուն դեմքն էր ընդհուպ մինչև իր մահը՝ 1922թ.: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մի շարք աղբյուրներից տեղեկություններ ստանալով Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող զարհուրելի իրադարձությունների մասին Բրայսն ակտիվ քայլեր ձեռնարկեց դրանց մասին թե՛ բրիտանական ու ամերիկյան հասարակությանը և թե՛ բրիտանական իշխանություններին տեղյակ պահելու ուղղությամբ՝ այդ նպատակի համար օգտագործելով ինչպես Լորդերի պալատի ամբիոնը, այնպես էլ Միացյալ Նահանգներում իր ունեցած կապերը: Անշուշտ Բրայսը հասկանում էր, որ հայերի կոտորածների մասին տեղեկատվության տարածումը լուրջ հարված է հասցնելու Թուրքիայի և Գերմանիայի միջազգային հեղինակությանը, հանգամանք, որը լիովին համապատասխանում էր Մեծ Բրիտանիայի շահերին: Իհարկե, միամիտ կլիներ ենթադրել, որ պետական մի շարք կարևոր պաշտոններ զբաղեցրած և Լորդերի պալատի անդամ հանդիսացող անձնավորությունն իր քայլերում կարող էր անտեսել սեփական երկրի շահերը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Բրայսի գործունեության ամենազգլխավոր ձեռքբերում պետք է համարել «Հայերի դրությունն Օսմանյան կայսրությունում 1915-1916թթ.» ժողովածուի կազմումը, որը, չնայած այն արժեզրկելու թուրքական պատմագրության բոլոր փորձերին, հանդիսանում է Հայոց ցեղասպանությունը փաստող կարևոր և վավերական աղբյուրներից մեկը:

Բրայսն այս շրջանում ակտիվորեն մասնակցում էր նաև հա-

յանպաստ տարբեր կազմակերպությունների գործունեությանը՝ զգալի ավանդ ներդնելով արևմտահայ փախստականների օգնության համար նշանակալի միջոցների հավաքագրմանը:

1914-1923թթ. բրիտանական հայանպաստ կազմակերպություններն աշխատանքներ էին ծավալել երկու հիմնական ուղղություններով. քաղաքական գործունեություն և մարդասիրական օգնության տրամադրում: Սկսած 1913թ. քաղաքական հարթության վրա գործող բրիտանական հայանպաստ կարևորագույն կազմակերպությունը Բրիտանիա-Հայաստան կոմիտեն էր:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հայաստանի ապագայի խնդրում կոմիտեի տեսակետներն զգալի փոփոխությունների ենթարկվեցին. Օսմանյան կայսրության հայկական նահանգներում ինքնավարության ստեղծման անհնարինությունից մինչև Արևմտյան Հայաստանի վիլայեթներն և Կիլիկիան ընդգրկող ինքնավար Հայաստանի ստեղծման գաղափարը, որը պետք է դրվեր տերությունների (մասնավորապես ԱՄՆ-ի) հովանավորության ներքո՝ ապագայում անկախություն ստանալու հեռանկարով: Այդ փոփոխությունները ժամանակաշրջանի քաղաքական վայրիվերումների արդյունք էին: Քաղաքական իրավիճակի փոփոխությունները մշտապես գտնվում էին Բրիտանիա-Հայաստան կոմիտեի ուշադրության կենտրոնում և վերջինիս գործունեության վրա ազդող կարևոր գործոններից մեկն էին:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին բրիտանական հայանպաստ կազմակերպություններն զգալի աշխատանք կատարեցին հայ ժողովրդին մարդասիրական օգնություն տրամադրելու խնդրում: Այդ աշխատանքներում նրանք ակտիվ համագործակցություն ծավալեցին տարածաշրջանում գործող հայկական բարեգործական տարբեր կազմակերպությունների հետ: Իրականացվող քայլերի հանդեպ տեղում հսկողություն սահմանելու նպատակով մարդասիրական օգնություն տրամադրող ամենախոշոր բրիտանական կազմակերպությունը՝ Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդը հատուկ առաքելություն ուղարկեց Կովկաս:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո բրիտանացի հայասերները շարունակեցին իրենց ակտիվ գործունեությունը: Լորդ Ջեյմս Բրայսը հանդես եկավ Արևմտյան Հայաստանի վիլայեթների, Կիլիկիայի և Հայաստանի Հանրապետության միավորմամբ անկախ հայկական պետության ստեղծման օգտին, որը մի որոշակի ժամանակահատված պետք է գտնվեր մեկ այլ տերության հովանավորության ներքո: Նա ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատն ստանձնելու ջերմ կողմնակից էր և օգտագործում էր ամերիկյան ազդեցիկ գործիչների հետ ունեցած իր կապերն այդ գաղափարի իրականացմանը հասնելու համար: Հայկական հարցի լուծման այդպիսի տարբերակի օգտին Բրայսն առաջ էր քաշում ինչպես մարդասիրական, այնպես էլ բրիտանական պետական շահերի պաշտպանության առնչվող փաստարկումներ՝ նշելով, որ այդ ճանապարհով Մեծ Բրիտանիան կկանխի պանթուրքիստական ծրագրերի հնարավոր իրականացումը, որոնք սպառնում են բրիտանական շահերին ինչպես Աֆղանստանում, այնպես էլ Հնդկաստանում:

Ռեմալականների կողմից Հայաստանի զգալի տարածքների օկուպացումից և Հայաստանի խորհրդայնացումից հետո Բրայսը հանդես եկավ Հայաստանից բոլշևիկյան և թուրքական զորքերի դուրս բերման օգտին: ԱՄՆ սենատի կողմից Հայաստանի մանդատի ստանձնման մերժումից հետո Բրայսը պաշտպանում էր մանդատը եվրոպական որևէ պետության հանձնելու գաղափարը և կոչ էր անում Միացյալ Նահանգներին նյութական միջոցներ տրամադրել այդ նպատակի իրագործման համար: Բրայսը հայկական խնդիրն իր ուշադրության կենտրոնում պահեց գրեթե մինչև իր մահը՝ 1922թ. հունվարի 22-ը՝ չզլանալով խորհուրդներ և որոշ տեղեկություններ փոխանցել տարբեր հայ գործիչների:

Ցավոք, Բրայսի տեսակետներին վիճակված չէր իրականություն դառնալ: Ճիշտ է՝ նա չտեսավ Լոզանի դաշնագրի կնքումը, որը, փաստորեն, դարձավ հայկական բոլոր հույսերի գերեզմանը, սակայն կենդանության օրոք էլ ապրեց հուսախաբություն՝ նախկին Օսմանյան կայսրության տարածքում

բնակվող քրիստոնյաներին և, մասնավորապես, հայ ժողովրդին բաժին հասած ճակատագրից և մեծ տերությունների վարած քաղաքականությունից, որոնք հեշտորեն հրաժարվեցին պատերազմի ժամանակ վերջինիս տրված իրենց խոստումներից:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո իր ակտիվ գործունեությունը շարունակեց Բրիտանիա-Հայաստան կոմիտեն: Կոմիտեի այս շրջանում հրավիրված նիստերին մի քանի անգամ մասնակցեցին և ելույթներ ունեցան ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան, Փարիզի վեհաժողովում ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանը: Կոմիտեի նիստերից մեկին մասնակցեց նաև Հայաստանի նախկին վարչապետ Ա. Խատիսյանը: Կոմիտեի գլխավոր խնդիրը Հայաստանի ապագայի վերաբերյալ տարբերակների քննարկումն ու սեփական տեսակետի մշակումն էր՝ այն երկրի իշխանություններին ներկայացնելու համար: Այս շրջանում ևս կոմիտեի տեսակետները զգալի փոփոխությունների ենթարկվեցին: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո կոմիտեն արտահայտվում էր Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների և Կիլիկիայի միավորմամբ հայկական նոր պետության ստեղծման օգտին, որը պետք է դրվեր որևէ մեծ տերության հովանավորության ներքո: 1919թ. ամռանը կոմիտեի նախագահ Ա. Վիլիամսը պաշտպանում էր Կիլիկիայի, յոթ վիլայեթների և Հայաստանի Հանրապետության միավորմամբ հայկական պետության ստեղծման գաղափարը, սակայն արդեն 1920թ. հունիսին արտգործնախարարությանն ուղղված հուշագրում կոմիտեն ավելի համեստ պահանջներ էր առաջ քաշում՝ պնդելով ապագա Հայաստանի պետության սահմաններում Վանի, Բիթլիսի, Երզրումի ամբողջ վիլայեթների ընդգրկման վրա: Բրիտանիա-Հայաստան կոմիտեն կառավարության առջև բազմիցս բարձրացրեց Հայաստանին զենքի, զինամթերքի և ռազմական սպաների մատակարարման հարցը՝ իր դժգոհությունն արտահայտելով այդ ուղղությամբ վարվող քաղաքականության հանդեպ:

Հայաստանի խորհրդայնացումից հետո կոմիտեի առջև ծա-

ռացած երկու հիմնական խնդիրները Կիլիկիայի և հայկական ազգային օջախի ճակատագիրն էր: 1921թ. վերջին կոմիտեն առաջարկում էր հայերի համար թուրքական իշխանություններից ամբողջովին անկախ ազգային օջախ հիմնել Թուրքիայի հարավ-արևելքում՝ նրան տրամադրելով ելք դեպի ծով, Կիլիկիայում առաջարկվում էր Ազգերի Լիգայի հովանու ներքո ինքնավար վարչակարգ հիմնել:

1922թ. ապրիլին կոմիտեն հանդես եկավ նոր առաջարկությամբ. ազգային օջախը ստեղծել Կիլիկիայում, իսկ Թուրքահայաստանի որոշ տարածքներ միացնել Խորհրդային Հայաստանին: Կոմիտեն ընդունում էր, որ ազգային օջախը կարող է թուրքական վերահսկողության ներքո լինել, բայց պետք է հատուկ ինքնավար վարչակարգ ունենա: 1921-1923թթ. կոմիտեն քայլեր էր ձեռնարկում Հայկական հարցում բրիտանական կառավարության տեսակետները ճշտելու և հնարավորության սահմանում սեփական առաջարկները դրանց շրջանակներում ներառելու համար, սակայն միշտ չէ, որ գնում էր կառավարության տեսակետների մեխանիկական ընդունմանը:

1922թ. դեկտեմբերին Լոզանի կոնֆերանսում բրիտանական պատվիրակության անդամներին ներկայացրած զեկուցագրում կոմիտեն պնդում էր հայերին ազգային օջախ տրամադրելու անհրաժեշտությունը՝ այդ նպատակի իրագործման ամենագործնական տարբերակ համարելով Թուրքիայի վերահսկողության տակ գտնվող մի շարք շրջաններ Խորհրդային Հայաստանին միացնելը:

Լոզանի կոնֆերանսի արդյունքներից իր դժգոհությունը կոմիտեն արտահայտեց հայանպաստ բրիտանական այլ կազմակերպությունների հետ հրապարակած հուշագրում և 1923թ. հրատարակած «Փաստեր Հայաստանի օգտին» գրքույկում: Այնուամենայնիվ, Լոզանի պայմանագրից հետո կոմիտեն այլևս ակտիվ քայլեր չձեռնարկեց՝ մեկ տարի անց ամբողջովին դադարեցնելով իր գործունեությունը:

Գործունեության ողջ ընթացքում Բրիտանիա-Հայաստան կոմիտեն չկարողացավ հասնել իր առջև դրված հիմնական խնդիրների իրականացմանը: Այս հանգամանքը կարելի է բա-

ցատրել ընդունվող քաղաքական որոշումների վրա կոմիտեի ունեցած ազդեցության աննշան չափով: Առավելագույնը, որ կարողանում էին ձեռնարկել կոմիտեի անդամները, դա հուշագրերի հրապարակումն ու, ժամանակ առ ժամանակ, բարձրաստիճան պաշտոնյաների հետ անմիջական հանդիպումների ընթացքում սեփական կարծիքն արտահայտելն էր:

Իր աշխատանքներում կոմիտեն միշտ ուշադրության կենտրոնում էր պահում նաև բրիտանական պետական շահերը: Կոմիտեի անդամների հիմնական մասը քաղաքական գործիչներ, պառլամենտի անդամներ էին և հասկանալի է նրանց մտահոգությունը սեփական երկրի շահերի վերաբերյալ: Սխալ կլիներ պահանջել, որ հանուն հայ ժողովրդի խնդիրների լուծման, կոմիտեի անդամները մոռացության մատնեին սեփական պետության շահերն ու խնդիրները:

1918-1923թթ. հայանպաստ բրիտանական ընկերությունները շարունակեցին մարդասիրական օգնության տրամադրումը հայ ժողովրդին՝ աշխատանքներ ծավալելով տարբեր տարածաշրջաններում՝ Հայաստանի Հանրապետություն, այնուհետև Խորհրդային Հայաստան, Կիլիկիա, Կ. Պոլիս, Կորֆու և այլն: Այս կազմակերպությունների ուշադրության կենտրոնում ինչպես հայ որբ երեխաների ճակատագիրն էր, այնպես էլ փախստականներին տրվող օգնությունը, նրանց հնարավոր աշխատանքով ապահովելու խնդիրը:

Չնայած այս կազմակերպությունների իրականացրած աշխատանքը բավականին համեստ էր՝ գոյություն ունեցող կարիքի համեմատ, սակայն դրանով նրանք իրենց փոքրիկ ներդրումն ունեցան ցեղասպանությունից հետո հայ ժողովրդի թեկուզև շատ փոքր հատվածի տառապանքների թեթևացման գործում: Այս կազմակերպությունների գործունեությունը միանշանակորեն արժանի է դրական գնահատականի:

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ

1. Սկզբնաղբյուրներ

ա) արխիվային նյութեր

1.1 ՀԱԱ, ֆոնդ 430, ց. 1, գ. 1045, 616, 365, 248, 588, 1051, 1056, 1058, 1060, 1064, 1029, 1067, 1068, 1070, 1059, 1074, 333, 1274, 1062, 1057, 1078, 1052

1.2 ՀԱԱ, ֆոնդ 412, ց. 1, գ. 989, 1968, 2109, 2512, 2107, 2470, 2111, 2247,

1.3 ՀԱԱ, ֆոնդ 28, ց. 1, գ. 901, 158, 423, 159

1.4 ՀԱԱ, ֆոնդ 57, ց. 2, գ. 1286

1.5 ՀԱԱ, ֆոնդ 57, ց. 5, գ. 128

1.6 ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆոնդ, բաժին I, թիվ, 705

1.7 ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆոնդ, բաժին III, թիվ 3898, 3901, 3902, 3905, 3906, 3907, 3908, 3911, 3916, 3917, 3922, 3926, 3928, 3929, 3930, 3933, 3934, 9383, 9390, 9385, 3935, 3936,3940, 3941,

1.8 ԳԱԹ, Տ. Նազարյանի ֆոնդ, թիվ 583, 597

1.9 ԳԱԹ, Վ. Մալեզյանի ֆոնդ, թիվ 740

1.10 Rhodes House Library, Oxford, Mss. Brit. Emp. S. 22 G. 50 (1), Minute Book of the British Armenia Committee, Oct 13,1915-Feb. 21, 1921.

1.11 Rhodes House Library, Oxford, Mss. Brit. Emp. S. 22 G. 50 (2), Minute Book of the Propaganda Sub-Committee of the British Armenia Committee, June 1 1920-Nov. 23 1920.

բ) փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ

1.12 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, Հայաստան, 1972:

1.13 Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ Միրզոյան Ս., Ղազիյան Ա., Երևան, Հայ պատմության արխիվ, 2003:

1.14 Геноцид Армян в Османской Империи, сборник документов и материалов, под. редакцией М. Г. Нерсисяна, Ереван, Айастан, 1982.
1.15 Международные Отношения в Эпоху Империализма, серия III, том 7, часть 2, подготовил к печати Нотович Ф. О., Москва-Ленинград, Государственное Социально-Экономическое Издательство, 1935.
1.16 Раздел Азиатской Турции, по секретным документам министерства иностранных дел, под редакцией Е. А. Адамова, Москва, Изд. Литиздата НКИД, 1924.
1.17 Armenia: Political and Ethnic Boundaries 1878-1948, ed. Anita L. P. Burdett, Archive Editions, 1998.
1.18 British Documents on Ottoman Armenians, vol. II, (1880-1890), edited by Bilal Simsir, Ankara, Turkish Historical Society, 1983.
1.19 Germany, Turkey and Armenia. A selection of Documentary Evidence Relating to the Armenian Atrocities From German and Other Sources, London, Keliher & Co., 1917.
1.20 The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916. Documents Presented to Viscount Grey of Fallodon by Viscount Bryce, Uncensored Edition, Edited and with an Introduction by Ara Sarafian, Taderon Press, England, 2000.
1.21 United States Official Documents on the Armenian Genocide, vol. II, The Peripheries, Compiled and Introduced by A. Sarafian, Watertown, The Armenian Review Inc., 1994.

2. Գրականություն

2.1. Ալպոյաճեան Ա., Մինաս Չերազ, իր կյանքը և գործը, իր 60 ամեայ յոբելեանին առթիվ, Գահիրէ, Հաբեթ-Պաղտասար, 1927:
2.2. Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, ՀՍՍՀ գիտ. ակադ. հրատ. 1976:
2.3. Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը, 1918թ. մայիս, Երևան, Գիտություն, 1998:

2.4. Բայրամյան Լ., Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում, Երևան, Հայաստան, 1982:
2.5. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, Գիտություն, 1999:
2.6. Գասպարյան Ե., Ֆրանսիան և Մեծ Եղեռնը 1915-1918թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ, 2000:
2.7. Դալլաքյան Կ., Արշակ Չոպանյան, Երևան, Սովետական գրող, 1987:
2.8. Եափուճեան Ա., Մեծ Եղեռնը օտար մտաւորականութեան գնահատումով, համառօտ մատենագիտութիւն Մեծ Եղեռնի մասին (օտար հեղինակներ) պատրաստեց Տ. Գէորգեան, Գահիրէ, Հրատարակութիւն Հայ ազգային հիմնադրամի, 1980:
2.9. Զապել Եսայան, Նամակներ, կազմեց և ծանոթագրեց Ա. Ավետիսյան, Երևան, Երևանի պետական համալսարան, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, 1977:
2.10. Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը արևմտահայության խնդիրը, (XIX դարի 30-ական թթ-1914թ.), Երևան, Գիտություն, 1999:
2.11. Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916թթ., Երևան, Հայաստան, 1967:
2.12. Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Երևան, Հայաստան, 1978:
2.13. Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, (XIX դարի 80-ական թթ.), Երևան, Հայաստան, 1980:
2.14. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք երկրորդ, Երևան, Հայաստան, 1983:
2.15. Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուս, հայանվեր գործիչն ու հրապարակախոսը, Երևան, Միտք, 2001:
2.16. Հովհաննիսյան Լ., Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917թթ., Երևան, Զանգակ 97, 2002:

2.17. Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965, կազմեց Ահարոնեան Գ., Պէյրութ, Հրատարակութիւն «Զարթօնք» օրաթերթի. 1965:
2.18. Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան, Երևան, Երևանի պետ. համալսարան, 1975:
2.19. Մնացականյան Ա., Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, Հայաստան, 1965:
2.20. Մուշեղ Եպիսկոպոս, Մանչեսդրի հայ գաղութը, Պոստոն, Ազգ, 1911:
2.21. Նասիպեան Ա., Բրիտանիա և Հայկական հարցը 1915-1923թթ., Պէյրութ, Հրատարակութիւն Հ. Բ. Ը. Միութեան Վահրամ Ապտալեան մշակութային հիմնադրամի, 1994:
2.22. Չոպանյան Ա., Նամականի, Երևան, Սովետական գրող, 1980:
2.23. Չորմիսյան Լ., Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության, հատոր Բ, 1878-1908, Պեյրութ, Sevan Printing House, 1974:
2.24. Պողոսյան Բ., Հայանպաստ Շարժումը Մեծ Բրիտանիայում Ըստ Վավերագրերի (1918-1923թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ, 2002:
2.25. Պողոսյան Բ., Բրիտանիա-Հայաստան կոմիտեի գործունեությունը (1913-1924թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ, 2003:
2.26. Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ., Երևան, ՀՍՍՀ գիտ. ակադ. հրատ.,1970:
2.27. Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Երևան, Հայաստան, 1964:
2.28. Սարուխան, Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը Թուրքիայում, (1860-1910), հատոր Ա, Թիֆլիս, էլեքտրաշարժ տպարան «էպոխա», 1912:
2.29. Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանության դատապարտումը Մեծ Բրիտանիայի խորհրդարանում, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ, 2000:

2.30. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, Հայաստան, 1993:
2.31. Տէր Պետրոսեան Յովհ., Ճեյմս Պրայս և հայերը, Գահիրէ, «Արեւ»-ի թերթօն, 1975:
2.32. Տիգրանյան Տ., Անգլիան և հայերը, Երևան, Մ. Վարանդեան, 1994:
2.33. Օհանջանյան Ա., 1915 թվական, Անհերքելի Վկայություններ, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ, 1997:
2.34. Акопян С., Западная Армения в Планах Империалистических Держав в Период Первой Мировой Войны, Ереван, Издательство Академии Наук армянской ССР, 1967.
2.35. Армянский Вопрос, Энциклопедия, Ереван, Главная Редакция Армянской Энциклопедии, 1991.
2.36. Гарибджанян Г., Геноцид Армян и мировая общественность, Ереван, О-во "Знание" Арм. ССР, 1989.
2.37. Киракосян А., Великобритания и Армянский Вопрос (90-е годы XIX века), Ереван, Айастан, 1990.
2.38. Махмурян Г., Лига Наций, Армянский Вопрос и Республика Армения, Ереван, Артагерс, 1999.
2.39. Махмурян Г., Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг., Бремя Белого Человека, Ереван, Лусакн, 2002.
2.40. Саркисян Е., Политика Османского Правительства в Западной Армении и Державы в Последней Четверти XIX и Начале XX века, Ереван, Изд-во АН АрмССР, 1972.
2.41. Степанян Ст., Армения в Политике Империалистической Германии (конец XIX-начало XX века), Ереван, Айастан, 1975.
2.42. Album of Armenia, Belfast, J. Adams, 1916.
2.43. Anderson M., Noel Buxton: A Life, London, George Allen & Unwin Ltd., 1952.
2.44. Armenia's Charter, The Armenian Bureau, London, 1918.
2.45. Armenia, London, Information (Armenia) Bureau, 1896.
2.46. Armenia, Its People, Sufferings and Demands, third edition, The British Armenia Committee, London, n. d.

2.47. Armenia and the Settlement, Report of Public Meeting to Express Sympathy With the Armenian Cause, Held at the Central Hall, Westminster, on Thursday, June 19th 1919, edited by A. Raffi, The Armenian Bureau, London, 1919.
2.48. The Armenian Question, The Armenian Refugees (Lord Mayor's) Fund, n.d.
2.49. Baliozian A., The Armenian Genocide and the West, Jerusalem, The Armenian Case Committee, 1984.
2.50. Betrayal of Armenia, second edition, Manchester, Guardian, 1896.
2.51. Bryce J., Transcaucasia and Ararat, London, Macmillan and Co. Ltd., 1877.
2.52. Bryce J., Transcaucasia and Ararat, fourth revised edition, London, Macmillan and Co. Ltd., 1896.
2.53. Burtt J., The People of Ararat, London, The Hogarth Press, 1926.
2.54. Buxton H., The Armenian Church, The Armenian Bureau, London, 1919.
2.55. Buxton H., Armenia and the Settlement, reprinted from "The East and the West" january 1919, The Armenian Bureau, London, 1919.
2.56. Buxton H., Trans-Caucasia, London, Faith Press, 1926.
2.57. Buxton N. and Buxton H., Travel and Politics in Armenia, London, Smith; Elder, 1914.
2.58. Buxton N., Europe and the Turks, London, John Murray, 1907.
2.59. Duke of Argyll, Our Responsibilities For Turkey, London, John Murray, 1896.
2.60. Enver Zia Karal, Question Armenian (1878-1923), Ankara, Impr. Gunduz, 1975.
2.61. Etmekjian L., Toynbee, Turks and Armenians, Special Report, number 2, Zoryan Institute, Cambridge, MA, 1985.
2.62. Fisher H. A. L., James Bryce, vol. 1, New York, Macmillan, 1927.
2.63. Fisher H. A. L., James Bryce, vol. 2, New York, Macmillan, 1927.

2.64. Gürün K., The Armenian File, London, Nicosia, Istanbul, K. Rustem & Bro. and Weidenfeld & Nicolson Ltd., 1985.
2.65. Hacobian A., Armenia and the War, Hodder and Stoughton, London, New York, Toronto, Printed in Great Britain, 1917.
2.66. Hovannisian R., The republic of Armenia, vol. I, The First Year, 1918-1919, University of California Press, 1971.
2.67. Kloian R., The Armenian Genocide, News Accounts from the American Press: 1915-1922, third edition, Berkeley, California, Anto Printing, 1985.
2.68. Krikorian M., Armenians in the Service of the Ottoman Empire, 1860-1908, London, Routledge & Kegan Paul, 1977.
2.69. Parliamentary Debates. House of Lords, November 13, 1918. House of Commons, October 23, 24, 30, 31, November 6, 7, 12, 14, 18, 1918, Armenia, London, The Pelican Press, 1918.
2.70. Report of the International Conference on the Situation in the Near East held in London on 29th June 1904, London, London office of "Pro Armenia", 1904.
2.71. Robinson E., Armenia and the Armenians, London, 1919.
2.72. Robinson E., The Armenians, The Armenian Bureau, London, 1918.
2.73. Sarafian A., The Archival Trail, Authentication of The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916, in Remembrance and Denial. The Case of the Armenian Genocide, ed. Hovannisian R., Wayne State University Press, 1998.
2.74. Sarafian A., The Paper Trail: The American State Department and the Report of Committee on Armenian Atrocities, in Revue du Monde Arménien. Moderne et Contemporain, Tome I, Paris, Societé Des Etudes Arméniennes, 1994.
2.75. Shemmassian V., The League of Nations and the Reclamation of Armenian Genocide Survivors, in Looking Backward, Moving Forward, editor R. Hovannisian, New Brunswick: Transaction Publishers, 2003.
2.76. The Case for the Armenians, London, Harrison and Sons, 1893.

2.77. The Plight of Armenian and Assyrian Christians. Report of Public Meeting Organised by the Lord Mayor's Fund, held at Central Hall, Westminster, on december 4, 1918, The Armenian Bureau, London, 1919.
2.78. Toynbee A., Armenian Atrocities. The Murder of a Nation, Hodder & Stoughton, London, New York, Toronto, 1915.
2.79. Toynbee A., Experiences, London, Oxford University Press, 1969.
2.80. Toynbee A., The Western Question in Greece and Turkey, Boston, New-York, Mifflin, 1922.
2.81. Toynbee A., The Murderous Tyranny of the Turks, London, Hodder & Stoughton, 1917.
2.82. Toynbee A., Turkey: A Past and a Future, New York, George H. Doran Co.,1917.
2.83. Viscount Bryce, O. M., The Future of Armenia, reprinted from "The Contemporary Review" December 1918, The National Press Agency Ltd.
2.84. Viscount Bryce, O. M., The Settlement of the Near East, reprinted by permission from "The Contemporary Review", , London, The British Armenia Committee, 1920.
2.85. Walker Ch., Britain as World Policeman: The Armenian Case and the Failure of Moral Imperatives, in Genocide and Human Rights, A Special Issue of the Journal of Armenian Studies, Volume IV, No. 1 and 2 (1992), National Association for Armenian Studies and Research, Armenian Heritage Press, 1993.
2.86. Williams W. Llew., Armenia, Past and Present, London, P. S. King & Son Ltd. 1916.

3. Պարբերական մամուլ

3.1. «Արարատ», Էջմիածին, 1916թ., համար Գ-Դ:
3.2. «Արձագանք Փարիզի», Փարիզ, 1917թ., թիվ 5:
3.3. «Համբավաբեր», Թիֆլիս, 1916թ., թիվ 3, 7, 17, 24, 40, 1917թ., թիվ 22, 35:
3.4. «Հովիտ», Թիֆլիս, 1917թ., թիվ 8, 9:
3.5. «Մշակ», Թիֆլիս, 1916թ., թիվ 39, 143:

3.6. «Պայքար», Բոստոն, 1935թ. թիվ 172 (8312), 173 (8313):
3.7. «Վան-Տուսպ», Թիֆլիս, 1916թ., թիվ 12, 16, 25, 51, 1917թ. թիվ 16:
3.8. "Армяне и Война", Одесса, 1916г., номер 6.
3.9. "Армянский Вестник", Москва, 1916г., номер 8, 12-13, 22, 40, 1917г., номер 1.
3.10. "Кавказское Слово", Тифлись, 1916г., номер 87.
3.11. "Ararat: A Searchlight on Armenia", London, 1913, vol. I, N 2, 3, 6, 1914, vol. I, N 11, vol. II, N 13, 18, 1915, vol. II, N 19, 22, vol. III, N 27, 28, 29, 30, 1916, vol. IV, N 38, 42, 1917 vol. IV, N 45, 46, 48, vol. V, N 49, 51, 53, 1919, vol. VI, N 63, 64, 66, 68, 1920, vol. VII., N 69.
3.12. "The Times", London, 1915, january 12.
3.13. "The Times", History and Encyclopaedia of the War, The Extermination of the Armenians, 1916, Vol. 8, Chapter CXXXIII, Part 101, Times Publ. Co.

4. Հոդվածներ և հրապարակումներ ամսագրերում և հանդեսներում

4.1. Հարությունյան Ա., Հայոց Մեծ եղեռնը և հայ գաղթականությունը Կովկասում 1914-1916թթ., Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, թիվ 6, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ, 2002:
4.2. Սահակյան Ռ., Զապել Եսայանի նամակները Կիլիկիայից, Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 2, Երևան, ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր արխիվային վարչություն, 1968:
4.3. Պողոսյան Բ., Ջեյմս Բրայսի հայանպաստ գործունեությունը 1876-1914թթ., Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, թիվ 7, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ, 2003:
4.4. Պողոսյան Բ., Բրիտանական հայանպաստ կազմակերպությունների օգնությունը հայ փախստականներին Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, թիվ 8, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ, 2003:

РЕЗЮМЕ

В начале XX века в Османской империи был осуществлен первый геноцид века, жертвой которого стал армянский народ. Прогрессивная общественность разных стран подняла свой голос против этого преступления, формируя мощное проармянское движение. В последнем свое особое место занимает проармянское движение в Великобритании, которое сформировалось еще в последней четверти XIX века усилиями отдельных личностей, таких как Джеймс Брайс, Ф. Стивенсон, и в лице некоторых организаций-Англо-армянской ассоциации, общества Друзей Армении, Шотландо-армянской ассоциации и других. До 1914 года основной задачей проармянского движения в Великобритании являлось осуществление реформ в Западной Армении, предусмотренных Берлинским трактатом 1878г.

Проармянское движение еще больше усилилось во время первой мировой войны. Джеймс Брайс, который стал членом Палаты Лордов в январе 1914г., получив сведения о геноциде армян от некоторых армянских общественных деятелей, проинформировал об этом общества Британии и Соединенных Штатов. Он вместе с молодым историком А. Тойнби в 1916г. опубликовал сборник документов "Положение армян в Османской империи в 1915-1916гг.". Хотя сборник имел также пропагандистские цели, он все же является одним из важнейших источников, который документирует Геноцид армян.

В этот период продолжали свою деятельность и разные проармянские организации, самым крупным из которых был Британо-Армянский комитет, во главе которого стоял член Палаты Общин А. Уильямс. Деятельность комитета имела в основном политическую направленность. Были созданы также организации, которые оказывали гуманитарную помощь армянскому народу. Самыми крупными из них были Фонд армянкого красного креста и беженцев и Фонд армянских беженцев Лорда-мэра, который руководил Лорд-мэр Лондона.

После окончания первой мировой войны Джеймс Брайс продолжил проармянскую деятельность до своей смерти в январе

1922г. Он выступал за создание единого армянского государства путем объединения армянских вилайетов, Киликии и Республики Армения. Брайс подчеркивал, что такое решение Армянского вопроса соответствует интересам Великобритании.

Проармянские организации продолжали свою деятельность также в 1918-1923гг. Британо-Армянский комитет в центре своего внимания имел задачу создания единого армянского государства, а после установления советской власти в Армении рассматривал возможности создания армянского национального очага и обеспечения безопасности армян Киликии. К сожалению, комитет не смог достичь своих целей. В этот период продолжали действовать также Фонд армянского красного креста и беженцев и Фонд армянских беженцев Лорда-мэра как в Республике Армения (впоследствии также в Советской Армении), так и в Киликии, Константинополе. После 1923 года эти организации все еще продолжали свою деятельность.

Summary

The beginning of the XX century was one of the darkest periods of Armenian history. The Young Turk government, using the opportunity, which was presented by the World War I, undertook the implementation of its fiendish purpose; to annihilate the whole Armenian race. 1.5 million Armenians became victims of Armenian genocide, hundred thousands of others were forced to leave their motherland and were dispersed all over the world. During that critical period many public organizations and statesmen raised their voice against the worst of the crimes ever committed in the history of the human race. The pro-Armenian movement in Great Britain spread during World War I and after it till the Lausanne conference has its specific place in the international pro-Armenian movement.

One of the founders of the pro-Armenian movement in Great Britain was James Bryce. Visiting Armenia in 1876 for the first time, he devoted himself to the pro-Armenian activity. In 1877 he published the book "Transcaucasia and Ararat" in which he emphasized the necessity of realizing reforms in the Armenian vilayets. On 7 March 1878, he established the "Anglo-Armenian Association" which became the first pro-Armenian organization in England. In 1894 James Bryce worked as Minister of Trade and in 1905 as Minister of Ireland. In 1907 he was appointed as ambassador to Washington D. C.; and even in this capacity he continued to be interested in the Armenian question. Bryce continued his pro-Armenian activity in 1914-1923. In 1916 Bryce with Arnold Toynbee published collection of documents on the Armenian genocide "The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916".

In 1914-1923 in Great Britain there were various pro-Armenian organizations among which was the British Armenia Committee (the BAC) that was formed in the end of 1912 or at the beginning of 1913. The BAC was the most important and the most influential pro-Armenian organization. After its foundation the BAC began its activity. In 1913 it thrice published the book "Armenia, Its People,

Sufferings and Demands ".

The BAC continued its activity during World War I. It adopted memorandums and made announcements, which were directed, to various officials of the British government. In the meanwhile, it must be emphasized that the Committee's viewpoints about the future of Armenia changed during this period. On 10 July 1914, in his speech in the House of Commons BAC chairman A. Williams announced that there couldn't be any word about granting autonomy to Turkish Armenian provinces, but after the Turkish entrance into the war on the side of Germany his viewpoint changed. On 3 April 1915, in his letter to the secretary of Foreign Office E. Grey, A. Williams suggested granting some form of autonomy to Armenia after the war, like one promised to Poland. In august 1916, the Committee's secretary A. Symonds put forward the idea of creating an autonomous Armenia, which should consist of Cilicia and the provinces of Western Armenia, and should be put under the auspices of the Great Powers with perspective of enjoying independence in the future. Quickly changing events due to two Russian revolutions while forced the Committee to postpone the considerations about the future of Armenia for a while, but in October 1918 the BAC returned to the idea of delivering mandate of Armenia to one of the Great Powers, again underscoring the candidacy of the United States.

After the World War I the BAC continued its activity. In the workstyle of the Committee the comparatively new thing was the formation of propaganda sub-committee, which acted during June-November of 1920.

The Chairman of the Armenian National Delegation, Poghos Nubar pasha, and the chairman of Republic of Armenia's delegation in the Paris conference, A. Aharonyan, participated in some meetings of the Committee and made speeches. The former Prime Minister of the Republic of Armenia, A. Khatisyan, also participated in one of the Committee's meetings. These facts testify that the BAC wanted to receive direct information about the wishes and first turn problems of Armenia.

Immediately after the war the BAC promoted the idea of creation of a new Armenian state which should consist of six provinces of Western Armenia and Cilicia and should be put under the auspices of one of the Great Powers. The climax of the Committee's aspirations was the idea stated in summer of 1919; A. Williams gave his consent to creation of the Armenian state by uniting Cilicia, seven Armenian provinces and the existing Republic of Armenia.

At the beginning of summer 1920, after the US senate had refused to take the mandate of Armenia, the BAC in a memorandum which was sent to the Foreign Office made more moderate demands, urging the involvement in the borders of the future Armenian state the whole provinces of Van, Bitlis, Erzerum, and the town and port of Trebizond as well.

The two main problems, which the BAC faced after Armenia's sovetization, were the future of Cilicia and the case of Armenian National Home. Its viewpoints changed in these two cases too. In the end of 1921 the Committee demanded to establish a National Home in the southeast part of Turkey, which should be absolutely independent from Turkey, and to give it an access to the sea. In Cilicia the BAC suggested to establish some autonomy regime under the shelter of the League of Nations. In April 1922, the Committee suggested to establish a National Home in Cilicia and to integrate into Soviet Armenia some parts of Turkish Armenia. The BAC also adopted that National Home could be under the Turkish flag but with special autonomy regime. The BAC in a memorandum, which was presented to the British delegation participating in Lausanne conference urged the necessity of granting the National Home for the Armenians and, as a most practical method for its implementation, the Committee suggested the idea of enlargement of the territory of Soviet Armenia.

The Committee didn't take active steps after the conference and completely ceased its activity a year after. It must be emphasized that the British State interests were in the center of political debates held in the BAC. In all speeches, memorandums or announcements

the Committee always pointed out that its activities were based not only on the humanitarian grounds, on duties that Great Britain had towards the Armenian people, but also on British interests.

During the World War one and after its end there were many British pro-Armenian organizations working in the field of humanitarian aid. In that work they collaborated actively with various Armenian benevolent organizations, especially with the Armenian Central Committee rendering the latter financial help. The considerable amounts of money attained from various sources were directed mainly to the relief of refugees and orphans. Among these organizations the powerful ones were The Armenian Refugees (Lord Mayor's) Fund and The Armenian Red Cross and Refugees Fund.

[1100դր]

ԲԵՆԻԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՆՊԱՍՏ ՇԱՐԺՈՒՄԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ 1914-1923թթ.

Խմբագիր՝ Լ.Բարսեղյան

Չափսը՝ 80x64 1/16: Թուղթ օֆսեթ: 11.5 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 500: Գինը՝ Պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան Մ.Բաղրամյան 24:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220090273

A II 90273